

355 (47.925)
Ն - 21

h

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԿ ՆԱԶԱՐՅԱՆ-ի

22 գլուխ Արևելաֆեդերացիան և քաղաքացիական
պայքարները

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ

20.08.2020թ.

Սեյ

ԱՇԽԱՐՀԱՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

ՇԱՀԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ

ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ

(1914 - 1920թթ.)

6261

ԵՐԵՎԱՆ - 2020



ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Հ 152

Հրատարակչության է երաշխավորվել
Հայաստանի ազգային արխիվի
գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ քաղաքական
գիտությունների դոկտոր **Լևոն Շիրինյան**

Նազարյան Հայկ, Մեծ Բրիտանիայի աշխարհառազմա
Հ 152 վարական շահերը Հայաստանում եվ Այսրկովկասում
(1914 - 1920թթ.) / Հ. Նազարյան, - Եր: Հայաստանի
ազգային արխիվ, 2020. - 264 էջ:

Աշխատանքում ներկայացված են Մեծ Բրիտանիայի աշխարհառազմավարական և ռազմական ռազմավարական շահերը Հայաստանում եվ Այսրկովկասում: Մասնավորապես, վերլուծվել են «Ծովային ուժի», «Հարթեղի», «Սահմանափակ ու անտղղակի գործողությունների», «Ուրիշի ձեռքերով պատերազմելու» բրիտանական ռազմավարագիտական տեսությունները և դրանց գործնական կիրառումը Ասիական ռազմաճակատներում՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ինչպես նաև դրան հաջորդած տարածաշրջանային տեղային պատերազմների ընթացքում:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-839-25- 7

© Նազարյան Հայկ, 2020
© Հայաստանի ազգային արխիվ , 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ	5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ՔՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՌԱՋՄԱՎԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ	
1.1. Բրիտանական աշխարհառազմավարագիտական մտքի ձևավորումը.....	8
1.2. Հայաստանի և Այսրկովկասի աշխարհառազմավարական նշանակությունը Բրիտանական կայսրության համար.....	19
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ԱՇԽԱՐՀԱՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ «ՄԵԾ ԽԱՂԱՏԱՏԻՏԱԿԻ» ՎՐԱ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ	
2.1. Պատերազմի սկիզբը: Դարդանեյյան ռազմավարական փակուղին	54
2.2. Ուժերի ռազմավարական հարաբերակցությունը Մերձավոր Արևելքում 1916թ. և «Սայքս-Պիկո-Սազոնով» համաձայնագրի ձևավորումը	100
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՊԱՏԵՐԱ-ՋՄԻ ՎԵՐՋՆԱՓՈՒԼՈՒՄ	
3.1. Երզնկայի զինադադարը և բրիտանական նոր ռազմավարությունը Հայաստանում և Այսրկովկասում	118
3.2. Բրիտանական ռազմական առաքելության «ստեղծվածը»: 1918թ. Մայիսյան հերոսամարտերի և Բաքվի պաշտպանության ռազմավարական նշանակությունը.....	141

3.3. Մուղրոսի զինադադարը և բրիտանական աշխարհա-
նազմավարական սահմանների ձևավորումը Մերձավոր-
արևելյան տարածաշրջանում.....180

ԳԼՈՒԿ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱԿԱՐԻՏԱՆԱԿԱՆ

ՄՈՍԿԱ-ԱՆԿԱՐԱ

ԱՇԽԱՐՀԱՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ

ԱՌԱՆՅՔԻ

ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

ՇԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

4.1. Ռիժերի ռազմավարական հարաբերակցությունը Մեր-
ձավորարևելյան տարածաշրջանում հետմուղրոսյան տարի-
ներին199

4.2. Կարսի անկման ռազմավարական հետևանքները....220
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒ-
ԹՅԱՆ ՅԱՆԿ..... 235

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Մասնագիտական շրջանակների, ինչպես նաև ընթերցող
լայն հասարակության դատին է հանձնվում պատմաքա-
ղաքագիտական և ռազմագիտական մի հետազոտություն՝
Հայաստանի քաղաքական զարգացման և հայ ժողովրդի
հավաքական շահերի կտրվածքով: Եթե ամփոփ ասենք,
կստացվի Հայաստանի, Այսրկովկասի և ընդհանուր վերց-
րած Միջին Արևելքի հարցերի քննություն՝ Երևանի ոսպն-
յակով: Այս հանգամանքը շեշտվում է, քանզի շատ հաճախ
Հայաստանի պատմությունը հայրենի պատմաշինարարների
կողմից ներկայացվել է հիմնականում հայալեզու, քայք
Հայաստանի ազգային - պետական շահերի տեսանկյունից:

Սույն աշխատանքը գրված է գլխավորապես աշխարհա-
նազմավարության և ռազմական ռազմավարության դի-
տանկյունից՝ հիմքում ունենալով «ուժերի ռազմավարական
հարաբերակցության» և «ուժերի ռազմավարական հավասա-
րակշռության» սկզբունքները: Ընդամին, որպես աշխատան-
քի ելակետային տեսական հարացույց, դիտվել են համաշ-
խարհային երկրաքաղաքագիտական (աշխարհաքաղաքա-
գիտական) դասականների, այդ թվում Սուն Յզիի, Հալֆորդ
Մաքինդերի, Ջորջ Քերզոնի, Ֆիլիպ Կոլոմբի, Լիդել Հարթի,
Ալֆրեդ Մահանի, Նիկոլաս Սիլայքմենի, Ջրիզև Բժեգինս-
կու, Սեմյոնել Հանթինգթոնի, Հենրի Քիսինջերի, Ռուդոլֆ
Չելենի, Ֆրիդրիխ Ռաուցեյի, Ֆրիդրիխ Նաումանի, Կարլ
Հաուսհոֆերի, Ալեքսանդր Դուգինի աշխատությունները,
ինչպես նաև հայ աշխարհաքաղաքագիտական մտքի դասա-
կանների՝ Ղ. Ալիշանի կոթողային «Քաղաքական աշխար-
հագրությիւն: Նկարացոյց պատկերօր», Վենետիկ, Ա.
հ, 1853, Լևոն Շանթի «Մեր անկախութիւնը», Պոսթըն,

«Հայրենիք», 1925 (գրքում զետեղված են հեղինակի Մոսկվայի դասախոսությունները), Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայաստան միջցամաքային ուղիներու վրայ», Պելրուֆ, Onibar Press, 1948, Վահան Նավասարդյանի «Նեղուցները (Վուսիոր և Դարդանել)։ Թրքական ջրուղիները և Հայ դատը», Գահիրե, «Յուսաբեր», 1947, Հայկ Ասատրյանի «Հայաստան-Արիական նախադիրք Առաջավոր Ասիայում», Երևան, Ա. հ., 2000, աշխատանքները:

Աշխատանքը նվիրված է 20-րդ դարասկզբի աշխարհակալ տերության՝ Մեծ Բրիտանիայի, երկրառազմավարությանը (աշխարհառազմավարությանը)՝ Հայաստան-Այսրկովկասյան տարածաշրջանում: Մասնավորապես, մանրամասն ներկայացված են տարածաշրջանում «Ծովային ուժի», «Հարթլենդի», «Սահմանափակ ու անուղղակի գործողությունների», «Ուրիշի ձեռքերով պատերազմելու» բրիտանական ռազմավարագիտական տեսությունները և դրանց գործնական կիրառումը Ասիական ռազմաճակատներում՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ինչպես նաև դրան հաջորդած տարածաշրջանային տեղային պատերազմների ընթացքում:

Եվ սա նոր իրողություն է հայ պատմագիտության մեջ, թեկուզև հարցադրման իմաստով: Մասնավորապես, հեղինակի կողմից արվել են նոր հարցադրումներ պատմության այնպիսի առանցքային հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են Օսմանյան Կայսրության պատերազմի մեջ ներքաշվելու, Դաշնակիցների կողմից 1916թ. իրականացված Դարդանելյան (Գալիպոլի) ռազմագործողության «ձախողման» և Բաղդադի տակ օսմանյան զորքերի կողմից պաշարված գետերալ Չարլզ Թաունսենդի հրամանատարությամբ գործող դիվիզիայի առանց կռվի թուրքական ուժերին «հանկարծ» անձ-

նատուր լինելու հանգամանքները, նշանավոր եռակողմ Անգլո-ֆրանսոսական (Սայքս-Պիկո-Սազոնով) համաձայնության ձևավորման փուլում Մերձավորարևելյան տարածաշրջանում առկա ուժերի ռազմավարական հարաբերակցությունը, Գերմանիայի աջակցությամբ 1917թ. հոկտեմբերին Ռուսաստանում բուլշևիկների կողմից իրականացված հեղաշրջումը և որպես արդյունք՝ 1917թ. դեկտեմբերի 5-ի երզնկայի զինադադարի ստորագրումը, պատերազմի վերջնափուլում Կովկասյան ռազմաճակատում ազգային, այդ թվում՝ հայկական զորամասերի կազմավորմանն և, միաժամանակ, Հայաստանում ու Այսրկովկասում ազգային անկախ պետություններից որպես «բուֆերային գոտի» ստեղծելուն ուղղված բրիտանական ռազմավարությունը: Հեղինակի կողմից արժևորվել է 1918թ. Մայիսյան հերոսամարտերի և հիմնականում հայ զինական ուժի կողմից իրականացված Բաքվի հերոսական պաշտպանության ունեցած ռազմավարական նշանակությունը՝ ընդհանուր պատերազմում Դաշնակիցների տարած հաղթանակի համատեքստում, ինչպես նաև վեր է հանել Բաքու ժամանած բրիտանական ռազմական առաքելության «ստեղծվածը», քննել՝ 1918թ. հոկտեմբերի 30-ի Մոսքոսի զինադադարի ստորագրումից հետո Բրիտանական զորքերի կողմից ռազմակալված Այսրկովկասում նորանկախ երեք հանրապետությունների միջև ուժերի հավասարակշռություն ստեղծելուն ուղղված բրիտանական ավանդական քաղաքականությունը, որն օգտագործում էր նրանց միջև առկա տարածքային վեճերը և սահմանային խնդիրները: Նոր լույսի ներքո են ներկայացված հակաբրիտանական Անկարա-Մոսկվա աշխարհառազմավարական դաշինքի ձևավորումը, հայ - հունական դաշինքի ստեղծման փորձերը, 1920թ. հոկտեմբերի 30-ի Կարսի ան-

կումը և տարածաշրջանի վրա դրա ունեցած ուժգնավարական հետևանքները:

Սույն աշխատանքը կարող է օգտակար լինել ինչպես պատմաբանների և քաղաքագետների, այնպես էլ՝ միջազգային ասպարեզում Հայաստանի Հանրապետության ազգային-պետական շահերը սպասարկող դիվանագետների համար:

Քաղաքական գիտությունների դոկտոր,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր Լևոն Շիրինյան

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՄԻԱԶՄԱՎԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ

1.1. Բրիտանական աշխարհաուժամավարագիտական մտքի ձևավորումը

15-րդ դարավերջին և 16-րդ դարասկզբին տեղի ունեցած Աշխարհագրական Մեծ հայտնագործությունների շնորհիվ ոչ միան ընդլայնվեց աշխարհագրական հորիզոնը և եվրոպացիների աշխարհագրական պատկերացումները, այլև՝ եվրոպական (ավելի ուշ՝ Արևմտյան) քաղաքակրթությունը ձեռք բերեց համաշխարհային բնույթ: Ինչպես ամերիկացի նշանավոր տեսաբան Սեմյուել Հանթինգթոնն է բնորոշում. «Սկսած 1500թ. և շուրջ 400 տարի Արևմտյան ազգային պետություններն իրենցից ներկայացնում էին բազմաբևեռ միջազգային համակարգ՝ Արևմտյան քաղաքակրթության սահմաններում, միաժամանակ՝ արևմտյան ազգերը (պետությունները-Հ.Ն.) նվաճումների և գաղութացման արդյունքում՝ իրենց ազդեցությունը թողեցին մնացած բոլոր քաղաքակրթությունների վրա»:¹ Բրիտանացի խոշորագույն պատմաբան Առնոլդ Թոյնթին կարևորելով Արևմտյան քաղաքակրթության ներսում ինքնիշխան պետության (Sovereign State) ինստիտուտի առկայությունը՝ գրում է. «Արդյունաբերական հեղափոխությունը (Industrialism) և դրա ժամանակակից ազգայնականության (nationalism) ծնունդը արևմտյան աշխարհում ձևավորեցին Մեծ տերություններին (Great Powers)», և հատկապես, «բացառիկ էր Մեծ Բրիտանիայի

¹ Huntington S. P. *The Clash of Civilizations and the Remaking of World Order*, New York, Simon & Schuster, 1996, p. 21.

ունեցած դերն Արևմտյան աշխարհում»²:

«Եվրոպակենտրոն աշխարհը» և դրա հետ միասին եվրոպական հեգեմոնիան միջազգային համակարգում իր գազաթնակետին հասավ 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին: Եվ ահա, այդ նույն ժամանակ էլ, եվրոպացիների մոտ հաղթանակեց այն գաղափարը, որ քաղաքակրթված եվրոպացին պետք է «քաղաքակրթի» մնացած ամբողջ աշխարհը, ինչն անգլիացի աշխարհահռչակ գրող Ռեյնարդ Բիփլինգը ձևակերպեց որպես «Սպիտակ մարդու բեռ (առաքելություն-Շ.Ն.)»³:

19-րդ դարի վերջին քառորդին աշխարհը թնակոխեց այսպես կոչված «խմբերիալիզմի դարաշրջան»⁴, երբ համաշխարհային կայսրությունների միջև ընթանում էր պայքար՝ «բաժանված աշխարհի վերաբաժանման», այն է՝ տարածքային էքսպանսիայի միջոցով «կենսատարածքի»⁵ ընդլայնման, աշխարհագրական կարևորագույն հանգույցների և սահմանափակ ռեսուրսների, առաջին հերթին՝ ռազմավարական հումքի նկատմամբ վերահսկողությունն առատաբերու համար: Եվ դա այն դեպքում, երբ համաձայն 18-րդ դարի

² Toynbee A. J. *A Study of History*. Vol. I, London, Oxford University Press, 1955, p. 1, 9.

³ Խոսքը Ռ. Բիփլինգի հայտնի բանաստեղծության մասին է: Տես Rudyard Kipling. *The White Man's Burden*. «McClure's Magazine», New York, February 1899, Vol. XII, No. 4, p. 290 - 291.

⁴ «Իմպերիալիզմ» եզրույթն առաջացել է լատիներեն *imperium* - իշխանություն, գերիշխանություն բառից: Եզրույթն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել անգլիացի տեսաբան Ջոն Հորսլերը: Տես՝ Hobson J. A. *Imperialism. A Study*, London, James Nisbet And Co., 1902.

⁵ «Կենսատարածք» (*Lebensraum*) եզրույթն առաջին անգամ օգտագործել է գերմանացի տեսաբան Ֆրիդրիխ Ռաուցելը՝ 1897թ. հրատարակված «Քաղաքական աշխարհագրություն» աշխատության մեջ: Տես Гаджиев К. С. *Введение в геополитику*, Москва, «Логос», 2000, с. 11 - 12.

անգլիացի տնտեսագետ Թոմաս Ռոբերտ Մալթուսի կողմից սահմանված բանաձևի. «Մոլորակի բնակչությունն աճում է երկրաչափական պրոգրեսիայով, իսկ գոյության միջոցները (ռեսուրսները-Շ.Ն.)՝ հանրահաշվական պրոգրեսիայով»⁶:

Եվրոպայում վերելք ապրող աշխարհագրական պատճառականության (դետերմինիզմի) ուսմունքը, որի համաձայն, պատմության ողջ ընթացքում, հասարակության, հատկապես քաղաքական զարգացման վրա, մեծապես ազդում է աշխարհագրական միջավայրը, 19-րդ դարավերջին հիմք դարձավ Եվրոպայում նոր գիտության, այն է՝ քաղաքական աշխարհագրության* և դրա ենթաճյուղ համարվող աշխարհաքաղաքականության (*Geopolitics*)⁷ ձևավորման համար: Ժամանակի ընթացքում, սակայն, աշխարհաքաղաքագիտությունը սկսեց հանդես գալ որպես գիտության առանձին ուղղություն: Ըստ աշխարհահռչակ Բրիտանական հանրագիտարանի, «Աշխարհաքաղաքականությունը միավորում է

* Malthus T. R. *Essay on the Principle of Population, as it Affects the Future Improvement of Society*, London, Printed for J. Johnson, 1798, p. 14.

⁷ Հատկանշական մի փաստ. թեև «Քաղաքական աշխարհագրություն» հասկացությունը գիտական շրջանառության մեջ դնելու գործում առաջին փորձը կատարել է ֆրանսիացի տեսաբան Անն Ռոբեր ժակ Տյուրգոն 1751թ.՝ իր «Géographie politique» աշխատությամբ, սակայն հասկացությունն իր ամբողջական արտահայտությունը գտել է թերևս 1853թ. հայ խոշորագույն գիտնական, աշխարհագրագետ Ղևոնդ Ալիշանի հիմնարար աշխատության (Քաղաքական աշխարհագրութիւն: Նկարացոյց պատկերօք. Հավաքեց՝ Հ. Ղ. Մ. Ալիշանեան, Վենետիկ, Ա. հ, 1853, 802 էջ) մեջ, որը լույս է տեսել Ֆ. Ռաուցելի նույնանուն աշխատանքի հրատարակումից 44 տարի առաջ:

⁸ Աշխարհաքաղաքականություն (*Geopolitics*) եզրույթն, որն առաջացել է հունարեն գեո - երկիր և պոլիտիկոս - քաղաքաքականություն բառերից, առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել շվեդ տեսաբան Ռուդոլֆ Չելենը:

գիտության տարրեր բնագավառների հայեցակարգեր և մեթոդներ՝ միջազգային հարաբերություններում պետության ռազմավարական քաղաքականությունը ձևավորելու նպատակով»⁵: Կառուցվածքային տեսանկյունից աշխարհաքաղաքականությունն ունի երկու ենթաշերտ. տեսական՝ աշխարհաքաղաքագիտություն և գործնական՝ աշխարհառազմավարություն (*Geostrategy*)⁶: Վերջինս պետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից մշակվող և իրականացվող քաղաքական ռազմավարությունն է, որը Մեծ Բրիտանիայում հայտնի է նաև Մեծ ռազմավարություն անունով: Բրիտանացի ռազմավարագետ Ջուլիան Բորբեթը ռազմավարությունը՝ դասակարգելով Փոքր ռազմավարության (*Minor Strategy*) և Մեծ ռազմավարության (*Grand Strategy*)՝ նշում էր, եթե Փոքր ռազմավարությունն իրենից ներկայացնում է մասնակի գործողություններ, ապա Մեծ ռազմավարությունը խնդիր ունի, օգտագործելով ռազմական, առևտրաֆինանսական (տնտեսական), քաղաքական և դիվանագիտական ողջ ներուժը, հասնելու պատերազմում պետության հետապնդած հեռահար նպատակներին⁶:

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին համաշխարհային կայսրություններում, այդ թվում՝ Մեծ Բրիտանիայում,

⁵ *Encyclopaedia Britannica. Vol. 10, London, Encyclopaedia Britannica LTD, 1961, p. 149.*

⁶ Աշխարհառազմավարություն (*Geostrategy*) եզրույթն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել ամերիկացի քաղաքագետ Ֆրեդերիկ Շումալերը՝ 1942թ. հրատարակված իր հոդվածում: *Stu Andrew Gyorgy. The Geopolitics of War: Total War and Geostrategy. «The Journal of Politics», Chicago, Vol. 5, No. 4, November 1943, p. 347.*

⁷ Ռազմավարություն (*Strategy*) եզրույթն առաջացել է հունարեն տրաուեգոս - զորավար բառից:

⁸ *Corbett J. S. Some Principles of Maritime Strategy. London, Longmans, Green and Co., 1911, p. 308 - 309.*

առաջացան աշխարհառազմավարագիտական մի շարք տեսություններ, որոնք գաղափարապես պետք է «հիմնավորեն» տվյալ պետության՝ համաշխարհային տերություն դառնալու իրավունքը: Մեծ Բրիտանիան, լինելով ծովային տերություն, բնականաբար, նրա գոյության ու զարգացման առաջնահերթ պայմանը ռազմավարական նշանակություն ունեցող աշխարհագրական հանգույցների ու ծովային ուղիների (կղզիներ, նեղուցներ և ջրանցքներ) և դրանցով ընթացող միջազգային ծովային առևտրի նկատմամբ վերահսկողության սահմանումն էր. ինչը պետք է դառնար կայսրության, առաջին հերթին նրա միջնաբերդի՝ մետրոպոլիայի (Բրիտանական կղզիների), անվտանգության երաշխիքը՝ միաժամանակ նպաստելով կայսրության դիրքերի ամրապնդմանն աշխարհում:

Այս խնդիրների լուծմանն էր ուղղված «Շովային ուժի» (*Sea Power*) աշխարհառազմավարագիտական դոկտրինը (վարդապետությունը): Վերջինս ծնվեց անգլո-սաքսոնական աշխարհում (Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում)՝ ի հակակշիռ գերմանական, այսպես կոչված «Միջին Եվրոպայի»՝ մասին

⁹ «Միջին Եվրոպա» աշխարհառազմավարագիտական հասկացությունն, որն առաջ է քաշվել տեսաբաններ Ֆրիդրիխ Լաոմանի և Յոզեֆ Փարշի կողմից, իր աշխարհագրական սահմանների մեջ ընդգրկում էր Հյուսիսային և Բայթյան ծովերից մինչև Ալպեր և Ադրիատիկ ծով ընկած տարածքը: *Stu Haymann Ф. Средняя Европа («MITTELEUROPA»); Пер. с нем., Петроград, К - ВО «ОГНИ», 1918, с. 3.* Ավելի ուշ, գերմանական աշխարհառազմավարագիտական մտքի մեկ այլ նշանավոր ներկայացուցիչ՝ Կարլ Հաուսհոֆերը, խորացնելով «Յամաք-ծով» հակադրությունն, առաջ քաշեց աշխարհառազմավարագիտական նոր տեսություն, որի հիմքում ընկած էր «մայրցամաքային դաշինքի» (Բեռլին-Մոսկվա առանցքի շուրջ) ձևավորումն՝ ընդդեմ անգլո-սաքսոնական ծովային պետությունների: Կ. Հաուսհոֆերի աշխարհառազմավարագիտական հա-

աշխարհառազմավարագիտական հայեցակարգին, որն առաջնային էր համարում մայրցամաքային կենտրոնական դիրքը: «Ծովային ուժի» տեսության հիմնադիրներն էին ռազմական տեսաբան, ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի փոխ-ծովակալ Ալֆրեդ Մահանը* և ռազմավարագետ, Մեծ Բրիտանիայի Թագավորական ռազմածովային նավատորմի փոխծովակալ Ֆրիլայ Հովարդ Քոլումբը:

1891թ. լույս տեսած ռազմագիտական «Ծովային պատերազմ. նրա վարման հիմնական սկզբունքներն ու փորձը» աշխատության մեջ, Ֆ. Քոլումբն առաջնային նպատակ էր համարում ծովում գերիշխանության հաստատումը և դրա արդյունքում՝ ծովային համաշխարհային առևտրական ուղիների՝ նկատմամբ վերահսկողության սահմանումը: Սա էր այն գլխավոր խնդիրը, որը պետք է լուծեր բրիտանական Թագավորական ռազմածովային նավատորմը, քանզի, ըստ Ֆ. Քոլումբի. «Ծովային առևտուրն էր ազգերի (տվյալ դեպ-

յացքների մասին մանրամասն տես Хаусхофер К. О. геополитике: Работы разных лет: Пер с нем., Москва, Мысль, 2001.

* Ա. Մահանի «Ծովային ուժի» մասին հայեցակարգը ենթադրում էր Մեծ Բրիտանիայի օրինակով ԱՄՆ-ի վերածվելը համաշխարհային ծովային տերության: Նրա ամենանշանավոր աշխատանքն է 1890թ. լույս տեսած «Ծովային ուժի ազդեցությունը պատմության վրա. 1660 - 1783»: Sbu Mahan A. T. The Influence of Sea Power upon History. 1660 - 1783, Boston, Little, Brown, And Co., 1890.

* Անշուշտ, ծովային հաղորդակցման ուղիները Մեծ Բրիտանիայի համար ունեին բացառիկ նշանակություն, և ինչպես նշում է հայագի խորհրդային նշանավոր ծովակալ և օվկիանոսագետ Հովհաննես Իսակովը. «Դրանք ունեին կենսական նշանակություն ոչ միայն ռազմական և ծովային ուժի, այլև՝ տնտեսության, և հեռակաբար՝ ինքնին պետության գոյության համար»: Sbu Исakov И. С. Океанология, география и военная история, Москва, «Наука», 1984, с.187.

քում բրիտանացիների-Հ.Ն.) հարստության ու կայուն զարգացման հիմնական երաշխիքը»⁷:

Բրիտանական աշխարհառազմավարական մտքի զարգացման գործում մեծ դեր ունի նաև Բրիտանական Թագավորական ռազմածովային նավատորմի ծովակալ, Ծովային Առաջին լորդ Ջոն Արբեթնոթ Ֆիշերը, ով ռազմավարական աշխարհագրության* մեջ 1904թ. առաջ քաշեց այսպես կոչված «Աշխարհառազմավարական կետ» հասկացությունը: Դրանք այն աշխարհագրական հանգույցներն ու տարածքներն են (*object*), որոնց տիրապետելը տալիս է և՛ ռազմական, և՛ տնտեսական առավելություն: Ըստ Ջ. Ֆիշերի, այդ կետերն էին. Դուվրը (Պա-դե-Կալե նեղուցը), Ջիբրալթարը, Ալեքսանդրիան (Սուեզի ջրանցքը⁸), Բարեհուստ հրվանդանը (Հրվ. Աֆրիկան) և Սինգապուրը (Մալակկյան նեղուցը), որոնք կազմում էին դեպի Հնդկաստան և Հեռավոր Արևելք ձգվող ծովային առևտրային գլխավոր ուղին⁹, և բոլորն էլ

⁷ Colomb P. H. Naval Warfare. Its Ruling Principles and Practice Historically Treated. London, W. H. Allen And Co. 1899, p. 80.

* Ռազմավարական աշխարհագրությունը (*Strategic Geography*) նույնացվում է ռազմական աշխարհագրության (*Military Geography*) հետ: Սակայն ռազմական աշխարհագրությունը կապված է ավելի շատ մարտավարության (*Tactics*), իսկ ռազմավարական աշխարհագրությունը՝ ռազմավարության (*Strategy*), այն է՝ ամբողջական ռազմարշավի (*Campaign*) հետ:

* 1869թ. շահագործված Սուեզի ջրանցքը, 1875թ. գնվեց վարչապետ Բենջամին Դիզրայելու գլխավորած բրիտանական կառավարության կողմից: Արդեն 1882թ. Մեծ Բրիտանիան ռազմակալեց Եգիպտոսն ամբողջությամբ:

⁹ Սուեզի ջրանցքի հետ մեկտեղ Մեծ Բրիտանիային էին պատկանում ծովային այդ ուղու վրա գտնվող ռազմավարական կարևորագույն մյուս կետերը՝ Ջիբրալթարը (1704թ.-ից), Մալթան (1833թ.-ից), Ադենը (1834թ.-ից), Կիպրոսը (1878թ.-ից):

«վերահսկվում էին Բրիտանական ռազմածովային նավատորմի կողմից»:⁸

Ընդհանրապես, ռազմածովային ռազմավարության (*Naval Strategy*) կիրառումը Մեծ Բրիտանիայի կողմից, ինչը պայմանավորված էր վերջինիս ծովային պետություն լինելու հանգամանքով, բրիտանական ռազմաքաղաքական վերնախավի կողմից սկսեց կիրառվել դեռևս 16-րդ դարից և ժամանակի ընթացքում ավելի կատարելագործվեց: Այս ռազմավարությունը ենթադրում էր ցամաքում ռազմական գործողությունների սահմանափակում, փոխարենը՝ ռազմածովային ուժերի կիրառմամբ հակառակորդի հաղորդակցման ուղիների նկատմամբ վերահսկողության հաստատում, նավահանգիստների շրջափակում և դրանով իսկ հակառակորդի նկատմամբ տնտեսական ճնշման գործադրում, ուժերի հյուծում և այլն:

Բրիտանական բանակի հայտնի ռազմական տեսաբան է. Ջ. Քինգսթոն-Մաքքլորին վերլուծելով այդ ռազմավարությունը՝ ընդգծում է այն միտքը, որ բրիտանական հզոր ռազմածովային նավատորմի կողմից ծովում գերիշխանության հաստատումը և մուտքը դեպի համաշխարհային շուկա՝ «ապահովում էր ոչ միայն հսկայական եկամուտներ, այլև թույլ էր տալիս ջախջախել հակառակորդի մայրցամաքային մեծ բանակները՝ առանց ավելորդ ջանքերի գործադրման»⁹: Իր հերթին Ջ. Քորբեթը հակադրվելով գերմանացի տեսաբան Կարլ Կլաուզեֆիցի բացարձակ պատերազմի (*Absolute War*) տեսությանը և առաջնային համարելով սահմանափակ ռազմական գործողությունները (*Limited*

⁸ Barry Gough. *Pax Britannica. Ruling the Waves and Keeping the Peace before Armageddon*, London, Palegrave Macmillan, 2014, p. 36.
⁹ Kingston - Макклори Дж. Э. *Глобальная стратегия*. Пер. с англ., Москва, Воениздат, 1959, стр. 27.

Operations)՝ գտնում էր, որ այդպիսի ռազմավարության կիրառումը իրենց կարող են թույլ տալ միայն ցամաքից ծովով անջատված պետությունները, որոնց նավատորմը իշխելով ծովում՝ կարող է կանխել հակառակորդի հնարավոր ներխուժումը սեփական տարածքներ¹⁰: Բրիտանացի ռազմավարագետ Լիդլ Հարթն իր նշանավոր աշխատության մեջ շեշտում էր. «Առաջնայինը պետք է լինի ոչ թե հակառակորդի ուժերի ամբողջական ջախջախումը, այլ հակառակորդի ֆիզիկական և բարոյական էներգիայի (ներուժի-Հ.Ն.) հյուծումը, ավելի մեծ չափով, քան սեփականը»¹¹: Այդ խնդրի լուծմանն, ըստ Լ. Հարթի, կարելի է հասնել միայն «անուղղակի գործողությունների»՝ միջոցով:

Եվ իսկապես, այս ռազմավարության շնորհիվ էր, որ 16-19-րդ դարերում Մեծ Բրիտանիան Իսպանիայի, Ֆրանսիայի և Նիդերլանդների դեմ պատերազմներում հաղթող դուրս եկավ՝ դառնալով ծովային համաշխարհային տերություն և վաստակելով «Ծովերի թագուհի» (*Queen of the Seas*)

¹⁰ Corbett J. S., եջվ. աշխ., էջ 58:
¹¹ Liddell Hart B. H. *The Strategy of Indirect Approach*, London, Faber and Faber, 1954, p. 186-187.
¹² Բրիտանական, մասնավորապես Լիդլ Հարթի «անուղղակի գործողությունների» ռազմավարությունն, որի հիմքում ինչ-որ չափով ընկած էին ֆինացի ռազմավարագետ Սուն Յզիի հայացքները (տես Сунь-Цзы. *Трактат о военном искусстве: Вступ. ст. и ред. Е. А. Ракина: Пер. с древнекит. и примеч. Е. И. Суворовко, Москва, Воениздат, 1955*), եկավ հակադրվելու բազմաթիվ բանակների Գլխավոր շտաբներում ընդունված գերմանական (Կարլ Ֆոն Կլաուզեֆից, Հելմուտ Ֆոն Մոլտկե Ավագ, Ալֆրեդ Ֆոն Շլիֆեն) ավանդական ռազմավարությանը, ըստ որի՝ պատերազմում ռազմավարական առաջնային խնդիրը «գլխավոր ճակատամարտում հակառակորդի գլխավոր ուժերի ամբողջական ջախջախումն է»: Գերմանական ռազմավարագիտական մտքի մասին մանրամասն տես. *Стратегия в трудах военных классиков*. Ред. совет: С. В. Степанов (председатель) и др., Москва, «Финансовый контроль», 2003.

1929

պատվանունը: Խոսելով այս մասին՝ բրիտանացի աշխարհագրագետ Մ. Ֆեյրգրեյվը, նշում էր, որ Մեծ Բրիտանիան այդ պատերազմներից դուրս եկավ՝ վերածված «օվկիանոսային տերության», քանզի «Մեծ Բրիտանիան ուներ ոչ միայն ռազմածովային ավանդույթներ, այլ նաև ունակություն՝ օգտագործելու և խնայելու ծովի էներգիան»¹²:

Ամերիկացի տեսաբան Ռոբերտ Օսգուդը գրում է, որ 18 - 19-րդ դարերում Եվրոպայում ընթացող «սահմանափակ պատերազմները», որպես կանոն, նպատակ ունեին «պետությունների միջև հաստատելու ուժերի հավասարակշռությունը, ինչին չէր կարողացել հասնել դիվանագիտությունը»¹³: Ամերիկացի ռազմավարագետ Նիկոլաս Սիպրքմենը գրում է, որ Վերածննդից և Ռեֆորմացիայից հետո, երբ Սրբազան Հռոմեական կայսրության կայսրն ու Հռոմի պապը կորցրեցին իրենց գործառույթը Եվրոպական քաղաքական կարգում «ուժերի ռազմավարական հավասարակշռության» (*The Strategic Balance of Power*) հարցը դարձավ քննարկման գլխավոր առարկան Եվրոպացի տեսաբանների շրջանում: Մայրցամաքում ուժերի հավասարակշռության պահպանումը, որը ենթադրում էր «քաղաքականապես բաժանված» Մայրցամաք և բրիտանական կայսրության հեգեմոնիա, շուրջ 300 տարի (17 - 19-րդ դդ.) ընկած էր Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության հիմքում¹⁴:

Պահպանելու համար սահմանված ուժերի հավասար-

րակշռությունը, բրիտանացիները հռչակեցին այսպես կոչված «Երկու ուժերի ստանդարտի» («Two Powers Standard») դոկտրինը, որն ենթադրում էր բրիտանական ռազմածովային նավատորմի գերազանցությունը միասին վերցված երկու այլ գերտերությունների ռազմածովային ուժերի նկատմամբ: Ավելին, Բրիտանացի ռազմական տեսաբան Սիբենսեր Ուիլկինսոնը, ռազմական նավատորմի դերն առաջնային համարելու զուգահեռ, առաջ քաշեց ռազմածովային ուժերի և ցամաքային բանակի համատեղ գործողությունների կարևորությունը: Ըստ տեսաբանի, ծովային հաղորդակցման ուղիների անվտանգության ապահովումը թույլ կտար կայսրության զորքերի հայտնվելը պատերազմի թատերաբեմի ցանկացած կետում¹⁵: Սա, անշուշտ, անհրաժեշտություն էր, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բրիտանական Կայսրությունը խնդիր ուներ իրականացնելու աշխարհի տարբեր մասերում գտնվող իր հեռավոր գաղութների՝ պաշտպանությունը:

Բրիտանական աշխարհառազմավարական միտքն իր ձևավորման գագաթնակետին հասավ 20-րդ դարի սկզբին՝ շնորհիվ աշխարհառազմավարագետ Հալֆորդ Մաքինդերի: Նա իր առաջին խոշոր աշխատության մեջ, որը վերնագրված էր «Բրիտանիան և Բրիտանական կղզիները» (1902թ.), գնահատելով Մեծ Բրիտանիայի աշխարհագրական դիրքը, նշում էր. «Տեղակայված լինելով Մայրցամաքի (Եվրասիայի-Հ.Ն.) հարևանությամբ, Բրիտանիան գտնվում է

¹² Fairgrieve M. A. *Geography and World Power*, London, University of London Press LTD, 1927, p. 180.

¹³ Осгуд Р. *Ограниченная война*, Пер. с англ., Москва, Воениздат, 1960, с. 82 - 83.

¹⁴ Spykman N. J. *America's Strategy in World Politics: The United States and the Balance of Power*, New York, Harcourt, Brace and Co., 1942, p. 20 - 25, 103 - 105.

¹⁵ Wilkinson S. *The Brain of the Navy*, Westminster, A. Constable and Co., 1895, p. 102 - 104.

¹⁶ 20-րդ դարակզբին Բրիտանական Կայսրությունը զբաղեցնում էր շուրջ 12 մլն. կմ² տարածք (երկրագնդի ցամաքի մեկ հիմեերորդ մասը) և ուներ շուրջ 400 մլն. բնակչություն (երկրագնդի բնակչության մեկ վեցերորդ մասը): Stn Hobson J. A. *Եշվ. աշխ.*, էջ 23, 119:

Հին աշխարհի վերջնամասում, բայց տեղակայված լինելով Մայրցամաքից անջատ՝ նա գտնվում է Նոր աշխարհի սկզբնամասում: Այդպիսով աշխարհագրական դիրքը Մեծ Բրիտանիային տվել է բացառիկ դեր համաշխարհային դրամայում»¹⁶:

Իր աշխարհառազմավարագիտական հայացքները Հ. Մաքինդերը ներկայացրեց 1904թ. հունվարի 25-ին Բրիտանական աշխարհագրական ընկերությունում կարդացած զեկույցում՝ վերնագրված «Պատմության աշխարհագրական առանցքը», որը նույն տարվա ապրիլին հրատարակվեց «Աշխարհագրական հանդեսում»: Հոդվածում հեղինակը նշում էր, որ Աշխարհագրական Մեծ հայտնագործությունները, մասնավորապես՝ Հնդկաստան տանող ծովային ուղու (Բարեհուտ հրվանդանը շրջանցելով) հայտնագործումը, որի շնորհիվ իրար կապվեցին Եվրոպան և Ասիան, չեզոքացրեց տափաստանային քուչվորների (նկատի ունի հաջորդաբար գերիշխանության հասած թյուրքական և թաթար-մոնղոլական ցեղերին, ինչպես նաև Ռուսաստանին) ռազմավարական առավելությունը: Դրա փոխարեն, ժամանակի ընթացքում հզորանալով, Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը, Կանադան, Ավստրալիան, Հարավային Աֆրիկան և Ճապոնիան կազմեցին «Ծովային ուժի և առևտրի կղզիական օղակը՝ դառնալով անհասանելի եվրասիական Ցամաքային տերությունների համար»¹⁷:

Հ. Մաքինդերը, նշում էր, որ թեև շոգենավի ծնունդը և Սուեզի ջրանցքը բարձրացրել էին ծովային ուժի (Sea Power) շարժունակությունը՝ դրանով իսկ առավելություն տալով ցա-

¹⁶ Mackinder H. J. *Britain and British Seas*, London, William Heinemann, 1902, p. 358.

¹⁷ Mackinder H. J. *The Geographical pivot of History. «The Geographical journal»*, London, April 1904, vol. 23, No. 4, p. 432 - 433.

մաքային ուժի (Land Power) նկատմամբ, միաժամանակ, ընդգծում էր, որ անդրմայրցամաքային երկայտողիների կառուցումը կարող էր աստիճանաբար փոխել ուժերի այդ հարաբերակցությունը: Օրինակ՝ «շնորհիվ Անդրսիբիրյան երկայտողու, ռուսական բանակն էականորեն դարձել էր ավելի հզոր և շարժունակ ուժ Մանջուրիայում, ինչպես բրիտանական բանակն էր հզոր ծովային ուժ՝ Հարավային Աֆրիկայում»¹⁸:

Հ. Մաքինդերն, աշխարհառազմավակական տեսանկյունից աշխարհը բաժանում էր երկու մասի. Օվկիանոսային շրջան, որն անվանում էր «Արտաքին կիսալուսին» և որի մեջ մտնում էին ԱՄՆ-ը, Կանադան, Մեծ Բրիտանիան, Հարավային Աֆրիկան, Ավստրալիան ու Ճապոնիան, և Մայրցամաքային շրջան, որն անվանում էր «Ներքին կիսալուսին» և որի մեջ մտնում էին Արևմտյան Եվրոպան, Ռուսական Կայսրությունը, Օսմանյան Կայսրությունը (Հյուսիսային Աֆրիկան և Մերձավոր Արևելքը ներառյալ), Իրանը, Հնդկաստանը և Չինաստանը¹⁹:

Հ. Մաքինդերը շեշտում էր, որ Ծովային պետությունների, մասնավորապես Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի համար ամենամեծ սպառնալիքը հանդիսանում են եվրասիական երկու հզոր կայսրությունների՝ Գերմանիայի* և Ռուսաստանի հնարավոր դաշինքը, քանզի նրանք օգտագործելով մայրցա-

¹⁸ Նույն տեղում, էջ 434. Մաքինդերն այս համեմատության մեջ նկատի ունի Անգլո - րուսական (1899 - 1902թթ.) և Ռուս-ճապոնական (1904 - 1905թթ.) պատերազմերը:

¹⁹ Նույն տեղում, էջ 436:

*Ֆ. Ռատցելը իր «Ծովը որպես ժողովրդի հզորության աղբյուր» գրքում Գերմանիայի համաշխարհային տերություն» դառնալու գլխավոր նախապայման էր համարում հզոր ռազմածովային նավատորմի ստեղծումը: Sbu Дугин А. Основы геополитики, Москва, «АРКТОГЕЯ», 2000, с. 21.

մաքի հսկայական ռեսուրսները՝ կարող էին կառուցել հզոր նավատորմ և այդպիսով փոխել ուժերի ռազմավարական հավասարակշռությունը²⁰:

Հ. Մաքինդերն իր տեսության առանցքը դարձրեց այսպես կոչված «Հարթլենդի»^{*} տեսությունը, որն իր զարգացումը գտավ ավելի ուշ՝ 1919թ. լույս տեսած, «Դեմոկրատական իդեալներ և իրականություն», աշխատության մեջ: «Հարթլենդը», որը զբաղեցնում էր Եվրասիայի կենտրոնական մասը («Ներքին Կիսալուսնի» միջուկը), իր մեջ ընդգրկում էր Արևելյան Եվրոպան (Բալթիկ ծովից մինչև Սև ծով), Փոքր Ասիան (Բոսֆոր և Դարդանել նեղուցներով), Հայաստանը, Այսրկովկասը, Իրանը, Ռուսաստանը (ներառյալ Միջին Ասիան), Մոնղոլիան, Տիբեթը²¹: «Հարթլենդը» աշխարհագրական տարածքն էր և այն «բանալին», որին տիրելով՝ կարելի էր հասնել համաշխարհային տիրապետության: Դրան հասնելու ճանապարհը Հ. Մաքինդերը կարճ ձևակերպեց հետևյալ բանաձևով.

. Ով տիրում է Արևելյան Եվրոպային, նա վերահսկում է Հարթլենդը:

. Ով տիրում է Հարթլենդին, նա վերահսկում է Համաշխարհային օվկիանոսը:

²⁰ Mackinder H. J. *The Geographical pivot of History*, p. 436.

^{*} Եզրույթն առաջացել է անգլերեն *heart* - սիրտ բառից: Ավելի ուշ՝ 1940-ական թթ., ամերիկյան աշխարհառազմավարագիտական մտքի հսկան՝ Լ. Ջ. Սփայրմենը, զարգացնելով Մաքինդերի «Հարթլենդի» մասին տեսությունը՝ առաջ քաշեց այսպես կոչված «Ռիմլենդի» մասին իր նշանավոր աշխարհառազմավարագիտական տեսությունը: Տես Spykman N. J. *America's Strategy in World Politics*: Spykman N. J. *The Geography of the Peace*, New York, Harcourt, Brace and Co., 1944.

²¹ Mackinder H. J. *Democratic Ideals and Reality. A Study in the Politics of Reconstruction*, London, Constable and Co., LTD., 1919, p. 141.

. Ով տիրում է Համաշխարհային օվկիանոսին, նա վերահսկում է աշխարհը²²:

Այսպիսով, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ցամաքային և ծովային կայսրությունների միջև ընթանում էր դիրքային պայքար «աշխարհառազմավարական մեծ խաղատախտակի» վրա: Ինչպես բոլոր համաշխարհային տերություններում, Մեծ Բրիտանիայում նույնպես մշակվել և հստակեցվել էին կայսրության աշխարհառազմավարական և ռազմառազմավարական շահերից բխող այն ծրագրերն ու խնդիրներն, որոնք բրիտանական ռազմաքաղաքական վերնախավը պետք է լուծեր առաջիկա Մեծ պատերազմում:

1.2 Հայաստանի և Այսրկովկասի աշխարհառազմավարական նշանակությունը Բրիտանական Կայսրության համար

Հայաստանը (իր արևելյան և արևմտյան հատվածներով) և Այսրկովկասյան՝ տարածաշրջանը բոլոր ժամանակներում ունեցել են աշխարհառազմավարական կարևորագույն նշանակություն: Հայաստանն ու Այսրկովկասը, աշխարհագրորեն ընկած լինելով Կովկասյան լեռնաշղթայի, Սև ու Կասպից ծովերի և Փոքր Ասիա թերակղզու ու Իրանական բարձրավանդակի միջև, հանդիսացել են (և մեր ժամանակներում էլ շարունակում են հանդիսանալ) Արևելքն ու Արև-

²² Նույն տեղում, էջ 194:

^{*} «Անդրկովկասը» (Закавказье), որի անվանումը ռուսական ծագում ունի և նշանակում է Կովկասից այն կողմ, վարչաքաղաքական և տնտեսաաշխարհագրական հասկացողություն է: Անգլերեն լեզվում կիրառվող «Transcaucasia» (Transcaucasus) եզրույթը 1990-ականթթ. արևմտյան քաղաքագիտական շրջանակներում փոխարինվեց «Հարավային Կովկաս» («South Caucasus») եզրույթով: Մենք մեր աշխատանքի վերնագրում օգտագործել ենք հայկական ծագում ունեցող «Այսրկովկաս» եզրույթը:

մուտքը իրար կապող կամուրջ: Մասնավորապես, Հայաստանի տարածքով անցնող միջազգային առևտրի տարանցիկ ցամաքային ճանապարհներն իրար հետ էին կապում եվրոպան և Ասիան: Չնայած այն հանգամանքին, որ դեպի Հնդկաստան տանող (Բարեհուտ հրվանդանը շրջանցող) ծովային ուղու հայտնաբերման, իսկ ավելի ուշ՝ Սուեզի ջրանցքի կառուցման հետևանքով ցամաքային առևտուրը թուլացավ, այնուամենայնիվ, Պարսկաստանի և Հայաստանի տարածքով անցնող նշանավոր Մետաքսի ճանապարհը պահպանեց իր ռազմավարական նշանակությունը:

Մեծ Բրիտանիան, որն իր Արևելա-Հնդկական ընկերության (East India Company) միջոցով գերիշխող դիրք ուներ Արևելքի հետ իրականացվող ծովային առևտրում, 17-18-րդ դարերի ընթացքում, աստիճանաբար, տնտեսապես և քաղաքականապես նվաճելով Հնդկաստանը և ակտիվացնելով Պարսկաստանի ու Այսրկովկասի տարածքով անցիական առևտուրը, մտավ պայքարի մեջ Վոլգյան-Կասպյան առևտրական ջրային ուղու և, հատկապես, Մետաքսի ցամաքային ճանապարհի նկատմամբ ևս վերահսկողություն հաստատելու համար: Այդ նշանավոր ճանապարհի առանցքային ուղիներից երկուսն անցնում էին Մերվ - Թեհրան - Թավրիզ - Բայազետ - Էրզրում (Կարին) - Տրապիզոն և Մերվ - Թեհրան - Թավրիզ - Բայազետ - Էրզրում - Անկարա (Անգորա) - Կոստանդնուպոլիս գծերով և դրանց միջոցով իրականացվում էր անգլիական առևտուրը* Պարսկաստանից

* Արևմտյան Հայաստանում բրիտանական տնտեսական շահերի, մասնավորապես դեպի նավահանգիստներ ձգվող բրիտանական տարանցիկ առևտրի մասին տես Բայրամյան Լ. Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում. XIX դարի վերջին քառորդում. Երևան, «Հայաստան», 1982:

դեպի Սև ծով: Ինչպես բրիտանացի սպա և ճանապարհորդ Ֆ. Մաունտեյն է իր հորվածում նշում, Արևելյան Անատոլիան (Արևմտյան Հայաստանը-Հ.Ն.) ընկած լինելով Եվրոպայի և Ասիայի միջև, բացում է ճանապարհի դեպի հարավ-արևելք՝ Պարսից ծոց, իսկ այնտեղից էլ՝ դեպի Հնդկաստան և, միաժամանակ, իրար կապում Միջերկրական և Սև ծովերը²³: Այդպիսով, Հայաստանը դառնում էր կարևորագույն հանգույց Հնդկաստանի ու Պարսից ծոցի և Սև ծովի միջև ընթացող միջազգային առևտրում:

1860-ական թթ., բրիտանական կողմի (The Indo - European Telegraph Company) նախաձեռնությամբ և Պարսկաստանի շահ Նասսր Էդ-Դինի համաձայնությամբ իրականացվում է 19-րդ դարի խոշորագույն նախագծերից մեկը. ստեղծվում է Հնդ-Եվրոպական հեռագրական մալուխային ցանցը, որի Պարսկաստան-Եվրոպա հատվածը (Siemens Line) ձգվում էր Լոնդոնից (անցնելով Բեռլին - Վարշավա - Թիֆլիս - Երևան - Ջուֆա - Թավրիզ - Թեհրան - Բուշիք գծով) մինչև Կարաջի և Կալկաթա (Հնդկաստան):

Բրիտանական աշխարհառեչակ Ռոյթերս (Reuters) լրատվական գործակալության հիմնադիր, ծնունդով գերմանացի բրիտանահպատակ բարոն Փոլ Ռոյթերին հաջողվում է 1872թ. Պարսկաստանի շահ Նասսր Էդ-Դինի կողմից ստանալ կոնցեսիա՝ Կասպից ծովը Պարսից ծոցի հետ միացնող երկաթգիծ կառուցելու համար: Սակայն մեկ տարի անց, 1873թ., Ռուսական կայսրության մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգ այցելած Պարսկաստանի շահը, ռուսական կողմի ճնշման տակ, չեղյալ հայտարարեց Փ. Ռոյթերին տրամադրված կոնցեսիան:

Ռազմավարական կարևորագույն դիրք ունեցող Այսրկով-

²³ Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 411, ց. 1, գ. 248թ. 2:

կայան տարածաշրջանում նաև ռազմաքաղաքական ազդեցություն հաստատելու համար բրիտանացիները (Օսմանյան Կայսրության և Պարսկաստանի միջոցով) սկսած 18-րդ դարավերջից և, հատկապես, 19-րդ դարասկզբից պայքարի մեջ էին Ֆրանսիայի և, հատկապես, Ռուսական Կայսրության հետ: Մասնավորապես, 1812թ. Անգլո-պարսկական պայմանագրով նախատեսվում էր բրիտանացիների ղեկավարությամբ ռազմածովային նավատորմի ստեղծում Կասպից ծովում²⁴: Ինչը, սակայն, տեղի չունեցավ և Այսրկովկասը, աստիճանաբար, նվաճվեց Ռուսաստանի կողմից: Արդյունքում, Ռուսական Կայսրության սահմաններն ընդհուպ մոտեցան Թավրիզ - Բայազետ - Էրզրում - Տրապիզոն առևտրական ճանապարհին և ռուսական իրական վտանգը «ղամոկլյան սրի» պես կախվեց բրիտանական առևտրական շահերի գլխին:

19-րդ դարի երկրորդ կեսին բրիտանական աշխարհառազմավարական գլխավոր առանցքը դարձավ Մետրոպոլիան՝ կայսրության գլխավոր գաղութի՝ Հնդկաստանի հետ կապող ցամաքային և, հատկապես, ծովային ուղիների անվտանգության ապահովման ու «բրիտանական թագի ադամանդը» համարվող Հնդկաստանի պաշտպանության խնդիրը:

Դա մի ժամանակաշրջան էր, երբ Ռուսական և Բրիտանական Կայսրությունների միջև ընթանում էր աշխարհառազմավարական մրցակցություն («Մեծ խաղ»)²⁵ այսպես

²⁴ ՀԱԱ, ֆ. 1169, ց. 1, գ. 52, թ. 13:

²⁵ «Մեծ խաղ» (Great Game) արտահայտության հեղինակ է համարվում բրիտանացի հետախույզ սպա Արթուր Քոնոլին (1840-ական թթ.): Սակայն այն լայն տարածում գտավ ի շնորհիվ գրող Ռ. Քիփլինգի «Կիմ» վեպի (1901թ.): Տես Սթու Կոքրիկ Ք. *The Great Game. On Secret Service in High Asia*, Oxford, Oxford University Press, 2001.

կրկնած «ազդեցությունների գոտիների» համար: Այդ պայքարն առանձնակի դրսևորվեց Թուրքեստանում (Միջին Ասիա), Աֆղանստանում, Պարսկաստանում, Հյուսիսային Կովկասում ու Այսրկովկասում: Մասնավորապես, երբ 19-րդ դարի 60 - 70 - ականթթ. Ռուսական Կայսրությունն սկսեց արագորեն իր ազդեցությունը տարածել Կասպից ծովի արևելյան ափին՝ նվաճելով Թուրքեստանի մահմեդական խանությունները, դա Մեծ Բրիտանիայում դիտարկվեց որպես ուղղակի սպառնալիք Հնդկաստանի անվտանգության համար²⁶: Բրիտանացի ռազմավարագետ Չարլզ Մաքգրեգորն իր «Հնդկաստանի պաշտպանությունը» ռազմագիտական աշխատության մեջ շեշտելով Հնդկաստանի աշխարհառազմավարական բացառիկ նշանակությունը Բրիտանական Կայսրության համար՝ նշում էր, որ Ռուսական Կայսրության կողմից Հյուսիսային Կովկասի ու Այսրկովկասի նվաճումը, Կենտրոնական Ասիայում դիրքերի ամրապնդումը, պարսից արքունիքում ռուսական քաղաքական ազդեցության մեծացումը հնարավոր են դարձնում Հնդկաստան ռուսական ներխուժման վտանգը²⁶:

Բրիտանական աշխարհառազմավարագիտական մտքի խոշոր ներկայացուցիչ Հնդկաստանի փոխարքա, ավելի ուշ՝ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի քարտուղար, լորդ Ջորջ Նաթանիել Քեռզոնն իր «Ռուսաստանը Կենտրոնական Ասիայում 1889թ. և Անգլո-ռուսական հարցը»²⁷, և «Պարս-

²⁶ Rawlinson H. C. *England and Russia in the East: A Series of Papers on the Political and Geographical Condition of Central Asia*, London, J. Murray, 1875, p. 314.

²⁶ Macgregor C. M. *The Defence of India. A Strategical Study*, Simla, Government Central Branch Press, 1884, p. 2.

²⁷ Curzon G. N. *Russia in Central Asia in 1889 and the Anglo - Russian Question*, London, Longmans, Green And Co., 1889.

կաստանը և Պարսկական հարցը» աշխատանքներում Բրիտանական Կայսրության համար կենսական տարածք համարելով Հնդկաստանը՝ շեշտում էր. «Մեծ Բրիտանիայի ապագան որոշվելու է ո՛չ եվրոպայում, և ո՛չ էլ անգամ ծովերում և օվկիանոսներում, այլ՝ Մայրցամաքում: Առանց Հնդկաստանի Բրիտանական Կայսրությունը չի կարող գոյություն ունենալ»²⁸: Դեռևս 19-րդ դարավերջին Ջ. Քերզոնը նախանշում էր, որ Աֆղանստանը, Թուրքեստանը և, հատկապես, Պարսկաստանը առանցքային դերակատարություն են ունենալու ապագայում Արևելքի քաղաքական ճակատագրի վրա, և շեշտում. «Դրանք շախմատի խաղատախտակի այն հատվածներն են, որոնց վրա խաղացվում է խաղը՝ աշխարհի տիրապետության համար»²⁹: Հետևաբար, Ջ. Քերզոնը, գլխավոր խնդիր էր համարում Հնդկաստանի սահմանակից տարածքներում բրիտանական ազդեցության հաստատումը և Հնդկաստանի շուրջը «բուֆերային գոտու» ստեղծումը, ինչը պետք է կանխեր դեպի Հնդկաստան ռուսական առաջխաղացումը:՝ Ռազմավարական այդ խն-

²⁸ Curzon G. N. *Persia and the Persian Question*. Vol. 1, London, Longmans, Green and Co., 1892, p. 4.

²⁹ Նույն տեղում, էջ 3 - 4:

* Հնդկաստանին սպառնացող ռուսական վտանգն իսկապես իրական էր: Ռուսական բանակի Գլխավոր շտաբի ռազմավարագետներից գեներալ (ավելի ուշ՝ Թուրքեստանի գեներալ - նահանգապետ) Ալեքսեյ Կուրոպատկինը դեռ 1885թ. կազմել էր այսպես կոչված «Գաղտնի հուշագիր», որն իրենից ներկայացնում էր ռուսական զորքերի կողմից Հնդկաստան հնարավոր ներխուժման ծրագիր: *Stu Armenia. An Anglo-French journal*, London, March 1, 1895, page 3 (ՀԱԱ. Ֆ. 411, ց. 1, գ. 182,թ. 14): Ընդհանրապես, 18-րդ և, հատկապես, 19-րդ դարի ողջ ընթացքում դեպի Հնդկաստան ռազմական հնարավոր արշավանքի կազմակերպման հարցը միշտ էլ եղել է ցարական Ռուսաստանի ռազմաքաղաքական դեկավարության օրակարգում: Այդ մասին մանրամասն տես Sutherland E.

դիրը լուծելու համար, բնականաբար, անհրաժեշտ էր Ռուսաստանի դուրս մղումը Թուրքեստանից, Պարսկաստանից ու Այսրկովկասից:

Այսրկովկասում իրենց քաղաքական ներկայությունն ուժեղացնելու և տարածաշրջանում Ռուսաստանին ավելի ակտիվ հակազդելու նպատակով, բրիտանացիները հասան նրան, որ 1878թ. Թիֆլիսում բացվեց Մեծ Բրիտանիայի հյուպատոսությունն, ինչի դիմաց, սակայն, Ռուսաստանին թույլատրվեց բացել սեփական հյուպատոսությունը Բոմբեյում (Հնդկաստան):³⁰

Ճանապարհորդ և Մեծ Բրիտանիայի պառլամենտի անդամ Հենրի Լինչը, իր եշանավոր աշխատության մեջ նշում էր. «Մեծ Բրիտանիայի, ներառյալ Բրիտանական Հնդկաստանի, շահերը սերտորեն կապված են Օսմանյան Կայսրության ասիական նահանգների (Արևմտյան Հայաստանի-Հ.Ն.) հետ: Քանի որ բրիտանացիները Պարսից ծոցում գրեթե մեկ հարյուրամյակի ընթացքում մեծ դժվարությամբ կարողացել են ստեղծել առևտրական ցանց, որն ընդգրկում է ողջ հարավային Պարսկաստանը և ձգվում է Միջագետքի խորքերը»³¹: Հ. Լինչը շեշտում էր, որ Սև ծովից դեպի Պարսկաստան ձգվող «միջազգային առևտրի մեծ ճանապարհը անցնում էր հայկական հարթավայրերով»³²:

Իր հերթին իրավաբան և Մեծ Բրիտանիայի պառլամենտի անդամ Ջեյմս Բրայսի բնորոշմամբ. «Կովկասը, ցարի (Ռուսական Կայսրության-Հ.Ն.) բոլոր տիրույթներից աշխար-

11. *Russian Project Against India from the Czar Peter to General Skobelev*, London, Remington and Co., 1885.

³⁰ ՀԱԱ, Ֆ. 56, ց. 13, գ. 257, թ. 1:

³¹ Lynch H. F. B. *Armenia*. Vol. 2, London - New York - Bombay, Longmans, Green and Co., 1901, p. 439 - 440.

³² Նույն տեղում, էջ 437:

հազրորեն ամենակարևորն ու ամենահարուստն է»³³: Խոսելով տարածաշրջանի ռազմավարական նշանակության մասին, Ջ. Բրայսն ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ ռուսների կողմից Սևծովյան նեղուցների և Արևմտյան Հայաստանի, մասնավորապես Էրզրումի գրավումը, հնարավորություն կտար բրիտանացիներին ծովով (Սուևզի ջրանցքով) և ցամաքով (Եփրատի ափերով առաջ շարժվելով դեպի Պարսից ծոց), դուրս գալ Հնդկական օվկիանոս և սպառնալ Հնդկաստանում բրիտանական տիրապետությանը³⁴: Հատկանշական է, որ բրիտանացիների համար տարածաշրջանի ռազմավարական բնույթագրում միշտ առաջնային է եղել Էրզրում բերդաքաղաքի նշանակությունը: Մասնավորապես, թուրք-պարսկական սահմանները կարգավորող Էրզրումի կոնֆերանսում (1842 – 1843թթ.) Մեծ Բրիտանիայի կոմիսար, դիվանագետ Ռոբերտ Քերզոնի դիպուկ բնորոշմամբ. «Այն ուժը, որը կտիրի Էրզրումի բերդին, իր ձեռքում կպահի Ասիայի այդ հատվածի ճակատագիրը»³⁵:

Ելնելով այն հանգամանքից, որ բրիտանացիները Հայաստանն ու Այսրկովկասը դիտարկում էին որպես Ռուսաստանի համար ցատկահարթակ՝ ցամաքով Հնդկաստան ներխուժելու համար, 1878թ. մայիսի 1-ի համարում «Թայմս» թերթը արձանագրում էր. «Հայաստան կրնայ դառնալ Հնդ-

կաստանի պատնեշ՝ ռուսական արշավանքին դէմ»³⁶: Հետևաբար, «Անգլիոյ նպատակը Ռուսիան Հայաստանի լեռնադաշտէն անդին պահելն է, Պարսից ծոցն ու Հնդկաստանի ճամբան անոր առջև զոցելու համար»³⁷: Երբ ռուսները ձեռնարկեցին «դեպի տաք ջրերը» իջնելու իրենց ծրագիրը (Պետրոս Մեծի «քաղաքական կտակը») և սկսեցին շարժվել Կովկասյան լեռներից դեպի հարավ, բրիտանացիները «Ռուսիոյ դէմ կանգնեցան, թումբ քաշեցին անոր դէմ»³⁸:

Եթե Այսրկովկասն ու Հայաստանը հանդիսանում էին բնական արգելք ցամաքով դեպի Հնդկաստան և Լեվանտ (Միջերկրական ծովի արևելյան ափեր) ռուսական առաջխաղացման համար, ապա Սևծովյան նեղուցների նկատմամբ Օսմանյան վերահսկողությունը կատարում էր նույն բնական արգելքի դերը՝ կանխելու համար Միջերկրական ծովում ռուսական Սևծովյան նավատորմի մշտական տեղակայումը, ինչն, իր հերթին, չէզոքացնում էր Լոնդոն – Հնդկաստան և Հեռավոր Արևելք ծովային ուղու, մասնավորապես, այդ ուղու առանցքը կազմող Ջիբրալթարի նեղուցի ու Սուևզի ջրանցքի նկատմամբ ռուսական սպառնալիքը:

Սևծովյան նեղուցների կարգավիճակի պահպանումը, միաժամանակ, հնարավորություն էր տալիս Բրիտանական Թագավորական ռազմածովային նավատորմի մուտքը Սև ծով, որն ըստ «Թայմս» թերթի. «Գրեթե վերածվել էր

³³ Bryce J. *Transcaucasia and Ararat. Being Notes of a Vacation Tour in the Autumn of 1876*, London, Macmillan and Co., 1878, p. 88.

³⁴ Նույն տեղում, էջ 414 – 415:

³⁵ Curzon R. *Armenia. A Year at Erzeroum, and on the Frontiers of Russia, Turkey, and Persia*, London, John Murray, 1854, p. 192.

³⁶ Տիգրանեան Տ. Անգլիան եւ հայերը, Երևան, «Մ. Վարանդեան» հրատ, 1994, էջ 12:

³⁷ Թումանեան Կ. Պատմութիւն Արևելեան խնդրոյ և առաջնորդ Հայկական հարցի, Լոնտոն, 1905, էջ 598:

³⁸ Պետրոս Մեծի «քաղաքական կտակի» մասին տես Sykes P. *A History of Persia*, Vol. 2, London, Macmillan and Co., 1921, p. 244 – 246.

³⁸ ՀԱԱ, ֆ.424, ց.1, Գ.4,թ. 2 – 3:

ռուսական լճի»³⁹: Հետևաբար, ինչպես 1892թ. հունիսի 4-ին հրապարակված կառավարության հուշագրում լրդդ Ռոբերտ Սոլսբերին էր շեշտում. «Կոստանդնուպոլսի պաշտպանությունը ռուսական նվաճումից եղել է բրիտանական արտաքին քաղաքականության շրջադարձային կետը»⁴⁰: Արտաքին քաղաքական այդ դոկտրինն իր արտահայտությունը գտավ թե՛ Ղրիմի (Արևելյան՝ 1853 - 1856թթ.), և թե՛ 1877-1878թթ. Ռուս-թուրքական պատերազմների ժամանակ: Մասնավորապես, Ղրիմի պատերազմի ժամանակ Անգլո - ֆրանսիական նավատորմը հասնելով Սևաստոպոլ և խորտակելով ռուսական Սևծովյան նավատորմը՝ մի քանի տասնամյակով վերացրեց Կոստանդնուպոլսի և Նեղուցների սպառնացող ռուսական վտանգը՝ ծովից: Սակայն, ցամաքից (Արևմտյան Հայաստանի վրայով) եկող վտանգը ամենևին էլ չվերացավ և իրեն զգացնել տվեց 1877-1878թթ. պատերազմի ժամանակ: 1877թ. դեկտեմբերի 4-ին Կոստանդնուպոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Օսթին Հենրի Լայարդը առևտրի քարտուղար Դերբիի կոմս Ֆրեդերիկ Սթենլիին գրում է, որ Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի գրավումը կհանգեցնի աշխարհառազմավարական 4 խոշոր հետևանքերի. 1) Ազդեցություն կունենա Կենտրոնական Ասիայի և Հնդկաստանի մուսուլման բնակչության վրա, 2) Պայմաններ կստեղծի Ռուսաստանի կողմից Փոքր Ասիայում և Պարսկաստանում հետագա նվաճումների համար, 3) Ուղղակիորեն հետևանքներ կունենա Հնդկաստանի հետ մեր հաղորդակցության վրա, 4) Ազդեցություն

³⁹ ՀԱԱ, ֆ. 411, ց. 1, գ. 229,թ. 2-ի շրջ:

⁴⁰ Somakian M. J., *Empires in Conflict: Armenia and the Great Powers. 1895 - 1920*. London - New York, I. B. Tauris and Co., 1995, p. 5.

կունենա բրիտանական առևտրի վրա⁴¹:

Այդ սպառնալիքը չեզոքացնելու նպատակով, բրիտանացիները հասան նրան, որ 1878թ. մայիսի 18 (30)-ի Անգլո-ռուսական համաձայնագրով ռուսական կողմը Օսմանյան կայսրությանը վերադարձրեց Ալաշկերտի հովիտը (Բայազետ քաղաքով), որտեղով անցնում էր Թավրիզ - Բայազետ - Էրզրում - Տրապիզոն առևտրական ուղին: Իր հերթին Մեծ Բրիտանիան համաձայնվում էր «վճի առարկայ չդարձնել Ռուսաստանի Կայսեր ցանկությանը՝ ձեռք բերելու Բաթում նաահանգիստը և պահպանելու իր նուաճումները Հայաստանում (նկատի ունի Կարսն ու Արդահանը-Հ.Ն.)»⁴²:

Արդեն նույն թվականի հունիսի 4-ին Կոստանդնուպոլսում ստորագրված Անգլո-թուրքական պաշտպանական գաղտնի համաձայնագիրը նախատեսում էր Օսմանյան Կայսրության ասիական տիրույթներին, ռուսական սպառնալիքի դեպքում, Մեծ Բրիտանիայի անվերապահ աջակցությունը: Սակայն, իր ստանձնած պարտավորության կատարման դիմաց, Մեծ Բրիտանիան ստիպում է թուրքական կողմին բրիտանական կառավարմանը հանձնել Միջերկրական ծովում ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող Կիպրոս՝ կղզին⁴³: Ինչպես նշում էր լրդդ Ռ. Սոլսբե-

⁴¹ *British Documents on Ottoman Armenians, Vol. 1 (1856 - 1880)*. Ed. by Bilal N. Simsin, Ankara, Turk Tarih Kurumu basimevi, 1982, p. 135.

⁴² Լազեան Գ. Հայաստան եւ Հայ դատը ըստ դաշնագրերու, Գահիրե, «Յուսաբեր», 1942, էջ 9 - 10:

⁴³ Կիպրոս կղզին կառավարվում էր բրիտանական գերագույն կոմիսարի կողմից: 1880թ. այն ենթարկվում է Մեծ Բրիտանիայի գաղութների քարտուղարությանը և, միաժամանակ, անվանական շարունակում էր համարվել Օսմանյան Կայսրության մաս: Տես *Рассел Анатолийской Турции. По секретным документам б. Министерства Иностранных дел. Под ред. Е. А. Адамова*. Москва, Литмузда НККИД, 1924, с. 155:

րին, որպեսզի Մեծ Բրիտանիան «կարողանայ իր առաջարկած պարտականութիւնները կատարել, անհրաժեշտ է, որ ան Փոքր Ասիա կամ Սուրիոյ մօտ տեղ մը դիրք գրաւէ... Կիպրոս կղզին, ըստ երեւոյթին, ամենէն յարմար տեղն է այս նպատակի համար»⁴⁴: Միևնույն ժամանակ, Անգլո-թուրքական համաձայնագրի հավելվածի (ստորագրված 1878 թվականի հուլիսի 1-ին) 6-րդ կետը արձանագրում էր, որ պատերազմի արդյունքում Ռուսաստանի կողմից գրաված Կարսը և մյուս տարածքները Օսմանյան Թուրքիային վերադարձնելու պարագայում բրիտանացիները կհեռանան Կիպրոսից և հունիսի 4-ի համաձայնագիրը իր ուժը կկորցնի⁴⁵:

Ռուսաստանի ռազմական հաջողությունները Կովկասյան ռազմաճակատում, բրիտանական կողմի մոտ վախ էր առաջ բերել, թե ռուսները գրավելով Արևմտյան Հայաստանը և շարժվելով դեպի Կիլիկիա՝ կարող են դուրս գալ Միջերկրականի արևելյան ափերը և սպառնալ բրիտանական շահերին, միաժամանակ, թե ցամաքում, և թե ծովում: Ռուսի «երբ Ռուսիա յաջողեցաւ Կարսն ու Արտահանը գրաւել, ապա-հուութեան համար իբրև հակակշիռ այդ յառաջացման, Անգլիան ալ Կիպրոսը առաւ»⁴⁶:

1895թ. հոկտեմբերի 25-ի իր զեկուցագրում Լոնդոնում գործող ռուսական ռազմական գործակալ Ն. Երմոլովը նշում

⁴⁴ *European concert in the Eastern Question. A Collection of Treaties and other Public Acts*, Ed. by Holland T. E., Oxford, Clarendon Press, 1885, p. 354.

⁴⁵ Լազեան Գ. Հայաստան եւ Հայ դատը. (Վաներագրեր), Գահիրէ «Նոր աստղ», 1946, էջ 70:

⁴⁶ *Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Том 1. Сост. и отв. ред. Ю. Г. Барсегов*, Москва, «Гардарики», 2003, с. 93.

⁴⁶ Ռուրէն, նշվ. աշխ., էջ 37:

էր, որ, ելնելով Հնդկաստանի անվտանգությունից, Մեծ Բրիտանիան ամեն հնարավոր միջոցի կղիմի փակելու համար Ռուսաստանի բոլոր ելքերը դեպի Խաղաղ օվկիանոս, Միջին Ասիա, Փոքր Ասիա ու դեպի Աֆրիկայի արևելյան ափերը և, միաժամանակ, բաց չի թողնի ոչ մի հնարավորություն՝ հարված հասցնելու ռուսական շահերին Ասիայում⁴⁷: Մասնավորապես, բրիտանացի հասարակական և պետական գործիչների (մեծամասամբ պառլամենտի անդամների) անդամակցությամբ և Զ. Բրայսի նախագահությամբ «Անգլո - հայկական ընկերության» ստեղծումը խնդիր ուներ Արևմտյան Հայաստանում ուժեղացնելու բրիտանական ազդեցությունը՝ հակազդելով տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերին: Հետևաբար, ինչպես գրում է տնտեսագետ Բախշի Իշխանյանը, 1878թ. ի վեր «բրիտանական դիվանագիտության ամեն մի հայանպաստ քայլ, արտահայտված լինի դա վճռական ուլտիմատումներով, թե պաշտամենտական ճանքերով, եղել է մի շեշտակի հարված, մի պարսավաքար՝ նետված կղզիաբնակ երկրից դեպի սառցապատ Նևայի ափերը, ուղղված «Ծովային թագուհուց»՝ «Հյուսիսային Արջի» հասցեին»⁴⁸: Ինչպես պրոֆեսոր Լ. Շիրինյանն է գրում, 1878թ. (Բեռլինի կոնգրեսում) Հայաստանը «ընդդրվեց ուժերի միջազգային հաշվեկշռում՝ վերածվելով, իր կամքից անկախ, «Եվրոպական համանվագի» (Եվրոպական Մեծ տերությունների-Հ.Ն.) մանրա-

⁴⁷ Саркисян Е. К. Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти 19-го и начале 20-го вв., Ереван, Издат. АН Арм. ССР, 1972, стр. 166 - 167.

⁴⁸ Իշխանեան Բ. Տաճկահայ խնդիրը եւ միջազգային դիպլոմատիան, Թիֆլիզ, «Հերմէս», 1906, էջ 52:

դրամի»⁴⁹: Ավելին, գերմանացի նշանավոր իրավաբան Յոհաննես Լեփսիուսի դիպուկ բնորոշմամբ. «Լոնդոնի և Պետերբուրգի քաղաքագիտական ճատրակին մեջ Հայը (հայ ժողովուրդը-Հ.Ն.) զինուորն էր, որ երբեմն լառաջ կը քշուեր, երբեմն կը զոհուեր (կզոհաբերվեր-Հ.Ն.)»⁵⁰:

Մեծանուն պատմաբան Նիկողայոս Ադունցն իր «Թուրքիայի անդամահատումը» հոդվածում գրում է, որ Մեծ Բրիտանիան ի վերջո գալով այն համոզման, որ հայերի ռուսական կողմնորոշումը անսասանելի է, իր աջակցությունն ու համակրանքը տվեց քրդերին⁵¹: Ավելին, էրզրումի բրիտանական հյուպատոսությունը, ում ենթակա էին Դիարբեքիի, Բիթլիսի ու Վանի հյուպատոսությունները, կոչվում էր «Քուրդիստանի հյուպատոսություն» և իրականացնում էր քաղաքական և հետախուզական ակտիվ գործունեություն⁵²: Քուրդիստանը քաղաքական օրգանիզմ դարձնելու և այն Ռուսաստանի դեմ որպես պատենշ օգտագործելու գաղափարը պատկանում էր հենց հյուպատոս Փելգրեյվին:

Այսպիսով, բրիտանական դիվանագիտությունը, մերձավորարևելյան քաղաքականությունում, սկսած 1830-ական թթ., ինչպես բնորոշում է պրոֆեսոր Ա. Կիրակոսյանը, հաջողությամբ իրականացնում էր Կոստանդնուպոլիսը, Նեղոցներն ու Արևմտյան Հայաստանը «Ռուսաստանից

պաշտպանելու գերխնդիրը»⁵³: Սակայն 19-րդ դարավերջին, Մեծ Բրիտանիայի համար «Նեղոցների հարցից» ավելի կարևոր է դառնում Սուեզի ջրանցքի պաշտպանության հարցը⁵⁴: Այս իմաստով, 1896 - 97թթ. «Արևելյան հարցի»⁵⁵ պատմության մեջ շրջադարձային էին: Քանի որ լորդ Ռ. Սոլսբերիի կառավարությունը Մեծ Բրիտանիայի Մերձավորարևելյան քաղաքականության առանցքը տեղափոխեց եգիպտոս՝ սևծովյան նեղուցների հարցը մղելով երկրորդ պլան, միաժամանակ Ռուսաստանը՝ փոխելով իր արտաքին քաղաքական կուրսը, սկիզբ դրեց տարածքային և տնտեսական էքսպանսիային Հեռավոր Արևելքում⁵⁶:

Ստեղծված բարենպաստ պայմաններից օգտվում է Գերմանական Կայսրությունը: Վիլիելմ 2-րդ կայսեր կողմից 1889 և 1898թթ. Կոստանդնուպոլիս կատարած այցերի արդյունքում սկիզբ է դրվում Գերմանական և Օսմանյան Կայսրությունների միջև ռազմաքաղաքական սերտ հարաբերություններին և գերմանական տնտեսական էքսպանսիային Մերձավոր Արևելքում: Դա նշանակում էր, որ

⁵¹ Կիրակոսյան Ա. Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. - 1914), Երևան, «Գիտություն», 1999, էջ 439:

⁵² Spykman N. J. *America's Strategy in World Politics*, p. 102.

⁵³ «Արևելյան հարց» հասկացությունը շատ անորոշ է, և այն իրենից ներկայացնում է մի շարք տեղային հարցերի («Բալկանյան», «Եգիպտական», «Հայկական» և այլն) ամբողջություն: «Արևելյան հարց» եզրույթն առաջին անգամ պաշտոնապես դրվեց շրջանառության մեջ «Արբազան դաշինքի» Վերոնայի կոնգրեսում (1822թ.) և անգլիական դիվանագիտության բառարանում հայտնվեց Հունաստանի անկախության պատերազմի շրջանում (Steu' Marriot J. A. R. *The Eastern Question. An Historical Study in European Diplomacy*, Oxford, University Press, 1917, p. 2):

⁵⁵ Anderson M. S. *The Eastern Question, 1774 - 1923*, London, Macmillan, New York, St Martin's Press, 1966, p. 261.

⁴⁹ Շիրինյան Լ. Նոր աշխարհակարգը և Հայաստանը, Երևան, «Լուսակն», 2006, էջ 110:

⁵⁰ Դատավարություն Թալէթթ - Փաշայի. Սղագրական զեկուցում, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1921, էջ 94:

⁵¹ Adon N. *Towards the Solution of the Armenian Question*, Yerevan, S. n., 2007, p. 78.

⁵² Лазарев М. С. *Курдский вопрос (1891 - 1917)*, Москва, «Наука», 1972, с. 55.

«հետրիսմարկյան» Գերմանիան իր «Մայրցամաքային» քաղաքականությունից անցում էր կատարում դեպի «Համաշխարհային քաղաքականություն» (*Weltpolitik*):

Կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկը, ով առաջնային էր համարում այսպես կոչված «Միջին Եվրոպայի»⁵⁷ հայեցակարգից բխող քաղաքականությունը և, ելնելով դրանից, ձգտում էր հասնել ռուս - գերմանական ռազմաքաղաքական դաշինքի ստեղծմանը, համոզված էր, որ Գերմանիան չպետք է ներգրավվի Արևելյան հարցում և, հետևաբար, չպետք է պատերազմի Արևելքում՝ ընդդեմ Ռուսաստանի: Ավելին, կանցլերի կարծիքով Գերմանիան կշահի, եթե Ռուսաստանը ռազմական կամ դիվանագիտական ճանապարհով հաստատվի Սևծովյան նեղուցներում՝ դրանով իսկ հարված հասցնելով Գերմանիայի գլխավոր հակառակորդ Մեծ Բրիտանիայի դիրքերին Միջերկրական ծովում⁵⁸: Ելնելով Մերձավոր Արևելքում և Բալկաններում առկա ուժերի ռազմավարական հարաբերակցությունից՝ Օ. ֆոն Բիսմարկը նշում էր. «Այն հարցը, թե արդյո՞ք արևելյան այս քառում Անգլիայի, էլ ավելի Ավստրիայի, առավել ևս Ռուսաստանի հետ երկարատև տարածայնությունների մեջ կհայտնվենք, Գերմանիայի համար անհամեմատ ավելի կարևոր է, քան Թուրքիայի հարաբերություններն իր հպատակների և

⁵⁷ «Միջին Եվրոպայի» աշխարհառազմավարական հայեցակարգից բխող քաղաքականության արդյունքն էին 1879թ. հոկտեմբերի 7-ին Վիեննայում Ավստրո - Հունգարիայի և Գերմանիայի, և 1882թ. մայիսի 20-ին՝ Վիեննայում՝ Ավստրո - Հունգարիայի, Իտալիայի և Գերմանիայի միջև ստորագրված համաձայնագրերը, որոնք հիմք դարձան «Եռյակ դաշինքի» ստեղծման համար:

⁵⁸ Бисмарк Отто фон, Воспоминания. Мемуары. Том 2, Минск, «ХАРВЕСТ», Москва, «АСТ», 2001, с. 290-291.

Եվրոպական տերությունների հետ»⁵⁷:

Ինչ վերաբերում է Վիլիելմ 2-րդ կայսեր օրոք մշակված Գերմանիայի արտաքին քաղաքական դոկտրինին, որը կոչվեց «*Drang Nach Osten*» («Գրոհ դեպի Արևելք»), ապա այն ենթադրում էր գերմանական դիրքերի ամրապնդումը Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայում (Բալկաններում): Ինչպես Ալեքսանդր Գիրսն էր դիպուկ նկատել. «Եվրոպական հավասարակշռությունը ընկած է Միջերկրական ծովում: Սուեզի ճեղքմամբ, այդ ծովը դարձավ համաշխարհային ծովային ուղու կայանը: Հետևաբար, ափամերձ տերությունները հանդիսանում են Եվրոպական հավասարակշռության էական գործոն, իսկ Միջերկրական ծով ելք չունեցող պետությունները վերջին ճանապարհներով ձգտում են նրան, ինչն իրենց չի պատկանում»⁵⁸: Եվ ահա «*Drang Nach Osten*»-ը հենց խորհրդանշում էր գերմանական ելքը դեպի Միջերկրական ծով, ինչն էլ արագացնելու էր գերմանական ներթափանցումն ու ազդեցության հաստատումը Մերձավոր Արևելքում: «Թայմս» թերթն իր 1899թ. մայիսի 13-ի համարում խոսելով այդ մասին նշում էր, որ Գերմանիան հույս ուներ հմուտ դիվանագիտության միջոցով «գերմանական արժի թևերի ստվերը տարածել Անատոլիայի և Միջագետքի վրա»⁵⁹:

Թերևս իրավացի է ռուս պատմաբան Մ. Պավլովիչը, ով շեշտում էր, որ Առաջին համաշխարհային պատերազմի պատճառներից մեկը հանդիսացավ Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Գերմանիայի կողմից երկաթգծային խոշոր

⁵⁷ Завоуц В. Գերմանական Կայսրությունը և Հայկական հարցը 1878 - 1914. Երևան, «Նաիրի», 2008, էջ 19:

⁵⁸ Гирс А. А. Австро - Венгрия, Балканы и Турция. Задачи войны и мира, Петроградъ, «Огни», 1917, с. 49.

⁵⁹ ՀԱՍ, ֆ. 411, ց. 1, գ. 227, թ. 3:

նախագծերի իրականացման հարցում նրանց միջև համաձայնության հասնելու անհնարինությունը⁶⁰։ Մասնավորապես, գերմանական հայտնի «Երեք Բ» (Բեռլին - Բյուզանդիոն - Բաղդադ կամ Բեռլին - Բաղդադ - Բասրա) երկաթգծային խոշոր նախագծին, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը պատասխանեցին, համապատասխանաբար, «Երեք Կ» (Կապշտադտ (Քեյփթաուն) - Կահիրե - Կալկաթա) և «Երկու Պ» (Պետերբուրգ - Պարսից ծոց) երկաթգծային նախագծերի առաջ քաշումով։

Բաղդադյան երկաթգծի կառուցման գաղափարը ծագել է դեռևս 1830-ական թթ. տաղանդավոր ռազմավարագետ, հետագայում Գերմանական կայսերական բանակի Գլխավոր շտաբի պետ Հելմուտ ֆոն Մոլտկե Ավագի և գերմանացի տնտեսագետ Ֆրիդրիխ Լիստի կողմից։ Մասնավորապես Ֆ. Լիստն առաջինն էր, ով դեռևս 1830-1840-ական թթ. առաջ քաշեց ռազմական ուժերի հարաբերակցության վրա երկաթգծերի ազդեցության մասին տեսությունը⁶¹։ Նա, հիմնավորելով երկաթգծերի քաղաքական և տնտեսական նշանակությունը, ընդգծում էր Կենտրոնական Եվրոպայից դեպի Սև ծով, և այնտեղից էլ՝ Պարսից ծոց (Բաղդադ ու Բասրա քաղաքների միջով) ձգվող հին առևտրական ճանապարհների վերականգնման անհրաժեշտությունը՝ կառուցվող երկաթգծի օգնությամբ⁶²։

Փաստորեն, հենց «Բաղդադյան երկաթգծի»-ի ռազմա-

վարությունը պետք է դառնար «Drang Nach Osten»-ի դոկտրինի միջուկը, քանզի գերմանական ռազմավարագիտական միտքը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օսմանյան Կայսրությունը միակ պետությունն է, որն ընկած է երեք մայրցամաքների միացման հանգույցում՝ վերջինիս դիտարկում էր որպես ապագա Մեծ պատերազմում ռազմավարական բացառիկ ցատկահարթակ Արևելքում՝ ընդդեմ Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի։ Այդպիսով, Օսմանյան Կայսրությունը դառնում էր «կենսական խաղալվանդակ այն խաղատախտակին, որի վրա Գերմանիան խաղում էր համաշխարհային տերության իր խաղը»⁶²։

Գերմանացի ինժեներ Վիլիելմ ֆոն Պրեսեյի կողմից նախագծված և 2400 կմ երկարություն ունեցող Բեռլին - Վիեննա - Կոստանդնուպոլիս - Բաղդադ - Բասրա - Քուլեյթ երկաթգծի կառուցումը և դրա արդյունքում գերմանական դիրքերի ամրապնդումը Մերձավորարևելյան տարածաշրջանում սպառնալիք էր ստեղծում և՛ ռուսական դիրքերին Այսրկովկասում, ու Միջին Ասիայում, և՛ ուղղակիորեն հարվածի տակ դնում Մերձավոր Արևելքով անցնող և Հնդկաստան ձգվող բրիտանական առևտրի ցամաքային ու ծովային ուղիների անվտանգությունը։ Գերմանացի աշխարհառազմավարագիտական մտքի խոշորագույն դեմքերից մեկը՝ Պաուլ Ռոհրբախն իր «Բաղդադյան երկաթգիծ» աշխատության մեջ գրում էր, որ Եվրոպայից՝ ցամաքով, «միայն մեկ տեղից, այն է Եգիպտոսից կարելի է հարված հասցնել Մեծ Բրիտանիային»⁶³։ Պ. Ռոհրբախը ռազմավարագիտական իր այդ տեսությունը զարգացրեց «Պատերազ-

⁶⁰ Павлович М. Империализм и борьба за великие железнодорожные и морские пути будущего, Ленинград, Госиздат., 1925, с. 24.

⁶¹ Մանրամասն տես *Makers of Modern Strategy. Military Thought from Machiavelli to Hitler*. Ed. By Earle F. M., Princeton, Princeton University Press, 1973, p. 148 - 154.

⁶² Силин А. С. Экспансия Германии на Ближнем Востоке в конце XIX века, Москва, «Наука», 1971, с. 12.

⁶² Toynbee A. J. Turkey: A Past and Future, New York, George H. Doran Co., 1917, p. 49.

⁶³ Павлович М. նշվ. աշխ., էջ 55 - 56:

մը և գերմանական քաղաքականությունը» աշխատության մեջ, որտեղ շեշտում էր, որ Բաղդադյան երկաթգծի սիրիական հատվածի կառուցումը միայն հնարավոր կդարձներ թուրքական ցամաքային մեծաթիվ բանակի արագ տեղաշարժը դեպի Եգիպտոսի սահման, որտեղից (հաղթահարելով 400 կմ տարածություն) կհասցվեր ուժգին հարված Սուեզի ջրանցքին⁶⁴: Արդյունքում Եգիպտոսի հետ միասին, Մեծ Բրիտանիան կկորցներ Ասիայի հետ կապվող ծովային հաղորդակցության կարճ և գլխավոր ուղին՝ Սուեզի ջրանցքը: Այս ամենից ելնելով՝ պանգերմանացիները շեշտում էին, որ «Բաղդադյան երկաթգծը կդառնա Բրիտանական Հնդկաստանի վրա կախված սուրը»⁶⁵: Իր հերթին, «Բաղդադյան երկաթգծի» ռազմավարության «ճարտարապետներից» մեկը, նշանավոր ռազմավարագետ, գեներալ-ֆելդմարշալ Կոլմար ֆոն դեր Գոլցը 1899թ. գրում էր, որ թուրքական բանակը «պատրաստ է գերմանական սպաների հրամանատարությանը գրավելու Եգիպտոսը և շարժվելու Պարսից ծոցից դեպի Հնդկաստանի սահմանը»⁶⁶:

Այն ժամանակ, երբ Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի քաղաքական հետաքրքրությունները Փոքր Ասիայում և Սևծովյան նեղուցների շրջանում մղվել էին երկրորդ պլան, Գերմանիան դիվանագիտական պայքարում հաղթող դուրս

գալով՝ 1899-1903թթ.* ընթացքում կարողացավ Օսմանյան կայսրության կառավարության կողմից ստանալ Բեռլին - Բաղդադ երկաթգծի կառուցման կոնցեսիան: Այսպիսով, 19-րդ դարավերջին և 20-րդ դարակզբին Գերմանական կայսրության ռազմաքաղաքական ու ֆինանսատնտեսական էքսպանսիան հանգեցնում է ուժերի ռազմավարական հավասարակշռության խախտմանը Մերձավոր Արևելքում:

Ստեղծված իրավիճակում, Սուդանի՝ անգլո-եգիպտական բռնակցումը (1898) ու Ֆրանսիայի հետ «Ֆաշոդյան ճգնաժամի»՝ խաղաղ հանգուցալուծումը, և Անգլո-բուրական պատերազմի (1899-1902թթ.) հաղթական ավարտը, ապահովեցին Մեծ Բրիտանիայի մերձավորարևելյան քաղաքական կուրսի վերադարձը: Արդեն 1903թ. Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի քարտուղար, լորդ Հենրի Լենսդաունը 1903թ. մայիսին Լորդերի պալատում պաշտոնապես հայտարարեց, որ Պարսից ծոցում որևէ տերության կողմից ռազմածովային բազայի ստեղծման ցանկացած փորձ Մեծ Բրիտանիայի համար կնշանակի «Causus Belli» (պատերազմի

* 1899թ. դեկտեմբերի 27-ին Օսմանյան կառավարության և Գերմանական Ազգային բանկի ղեկավար Գեորգ ֆոն Սիմենսի միջև ստորագրվեց երկաթգծի կառուցման մասին նախնական կոնվենցիան: Արդեն 1903թ. մարտի 5-ին ստորագրված համաձայնագրով վերջնականապես Գերմանիային տրվեց երկաթգծի կառուցման կոնցեսիան՝ 99 տարով: *См. Тарае Е. В. Сочинения. Том 5. Европа в эпоху империализма. 1871 - 1919 гг., Москва, Изд - во АН СССР, 1958, с. 136. Бондаревский Г. Л., Узд., աշխ., էջ 258:*

* «Ֆաշոդյան ճգնաժամի» խաղաղ հանգուցալուծումը, որի արդյունքում Ֆրանսիան ճանաչեց Սուդանի անգլո - եգիպտական բռնակցումը, իսկ վերջինս էլ ճանաչեց Ֆրանսիական իրավունքները Մարոկկոյում, արագացրեց Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև 1904թ. ապրիլի 8-ի Լոնդոնի «Արտալից համաձայնագրի» (*Entente Cordiale*) ստորագրումը: Համաձայնագրի տեքստը տես Asquith H. H. *The Genesis of the War*, New York, George H. Doran Co., 1923, p. 372 - 376.

⁶⁴ Рорбах П. Война и германская политика. Пер. с нем., Москва, Изд. Г. А. Лемана и С. И. Сахарова, 1915, с. 21.

⁶⁵ Бондаревский Г. Л. Багдадская дорога и проникновение германского империализма на Ближний Восток. (1888 - 1903), Ташкент, Госиздат. Узб. ССР, 1955, с. 46.

⁶⁶ Ферстер Г., Гельмерт Г., Отто Г., Шнитцер Г. Пруско - германский генеральный штаб. 1640 - 1965, К его политической роли в истории. Пер. с нем., Москва, «Мысль», 1966, с. 94.

առիթ)՝⁶⁷։ Իսկ Հնդկաստանի փոխարքա, լորդ Ջ. Քերզոնը ոգևորված արձանագրեց, որ լորդ Հ. Լենսդաունի հայտարարությունը, դարձավ Մեծ Բրիտանիայի «Մոնրոյի դոկտրինը»⁶⁸։ Ավելին, լորդ Էլենբորոուն 1904թ. շեշտեց. «Ավելի լավ է տեսնել Ռուսաստանին Կոստանդնուպոլսում, քան գերմանական ռազմական զինանոցը՝ Պարսից ծոցում»⁶⁹։

1900-ական թթ. կեսերից, իր հերթին, Ռուսաստանը հրաժարվելով հեռավորարևելյան ակտիվ քաղաքականությունից՝ արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնը կրկին տեղափոխեց Մերձավոր Արևելք։ Դա գլխավորապես պայմանավորված էր Ռուս-ճապոնական պատերազմում կրած ծանր պարտությամբ, իր հարավային սահմաններին հասունացող գերմանական սպառնալիքով, ինչպես նաև դեպի Միջերկրական ծով և Պարսից ծոց դուրս գալու նրա վաղեմի ծրագրերով։ Մասնավորապես, Կովկասյան լեռների միջով Վլադիկավկազ - Թիֆլիս - Ալեքսանդրապոլ - Երևան - Ջուլֆա - Թավրիզ երկաթուղու կառուցմամբ ավելի էր ամրապնդվելու Ռուսաստանի դիրքերը Պարսկաստանում։ Ելնելով սրանից, Պ. Ռոիրբախն անգամ շտապում է արձանագրել, որ Մեծ Բրիտանիայի ազդեցությունն այլևս չունի «ապագա» ցամաքում՝ Պարսից ծոցից մինչև Կասպից ծով և Քուրդիստանի լեռներից մինչև Հնդկաստանի դարպասներն ընկած տարածքում՝⁷⁰։

⁶⁷ Штейнберг Е. Л. История британской агрессии на Среднем Востоке, Москва, Воениздат, 1951, с. 153.

⁶⁸ Ерлин Д. Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть. Пер. с англ., Москва, «ДеНово», 1999, с. 154.

⁶⁹ Рейснер И. Англо-русская конвенция 1907 года и раздел Афганистана. «Красный архив», Москва, том 3 (10), Москва, Госиздат, 1925, с. 57.

⁷⁰ Whigham H. J. The Persian Problem. An Examination of the Rival Positions of Russia and Great Britain in Persia, with some Account of the Persian Gulf and the Bagdad Railway, London, Isbister and Co., 1903, p. 330-331.

Գերմանական դիրքերի աննախադեպ ուժեղացումը Օսմանյան Կայսրությունում և դրա հետևանքով Այսրկովկասին, Պարսկաստանին՝ ու Հնդկաստանին սպառնացող գերմանական իրական վտանգը, ստիպեց որպեսզի երկու դարավոր հակառակորդ կայսրությունները՝ Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը գնան փոխգիշման և մերձեցման։ Պարսկական հարցի շուրջ անգլո-ռուսական բանակցությունները, որոնք սկսվեցին 1903թ., ակտիվացան 1906թ.՝ Ալեքսանդր Իզվոլսկու արտաքին գործերի նախարար դառնալուց հետո։ Նույն թվականի նոյեմբերին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի քարտուղար Էդուարդ Գրեյը և Պետերբուրգում Մեծ Բրիտանիայի դեսպան Աթոթո Նիքոլսոնը Ա. Իզվոլսկուն առաջարկում են կնքել համաձայնագիր Պարսկաստանի հարցի շուրջ⁷¹։ Սկզբնապես ռուսական որոշ շրջանակներ դեմ արտահայտվեցին Պարսկաստանը ազդեցությունների ոլորտների բաժանելու մասին բրիտանական առաջարկին՝ պահանջելով ամբողջ Պարսկաստանի նկատմամբ ռուսական ազդեցության հաստատում, ինչը թույլ կտար իրականացնելու անդրպարսկական երկաթգծի՝ կառուցումը և ունենալ ելք դեպի Պարսից ծոց⁷²։

⁷¹ 20-րդ դարակզրին Պարսկաստան գերմանական ներթափանցման մասին մանրամասն տես Истязин Л. Г. Германское проникновение в Иран и русско-германские противоречия накануне Первой Мировой войны., Москва, «Наука», 1979.

⁷² Հարությունյան Ա. Հ. Առաջին համաշխարհային պատերազմի ռազմա-դիվանագիտական

Պատմությունից (1914 - 1918). Երևան, «Հայաստան», 1983, էջ 68:

⁷³ 1907թ. արդեն, պայմանավորված Ուլունխալու (ներկայումս՝ Մափիս) - Ջուլֆա երկաթգծի շինարարության ավարտով, ռուսական երկաթուղին հասել էր Պարսկաստանի սահմանին։

⁷⁴ Сидней Фей, Происхождение Мировой войны. Том 1. Пер. с англ., Москва, Соцэкгиз, 1934, с. 158.

ի վերջո 1907թ. օգոստոսի 31-ին Սանկտ-Պետերբուրգում ստորագրված Անգլո-ռուսական կոնվենցիայով՝ Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը ճանաչում էին միմյանց «հատուկ շահերը»՝ Պարսկաստանում, Աֆղանստանում և Տիբեթում: Թեև կողմերը կոնվենցիայով պաշտոնապես ճանաչեցին Պարսկաստանի տարածքային ամբողջականությունն ու անկախությունը, այնուամենայնիվ, փաստացի այն բաժանվեց ազդեցությունների գոտիների: Մասնավորապես, Պարսկաստանի՝ Ռուսական կայսրության սահմանակից հյուսիսային շրջանները (ներառյալ Թավրիզն ու մայրաքաղաք Թեհրանը) ներառվեցին ռուսական ազդեցության գոտու մեջ, իսկ Պարսկաստանի հարավարևելյան շրջանները (Սեյստանն ու Բելուջիստանը), որտեղով անցնում էին դեպի Հնդկաստան տանող առևտրային ճանապարհները, կազմեցին բրիտանական ազդեցության գոտին⁷⁴:

Միաժամանակ, բրիտանական ռազմաքաղաքական որոշ շրջանակներում հայտնի, այսպես կոչված «միջինարևելյան» խմբավորումը (լորդ Ջ. Քերզոնի գլխավորությամբ), որը կողմնակից էր Մերձավոր Արևելքում բրիտանական գերիշխանության հաստատմանը և դեմ էր անգլո-ռուսական մերձեցմանը, հասավ կոնվենցիայի պայմանների վերանայմանը: Մասնավորապես, Պարսկաստանի կենտրոնական շրջաններում ստեղծվեց «չեզոք գոտի», ինչը միտված էր

թույլ չտալու Ռուսաստանի ելքը դեպի Պարսից ծոց⁷⁴: Հատկանշական է, որ եթե «բրիտանական ազդեցության գոտին» կազմում էր շուրջ 355 000 կմ², ապա «ռուսական ազդեցության գոտին» կազմում էր շուրջ 790 000 կմ², իսկ «չեզոք գոտին»՝ շուրջ 500 000 կմ² տարածք⁷⁵:

Էդ. Գրեյն իր հուշերում գրում է, որ Անգլո-ռուսական կոնվենցիան միտված էր կանգնեցնելու ռուսական առաջխաղացումը դեպի Հնդկաստան, իսկ Պարսից ծոցը դուրս մնաց «ռուսական ազդեցության գոտուց» ու թողնվեց «չեզոք գոտու»⁷⁶: Ավելին, Մեծ Բրիտանիայի թագավոր Էդուարդ 7-րդը կոնվենցիան բնորոշեց որպես «բրիտանական դիվանագիտության մեծագույն նվաճում»⁷⁷: Անշուշտ, այս կոնվենցիան բրիտանական դիվանագիտության հաղթանակն էր, քանզի այն արձանագրեց Պարսկաստանը Կայսերական Գերմանիայի աշխարհառազմավարական առանցքի մեջ մտցնելու փորձերի ջախջախիչ պարտությունը, ամրապնդեց բրիտանական ազդեցությունը Պարսկաստանի հարավարևելյան շրջաններում՝ կանգնեցնելով ռուսական առաջխաղացումը դեպի դեպի Պարսից ծոց, Հնդկական օվկիանոս, Աֆղանստան և Հնդկաստան: Միաժամանակ, բրիտանական դիվանագիտությունը այս կոնվենցիայի ստորագրմամբ տրամաբանական ավարտին հասցրեց հակազերմանական հզոր դաշինքի՝ Անտանտի, ձևավորման գործընթացը, որի

* Պարսկաստանի կառավարությունը Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի ճնշման տակ, միայն 1912թ. փետրվարի 18-ին պաշտոնապես ճանաչեց կոնվենցիան: Տես Բայբուրդյան Վ. Իրանի պատմություն, Երևան, «Ձանգակ - 97», 2005, էջ 534:

⁷⁴ Անգլո-ռուսական կոնվենցիայի տեքստը տես Сборник договоров России с другими государствами. 1856 - 1917. Под. ред. Адамов Е. А., Москва, Гос. изд - во. полит. лит., 1952, с. 386 - 393.

⁷⁴ Бондаревский Г. Л. Английская политика и международные отношения в бассейне Персидского залива (конец XIX - начало XX в.), Москва, «Наука», 1968, с. 44.

⁷⁵ Изгачиев А. В. Внешняя политика России в 1905 - 1907, Москва, «Наука», 1986, с. 191.

⁷⁶ Viscount Grey of Fallodon. Twenty - five Years, vol. 1. New York, Frederick A. Stokes Co., 1925, p. 154 - 155.

⁷⁷ Остапцева А. Ф. Англо - русское соглашение 1907 года, Саратов, Саратовский университет, 1977, с. 234.

սկիզբը դրվել էր դեռևս 1892թ. ֆրանս-ռուսական ռազմական կոնվենցիայի* և 1904թ. ապրիլի 8-ին Լոնդոնում Անգլո-ֆրանսիական համաձայնագրի ստորագրումով:

Միաժամանակ, սակայն, կոնվենցիայի ստորագրումը ամենևին էլ չէր նշանակում ռուսական դիվանագիտության պարտությունը: Կովկասի փոխարքա Իլարիոն Վորոնցով - Դաշկովը ցարին ուղղված նամակում գրում էր. «Մեր ազդեցութիւնը Կովկասին մօտիկ Արեւելքում՝ Պարսկաստանում և Փոքր Ասիայում խախտուել է ճակոհական պատերազմի հետեանքով, բայց մենք յետ կբերենք այդ ազդեցութիւնը եւ ավելի մեծ չափով, երբ Ռուսաստանը մի քիչ ամրապնդուի»⁷⁵: Ավելին, Ռուսաստանի Մինիստրների խորհրդի նախագահ Ս. Վիտտեն գնահատելով Անգլո-ռուսական կոնվենցիան, նշում էր, որ Կովկասի հարավային մասերի (Այսրկովկասի-Հ.Ն.) նվաճումից հետո, Պարսկաստանի հյուսիսային մասի դառնալը Ռուսական կայսրության մաս, կամ նրա վրա ռուսական պրոտեկտորատի հաստատումը կանխանշանակված էր բնականորեն⁷⁶: Այդպիսով, Ռուսաստանն իր արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնը Հեռավոր Արևելքից կրկին տեղափոխում էր Մերձավոր Արևելք, ասել է թե՛ Ռուսական Կայսրությունը վերադառնում էր «Պետրոսի կտակին»: Հետևաբար օրկարգ էր վերադառնում Մերձավոր Արևելքում Ռուսաստանի ռազմավարական գլխավոր խնդրի՝ Յարգրադի (Կոստան-

* 1892թ. օգոստոսի 17-ի Ֆրանս-ռուսական ռազմական կոնվենցիայի տեքստը տես Сборник договоров России с другими государствами, с. 281 - 282.

⁷⁵ Խոնդկարեան Ա. Վարանցով-Դաշկովի նամակները ցարին. «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, մայիս 1929, թիվ 7, էջ 87 - 88:

⁷⁶ Витте С. Ю. Воспоминания, мемуары. Том 2, Минск, «ХАРВЕСТ», Москва, «АСТ», 2002 с. 593.

դնուպոլսի) և Սևծովյան նեղուցների գրավումը՝ դրանով իսկ դեպի Միջերկրական ծով Սևծովյան նավատորմի ազատ ելքի ապահովումը, և միաժամանակ, օտարերկրյա ռազմանավերի մուտքը Սև ծով փակելը: Դա փաստացի նշանակում էր, որ Ռուսաստանը «հանուն Կոստանդնուպոլսի հրաժարվեց Պորտ Արթուրից»⁸⁰:

Այսպիսով, Անգլո-ռուսական կոնվենցիայի ստորագրումը ազդարարեց Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի միջև Կենտրոնական Ասիայում, Պարսկաստանում, Կովկասում ու Այսրկովկասում շուրջ մեկ դար ընթացած աշխարհառազմավարական «Մեծ խաղի» ավարտը: Սակայն մերձավորարևելյան տարածաշրջանում Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի կողքին աշխարհառազմավարական «մեծ խաղատախտակի» վրա նոր հզոր «խաղացողի»՝ Կայգերական Գերմանիայի հայտնվելով, սկիզբ էր դրվում մի նոր «Մեծ խաղի»:

19-րդ դարավերջին և, հատկապես, 20-րդ դարակզբին, երբ «աժուխի դարաշրջանին» փոխարինելու էր գալիս «նավթի դարաշրջանը», և հետևաբար նավթը աշխարհում ձեռք էր բերում ռազմավարական հումքի նշանակություն, մեծ տեղությունների, այդ թվում Բրիտանական Կայսրության համար, Այսրկովկասի աշխարհառազմավարական նշանակությունն էլ ավելի մեծացավ՝ շնորհիվ Ապշերոնյան շերակղզում առկա նավթային հսկայական պաշարների: Մինչև 1905թ., նավթի արդյունահանումը Բաքվում կազմում էր տարեկան միջինը 600 մլն փուֆ, իսկ 1905թ. հետո (հայ-թաթարական բախումների ժամանակ ավերվեցին Բաքվի նավթարդյուարերական ենթակառուցվածքների զգալի մասը)՝ կազմում էր տարեկան մինչև 500 մլն փուֆ⁸¹: 20-րդ դա-

⁸⁰ Остальева А. Ф. նշվ. աշխ., էջ 9.

⁸¹ ՀԱԱ, ֆ. 56, ց. 13, գ. 831, թ. 37:

րասկզբին, Բաքվի և Գրոզնու նավթադաշտերի շնորհիվ, ցարական Ռուսաստանը նավթի արդյունաբերությամբ աշխարհում երկրորդն էր՝ ԱՄՆ-ից հետո: Բաքվի շրջանը համարվում էր Ռուսական կայսրության արդյունաբերական կարևորագույն կենտրոնը, իսկ նավթն ու կերոսինը ուներին բացառիկ նշանակություն կայսրության տնտեսական կյանքի համար: Ցարական իշխանությունների բնորոշմամբ Բաքուն իր կենսակերպով նման էր ամերիկյան արդյունաբերական քաղաքներին՝ «իր բոլոր պահանջմունքներով և թերություններով»:⁸²

Դեռևս 1872թ. փետրվարի 1-ի նավթարդյունահանման մասին օրենքով՝, ցարական կառավարությունը թույլատրեց մասնավոր ներդրողներին մասնակից դառնալու Ապշերոնյան թերակղզու նավթարդյունաբերությանը: Սա հնարավորություն տվեց, որպեսզի արտասահմանյան, այդ թվում՝ բրիտանական կապիտալը աստիճանաբար հոսի դեպի Բաքու: Բրիտանական կապիտալը Բաքվի նավթարդյունաբերություն մուտք գործեց 1890-ական թթ. վերջերին, այդ նպատակով Լոնդոնի Սիթիում ստեղծված 10 ընկերությունների միջոցով: Դրանցից վեցը ստեղծվել էին ֆինանսիստների մի խմբի կողմից՝ անգլիական բանկի տնօրեններից մեկի՝ Է. Գուբարդի գլխավորությամբ: 1899թ. ապրիլի 11-ի «Թայմս»-ի համարում հրատարակված Կովկասի գեներալ - նահանգապետ Գրիգորի Գոլիցինի գաղտնի զեկույցում նշվում էր, որ 2 - 3 տարիների ընթացքում Բաքվի նավթարդյունաբերության մեջ, ինչպես նաև Կովկասի այլ տարածքներում բրիտանական հսկայական կապիտալի

⁸² ՀԱՍ, ֆ. 1262, ց. 3, գ. 243, թ. 1:

⁸³ Օրենքի մասին տես ՀԱՍ, ֆ. 56, ց. 13, գ. 844, թ. 1 - 12:

ներգրավման մասին⁸³: Միայն 1898 - 1901թթ., անգլիացիները Բաքվի նավթարդյունաբերության ոլորտում ներդրեցին 4.1 մլն. ֆունտ ստերլինգ⁸⁴:

Ապշերոնյան նավթը Բաքու - Թիֆլիս - Բաթում երկաթգծով (ցիստերն-վագոններով) և երկաթգծին զուգահեռ կառուցված Բաքու - Միխայլովո - Բաթում նավթատարով՝ հասնում էր Սև ծով, որտեղից լցանավերով նավթը տեղափոխվում էր եվրոպական և ասիական շուկաներ: Ինչպես լորդ Ջ. Քերզոնն էր գրում. «ռուսական կերոսինը Բաքվից կառավարում էր համաշխարհային շուկաները»:⁸⁵:

1904թ. Բրիտանական Թագավորական ռազմածովային նավատորմի Ծովային Առաջին լորդի (Ռազմածովային Գլխավոր շտաբի պետի) պաշտոնը ստանձնելով՝ ծովակալ Ջոն Ֆիշերը սկիզբ դրեց նավատորմի արմատական բարեփոխումներին և մշակեց նոր ռազմավարություն: Նա, ում անվանում էին «նավթային մոլազար» և «նավթի կլքբահայր», առաջ քաշեց խոշոր գծանավերով, տորպեդային սուզանավերով, ավիակիր նավերով, վերջապես խոշոր տրամաչափի հրանոթներով զինված ռազմանավերով (*dreadnought*)՝ նավատորմը համալրելու և դրանք շահագործումը նավթով կազմակերպելու լայնամասշտաբ ծրագիր: Ըստ Ջ. Ֆիշերի, ածուխից նավթին անցումը կբարձրացներ ռազմանավերի արագությունը, շարժունակությունը և

⁸³ ՀԱՍ, ֆ. 411, ց. 1, գ. 239, թ. 1:

⁸⁴ Դադայան Խ. Հայերը և Բաքուն (1850-ական թթ.-1920թ.), Երևան, «Նորավանք» ԳԿԸ, 2006, էջ 31:

⁸⁵ Նավթատարի սխեմա - քարտեզը տես ՀԱՍ, ֆ. 247, ց. 3, գ. 186:

⁸⁶ Curzon G. N. Persia and the Persian Question. Vol. 1, p. 208.

⁸⁷ Խոշոր տրամաչափ ունեցող հրանոթներով սպառազինված «dreadnought» դասի առաջին ռազմանավը շարք մտավ 1906թ.:

արդյունավետություն⁸⁶։ Բրիտանական ռազմածովային նավատորմի՝ նավթային վառելիքին անցնելու հարցը, վերջնականապես, վճռվեց, երբ 1911թ. հոկտեմբերի 25-ին Ուինսթոն Չերչիլը ստանձնելով Ծովակալության Առաջին լորդի պաշտոնը՝ ընդունեց Ջ. Ֆիշերի կողմից բերված հիմնավորումները։ Արդյունքում, 1912թ. բրիտանական ռազմածովային նավատորմը աճխի օգտագործումից անցում կատարեց նավթային վառելիքի օգտագործմանը⁸⁷։ Սակայն 1912թ. դրությամբ բրիտանական նավատորմի նավթային պահեստներում առկա էր ընդհամենը 200 000 տոննա վառելիք⁸⁸։ Սա, բնականաբար, ապագա Մեծ պատերազմի համար բավարար չէր։ Ստեղծված իրավիճակում Ու. Չերչիլի նախաձեռնությամբ 1914թ. փետրվարի 18-ին բրիտանական կառավարությունը որոշում է ընդունում «Անգլո-պարսկական նավթային ընկերության»՝ բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթի ձեռքբերման մասին։ Արդեն մայիս 20-ին Ծովակալությունը ընկերության հետ ստորագրում է պայմանագիր, ըստ որի ընկերության կապիտալը 2-ից հասցվում էր 4 մլն ֆունտ ստեռլինգի՝ ի շնորհիվ կառավարության կողմից ներդրված 2.2 մլն ֆունտ ստեռլինգի, ինչի դիմաց ընկերությունը

պարտավորվում է 30 տարով իրականացնել պարսկական նավթի կանոնավոր մատակարարում Բրիտանական Թագավորական ռազմածովային նավատորմին⁸⁹։ Այս քայլով, սակայն, Բրիտանական Թագավորական ռազմածովային նավատորմը, ուելսյան ածուխի հուսալի մատակարարման փոխարեն կախման մեջ էր հայտնվում պարսկական նավթի խոցելի մատակարարումից։ Հետևաբար Մեծ Բրիտանիայի համար առաջ է գալիս աշխարհառազմավարական մի նոր առանցքային խնդիր, այն է այսրկովկասյան և մերձավորարևելյան նավթային պաշարների նկատմամբ վերահսկողության հաստատումը։ Քանզի, ինչպես ծովակալ Ջ. Ֆիշերն էր կարճ ձևակերպել. «Ով տիրում է նավթին, նա էլ կառավարում է աշխարհը»⁹⁰։

Այդպիսով, 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին Հայաստանն ու Այսրկովկասը Մեծ Բրիտանիայի համար ձեռք էին բերել քաղաքական, տնտեսական և ռազմավարական կարևորագույն նշանակություն։ Հետևաբար, ակնհայտ էր դառնում ապագա Մեծ պատերազմում աշխարհի խոշորագույն կայսրությունների աշխարհառազմավարական շահերի բախումն այս տարածաշրջանում։

⁸⁶ Fisher J. A. *Memories and Records*. Vol. 1, New York, George H. Doran Co., 1920, p. 123. Fisher J. A. *Memories and Records*. Vol. 2, New York, George H. Doran Co., 1920, pp. 184 - 196.

⁸⁷ Скрипачин Н. В. 100 великих адмиралов, Москва, «Вече», 2009, с. 303.

⁸⁸ Фурсенко А. А. Нефтяные войны (конец XIX – начало XX в.), Ленинград, «Наука», 1985, с. 123.

* 20-րդ դարի սկզբին ավստրալիացի գործարար Ուիլյամ Նոքս դը Արպին, Պարսկաստանում նավթարդյունահանելու համար պարսից շահի կողմից կոնցեսիա ստանալով, 1909թ. հիմնադրում է հայտնի «Անգլո-պարսկական նավթային ընկերությունը»։ Վերջինս 1935թ. վերանվանվում է «Անգլո-իրանական նավթային ընկերություն», իսկ 1954թ.՝ «Բրիթիշ Փեթրոլիում»։

⁸⁹ Фурсенко А. А., նշվ. աշխ., էջ 126։

⁹⁰ Фурсенко А. А. Нефтяные тресты и мировая политика 1880-е годы - 1918, Москва - Ленинград, «Наука», 1965, с. 376.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԷԼՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ԱՇԽԱՐՀԱՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ «ՄԵԾ ԽԱՂԱՏԱԽՏԱԿԻ» ԿՐԱ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱՋՄԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

2.1. Պատերազմի սկիզբը: Դարդանեյյան ռազմավարական փակուղին

18-րդ դարում Մեծ Բրիտանիայի կողմից մշակված ուժերի հարաբերակցության կոնցեպցիան 200 տարի զերիշխում էր եվրոպական դիվանագիտության մեջ, սակայն 19-րդ դարում Մետերնիխի Ավստրիան վերակառուցեց «Եվրոպական համանվազը», իսկ ավելի ուշ Բիսմարկի Գերմանիան այն փլուզելով՝ «Եվրոպական դիվանագիտությունը վերածեց ուժային քաղաքականության ստոնադրյուն խաղի»⁹¹: 19-րդ դարի վերջին քառորդում ուժերի հավասարակշռության համակարգը Եվրոպայում գործում էր ի շնորհիվ այն հանգամանքի, որ եվրոպական խոշոր տերությունները Ասիայում և Աֆրիկայում զբաղված էին գաղութների ձեռքբերմամբ, սակայն դարավերջին «Եվրոպայի սահմաններից դուրս գաղութային ձեռքբերումների բոլոր հնարավորությունների սպառումը իր հերթին սպառնում էր համաեվրոպական պատերազմի թռկվմամբ»⁹²:

Իտալա - թուրքական պատերազմը (1911-1912թթ.)⁹³, որի արդյունքում 1912թ. հոկտեմբերի 18-ին Լոզանում ստորագր-

ված հաշտության պայմանագրով Հյուսիսային Աֆրիկայի օսմանյան վերջին տիրույթները՝ Տրիպոլիտանիան և Կիրենական (միասին կազմեցին «Լիբիա» գաղութը) և Դոդեկանեսյան կղզիներն անցան Իտալիային, ծանր հարված հասցրեց Օսմանյան կայսրությանը և առաջ բերեց լուրջ տեղաշարժեր Միջերկրածովյան ավազանի շրջանում առկա ուժերի հարաբերակցությունում՝ ավելի սրելով եվրոպական պետությունների միջև ռազմածովային և տնտեսական մրցակցությունը Հյուսիսային Աֆրիկայում, Բալկաններում և Մերձավոր Արևելքում⁹³:

Միջերկրածովյան ավազանի շրջանում առկա ուժերի հարաբերակցությունն էլ ավելի խախտվեց 1912-1913թթ. Բալկանյան պատերազմներում: Ռուսաստանի աջակցությունը վայելող Բալկանյան դաշինքից կրած պարտության արդյունքում, Օսմանյան Կայսրությունը կորցրեց գրեթե իր բոլոր տիրույթները Բալկանյան թերակղզում, բացառությամբ՝ Ադրիանապոլսի: Այս ամենը հանգեցրեց Բալկաններում նաև Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի ռազմավարական դիրքերի թուլացմանը, ինչին ձգտում էր Մեծ Բրիտանիան, միաժամանակ, վերջինիս վախեցնում էր Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը թերակղզում:

Ռուսաստանն էլ, իր հերթին, Բալկաններում, իր դիրքերն ամրապնդելուն զուգահեռ, փորձում էր ամրապնդվել նաև Փոքր Ասիայում՝ օգտագործելով Բալկանյան պատերազմների ֆոնին վերաբացված «Հայկական հարցը»: Թեև «Հյուսիսային արջն իր էությանը մնացել էր միեւնոյն լրբա-

⁹¹ Киссинджер Г. Дипломатия. Пер. с англ., Москва, «Ладомир», 1997, с. 9.

⁹² Огеуծ Բ., նշվ. աշխ., էջ 82 – 83:

⁹³ Մեծ Բրիտանիան ձգտելով «Եռյակ դաշինքից» Իտալիայի դուրս գալուն և նրա «Անտանտին» միանալուն, մեծապես նպաստեց Իտալիայի հաղթանակին: Մասնավորապես, քրիտանական եգիպտոսը հայտարարեց պատերազմում իր չեզոքության մասին, ինչի արդյունքում, օսմանյան

հյուսիսաֆրիկյան փոքրաթիվ զորախումբը զրկվելով ցամաքից համալրումներ ստանալու հնարավորությունից, ջախջախվեց իտալական բանակի կողմից:

⁹³ Яхшиович З.П. Итало-турецкая война 1911–1912 гг., Москва, «Наука», 1967, с. 4.

նովեանը (նկատի ունի արտգործնախարար Ալեքսեյ Լորանով-Ռոստովսկու «Հայաստանն առանց հայերի» սկզբունքը-Հ.Ն.), բայց հայերը հարկատու էին նրան առժամանակ, որպեսզի կարողանար նրանց ուսերի վրայ ստղծել Հայաստանի լեռնադաշտն»⁹⁴: Ավելին, ինչպես Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Հանս ֆոն Վանգենհայմն է նշում. «Հայկական հարցի օգնութեամբ Ռուսաստանը կամենում է իր առջեւ բաց պահել Պոլսի ճանապարհը: Դա այն բանալին է, որը պիտի բանայ Նեղոցները»⁹⁵: Սակայն այս խնդրի ռազմական ճանապարհով լուծումը, ենթադրվում էր իրականացնել միայն Արևմտյան Հայաստանում բարենորոգումների ծրագրի տապալման դեպքում, և այն էլ՝ Կովկասյան երկաթգծի՝ կառուցումից հետո⁹⁶:

1913թ. հունիսի 8-ին Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպանի առաջին դրագոման (թարգման) Անդրեյ Մանդելշտամի կողմից ներկայացված և Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դեսպանների կողմից խմբագրված հայկական բարենորոգումների ծրագիրը, որն ենթադրում էր հայկական 6 վիլայեթների միավորումով հայկական մարզի ստեղծում, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի կողմից դիտարկվեց որպես Փոքր Ասիայում ռուսական դիրքերն ամրապնդելուն ուղղված ուղղակի քայլ: Հատկանշական է, որ գերմանական ռազմա-

կան շրջանակներում, ելնելով ռազմավարական տեսանկյունից, Արևմտյան Հայաստանի շրջանները դիտվում էին որպես Բաղդադյան երկաթուղին Ռուսաստանից «պաշտպանող» շրջաններ⁹⁷: Ավելին, Պ. Ռոհրբախը շեշտում էր, որ Արևմտյան Հայաստանի բռնակցումը Ռուսաստանի կողմից՝ «Թուրքիայի համար կնշանակի վերջի սկիզբը», և, կորցնելով Արևմտյան Հայաստանը՝ «Թուրքիան քաղաքականապես ու ռազմականապես կկորցնի իր կենսունակությունը»⁹⁸:

Հայկական բարենորոգումների հարցի շուրջ, որը պատմաբան Լեոյի բնորոշմամբ, եվրոպական դիվանագիտության համար դարձել էր «գորղեան հանգույց»⁹⁹, եվրոպական մեծ տերությունների միջև ընթացող դիվանագիտական պայքարի արդյունքում, 1914թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին), ստորագրվեց Ռուս-թուրքական հայտնի համաձայնագիրը¹⁰⁰: Հատկանշական է, որ համաձայնագրում Արևմտյան Հայաստանի փոխարեն նշվեց Արևելյան Անատոլիա:

Իր հերթին Մեծ Բրիտանիան, չկարողանալով կանխել Գերմանիայի կողմից Բաղդադյան երկաթգծի կառուցումը, փորձեց թուրքական և գերմանական կողմերի հետ բանակցություններ վարելով՝ կանխել գերմանացիների ելքը դեպի Պարսից ծոց: Բանակցությունների արդյունքում 1914թ. փետրվարի 7-ին ստորագրվեց Անզոն-թուրքական համաձայնա-

⁹⁴ Լեո. Թուրքահայ յեղափոխության գաղափարաբանութիւնը. հատոր Բ, Երևան, «Շաղիկ», 1994, էջ 81-82:

⁹⁵ Մանդելշտամ Ա. Ն. Ռուսաստանի քաղաքականութիւնը Թուրքիայում Մեծ պատերազմից առաջ. «ՎԷՄ» հանդես, Փարիզ, մայիս-ունիս 1935, թիւ 2, էջ 59:

⁹⁶ Խոսքը ռազմավարական նշանակություն ունեցող Կարս - Սարիղամիշ երկաթգծի մասին է, որը կառուցվեց 1912-1914 թվականներին:

⁹⁷ Davison H. R. The Armenian Crisis. 1912-1914, New York, The Armenian National Council of America, 1948, p. 8.

⁹⁷ Истиян Л. Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по Армянскому вопросу (1912-1914 гг.). Из истории агрессивной внешней политики германского империализма (сборник статей), Москва, Издат. ИМО, 1959, с. 16.

⁹⁸ Рорбах П., նշվ. աշխ., էջ 61-62:

⁹⁹ Լեո. Հայոց հարցի վաներագրերը. Թիֆլիս, տպ. «Ն. Ադանես», 1915, էջ 400:

¹⁰⁰ Сборник дипломатических документов. Реформы в Армении. 26 ноября 1912 - 10 мая 1914 года, Петроград, Гос. типография, 1915, с. 162 - 165.

գիրը, որով Օսմանյան Կայսրությունը ճանաչում էր Մեծ Բրիտանիայի պրոտեկտորատը (1899թ.-ից) Քուվեյթի նկատմամբ, պարտավորվում էր թույլ չտալ Բաղդադյան երկաթգծի Բասրա-Պարսից ծոց հատվածի կառուցումը, ճանաչվում էր Եփրատ և Տիգրիս գետերով նավագնացության բրիտանական իրավունքը, և, վերջապես, Բրիտանական «Անգլո-պարսկական նավթային ընկերությանն» էին տրվում նավթի արդյունահանման բոլոր կոնցեսիաները Միջագետքում¹⁰¹: Այդպիսով, Քուվեյթն այլևս չէր կարող դառնալ Բաղդադյան երկաթգծի վերջնակետը, ինչպես ծրագրված էր նախապես:

Իր հերթին, սակայն, գերմանական կողմը չէր կարող հանդուրժել բրիտանական մենաշնորհի կոնցեսիան Միջագետքի նավթի արդյունահանման ոլորտում: Արդյունքում, 1914թ. մարտի 19-ին, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի կառավարությունների միջև ստորագրվեց համաձայնագիր, որով Միջագետքում նավթարդյունահանման կոնցեսիայի բաժնետոմսերի 50 տոկոսն անցավ բրիտանական «Անգլո-պարսկական նավթային ընկերությանը», 25 տոկոսը՝ անգլո-հոլանդական «Շելլ»-ին և մյուս 25 տոկոսը՝ գերմանական «Դոյչե բանկին»¹⁰²: Ի պատասխան Միջագետքում նավթային մենաշնորհի կոնցեսիայից բրիտանական կողմի հրաժարման՝ 1914թ. հունիսի 15-ի Լոնդոնի Անգլո-գերմանական համաձայնագրով գերմանական կողմը համաձայնվեց Բաղդադյան երկաթգծի վերջնակետ սահմանել Բասրան:¹⁰³:

Այդ նույն ժամանակահատվածում գերմանական Գլխա-

վոր շտաբում հաղթանակեց ռազմավարագիտական այն տեսությունը, ըստ որի «Կոստանդնուպոլիսը խաղում է բացառիկ դեր» և «ով տիրում է դրան, նա տիրում է ամբողջ Թուրքիային, իսկ Կոստանդնուպոլիսն տիրում է նա, ով տիրում է բանակին»: Հետևաբար, եթե Գերմանիան ցանկանում էր «Թուրքիային դնել այն նույն կարգավիճակում, որում որ գտնվում էր Եգիպտոսը (Մեծ Բրիտանիայի համար-Հ.Ն.), ապա նա (Գերմանիան-Հ.Ն.) պետք էր իր ձեռքը վերցնե՞ր Կոստանդնուպոլիսն ու թուրքական բանակը»¹⁰⁴: Հենց այս խնդրի լուծմանն էին ուղղված Բեռլինում թուրքական նախկին ռազմական կցորդ Էնվերի գլխավորությամբ թուրքական բանակի՝ Գերմանիայում կրթություն ստացած սպաների (որոնց Գերմանիայի կայսր Վիլիելմ 2-րդն անգամ անվանում էր «գերմանացի սպաներ»¹⁰⁵) կողմից 1913թ. հունվարի 23-ին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած զինված հեղաշրջումը, և 1913թ. նոյեմբերի 27-ին կնքված Գերմանա-թուրքական համաձայնագիրը՝ թուրքական բանակը վերակառուցելու նպատակով Օսմանյան Կայսրություն գերմանական ռազմական նոր առաքելություն ուղարկելու մասին: Գեներալ Լիման ֆոն Սանդերսի գլխավորած ռազմական առաքելությունը՝ դեկտեմբերի 14-ին ժամանելով Կոստանդնուպոլիս՝ սկսեց իր ձեռքում կենտրոնացնել Օսմանյան բանակի ղեկավարումը:

¹⁰⁴ ՀԱԱ, ֆ. 502, ց. 1, գ. 189, թ. 4:

¹⁰⁵ German Diplomatic Documents. 1871 - 1914. Vol. 3, London, Methuen and Co. LTD., 1930, p. 365.

* Գեներալ Լ. ֆոն Սանդերսի ռազմական առաքելության կազմում սկզբնապես ընդգրկված էին գերմանական բանակի 42 սպաներ, որոնց թիվը Առաջին համաշխարհային պատերազմի ողջ ընթացքում հասավ 800-ի: Steu Sanders Liman von. Five Years in Turkey. Nashville, The Battery Press, 2000, p. 20 - 21.

¹⁰¹ Anderson M. S., նշվ. աշխ., էջ 266-267:

¹⁰² Ерлин Д., նշվ. աշխ., էջ 205:

¹⁰³ Аветян А. С. Германский империализм на Ближнем Востоке. Колониальная политика германского империализма и миссия Лимана фон Сандерса, Москва, «Международные отношения», 1968, с. 33.

Առաքելության ժամանումը Կոստանդնուպոլիս մեծ իրարանցում առաջ բերեց Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի ռազմաքաղաքական շրջանակներում: Մասնավորապես, 1914թ. փետրվարի 13-ին Սանկտ Պետերբուրգում նախարարների հետ խորհրդակցության ժամանակ, ցար Նիկոլայ 2-րդը գերմանական առաքելության ժամանումը գնահատեց որպես Գերմանիայի կողմից փորձ՝ «բանտարկելու» Ռուսաստանին Սև ծովում¹⁰⁶: Իր հերթին Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Սազոնովը առաջարկեց բրիտանական կողմին, որպես գերմանական առաքելությանը համարժեք քայլ, նշանակել ռուս սպաներ Արևմտյան Հայաստանում և բրիտանացի սպաներ՝ Ասիական Թուրքիայում¹⁰⁷: Սակայն դա անել այլևս հնարավոր չէր:

Եվ ահա Կայսերական Գերմանիայի կողմից Եվրոպայում և Մերձավոր Արևելքում ուժերի ռազմավարական հավասարակշռության (Գերմանիայի ռեյսսկանցլեր Թեոբալտ ֆոն Բելթան-Հոլվեգն այն անվանում էր պարզապես «թղթե տնակ»¹⁰⁸), խախտումը հանգեցրեց Առաջին համաշխարհային պատերազմին, իսկ 1914թ. հունիսի 28-ին Սարաևոյում սերբ ազգայնական Գավրիլո Պրինցիպի կողմից Ավստրո-Հունգարիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը միայն արագացրեց Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումը¹⁰⁹: Թեև պատերազմը սկսվեց Բալկանյան թերակղզում, սակայն դրա բռնկման ակունք-

¹⁰⁶ Somakian M. J., նշվ. աշխ., էջ 53:

¹⁰⁷ British Documents on the Origins of the War. 1898 - 1914, Vol. X, Part 1. The Near East on the Eve of War. Ed.

by Gooch G.P., Temperley H., London, H. M. Stationery Office, 1936, p. 340.

¹⁰⁸ Бетман - Гольве: Т. Мысли о войне, Пер. с нем., Москва - Ленинград, Госиздат, 1925, С. VII.

¹⁰⁹ Schmitt B. E. The Coming of the War 1914. Vol. 1, London, Charles Scribner's sons, 1930, p. 77.

ներում, անշուշտ, Մերձավորարևելյան չլուծված խնդիրներն էին, այդ թվում՝ Նեղոցների ու Կոստանդնուպոլսի հարցը:

Պատերազմի սկսման մասին որոշումը կայացվել էր դեռևս 1914թ. հուլիսի 5-ին և 6-ին՝ Պոտսդամում: Արդեն 1914թ. հուլիսի 28-ին Ավստրո-Հունգարիան պատերազմ հայտարարեց Սերբիային: Դրան հետևեց Ռուսաստանում զորահավաքի հայտարարումը, ինչին ի պատասխան՝ օգոստոսի 1-ին՝ Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, իսկ օգոստոսի 3-ին՝ Ֆրանսիային: Արդեն օգոստոսի 4-ին Մեծ Բրիտանիան պատերազմ հայտարարեց Գերմանիային:

Պատերազմը պետք է ավարտվեր մի քանի շաբաթների ընթացքում, համաձայն Գերմանական բանակի Գլխավոր շտաբի պետ, գեներալ-ֆելդմարշալ Ալֆրեդ Շլիֆֆենի կողմից կազմված պլանի*։ Վերջինիս հիմքում ընկած «կայծակնային պատերազմի» («Blitzkrieg»)՝ ռազմավարությունը են-

* «Շլիֆֆենի պլանը» իրապարակվեց 1905թ. դեկտեմբերին Ա. Շլիֆֆենի «Պատերազմ ընդդեմ Ֆրանսիայի» հուշագրում (Строков А. А. Вооруженные силы и военное искусство в Первой Мировой войне, Москва, Воениздат, 1974, с. 172): Պլանի համաձայն, գերմանական բանակի օպերատիվ-մարտավարական գլխավոր խնդիրն էր Արևմտյան ռազմաճակատում իրականացնել թևանցում-շրջանցում, ինչի արդյունքում ֆրանսիական բանակը պետք է հայտնվեր ամբողջությամբ շրջափակման մեջ և ջախջախվեր: Դա ավելի խոշոր մասշտաբներով կրկնելու էր Հաննիբալի կողմից հռոմեական բանակի շրջափակումն ու ջախջախումը Կանենեում (Ք.ա. 216թ.), և գեներալ-ֆելդմարշալ Հ. Մոլտկե Ավագի կողմից ֆրանսիական բանակի շրջափակումն ու ջախջախումը Սեղանում (1871թ.): Պլանը մանրամասն տես Шаффе А. Камы. Пер. с нем., Москва, Воениздат, 1938.

* Բլիցկրիգ («Blitzkrieg») եզրույթը սկսվել է շրջանառվել 1740թ. Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ Մեծի կողմից առանց պատերազմ հայտարարելու և կայծակնային արագությամբ Միլենդիա ներխուժումից հետո:

թաղրում էր պատերազմ երկու ռազմաճակատով. նախ պետք է ջախջախվեր ֆրանսիական բանակը Արևմտյան ռազմաճակատում, ապա ռուսականը՝ Արևելյան ռազմաճակատում: Պլանը կազմված էր Մեծ Բրիտանիայի չեզոքության պահպանման հաշվարկով, ինչը, սակայն, տեղի չունեցավ: Ինչպես գեներալ էրիկ ֆոն Ֆայկենհայնն է նշում, Ա. Շիֆֆենը «պարտավոր էր լրջորեն վերաբերել Անգլիայի մասնակցությանը»¹¹⁰: Ժամանակին գեներալ - ֆելդմարշալ Հ. Ֆոն Մոլտկե Ավագը խորհուրդ էր տվել առաջինը հարձակողական գործողություն ծավալել Ռուսաստանի դեմ և հետո միայն՝ Ֆրանսիայի, բացառելու համար Մեծ Բրիտանիայի անմիջապես ներգրավումը պատերազմին¹¹¹: Սակայն Ա. Շիֆֆենի և նրա հաջորդի՝ գեներալ Հելմուտ ֆոն Մոլտկե Կրտսերի, մտտեցումները մնացին անփոփոխ: Արդյունքում, Մեծ Բրիտանիան մտավ պատերազմի մեջ, իսկ նրա «մասնակցությունը փոխեց պատերազմի բնույթը՝ եվրոպականից վերածվելով համաշխարհայինի»¹¹²: Սկսված Առաջին համաշխարհային պատերազմը դարձավ մարդկության պատմության մեջ առաջին «տոտալ պատերազմը»:

Պատերազմի սկզբում բրիտանական ռազմավարությունը հիմնված էր իրեն բնորոշ՝ «Շովային ուժի» և ցամաքում «ուրիշի ձեռքերով պատերազմելու» ռազմավարական ավանդական տեսությունների վրա: Իր հուշերում Դ. Լյոյդ Ջորջը գրում է, որ բրիտանական նավատորմն իր վերահսկողու-

Stu' Makers of modern strategy. Military Thought from Machiavelli to Hitler, p. 53.

¹¹⁰ Фалькенгайн Эрих фон. Верховное командование 1914-1916 в его важнейших решениях. Пер. с нем., Москва, Высш. Воен. Ред. Совет, 1923, с. 24.

¹¹¹ Makers of Modern Strategy. Military Thought from Machiavelli to Hitler, p. 188.

¹¹² Crutwell F. C. The Role of British Strategy in the Great War, Cambridge. Cambridge University Press, 1936, p. 25.

թյունն էր սահմանելու ծովում՝ ելնելով դաշնակիցների շահերից, իսկ Մայրցամաքում հիմնական ծանրությունն ընկնելու էր դաշնակիցների ցամաքային բանակների ուսերին: Բրիտանական ցամաքային բանակին հատկացված էր երկրորդական նշանակություն¹¹³: Շուտով, սակայն, բրիտանական կառավարությունը հասկացավ, որ պատերազմի ճակատագիրը որոշվելու էր ոչ թե ծովում Գերմանիային ծովային շրջափակման ենթարկելու և նրա ռազմածովային նավատորմը գլխավոր ծովամարտում ջախջախելու միջոցով, այլ Մայրցամաքում՝ ցամաքային զորքերի ամբողջական կիրառմամբ:

Երբ բրիտանական ցամաքային էքսպեդիցիոն զորքերը, ֆրանսիական բանակի հետ միասին, 1914թ. սեպտեմբերին՝ Մաոնի ճակատամարտում,¹¹⁴ կանգնեցրին գերմանական բանակին՝ ձախողելով «Շիֆֆենի պլանը» Արևմտյան ռազմաճակատում, գերմանական Գլխավոր շտաբն ավելի ակտիվացրեց իր քայլերն՝ արագացնելու համար Օսմանյան Կայսրության մուտքը պատերազմ, և դրանով՝ Արևելքում

¹¹³ Ллойд Джордж Д., Военные мемуары. Пер с англ., Том 1-2, Москва, Соцэкгиз, 1934, с. 473.

¹¹⁴ Մաոնի ճակատամարտում Անտանտի հաղթանակին մեծապես նպաստեց ռուսական զորքերի հարձակումը Արևելյան Պրոսիայում, ինչը, թույլացնելով գերմանական հարձակման թափը Ֆրանսիայում, հանգեցրեց կայծակնային պատերազմի ձախողմանը: Սակայն Փարիզի փրկության համար Ռուսաստանը մեծ գին վճարեց. 1914թ. օգոստոսի վերջին Տանենբերգի ճակատամարտում ռուսական 2-րդ բանակը (իրամանատար, գեներալ Ա. Սամսոնով) գերմանական 8-րդ բանակի (իրամանատար, հետևազորի գեներալ (հետագայում գեներալ-ֆելդմարշալ) Պ. Ֆոն Հինդենբուրգ, շտաբի պետ, գեներալ Է. Լյուդենդորֆ) կողմից շրջապատվեց և գլխովին ջախջախվեց: Այդպիսով, Արևելյան ռազմաճակատում իր ամբողջական արտահայտությունը գտավ «Կանեն»-ի ռազմավարությունը: Stu Иссерсон. Камы Мировой войны, Москва, Воентөдат, 1926, с. 130.

Մեծ Բրիտանիայի ու Ռուսաստանի դեմ նոր ռազմաճակատների քացումը: Հետևաբար, ստեղծված պայմաններում Գերմանիայի համար Օսմանյան Կայսրության դիրքորոշումը Ռուսաստանի ու Մեծ Բրիտանիայի նկատմամբ պետք է խաղար առանցքային դեր¹⁴: Դեռ պատերազմից առաջ Գերմանիան Օսմանյան Կայսրությանը դիտարկում էր որպես իր կարևորագույն դաշնակցի՝ ընդդեմ Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի: Այս դիրքորոշումը վերջնականապես ամրագրվել էր դեռևս 1912թ. դեկտեմբերի 8-ին կայսր Վիլիելմ 2-րդի գլխավորությամբ կայացած ռազմական խորհրդի նիստում¹⁵:

1914թ. օգոստոսի 5-ին ռայխսկանցլերթ. ֆոն Բեթման-Հոլվեգին գրած նամակում և այդ նույն օրը արտաքին գործերի քարտուղարությանը ուղարկված հուշագրում Գլխավոր շտաբի պետ, գեներալ Հ. ֆոն Մոլտկե Կրոսերը Կովկասում, Եգիպտոսում և, հատկապես, Հնդկաստանում մուսուլման բնակչության ապստամբության կազմակերպումը համարում էր «վճռական միջոց»՝ Մեծ Բրիտանիային ծնկի բերելու համար¹⁶: Այդ ծրագիրն իրականացնելու համար որպես հենակետ էին ծառայելու Օսմանյան Կայսրությունը և Պարսկաստանը: Ավելին, ըստ գերմանոֆիլ շվեդ տեսաբան Ռ. Չելլենի, որպեսզի պատերազմում Գերմանիան հաղթեր և իր ազդեցությունը տարածեր Ասիայում՝ Դարդանեղից մինչև Պարսից ծոց (ծրագիր՝ «Էլբա-Եփրատ»), ու Աֆրիկայում (ծրագիր՝ «Էլբա-Հասարակած»), անհրաժեշտ էր Եգիպտոսի,

¹⁴ Кюль Г. Германский Генеральный штаб. Пер. с нем., Москва, ГИЗ., 1922, с. 111.

¹⁵ Аветян А. С. Русско - германские дипломатические отношения накануне Первой Мировой войны. 1910 - 1914, Москва, «Наука», 1985, с. 225.

¹⁶ Ферстер Г., Гельмерт Г., Отто Г., Шинттер Г., Եշվ. աշխ., էջ 152:

ներառյալ՝ Սուեզի ջրանցքի, վերադարձը Գերմանիայի դաշնակից Օսմանյան Կայսրությանը¹⁷:

Իր հերթին Օսմանյան Կայսրության կառավարությունը մինչև վերջ փորձում էր խուսանավել Մեծ տերությունների հետ դաշինք ստեղծելու հարցում: Մասնավորապես, դեռևս 1914թ. մայիսին, ռազմածովային նախարար Ջեմալ փաշան, գեներալ Ահմեդ Իզզեթ փաշայի հետ միասին ժամանելով Ղրիմ և հանդիպում ունենալով Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովի հետ, առաջարկում է Ռուսաստանի և Օսմանյան Կայսրության միջև դաշինքի ստորագրում¹⁸: Սակայն այս առաջարկությունը վստահություն չի ներշնչում ռուսական կողմին և մերժվում է: Արդեն հունիսին՝ Փարիզում, Ջեմալ փաշայի կողմից արված նույնատիպ առաջարկը մերժվում է նաև Ֆրանսիայի կողմից¹⁹:

Ա. Մանդելշտամը գրում է, որ երբ պատերազմը սկսվեց, «ինքնապահպանման բնազդը» երիտթուրք ղեկավարների մոտ որոշակի զգուշավորություն առաջ բերեց²⁰: «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավար կազմի շրջանում պատերազմի վերաբերյալ միասնական կարծիք չկար: Մասնավորապես, եթե ազատական-բարեփոխական թևը կողմ էր արտահայտվում կայսրության չեզոքության օգտին, ապա հակառակ թևի համար որպես գլխավոր փաստարկ էր ծառայում Կովկասից եկող ռուսական մշտական

¹⁷ Ден В. Э. Учение Рудольфа Челлена о предмете и задачах геополитики. Известия русского географического общества, том 129, вып.1. СПб, 1997, с. 4.

¹⁸ Сазонов С. Д., Воспоминания, Москва, «Международные отношения», 1991, с. 164.

¹⁹ Բայբորոդյան Վ. Օսմանյան Կայսրության պատմություն. Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 638:

²⁰ Мандельштамъ А. Н. Младотурецкая держава. Москва, Типо - литогр. Т - ва И. Н. Кушнеревъ, 1915, с. 52.

սպառնալիքը և Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կողմից Պաղեստինն ու Սիրիան գրավելու հնարավոր վտանգը¹²¹: Ստեղծված պայմաններում, ինչպես նկատում է Ֆ. Նաումանը, իր գոյությունը պահպանելու համար Օսմանյան Կայսրությանն այլ ելք չէր մնում, քան միանալ Գերմանիային¹²²:

Երիտթուրքական ղեկավարության 1914թ. հուլիսի 20-ի խորհրդակցությունում որոշում կայացվեց միանալ Կենտրոնական տերությունների դաշինքին: Արդեն հուլիսի 28-ին մեծ վեզիր և արտգործնախարար Սայիդ Հալիմը գերմանական դեսպանատանը Հ. ֆոն Վանզենհայմի հետ ունեցած հանդիպմանն առաջարկություն արեց Ռուսաստանի դեմ պաշտպանողական-հարձակողական դաշինք ստեղծելու մասին¹²³: 1914թ. օգոստոսի 2-ին, երբ Օսմանյան կառավարությունը պաշտոնապես հայտարարեց պատերազմում իր «չեզոքության» և, միաժամանակ, համընդհանուր զորահավաքի մասին¹²⁴, Կոստանդնուպոլսում Ա. Հալիմը և Հ. ֆոն Վանզենհայմը ստորագրեցին գերմանա-թուրքական գաղտնի համաձայնագիր: Վերջինիս 3-րդ հոդվածի համաձայն, գերմանական ռազմական առաքելությունը դրվում էր Օսմանյան կառավարության անմիջական ենթակայության տակ, իսկ 4-րդ հոդվածով Գերմանիան պարտավորվում էր Ռուսաստանի կողմից սպառնացող վտանգի դեպքում իր զինված ուժերով պաշտպանել Օսմանյան Կայսրության տարածքային ամբողջականությունը¹²⁵: Արդեն օգոստոսի 6-ի գեր-

մանա-թուրքական լրացուցիչ համաձայնագրի 5-րդ հոդվածով ճշգրտվում էին Օսմանյան Կայսրության արևելյան սահմանները և Գերմանիան երաշխիքներ էր տալիս Թուրքիային՝ Ռուսաստանում բնակվող մուսուլմանների հետ ուղղակի կապ հաստատելու մասին¹²⁶: Փաստացի դա նշանակում էր գերմանական աջակցությամբ Օսմանյան Կայսրության կողմից Այսրկովկասի բռնակցումն, ինչն ուղղակի սպառնալիք էր ստեղծելու նաև Մեծ Բրիտանիայի ասիական տիրույթների անվտանգության համար:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 3-ին, Օսմանյան կառավարությունը կայսրության տարածքում մտցրեց ռազմական դրություն¹²⁷: Հայտարարված համընդհանուր զորահավաքի արդյունքում օսմանյան բանակի թիվը հասավ մինչև 1.5 մլն-ի¹²⁸:

1914թ. օգոստոս ամսին կտրուկ սրվում են Մեծ Բրիտանիայի և Օսմանյան Կայսրության միջև հարաբերությունները: Հուլիսի 31-ին Ծովակալության Առաջին լորդ Ու. Չերչիլը հայտարարում է Օսմանյան Կայսրության ռազմա-ծովային նավատորմի համար Մեծ Բրիտանիայում կառուցվող «Սուլթան Օսման» և «Ռեշիդիե» զծանավերի բռնագրավման մասին¹²⁹: Այս որոշումը արտաքին գործերի քարտուղար Է. Գրեյը թուրքական կողմին պաշտոնապես հայտնեց օգոստոսի 3-ին¹³⁰:

Չնայած որ Է. Գրեյը հավաստիացնում էր, որ բացի ռազ-

¹²¹ Де Нозалес Р. Четыре года под Полумесяцем. Пер. с исп., Москва, Русский Вестник, 2006, с. 22.

¹²² Науманн Ф., նշվ. աշխ. էջ 2:

¹²³ Բայրորդյան Վ. Օսմանյան Կայսրության պատմություն, էջ 639:

¹²⁴ История дипломатии. Том 2. Под ред. В. П. Потемкина, Москва-Ленинград, Госизд. позит. Лит., 1945, с. 269.

¹²⁵ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1386, թ. 1:

¹²⁶ Նույն տեղում, թ. 3:

¹²⁷ Ludowyck E. Ф., Турция в годы Первой мировой войны. 1914–1918 гг., Москва, Издат. Московского университета, 1966, с. 53.

¹²⁸ Բայրորդյան Վ. Օսմանյան Կայսրության պատմություն, էջ 640:

¹²⁹ Готлиб В. В. Тайная дипломатия во время Первой мировой войны. Пер. с англ., Москва, Соцэкгиз, 1960, С. 59–60.

¹³⁰ Tuchman B. W. The Guns of August. New York, The Macmillan Co., 1962, p. 140–141.

մանավերի բռնագրավումից, «արվել է ամեն ինչ» որպեսզի Թուրքիան մնա չեզոք¹³¹, սակայն այդ մեկ քայլն ու Միջերկրական ծովում տեղի ունեցած մի միջադեպը շրջադարձային եղան Առաջին համաշխարհային պատերազմի մեջ Օսմանյան Կայսրության մտնելու գործընթացում: Միջերկրական ծովում դերծովակալ Վիլիելմ Սուլշոնի հրամանատարությամբ գործող գերմանական «Գեբեն» և «Բրեսլաու» հաճանավերը 1914թ. օգոստոսի 3-ին ումբակոծելով ալժիրյան Բոն և Ֆիլիպպիլ նավահանգիստները՝ բրիտանական և ֆրանսիական ռազմանավերի կողմից ենթարկվում են հետապնդման: Նույն օրը՝ օգոստոսի 3-ին, բրիտանական Միջերկրածովյան նավատորմի հրամանատար, ծովակալ Արչիբալդ Բյորքլի Միլը հրաման է ստանում Ջիբրալթարի նեղուցը փակելու և այդ կերպ՝ Միջերկրական ծովից գերմանական հաճանավերի ելքը խոչընդոտելու մասին¹³²: Սակայն, արդեն հաջորդ օրը՝ օգոստոսի 4-ին, բրիտանական «Ինդիֆեթիգբլ» և «Ինդոմիթբլ» զծանավերը 7 ժամ շարժվելով գերմանական հաճանավերին զուգահեռ՝ այդպես էլ կրակ բացելու հրաման չեն ստանում¹³³: Եվ ինչպես բրիտանացի պատմաբան Հերբերտ Վիլսոնն է իրավագիտորեն նշում. «Եթե «Գեբենը» («Բրեսլաուի» հետ միասին՝ Հ.Ն.) օգոստոսի 4-ին հարձակման ենթարկվեր, կանգնեցվել կամ խորտակվեր, դժվար թե Թուրքիան մտներ պատերազմի մեջ Կենտրոնական տերությունների կողմից, և պատմական իրադարձությունների ողջ ելքը կարող էր փոխվել»¹³⁴: Ամենայն հավանականությամբ, բրիտանական

ռազմավարագիտական միտքն այլ հաշվարկներ ուներ, և խնդիր էր դրված գերմանական հաճանավերին ստիպելու մտնել Դարդանեյ, և այդ կերպ ստեղծել «casus belli» (պատերազմի առիթ): Ցայտնտուային իրավիճակում հայտնված դերծովակալ Վ. Սուլշոնը, օգոստոսի 9-ին Ջմյոտնիայում գերմանական հյուպատոսին հեռագրում է. «Գործադրեք ծայրահեղ միջոցներ, որպեսզի ինչ էլ որ լինի կարողանամ անցնել Նեղուցները՝ թուրքական կառավարության թույլտվությամբ, ծայրահեղ դեպքում՝ առանց պաշտոնական համաձայնության»¹³⁵: Օգոստոսի 10-ին գերմանական հաճանավերը մտնում են Դարդանեյ, ինչն էլ Գերմանական ռազմածովային նավատորմի գլխավոր հրամանատար, ծովակալ Ալֆրեդ Տիրպիցի դիպուկ բնորոշմամբ «վերջնականապես լուծեց թուրքական (կողմնորոշման-Հ.Ն.) հարցը»¹³⁶:

Դեռևս 1907թ. հունիսի 5(15)-ից հոկտեմբերի 5(18)-ը Հաագայում տեղի ունեցած հաղադության երկրորդ համաժողովում ընդունված 13-րդ կոնվենցիայի («Շովային պատերազմի դեպքում չեզոք Տերությունների իրավունքների և պարտականությունների մասին») 12-րդ հոդվածի համաձայն արգելվում էր պատերազմող պետությունների ռազմական նավերին մնալ չեզոք պետությունների նավահանգիստներում կամ տարածքային ջրերում 24 ժամից ավելին¹³⁷: Հետևաբար, մեկ օր անց, Օսմանյան կառավարության կողմից պաշտոնապես հայտարարվում է գերմանական ռազմանավերի գնման մասին, որպես փոխհատուցում բրիտանացիների կողմից իրենց ռազմանավերի բռնագրավման և, միաժամանակ, Կոստանդնուպոլսում ծառայու-

¹³¹ Готлиб В. В., *ibid.*, էջ 58:

¹³² Лорей Г. Операция германо - турецких морских сил в 1914 - 1918 гг. Пер. с нем., Москва, Воениздат, 1938, с. 29 - 30.

¹³³ Крышин М. Ю. 100 великих военных тайн, Москва, Вече, 2007, с. 248.

¹³⁴ Նույն տեղում, էջ 253:

¹³⁵ Лорей Г., *ibid.*, էջ 39:

¹³⁶ Туринц А. Воспоминания. Пер. с нем., Москва, Воениздат, 1957, с. 359.

¹³⁷ Вторая конференция мира 1907. Министерство иностранных делъ, Санкт - Петербургъ, Типография В. Ф. Кирибаума, 1908, с. 285.

թյան մեջ գտնվող փոխժողովակալ Ա. Լիմպուսի՝ գլխավորած բրիտանական ռազմածովային առաքելության գործունեության դադարեցման ու Վ. Սուշոնին թուրքական ռազմածովային նավատորմի հրամանատար նշանակելու մասին: Այս փաստից ոգևորված՝ դեսպան Հ. Ֆոն Վանգենհայմը արձանագրում է. «Մենք այժմ վերահսկում ենք և թուրքական բանակը, և նավատորմը»¹³⁸:

Թեև 1914թ. օգոստոսի 16-ի (30-ի) Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները խոստացան երաշխավորել Օսմանյան Կայսրության տարածքային ամբողջականությունը՝ պատերազմում վերջինիս չեզոքության դիմաց¹³⁹, սակայն նրան կանգնեցնելու համար արդեն ուշ էր: Օգոստոսի 27-ին (սեպտեմբերի 9-ին) սուլթանը հրաման արձակեց կապիտուլյացիաները (եվրոպական պետությունների հետ առևտրային երկկողմ համաձայնագրեր) հոկտեմբերի 1-ից չեղյալ հայտարարելու վերաբերյալ, ինչի մասին Ս. Հալիմ փաշան տեղեկացրեց պաշտոնական

նոտայով¹⁴⁰: Սրան մեկ օր անց հետևած Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունների պատասխան նոտայում նշված էր, որ կապիտուլյացիաները հիմնված են երկկողմ համաձայնագրերի հիման վրա, հետևաբար, Օսմանյան Կայսրությունը միակողմանի չեղյալ համարելու իրավունք չունի¹⁴¹:

1914թ. սեպտեմբերի 8-ին (21-ին) Ու. Չերչիլը ծովակալ Սեբվիլ Կարդենին հեռագրում է. «Նեղուցներից դուրս գալու դեպքում խորտակել «Գեբեները» (վերանվանված «Սուլթան Սելիմ Յավուզ»-Հ.Ն.) և «Բրեսլաուն» (վերանվանված «Միդլի»-Հ.Ն.), անկախ այն բանից, թե ինչ դրոշով են նրանք նավարկում»¹⁴²: Արդեն սեպտեմբերի 13-ին (26)-ին թուրքական ռազմանավերից մեկը Դարդանեյից դուրս գալուց կանգնեցվում է բրիտանական ռազմանավերի կողմից, և ստիպված է լինում վերադառնալ¹⁴³: Սա առիթ է տալիս, որպեսզի թուրքական իշխանությունները փակեն նեղուցները, ինչի մասին կառավարությունը հայտարարեց սեպտեմբերի 14 (27)-ին¹⁴⁴:

Այդ նույն ժամանակ՝ Կոստանդնուպոլսում, վերջնականապես հաղթանակ է տանում պատերազմի մեջ մտնելու կողմնակիցների՝ ռազմական նախարար Էնվերի գլխավոր

¹³⁸ Դեռևս 1909թ. Կոստանդնուպոլսում գործող և Օսմանյան ռազմածովային նավատորմի արդիականացմանը զբաղվող Բրիտանական ռազմածովային առաքելության ղեկավարի պաշտոնը փոխժողովակալ Ա. Լիմպուսը ստանձնել էր 1912թ.: Առաքելություն ուներ 72 անդամ, որից 10-ը սպաներ էին: Sbu Ignatyev A. B. Русско - английские отношения на кануне Первой мировой войны (1908-1914), Москва, Союзгаиз, 1962, с.177. Силин А. С. Экспансия германского империализма на Ближнем Востоке. На кануне Первой мировой войны (1908-1914), Москва, «Наука», 1976, с. 87.

¹³⁹ Morgenthau H. Ambassador Morgenthau's Story, Detroit, Wayne State University Press, 2003, p. 71.

¹³⁹ Գալոյան Գ. Հայաստանը Մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917թ.), Երևան, «Գիտություն», 2004, էջ 650:

¹⁴⁰ Оранжевая книга. книга вторая. Дипломатическая переписка России, предшествовавшая войны с Турцией, Петроград, Екатеринбург. Печ. дело, 1915, с. 24-29.

¹⁴¹ Նույն տեղում, էջ 33-34:

¹⁴² Earle E. M. Turkey, the Great Powers and the Bagdad Railway, New York, Macmillan Co., 1924, p. 282.

¹⁴³ Պատմություն համաշխարհային պատերազմի և հայկական հարցը. Պատրաստում «Թայմզ» լրագրի կողմէ. թարգմ. անգլ., հատոր Գ, Կ, Պոլիս, Հրատ. Ս. Ստեփանեան և Յ. Քրիսեան, 1919, էջ 296:

¹⁴⁴ «Բյուզանդիոն», Կոստանդնուպոլիս, 15 (28) սեպտեմբերի 1914, թիվ 5454, էջ 2:

րած գերմանոֆիլների թվը: Վերջինս համոզված էր, որ Տա-
նենբերգի ճակատամարտում ռուսական բանակի կրած
պարտությունից հետո Ռուսաստանն իրեն չի կարող թող
տալ հարձակողական գործողություններ Կովկասում, հե-
տևաբար այն գրավելու «գայթակղությունը անդիմադրելի
էր»¹⁴⁵:

Երբ Օսմանյան Կայսրության Պատերազմի մեջ մտելն
արդեն ժամանակի հարց էր, բրիտանական դիվանագիտու-
թյան գլխավոր խնդիրներն էին համարվում ժամանակին
հնդկական բանակի անցումը Սուեզի ջրանցքով և այն, որ
Օսմանյան Կայսրությունը պատերազմի մեջ մտնի այն ձևով,
ինչը ցույց կտար, որ հարձակվող կողմը ոչ թե Դաշնակից-
ներն են, այլ՝ Օսմանյան Թուրքիան¹⁴⁶: Բրիտանական դիվա-
նագիտությունը հասավ իր առջև դրված այս երկու խնդիրնե-
րի լուծմանը: Է. Գրեյը հոկտեմբերի 11-ին (24-ին) թուրքական
կողմին հայտնել էր, որ Օսմանյան բանակի կողմից «Եգիպ-
տոսի սահմանի ռազմական խախտումը կդնի նրան (Օս-
մանյան Կայսրությանը-Հ.Ն.) Եռյակ Միության Տերություն-
ների հետ պատերազմական դրության մեջ»¹⁴⁷:

Չնայած այդ զգուշացմանը և առանց պատերազմ
հայտարարելու դերժովակալ Վ. Սուլշոնի հրամանատարու-
թյամբ գործող գերմանա-թուրքական նավատորմի կողմից
սևծովյան ռուսական նավահանգիստների ոմբակոծմանը,
նույն օրը՝ 1914թ. հոկտեմբերի 16 (29-ին), Եգիպտոսի սահ-
մանին կենտրոնացված թուրքական 4-րդ բանակի առաջա-

պահ ուժերը՝ շուրջ 2000 բեդուիններից կազմված զորա-
խումբը¹⁴⁸, Գազայի ուղղությամբ անցավ հարձակման՝ նպա-
տակ ունենալով ճեղքել բրիտանական պաշտպանությունը և
դուրս գալ Սուեզի ջրացքի շրջանը:

Ստեղծված իրավիճակում, հոկտեմբերի 31-ին Ռուսաս-
տանը, իսկ նոյեմբերի 1-ին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան
խզում են բոլոր տեսակի կապերը Օսմանյան Կայսրության
հետ¹⁴⁹: 1914թ. նոյեմբերի 2-ին Ռուսաստանը, իսկ նոյեմբերի
5-ին և 6-ին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան պատերազմ են
հայտարարում Օսմանյան Կայսրությանը: Միաժամանակ,
Մեծ Բրիտանիան օգտագործելով հարմար առիթը նոյեմբերի
5-ին պաշտոնապես հայտարարում է Կիպրոսի բռնակցման
մասին¹⁵⁰: Նոյեմբերի 7-ին Ֆրանսիայի կառավարությունը
դիմում է Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի
կառավարություններին՝ Օսմանյան Կայսրության դեմ հա-
մատեղ գործողությունների ծրագիր կազմելու համար¹⁵¹:
1914թ. նոյեմբերի 10-ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Հեր-
բերթ Ասկվիթը հայտարարեց. «Անգլիան սուրը պատեանի
մէջ չի դնի, մինչեւ որ չհնչուին թաղման զանգերը
Տաճկաստանի (Օսմանյան Կայսրության-Հ.Ն.) տիրապետու-
թեան՝ ոչ միայն Երոպայում, այլ նոյն իսկ Տաճկաստանի
Ասիական երկրների մէջ»¹⁵²:

¹⁴⁸ Allen G. H. *The Great War. Vol. 1, Philadelphia, George Barrie's sons, 1915, p. 317.*

¹⁴⁹ Smith C. J. *The Russian Struggle for Power. 1914 - 1917. New York, Philosophical library, 1956, p. 81.*

¹⁵⁰ Allen G. H., նշվ. աշխ., էջ 317:

¹⁵¹ Գալոյան Գ. նշվ. աշխ., էջ 651:

¹⁵² Երեք պետութեանց պատմական հեռագիրը հայկական կոտորածների աղթի. «Արարատ» ամսագիր, Սբ. Էջմիածին, ապրիլ-մայիս 1915, ր. 304:

¹⁴⁵ Palmer A. *The Decline and Fall of the Ottoman Empire, New York, Barnes and Noble Books, 1994, p. 225.*

¹⁴⁶ Готлиб В. В., նշվ. աշխ., էջ 87 - 88:

¹⁴⁷ Белая книга. О войне съ Турціей. Дипломатическая переписка Англии, предшествовавшая войне съ Турціей, Петроградъ, Книгоизд., М. В. Попова, 1914, с. 142.

Բրիտանական 5 հազարանոց էքսպեդիցիոն «D» զորատանը, 1914թ. նոյեմբերի սկզբին ավիանում է իրականացնում Շատ-էլ-Արաբ գետի դելտայի շրջանում և գրավում Ֆատ նավահանգիստը (նոյեմբերի 6-ին) և պարսկական Արադան կղզին (նոյեմբերի 10-ին)¹⁵³: Միաժամանակ, ավիանում է իրականացվում պարսկական Բուշեր նավահանգստում, իսկ նոյեմբերի 22-ին բրիտանացիները գրավում են Իրաքի Բասրա քաղաքը:

Իր հերթին, գերմանա-թուրքական հրամանատարությունը ծրագրել էր, միաժամանակյա հարված հասցնել երկու գլխավոր ուղղություններով, այն է՝ փակել Սևծովյան նեղուցները՝ կտրելով Ռուսաստանի ու Անտանտի միջև ծովային կապը, ոչնչացնել ռուսական Սևծովյան նավատորմը, գրավել Ղրիմը, ավիանում իրականացնել Բաթումում և Կովկասյան ռազմաճակատում ջախջախելով ռուսական բանակը՝ գրավել Այրևոկկասը¹⁵⁴, Հյուսիսային Կովկասը, Ատրպատականը ու Թուրքեստանը, միաժամանակ, Սուեզի ջրանցքի շրջանում ջախջախելով բրիտանական բանակը՝ փակել Մեծ Բրիտանիայի համար կենսական նշանակություն ունեցող Սուեզ - Ադեն ծովային ուղին, ետ գրավել նախկինում Օսմանյան Կայսրության մաս կազմած Եգիպտոսը, Սուդանը, Լիբիան, Թունիսը:

Ավելին, գերմանական Գլխավոր շտաբը հաստատեց այսպես կոչված «Ցիմերմանի պլանը» (փոխարտգործքատուղար Արթուր Ցիմերմանի անունով), որը նախատեսում էր

¹⁵³ Мирошников Л. И. Английская экспансия в Иране (1914-1920), Москва, Изд. Восточной литературы, 1961, с. 12 - 13.

¹⁵⁴ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Այրևոկկասում թուրքական նվաճողական քաղաքականության մասին մանրամասն տես Սարգսյան Ե. Ղ. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918թթ., Երևան, «Հայաստան», 1964:

Ասիական ռազմաբեմերում թուրքական զորքերի հաջողությունների ֆոնին Հնդկաստանի հինդու ազգայնական ուժերի և, հատկապես, մուսուլման բնակչության ապստամբության բարձրացումը՝ ընդդեմ Բրիտանական Կայսրության¹⁵⁵: Այս ծրագրի իրագործմանը կարող էր նպաստել սուլթան-խայիֆ Մեհմեդ 5-րդի 1914թ. նոյեմբերի 11-ի հրովարտակրվ և Շեյխ-ու-խիլամի նոյեմբերի 23-ի մանիֆեստով՝ Օսմանյան Կայսրության կողմից Անտանտի կազմում գտնվող տերություններին «Ջիհադի» («սրբազան պատերազմ») հայտարարումը¹⁵⁶: Այս քայլով գերմանա-թուրքական ռազմաքաղաքական դեկավարությունը նպատակ ուներ կազմակերպելու Հնդկաստանի, Կովկասի, Պարսկաստանի, Թուրքեստանի, Աֆղանստանի, Եգիպտոսի, Սուդանի և Ալժիրի մուսուլման բնակչության մեծածավալ և միաժամանակյա ապստամբությունն ընդդեմ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի: Սակայն այս կոչը մուսուլման բնակչության մոտ մեծ արձագանք այդպես էլ չի ստանում,

¹⁵⁵ Lenczowski G. The Middle East in World Affairs, Ithaca - New York, Cornell University Press, 1952, p. 39.

* Մեծ Բրիտանիային, Ռուսաստանին և Ֆրանսիային կրոնական «սրբազան պատերազմ» հայտարարելու առթիվ օսմաներենով հրատարակված պաշտոնական բրոշյուրի օրինակը տես՝ ՀԱԱ, ֆ. 57 ց. 5, գ. 80, թ. 1-4, իսկ բրոշյուրի հայերեն թարգմանությունը տես ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 149, թ. 9-10 և շրջ.: Մանիֆեստի ռուսերեն թարգմանված տարբերակը տես Масловский Е. В. Мировая война на Кавказском фронте 1914-1917гг. Стратегический очерк, Париж, «Возрождение», 1933, с. 433. «Սրբազան պատերազմի» գաղափարն իր արտահայտությունը գտավ նաև երիտթուրքական կառավարության կողմից Օսմանյան Կայսրությունում կազմակերպված հայոց ցեղասպանությունն իրագործելիս, որը, փաստորեն, «20-րդ դարի և՛ առաջին ցեղասպանությունն էր, և՛ առաջին ջիհադը»: Sbu Marris W. C. First Jihad ? ! First Genocide ? !, Oconomowoc, Circuit Rider Ministries, 2015, p. xix.

¹⁵⁶ Antonius G. The Arab Awakening, New York, G. P. Putnam s Sons, 1946, p. 141.

իսկ Հնդկական մուսուլմանական լիգայի ղեկավար Ադախանը, ով մուսուլմանական աշխարհում մեծ հեղինակություն էր վայելում, կոչ արեց բոլոր մուսուլմաններին «մնալ հավատարիմ» Մեծ Բրիտանիային և Ռուսաստանին¹⁵⁷: Այդպիսով, «սրբազան պատերազմի» գերմանա-թուրքական ռազմավարությունը հենց սկզբից ծախսողվում է:

Նույն ժամանակահատվածում՝ 1914թ. աշնանը, պանթուրքական գաղտնի խմբերը և գերմանական գործակալները, Թավրիզում գործող գերմանական հյուպատոսության՝ միջոցով ակտիվացնելով իրենց գործունեությունը Պարսկաստանում (իր չեզոքության մասին հայտարարել էր նոյեմբերի 2-ին)՝ փորձում են վերջինիս ներքաշել պատերազմի մեջ, ինչը սպառնալիք էր Պարսկաստանում Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի ազդեցության գոտիների անվտանգությանը: Ատրպատական իր ռազմավարական դիրքով հանդիսանում էր այն ցատկահարթակը, որը հնարավորություն էր տալու թե՛ թուրքական, և թե՛ ռուսական զորքերին թևային հարված հասցնել Կովկասյան ռազմաճակատում կենտրոնացված իրենց գլխավոր ուժերին: Ստեղծված իրավիճակում Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազունովը նոյեմբերին տեղյակ է պահում Լոնդոնում Ռուսաստանի դեսպան Ալեքսանդր Բենկենդորֆին այն մասին, որ ռուսական զորքերը ստիպված կլինեն խախտել Պարսկաստանի չեզոքությունը¹⁵⁸: Տեղեկանալով այս մասին՝ բրիտա-

նական կողմը հավանություն չի տալիս ռուսական կողմի այդպիսի հնարավոր գործողություններին¹⁵⁹:

Մեծ Բրիտանիան ցանկանում էր կանխել ռուսական ներխուժումը, որպեսզի պահպաներ Պարսկաստանում բրիտանական ազդեցության գոտին, պաշտպանված մնալին «Անգլո-պարսկական նավթային ընկերությանը» պատկանող նավթային պաշարները և Պարսից ծոցը: Վերջինիս պաշտպանությունն ապահովում էր պարսկական նավթի անխափան մատակարարումը Թագավորական ռազմածովային ուժերին: Բացի այդ բրիտանական Մեծ ռազմավարությունը Պարսկաստանը դիտարկում էր հարմար ցատկահարթակ՝ Աֆղանստանում, Թուրքեստանում, Արաբական թերակղզում, Այսրկովկասում, Փոքր Ասիայում ու Կոստանդնուպոլսում (Սևծովյան նեղուցների վրա) բրիտանական տիրապետության կամ ազդեցության հաստատման համար:

Եթե բրիտանական Մեծ ռազմավարությունը Արևմտեվրոպական ռազմաճակատում գլխավոր դերակատարի դերում տեսնում էր Ֆրանսիական ցամաքային բանակին, ապա Կովկասյան ռազմաճակատում՝ ռուսական Կովկասյան բանակին: Վերջինս, ըստ բրիտանական Մեծ ռազմավարության, պետք է կասեցնե՛ր դեպի Պարսկաստան և Հնդկաստան շարժվող գերմանա-թուրքական ուժերին, միաժամանակ, իր վրա գամելով թուրքական բանակի զգալի ուժեր՝ թուլացնե՛ր Սուեզին և Պարսից ծոցին սպառնացող գերմանա-թուրքական վտանգը:

Ելնելով վերը նշվածից՝ նոյեմբերի 14-ին է. Գրեյը ռուսական կողմին հայտնում է, որ եթե Ռուսաստանը չխախտի

¹⁵⁷ Somakian M. J., նշվ. աշխ., էջ 147:

¹⁵⁸ Թավրիզում գործող գերմանական հյուպատոսության հակաբրիտանական և հակառուսական գործունեությունը ուղեկցվում էր նաև ակտիվ հակահայկական քաղաքականությամբ: Մանրամասն տես ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 115, թ. 1-9, 10-14:

¹⁵⁹ Готлиб В. В., նշվ. աշխ., էջ 97:

¹⁵⁸ Бьюкенен Дж. Мемуары дипломата. Пер. с англ., Москва, Госиздат, 1925, с. 139.

Պարսկաստանի չեզոքությունը և դրա փոխարեն ակտիվ հարձակում սկսի Կովկասյան ռազմաճակատում ու իր հիմնական ջանքերը կենտրոնացնի ընդդեմ գերմանացիների՝ Արևելաեվրոպական ռազմաճակատում, ապա այդ դեպքում Սևծովյան նեղուցների հարցը կլուծվի ռուսների օգտին: Առաջին անգամ, փաստորեն, բրիտանական կառավարությունը բանավոր կերպով խոստացավ Ռուսաստանին հանձնել Նեղուցները և Կոստանդնուպոլիսը՝ պատերազմը հաղթականորեն ավարտելուց հետո¹⁶⁰: Բրիտանացիները փորձում էին նեղուցները Ռուսաստանին հանձնելով՝ իրենց պահել Պարսկաստանը: 1914թ. նոյեմբերի վերջին, սակայն, Պարսկաստանի չեզոքությունը խախտած թուրքական բանակի և գեներալ Ֆյոդոր Չերնոզուբովի հրամանատարությամբ գործող ռուսական «Ադրբեջանական զորաջուկատի» միջև սկսված ակտիվ ռազմագործողություններով՝ Պարսկաստանի հյուսիս-արևմուտքում ձևավորվում է մի նոր ռազմաճակատ, որը դարձավ Կովկասյան ռազմաճակատի փաստացի շարունակությունը: Ջուլֆա-Խոյ-Ուրմիա և Ջուլֆա-Թավրիզ ուղղություններով գործող «Ադրբեջանական զորաջուկատի» ռազմավարական խնդիրներն էին Պարսկաստանի հյուսիսում ռուսական «ազդեցության գոտո» անվտանգության ապահովումը, ռուսական քաղաքական ազդեցության հաստատումը ամբողջ Պարսկաստանում, ինչպես նաև Քուրդիստանի և Մոսուլի ուղղությունները տեսադաշտում պահելը, որտեղ բրիտանացիները ծրագրում էին իրականացնել խոշոր ռազմական գործողություններ:

¹⁶⁰ Константинополь и проливъ. По секретным документам б. Министерства иностранных дел. Том 1. Под ред. Е. А. Адамова, Москва, Изд. Лигуэзата НКВД, 1925, с. 233-234, *The Great Powers and the End of the Ottoman Empire*. Ed. By Kent M., London, George Allen and Unwin, 1984, p. 186.

Պարսկաստանի չեզոքության խախտման ֆունին, 1914թ. դեկտեմբերի 18-ին՝ Ֆրանսիայի կողմից Մարոկոյի նկատմամբ պրոտեկտորատ հայտարարելու նույն օրը, բրիտանացիները հայտարարեցին Եգիպտոսի նկատմամբ պրոտեկտորատ հաստատելու մասին¹⁶¹: Ստեղծված իրավիճակում Պետրոգրադում ավելի է ամրապնդվում այն գաղափարը, որ Սևծովյան նեղուցների հարցը կարող է լուծվել միայն Ռուսաստանի օգտին: Փարիզում, Մեծ Բրիտանիայի դեսպան լորդ Ֆրենսիս Բերտոլի հետ ունեցած զրույցի ժամանակ, Է. Գրեյը նշել էր, թե իրենց համար ճիշտ լուծումը կլիներ Կոստանդնուպոլիսի վերածումն ազատ քաղաքի, իսկ Նեղուցների նկատմամբ, եվրոպական երաշխավորությամբ, ազատ ռեժիմի հաստատումը՝ Սուեզի օրինակով, ինչին, սակայն, Ռուսաստանը երբեք չի համաձայնվի¹⁶²:

Ինչպես Օսմանյան Կայսրության, այնպես էլ Մեծ Բրիտանիայի համար կենսական համարվող Թեհրան-Թավրիզ-Էրզրոմ և Թեհրան-Թավրիզ-Կոստանդնուպոլիս միջազգային առևտրական ճանապարհների առանցքային օղակի՝ Բայազետի, գրավումը (1914 թվականի նոյեմբերի 3-ին¹⁶³) ռուսական զորքերի կողմից, արագացնում է թուրքական երրորդ բանակի (հրամանատար Էնվեր փաշա, շտաբի պետ գեներալ Ֆ. Բրոնզարտ ֆոն Շելենդորֆ) հարվածը Սարիղամիշի ուղղությամբ:

Գերմանա-թուրքական պլանի համաձայն, ինչպես Պ. ֆոն Հինդենբուրգի և Է. Լյուդենդորֆի կողմից շրջապատվեց և գլխավին ջախջախվեց ռուսական բանակը Արևելյան

¹⁶¹ Готцаб В. В., *նշվ. աշխ.*, էջ 105:

¹⁶² Лорд Берти. За кулисами Антанты. Дневник британского посла в Париже 1914-1919. Пер. с англ., Москва-Ленинград, Госиздат, 1927, с. 39.

¹⁶³ Buchan J. *A History of the Great war*. Vol. 1, Boston and New York, Houghton Mifflin Co., 1923, p. 507.

Պրուսիայում, այնպես էլ Սարիղամիշում պետք է շրջապատվեր և գլխավորն ջախջախվեր ռուսական Կովկասյան բանակը, որից հետո պետք է գրավվեր Կարսի բերդը և ամրոցը Այսրկովկասը: Ավելին, Էնվեր փաշան Գեներալ Լ. իման ֆոն Սանդերսին ներկայացրել էր «Ֆանտաստիկ պլան», որը նախատեսում էր Այսրկովկասի գրավումից հետո Օսմանյան բանակի շարժը դեպի Թուրքեստան, Աֆղանստան ու Հնդկաստան¹⁶⁴: Սակայն, գեներալ Լ. ֆոն Սանդերսը, լինելով պրագմատիկ ռազմական գործիչ, ամենևին էլ ոգևորված չէր Էնվերի ծրագրերով, քանզի Էնվերը, միաժամանակ, խնդիր ուներ կասեցնելու բրիտանական զորքերի առաջխաղացումը Միջագետքում:

Պատերազմի նախօրեին Կովկասյան բանակի երեք կորպուսներից երկուսը տեղափոխվել էին Արևելաեվրոպական ռազմաճակատ, քանզի Ռուսական Գլխավոր շտաբում Կովկասյան ռազմաճակատը դիտվում էր երկրորդական, և միայն անհրաժեշտության դեպքում պետք է ուժեղացվեր՝ Ռուսաստանի եվրոպական մասից տեղափոխված ուժերով¹⁶⁵: Հասկանալի է, որ Կովկասից Արևելաեվրոպական ռազմաճակատ տեղափոխված 2-րդ և 3-րդ բանակային կորպուսների անձնակազմերում մեծամասնություն էին կազմում հայերը: Ավելին, կամավորական շարժման կոչին արձագանքած շուրջ 20000 հայերից, ցարական իշխանությունը զինեց միայն 7000՝ պատճառաբանելով հրացանների պակասով: Օրինակ՝ միայն Պարսկաստանում և Վանում ցարական իշխանությունները քրդերին զինեցին 24000 հրա-

ցանով¹⁶⁶: Թերևս իրավացի էր Ու. Չերչիլը, ով նշում էր, որ ցարական կառավարությունը շուրջ 150000 զորակոչված հայերին տեղափոխել էր Արևելաեվրոպական ռազմաճակատ՝ վախենալով, թե Կովկասի «հաջող պաշտպանությունը հայերի կողմից կբորբոքեր ազգային ձգտումները»¹⁶⁷:

Ռուսական Կովկասյան բանակի (իրամանատար, Կովկասի փոխարքա, կոմս Ի. Վորոնցով-Դաշկով, շտաբի պետ՝ գեներալ Ն. Յուդենիչ) ռազմավարական խնդիրներն էին թուրքական բանակի հարձակման կասեցումը և անցումը հակահարձակման Արևմտյան Հայաստանով դեպի Փոքր Ասիա և Նեղոսներ, միաժամանակ, դեպի հարավ՝ Միջագետք, խնդիր ունենալով միանալ բրիտանական էքսպեդիցիոն ուժերին և Սև ծովից մինչև Պարսից ծոց ընկած հատվածում ստեղծել միասնական ռազմաճակատ:

Ռուսական Գլխավոր շտաբն ուներ նաև պահեստային տարբերակ, ըստ որի, սահմանազօր պաշտպանության անհնարինության դեպքում՝ ռուսական բանակը պետք է նահանջեր դեպի Կովկասյան լեռնաշղթայի գլխավոր գիծը և օգտագործելով նրա դժվարամատչելիությունը՝ պահեր Բաքուն՝ ձախ թևում, իսկ Հյուսիսային Կովկասն ու Այսրկովկասն իրար հետ կապող Ռազմավարական ճանապարհը՝ կենտրոնում¹⁶⁸: Եվ այս սցենարը մեծ հավանականությամբ կարող էր իրականություն դառնար, քանզի դեռևս 1914թ. օգոստոսին, Էրզրումում կայացած ժողովի ժամանակ, թուրքական պատվիրակությունը հայկական կողմին խոստանում է Արևելյան Հայաստանի և Էրզրումի, Վանի ու Բիթլիսի

¹⁶⁴ Somakian M. J., նշվ. աշխ., էջ 78-79:

¹⁶⁵ Арутюнян А. О. Кавказский фронт. 1914-1917 гг., Ереван, «Айастан», 1971, с. 25.

¹⁶⁶ Pasdermadjian G. (Armen Garo). *Why Armenia should be Free. Armenia's role in the Present War*, Boston, Hairenik Publishing Co., 1918, p. 20.

¹⁶⁷ Churchill W. *The World Crisis. The Aftermath*, London, Thornton Butterworth LTD, 1929, p. 404 - 405.

¹⁶⁸ Масловский Е. В., նշվ. աշխ., էջ 31:

վիպայեթների միավորմամբ ստեղծել հայկական ինքնավարություն (Գերմանիայի երաշխավորությամբ), եթե հայությունը Այրարկովկասի թաթարների հետ միասին ապստամբություն բարձրացնի Ռուսաստանի դեմ¹⁶⁹: Առաջարկը, սակայն, մերժվում է: Բայց սհա «վրացիներն ու թաթարները չափազանց փափաքող էին գործակցելու թուրքերուն եւ գերմաններուն, ինչպէս լիովին ապացուցեցին 1918-ի դեպքերը, եթէ հայերն ալ իրենց միացած ըլլային 1914-ին՝ կտրելով երկաթուղիները ռուսական քանակին թիկունքը, բոլոր Կովկասեան հողամասը քանի մը շաբաթէն պիտի ելլէր ռուսներու ձեռքէն, և թուրքերն ու գերմանները Բագու հասած պիտի ըլլային նոյն տարուայ աշնան... Այդ պարագային, Ռուսիա պիտի հարկադրուէր իր զօրքին մեծագոյն մասը տեղափոխել Արևելք և չպիտի կարենար պաշտպանել իր արեւմտեան սահմանները... Միա կողմէ, Մեծ Բրիտանիա պիտի հարկադրուէր իր նորակազմ ցամաքային ուժերուն մեծագոյն մասը յատկացնել Հնդկաստանի պաշտպանութեան եւ չպիտի կարենար հերոսական Ֆրանսայի պաշտպանութեան համար ղրկել այնքան մեծ ոյժ մը, որքան իրապէս տրամադրեց»¹⁷⁰:

Այդպիսով, Մերձավոր Արևելքում իրականացվող ռազմագործողությունները, ինչպես նշում է պրոֆեսոր Զ. Լենկզոուսկին, չնայած համարվում էին երկրորդական, սակայն դրանք ունեին կենսական նշանակություն պատերազմող երկու կողմերի դաշինքների ընդհանուր ռազմավարության

¹⁶⁹ Pasdermajian G. (Armen Garo), նշվ. աշխ., էջ 16-17: *The Armenian Question before the Peace Conference. A Memorandum Presented Officially by the Representatives of Armenia to the Peace Conference at Versailles on February 26th 1919*, New York, The Armenian National Union of America Press Bureau, 1919, p. 5.

¹⁷⁰ Գարո Ա. Ապրոսած օրեր, Բուստըն, «Հայրենիք», 1948, էջ 206-207:

տեսանկյունից և խորապես կարող էին ազդել պատերազմի արդյունքի վրա Եվրոպայում¹⁷¹:

Սկսված Սարիղամիշի ռազմագործողությունը՝ խուճապ է առաջ բերում Պետրոգրադում, քանզի Կովկասյան ռազմաճակատում ռուսները բավական ուժեր չունեին: Թեև դեկտեմբերի կեսերին թուրքական առաջխաղացումը կասեցվում է, սակայն ռուսական զորքերի գերազույն-գլխավոր հրամանատար, Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը սա բավարար չհամարելով, 1915թ. հունվարի 2-ին նամակով դիմում է Մեծ Բրիտանիայի ռազմական քարտուղար Հ. Քիթչեներին՝ խնդրելով դաշնակիցներին հարված հասցնել թուրքական բանակին՝ թուլացնելու համար ճնշումը Կովկասյան ռազմաճակատում¹⁷²:

Թեև բրիտանացիները բավականին ցամաքային զորքեր չունեին բավարարելու ռուսների խնդրանքը, սակայն, բրիտանական ռազմաքաղաքական ղեկավարության շրջանում (արտաքին գործերի քարտուղար Է. Գրեյ, գանձատան կանցլեր Դևիդ Լլոյդ Ջորջ, լորդ Արթուր Բալֆոր)՝ Ծովակալության Առաջին լորդ Ու. Չերչիլի գլխավորությամբ առաջ եկավ Դարդանելում դաշնակիցների ռազմածովային ուժերի կողմից ռազմագործողություն իրականացնելու և այդպիսով, մի քանի ռազմավարական խնդիրներ լուծելու ծրագիրը: Մասնավորապես, Արևմտյան ռազմաճակատում սկսված դիրքային «խրամատային պատերազմը» ճեղքում առաջ չէր բերում կողմերից և ոչ մեկի համար: Է. Գրեյը իր հուշերում գրում էր, որ այդ ժամանակ իրավիճակն Արևմտյան ռազմա-

¹⁷¹ Lenczowski G., նշվ. աշխ., էջ 38:

* Սարիղամիշի ռազմագործողության մասին մանրամասն տես Корсуи И. Сарыкамышская операция, Москва, Воениздат, 1937.

¹⁷² Liddell Hart B. H., նշվ. աշխ., էջ 253:

ճակատում ծանր էր, հատկապես, Դաշնակիցների համար, հետևաբար անհրաժեշտություն կար մեկ այլ ռազմաճակատում իրականացնելու այնպիսի ռազմագործողություն, որը կթուլացներ գերմանական կողմի ճնշումն Արևմտյան ռազմաճակատում¹⁷³: Հետևաբար, Լոնդոնում ուժեղանում էր Գերմանիային Արևելքում անուղղակի հարված հասցնելու գաղափարը: 1914թ. դեկտեմբերի 28-ին Մեծ Բրիտանիայի Ռազմական խորհրդի քարտուղար Հենկին այն կարծիքն արտահայտեց, որ Գերմանիային «ամենաարդյունավետ հարվածը» կարող է հասցվել Թուրքիայի միջոցով¹⁷⁴:

Դեռևս 1914թ. սեպտեմբերին, երբ Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելը ժամանակի հարց էր, Ու. Չերչիլը ծրագրել էր ռազմագործողություն, ըստ որի հունական բանակի օգնությամբ պետք է գրավվեր Գալիպոլի թերակղզին, իսկ բրիտանական ռազմածովային նավատորմը մտներ Մարմարա ծով¹⁷⁵: Սակայն Հունաստանի չեզոքությունը բացառեց այս ծրագրի իրականացումը:

Արդեն դեկտեմբերին բրիտանական կողմը առաջ քաշեց մի նոր ռազմագործողության ծրագիր, այն է իրականացնել ֆրանս-բրիտանական ցամաքային միացյալ ուժերի ակտիանում Սալոնիկում: Սակայն ֆրանսիական կառավարության մտավախությունը՝ կապված Բալկաններում Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի ազդեցության ավելի ուժեղացման և Բալկանյան հարցի լուծումից Ֆրանսիայի դուրս մղման հնարավորության հետ, ինչպես նաև Ֆրանսիայի բանակի գլխավոր հրամանատար, գեներալ Ժոզեֆ Ժոֆրի կողմից

¹⁷³ Viscount Grey Of Fallodon. Twenty Five Years. Vol. 2, New York, Frederick A. Stokes Co., 1925, p. 78.

¹⁷⁴ Գոմսոն Բ. Բ., նշվ. աշխ., էջ 110:

¹⁷⁵ Լույս տեղում, էջ 110:

Արևմտյան ռազմաճակատից այլ ռազմաճակատ զորքեր տեղափոխելուն դեմ արտահայտվելը՝ վիժեցրին նաև Սալոնիկի ռազմագործողության իրականացումը¹⁷⁶: Կայսերական Գլխավոր շտաբի պետ, միաժամանակ, Ֆրանսիայում բրիտանական էքսպեդիցիոն ուժերի շտաբի պետ, գեներալ Ուիլյամ Ռոբերտսոնը նույնպես դեմ է արտահայտվում ֆրանս-բրիտանական ցամաքային զորքերի մասնակցությանը Դարդանելյան ռազմագործողությանը՝ հիմնավորելով, որ ամեն ինչ վճռվում է ֆրանս-գերմանական ռազմաճակատում¹⁷⁷:

1915թ. հունվարի 3-ին Շովային Առաջին լորդ Ջ. Ֆիշերը Ու. Չերչիլին գրած նամակում, անհարժեշտություն է համարում բրիտանացիների կողմից Հայֆայի և Ալեքսանդրետի նավահանգիստների, իսկ հունական և բուլղարական բանակների կողմից, համապատասխանաբար, Գալիպոլի և Կոստանդնուպոլսի գրավումը: Միաժամանակ, բրիտանական ռազմածովային ուժերը մտնելու էին Դարդանելի¹⁷⁸: Ալեքսանդրետի (Հալեպի հետ միասին) գրավման գաղափարը պաշտպանում էր նաև ռազմական քարտուղար Հ. Քիթչենբերը: Սիրիայի գրավումը թույլ կտար կտրել Բաղդադյան երկաթգիծը՝ կանխելով թուրքական բանակների համայնումը Միջագետքյան ու Կովկասյան ռազմաճակատներում, և թիկունքից հարված հասցնել Ռազմածովային նախարար Ահմեդ Ջեմալ փաշայի հրամանատարությամբ դեպի Սուեզ շարժվող թուրքական 4-րդ բանակին: Դրա համար, ըստ Հ. Քիթչենբերի, անհրաժեշտ կլինեին

¹⁷⁶ Լույս տեղում, էջ 110 - 111:

¹⁷⁷ Տարտանելի պատերազմը. Քաղոսած զանազան հրատարակություններ, Պեյրուֆ, «Ձարթոնք» 1939, էջ 13:

¹⁷⁸ Գոմսոն Բ. Բ., նշվ. աշխ., էջ 111:

բրիտանական փոքրաթիվ զորախումբ և գործակալների կողմից տեղացի ժողովուրդներից կազմված զինված խմբեր¹⁷⁹: Սակայն, այս ծրագրին նույնպես դեմ արտահայտվեցին ֆրանսիացիները: Ֆրանսիան, որը Կիլիկիան, Ալեքսանդրետը, Սիրիան համարում էր իր շահերի և ազդեցության ոլորտը, չէր կարող թույլ տար որպեսզի բրիտանացիները Սուեզի անվտանգության ապահովման պատրվակով գրավեին այդ տարածքները: Ի վերջո ֆրանսիացիները հասան նրան, որ այդ տարածքները բրիտանացիները ընդունեցին որպես ֆրանսիական «ազդեցության գոտի»: Ու Չերչիլը հրաժարվեց Ալեքսանդրետ ափիանում իրականացնելու մտքից, ինչի դիմաց ֆրանսիական կողմից ստացավ հավաստիացում՝ համատեղ ռազմածովային ռազմագործողություն իրականացնելու մասին¹⁸⁰:

1915թ. հունվարի 5-ին բրիտանական Ռազմական խորհրդի նիստում Հ. Քիթչեները Դարդանեղը համարեց ամենահարմար շրջանը՝ համատեղ ցամաքային և ծովային ռազմագործողություն իրականացնելու համար¹⁸¹: Ռազմագործողության հաջող ելքի դեպքում կվերաբացվեին Նեղոսները, որոնք հանդիսանում էին ռազմավարական և կենսական նշանակություն ունեցող ապրանքների, մասնավորապես, ուկրաինական ցորենի ու կովկասյան նավթի արտահանման գլխավոր ուղին, և կմիավորեին Կովկասյան (ներառյալ Պարսկաստանում գործող) ու Միջագետքյան ռազմաճակատների ռուսական և բրիտանական բանակները: Կլանգ-

նեցվեր թուրքական 4-րդ բանակի (25 000 զինվոր¹⁸²) առաջխաղացումը Սուեզի շրջանում, և միաժամանակ, հնարավոր կդարձներ Բաղդադի և Մոսուլի գրավումը: Արդյունքում, կխորտակվեր «Բեռլին-Կոստանդնուպոլիս-Բաղդադ» աշխարհառազմավարական առանցքը: Ավելին, հաղթանակը, ինչպես պնդում էր Հնդկաստանի փոխարքա Չ. Հարդինգը, կնպաստեր նաև Պարսկաստանում և Աֆղանստանում մուսուլման բնակչության պրոզեյրմանական և հակաանգլիական տրամադրությունների փոփոխմանը¹⁸³:

Ռազմագործողության հաջողությունը, վերջապես, ոչ միայն կհանգեցներ Օսմանյան Կայսրության պարտությանն ու պատերազմից դուրս գալուն, այլև դաշնակիցները իրենց ազդեցությունը կհաստատեին Դարդանեղում, Փոքր Ասիայում և Բալկաններում, որպես իրենց դաշնակիցներ պատերազմի մեջ կներքաշեին Հունաստանին, Բուլղարիային, Ռումինիային և Իտալիային, ինչը կարագացներ Ավստրո-Հունգարիայի պարտությունը և Բրիտանական Թագավորական ռազմածովային նավատորմը Դանուբ գետով կներթափանցեր Հաբսբուրգների Կայսրության սիրտը՝ Վիեննա¹⁸⁴: Այդպիսով, Դարդանեղյան ռազմագործողությունը, ինչպես դիպուկ բերողում է Լ. Հարթը, լինելու էր «ուղղակի գործողություն» ընդդեմ Օսմանյան Թուրքիայի, և միաժամանակ, «անուղղակի գործողություն» ընդդեմ Կենտրոնական տերությունների¹⁸⁵:

Մինչ բրիտանական ռազմաքաղաքական շրջանակներում ռազմագործողության վերաբերյալ քննարկումները

¹⁷⁹ Cassar G. H. *Kitchener's War. British Strategy from 1914 to 1916*, Washington D. C., Brassey's Inc., 2004, p. 120.

¹⁸⁰ Готман В. В., *Նշվ. աշխ.*, էջ 115:

¹⁸¹ Гилберт М. *Первая Мировая война. Пер с англ.*, Москва, Колибри, 2016, с. 181.

¹⁸² Djemal Pasha. *Memoirs of a Turkish Statesman. 1913-1919*, New York, George H. Doran Co., 1922, p. 152.

¹⁸³ Гандерт М., *Նշվ. աշխ.*, էջ 194:

¹⁸⁴ Լույս տեղում, էջ 181:

¹⁸⁵ Liddell Hart B. H., *Նշվ. աշխ.*, էջ 255:

շարունակվում էին, կտրուկ շրջադարձ տեղի ունեցավ Կովկասյան ռազմաճակատում, որտեղ Ռուսական Կովկասյան բանակը դեկտեմբերի կեսերին Սարիղամիշի տակ անցնելով հակահարձակման՝ մինչև 1915թ. հունվարի 5-ը ընկած ժամանակահատվածում շրջապատում և գրեթե գլխովին ջախջախում է 90 հազարանոց թուրքական 3-րդ բանակը: Սա բրիտանական կառավարող շրջանակներում առաջ բերեց մտավախություն, թե կղզակները հաղթահարելով Հայկական բարձրավանդակը՝ շուտով կգրավեն Կոստանդնուպոլիսը¹⁸⁶:

Սա արագացրեց Դարդանեյան ռազմագործողությունը սկսելու մասին որոշման կայացումը: Բրիտանական Ռազմական խորհրդի հունվարի 13-ի նիստում, սակայն, ծովակալ Ջ. Ֆիշերը դեմ է արտահայտվում ցանկացած ռազմագործողության, որը չէր նախատեսում ռազմածովային ուժերի և ցամաքային զորքերի համատեղ մասնակցություն¹⁸⁷: Ինչպես ռազմագիտական փորձն էր ցույց տվել, Դաշնակիցների կողմից Սևաստոպոլի (1855թ.) և ճապոնացիների կողմից Պորտ Արթուրի (1905թ.) գրավման ժամանակ, ռազմածովային խոշոր բազաների գրավման խնդիրը դրական լուծում կարող էր ստանալ միայն համատեղ՝ ցամաքային և ծովային, ռազմագործողության (*Amphibious warfare*) կիրառման արդյունքում:

Եվ չնայած շատերի, այդ թվում լորդ Ջ. Ֆիշերի ու Հ. Բիթչենների ընդդիմությանը, Բրիտանական Ռազմական խորհրդի հունվարի 28-ի նիստում հաղթանակեց Ու. Չերչիլի ծրագիրը և ընդունվեց որոշում Դարդանեյում միայն

ռազմածովային ռազմագործողություն սկսելու մասին¹⁸⁸:

Դարդանեյի շրջանում բրիտանական ռազմագործողություն սկսելու հանգամանքը ամենևին էլ անսպասելի չէր Բեռլինի համար: Դեռևս 1914թ. դեկտեմբերին Գերմանիայի ռազմաքաղաքական շրջանակներում քննարկվում էր այն հարցը, թե Սուեզի շրջանում գերմանա-թուրքական կողմի ռազմական գործողությունները հուսահատություն առաջ բերելով Մեծ Բրիտանիայում, վերջինիս ստիպելու է սկսել ռազմական գործողություններ Դարդանեյում¹⁸⁹: Ինչպես ծովակալ Ա. Մահանն էր շեշտում, ո՛չ Գերմանիան և ո՛չ էլ Մեծ Բրիտանիան չէին կարող իրենց գերակշռությունը հաստատել Լեվանտում և Սուեզում առանց Բոսֆորին ու Դարդանեյին տիրելու և, այդպիսով, փակված Սև ծովը անտոկ ռազմաքաղաքայի վերածելու¹⁹⁰: Ավելին, Կոստանդնուպոլիս և նեղուցների հնարավոր գրավումը (ոմ կողմից էլ որ լիներ), ինչպես Օսմանյան Կայսրությունում Ավստրո - Հունգարիայի ռազմական կցորդն էր նշում. «Վճռական կղաղնար ապագա քաղաքական իրավիճակի ձևավորման և, նույնիսկ, համաշխարհային հեգեմոնիայի համար»¹⁹¹:

Դարդանեյան ռազմագործողությունը իրականացնելու

¹⁸⁶ Taylor A. J. P. *English History, 1914 - 1945*, Oxford, The Clarendon Press, 1985, p. 24.

¹⁸⁹ Weber F. G. *Eagles on the Crescent, Germany, Austria and the Diplomacy of the Turkish Alliance, 1914 - 1918*, Ithaca - London, Cornell University Press, 1970, p. 100.

¹⁹⁰ Mahan A. T. *The Problem of Asia and its Effect upon International Policies*, Boston, Little, Brown and Co., 1900, p. 117.

¹⁹¹ Վերներ Է. Թուրքիան Եոյակ Միության և Անտանտի միջև 1914 թվականին. Պատրանքներ և իրականություն Բոսֆորի ափին. Լրաբեր Հասարակական գիտությունների, Երևան, ՍՍՍՀ ԳԱ, 1970, N 7, էջ 21:

¹⁸⁶ Лядовицеим Е. Ф., նշվ. աշխ., էջ 128:

¹⁸⁷ Fisher J. *Memories*, London, New York, Hodder and Stoughton, 1919, p. 69.

համար Միջերկրական ծովում՝ Դաշնակիցները կենտրոնացրին տարբեր դասերի ռազմանավերից (զծանավերից, հաճանավերից, ականակիր նավերից, սուզանավերից) կազմված ռազմածովային խոշոր խմբավորում՝ «Դրեդնոուֆ» դասին պատկանող բրիտանական հզոր «Քուին Էլիզաբեթ»՝ զծանավի գլխավորությամբ:

Իրենց հերթին, նեղուցների պաշտպանությունը կազմակերպելու նպատակով, Գերմանիայի ճնշման տակ, Ռումինիան և Բուլղարիան թույլատրում են իրենց տարածքով գերմանական խոշոր հրանոթների (Կրուպի գործարանի արտադրած) և ջրային ականների տեղափոխումը նեղուցների շրջան: Օսմանյան բանակի ինժեներական զորքերի պետ, գերմանացի գեներալ Վեբերի գլխավորությամբ ամրացվում են նեղուցների շրջանում եղած ամրությունները

* Ռազմածովային խմբավորման մեջ ընդգրկված էին հիմնականում ֆրանսիական, համեմատաբար հին ռազմանավերը: Դեռևս 1912թ. նոյեմբերի 22-ին և 23-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի քարտուղար Է. Գրեյի և Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնի միջև պաշտոնական նոտաների փոխանակումով և 1913թ. հունվարի 27-ին ստորագրված Անգլո-ֆրանսիական ռազմածովային կոնվենցիայով նախատեսվում էր, որ պատերազմի դեպքում բրիտանական ռազմածովային ուժերը հիմնականում գործելու էին Հյուսիսային ծովում և Լա-Մանշի շրջանում, իսկ ֆրանսիական ռազմածովային ուժերը հիմնականում՝ Միջերկրական ծովում: *См. Иванкаре Р. На службе Франции. Воспоминания за девять лет. Пер. с фр., том 5, Москва, Союзизд, 1936, с. 485 - 486. Gooch G. P. Before the War. Studies in Diplomacy. Vol. 2, London, Longmans Green and Co., 1938, p. 90.*

* Հետաքրքրական է, որ Դարդանելյան ռազմագործողության մասնակից, թուրքական բանակի սպա Ավետիս Ճեպեճյանն իր հուշերում խոսելով Դաշնակիցների հարվածային գլխավոր ուժի՝ «Քուին Էլիզաբեթ» զծանավի, մասին՝ շեշտում էր, որ այն «հազվադեպ էր կրակ բացում»: *См. Османьян А. Кавказская война. Мемуары. Т. 1. СПб., 1914-1918, Դելյուր, «Հարություն», 1986, էջ 38:*

(թվով 13-ը¹⁹²): Գերմանացի ծովակալներ Ուզեդի և Մարտենի գլխավորությամբ իրականացվում են Սևծովյան նեղուցների բազմաշերտ (թվով 10-ը¹⁹³) ականապատում՝ ծովային ականներով: Ավելի ուշ՝ զարնանը, նեղուցների շրջան են ժամանում գերմանական 14 սուզանավեր¹⁹⁴:

Կոստանդնուպոլսի շրջանում և Գալիպոլի թերակղզում տեղակայված էր գեներալ Լ. Ֆոն Սանդերսի հրամանատարությամբ գործող թուրքական 1-ին բանակը, իսկ նեղուցների ասիական ափին՝ Վեիիբ փաշայի հրամանատարությամբ գործող թուրքական 2-րդ բանակը: Երկու բանակները միասին ունեին շուրջ 200 000 զինվոր¹⁹⁵: Մարտ ամսին գեներալ Լ. Ֆոն Սանդերսը ստանձնում է Գալիպոլի թերակղզում նոր ձևավորված թուրքական 5-րդ բանակի հրամանատարությունը, իսկ թուրքական 1-ին բանակի (իրականացնելու էր Բոսֆորի պաշտպանությունը) հրամանատարությունը ստանձնում է ֆելդմարշալ Կ. Ֆոն դեր Գուլցը:

1915թ. փետրվար ամսին Մեծ Բրիտանիայի Ռազմածովային լիտաքի կողմից հաստատվում է Դարդանելյան ռազմագործողությունը սկսելու մասին հրամանը¹⁹⁶: Ծովակալ Ա. Կարդենի կողմից մշակված պլանի համաձայն, խորտակելով թուրքական ամրությունները և ականազերծելով նեղուցը՝ Դաշնակիցների նավատորմը շարժվելու էր Կոստանդնուպոլիս: Իր հերթին, արտաքին գործերի քարտուղար

¹⁹² Թորոյան Ա. Դարդանելից մինչև Պադետին. թարգմ. անգլ., Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան - ինստիտուտ, 2012, էջ 29:

¹⁹³ Դաճերտ Մ. նշվ. աշխ., էջ 195:

¹⁹⁴ Corbett J. S. Naval operations. Vol. London, Longmans, Green and Co., 1923, p. 206.

¹⁹⁵ Коленковский А. К. Дарданелльская операция, Москва-Ленинград, ГИИ, 1930, с. 25.

¹⁹⁶ Հրամանի տեքստը տես Churchill W. S. The World Crisis. Vol. 1, London, Odhams Press, 1938, p. 716 - 718.

է. Գրեյը հավատացած էր, որ ռազմագործողության հաջողության դեպքում Կոստանդնուպոլսում տեղի կունենար պալատական հեղաշրջում:¹⁹⁷

Անգլո-ֆրանսիական նավատորմը, փետրվարին 19-ին՝ ումրակոծելով Դարդանելյան ամրությունները, սկսում է ռազմագործողությունը: Հրետակոծումը կրկնվեց փետրվարի 25-ին, ինչի արդյունքում նեղուցների մուտքը պաշտպանող ամրությունները խորտակվեցին: Թվում էր ամեն ինչ վերջացած էր: Սակայն Դաշնակիցների նավատորմը (վատատողջ ծովակալ Ս. Կարդենի փոխարեն հրամանատարությունը ստանձնել էր ծովակալ Ջոն Դե Ռոբեկը) մարտի 18-ի վճռական գրոհի ժամանակ ծախողվեց: Երեք խոշոր զրահապատ ռազմանավեր («Բուվե», «Օուշն», «Իոնգիսթբլ») խորտակվեցին: Թվում էր Դաշնակիցների նավատորմը մի նոր, ավելի մեծ թափով պետք է գրոհը վերսկսեր և, ի վերջո, տիրեր Նեղուցներին: Սակայն, ինչպես Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաունն է իր հուշերում գրում. «Մեծ արմաղան էլ երբեք չվերադարձավ»¹⁹⁸: Իր հերթին Կոստանդնուպոլսում գտնվող գերմանացի լրագրող Հ. Շոյուրմերը գրում է. «Անգամ Անտանտին պատկանող երկրներում ընդունված փաստ է, որ մի քանի ռազմանավ ավել զոհելու գնով՝ մարտի 18-ին կվճռվեր Դարդանելի ճակատագիրը, սակայն ափերի ամրություն-

¹⁹⁷ *Грейерн М.*, Եզվ. աշխ., էջ 193:

* Հետաքրքրական մի փաստ. 1807թ. նույն օրը՝ փետրվարի 19-ին, Բրիտանական Թագավորական ռազմածովային նավատորմն (փոխծովակալ Ջոն Թոմաս Դակվորտի հրամանատարությամբ) արդեն մեկ անհաջող փորձ կատարել էր հարձակարելու Դարդանելի պաշտպանությունն ու հասնելու Կոստանդնուպոլսին:

¹⁹⁸ *Morgenthau H. Secrets of the Bosphorus*, London, Hutchinson and Co., 1918, p. 147.

ների պաշտպանները մեծ զարմանքով հայտնաբերեցին, որ հարձակումը հանկարծակի դադարեցվել էր»¹⁹⁹:

Հատկանշական է, որ 1915թ. մարտի 14-ին Ռուսաստանը որոշում է Բոսֆորի նեղուցի շրջան ուղարկել ռազմածովային ուժեր և էքսպեդիցիոն կորպուս՝ ափհանում իրականացնելու համար²⁰⁰: Սակայն շուտով էքսպեդիցիոն կորպուսը տեղափոխվում է Գալիցիա²⁰¹, իսկ ռուսական ռազմանավերը բավարարվում են միայն Բոսֆորի ամրությունների հրետակոծմամբ: Ենթադրել կարելի է, որ ռուսական կողմը վստահ չլինելով, որ Դաշնակիցներից կստանա Նեղուցներն ու Կոստանդնուպոլիսը, ամենևին էլ չահագրգռված չէր ակտիվորեն մասնակցելու ռազմագործողությանը՝ դրանով իսկ նպաստելով բրիտանացիների կողմից Նեղուցների գրավմանը, քանզի «Թիլդրիայից պոկած, բաժանած կտորները՝ Փոքր Ասիայում թէ Բոսֆորի ափերում, իմ ձեռքս ընկնեն, կամ թէ չէ նա մնայ անսասան իր լի ամբողջութեամբ, ահա ինքնակալ ցարիզմի դարաւոր քաղաքական դիվիզը»²⁰²:

Դաշնակիցների կողմից սկսված ռազմագործողության ֆոնին ավելի էր ուժեղացել ռուսական կողմի պահանջը՝ կապված նեղուցների խնդրի հետ: Մասնավորապես, 1915թ. մարտի 4-ին Ս. Սազոնովը Պետրոգրադում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դեսպաններ Ջ. Բյուկենենին և Մ. Պալեոլոգին է հանձնում հուշագիր՝ պահանջելով Նեղուցների (Մարմարա ծովով)՝ իրենց ափերով, Կոստանդնու-

¹⁹⁹ *Stuerner H.*, *Two War Years in Constantinople. Sketches of German and Young Turkish Ethics and Politics*. Tr. from German, New York, George H. Doran Co., 1917, p. 77.

²⁰⁰ *Стропоу А. А. История военного искусства. Том 3, Москва, Воениздат, 1967, с. 413.*

²⁰¹ *Людвигсгейм Е. Ф.*, Եզվ. աշխ., էջ 128:

²⁰² Իշխանեան Բ., Եզվ. աշխ., էջ 45:

պոլսի, Գալիպոլի թերակղզու, Հարավային Թրակիայի անցումը Ռուսաստանին²⁰³: Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան բավարարելու համար ռուսական կողմի պահանջները՝ ներկայացրին սեփականը, որոնք ընդունվեցին ռուսական կողմից: Մասնավորապես Կոստանդնուպոլսի դիմաց Մեծ Բրիտանիային էր անցնում Պարսկաստանի «Չեզոք գոտին» (բացառությամբ Սպահան և Յազդ քաղաքների, որոնք անցնում էին ռուսական «ազդեցության գոտու» մեջ), ընդունվում էին ֆրանսիական և բրիտանական «հատուկ շահերը» Ասիական Թուրքիայում, Մեծ Բրիտանիան իրավունք էր ստանում ստեղծելու Արաբական մուսուլման անկախ պետություն, որը ներառելու էր մուսուլման սրբավայրերը, իսկ Ֆրանսիան ստանալու էր Սիրիան և Կիլիկիան: Այս պայմաններով մարտի 18-ին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան Ռուսաստանի հետ ստորագրեցին գաղտնի համաձայնագիր²⁰⁴: Այդպիսով, փաստորեն, բրիտանական ռազմավարությունը Նեղուցների հարցում վերջնականապես մտավ փակուղի:

Ստեղծված իրավիճակում, չնայած համատեղ՝ ծովային և ցամաքային, ռազմագործողություն սկսելու մասին գեներալ Յ. Համիլթոնի (1915թ. մարտի 12-ին նշանակվել էր էքսպեդիցիոն զորքերի հրամանատար) կողմից Ռազմական խորհրդին մարտի 26-ին²⁰⁵ ներկայացված առաջարկությունն ընդունվեց, և ապրիլի 25-ին իրականացվեց էքսպեդիցիոն զորքերի ափհանումը Գալիպոլի թերակղզում²⁰⁶, սակայն էքս-

պեդիցիոն զորքերի հրամանատարության անվճռական գործողություններից և մի քանի ամիս շարունակված արյունալի մարտներից հետո, բրիտանական կառավարությունը ստիպված էր իրականացնելու զորքերի տարհանումը թերակղզուց: Այն սկսվեց 1915թ. դեկտեմբերի կեսերին և ավարտվեց 1916թ. հունվարի 9-ին: Տարբեր տվյալներով, Դաշնակիցների տված զոհերի և վիրավորների թիվը հասնում էր շուրջ 300 000-ի, իսկ թուրքական կողմինը՝ մինչև 250 000-ի²⁰⁶:

Հետաքրքրական է, որ Գալիպոլի ռազմագործողության հենց սկզբից հայ հասարակական-քաղաքական գործիչների կողմից առաջարկություններ են ներկայացվում Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական ղեկավարությանը՝ Ալեքսանդրետում կամ Կիլիկիայում հայ կամավորներից կազմված զորախմբի և բրիտանական էքսպեդիցիոն ուժերի համատեղ ափհանում իրականացնելու մասին: Մասնավորապես, Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի կողմից 1915թ. փետրվարի 3-ին պատրաստված և բրիտանական հրամանատարությանը ներկայացված հուշագրում նշվում էր, որ Կիլիկիայում ափհանում իրականացնելու դեպքում բրիտանացի զինվորները կստանային տեղի հայ բնակչության «անվերապահ աջակցությունը», և որ տեղացիներին անհրաժեշտ է միայն զենք: Միաժամանակ, Կիլիկիայի հայությունը հույս ուներ ստանալու «առնվազն ինքնավարության երաշխիք Դաշնակիցների կողմից»²⁰⁷:

Արդեն 1915թ. աշնանը, Վանի և Մուսա լեռան հերոսա-

²⁰³ Gornau B. B., նշվ. աշխ., էջ 129:

²⁰⁴ Lenczowski G. նշվ. աշխ., էջ 68 - 69:

²⁰⁵ Allen G.H. and Others. The Great War. Vol. 4, Philadelphia, George Barrier's sons, 1919, p. 102 - 103.

²⁰⁶ Գալիպոլի թերակղզում էքսպեդիցիոն զորքերի ափհանման և մարտական գործողությունների մասին մանրամասն տես Hamilton Ian.

Gallipoli Diary. in 2 volumes. London, Edward Arnold, 1920. Mackenzie. Gallipoli Memories, Garden City - New York, Double Day, Doran and Co., 1930.

²⁰⁶ Лядыгейм Е. Ф., նշվ. աշխ., էջ 131:

²⁰⁷ Հուշագրի տեքստը տես Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918, Documents. Ed. and tr. by Vatche Ghazarian, Waltham, Mayreni Publishing, 1996, p. 3-5.

մարտերից հետո, եգիպտոսում գործող բրիտանական զորքերի հրամանատար, գեներալ Ջ. Մաքսվելի միջոցով եգիպտոսիայ համայնքի ղեկավար գործիչների կողմից բրիտանական ռազմաքաղաքական ղեկավարությանն է ներկայացվում արտասահմանում բնակվող, ինչպես նաև Մոսա լեռից տարհանված հայերից բրիտանական հրամանատարության ներքո հայկական կամավորական զորախումբ ստեղծելու և Ալեքսանդրետում կամ Կիլիկիայում ավիանում իրականացնելու մասին մի նոր առաջարկություն: Մասնավորապես, Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ղեկավար գործիչներից Միքայել Վարանդյանը Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի քարտուղարությունը (*Foreign Office*) խոստանում էր, որ շուրջ 20 000 հայ կամավորներ պատրաստ են իրենց մասնակցությունը բերելու Ալեքսանդրետում հնարավոր ավիանման ռազմագործողությանը²⁰⁸: Սակայն Մեծ Բրիտանիայի ռազմական (*War Office*) և արտաքին գործերի քարտուղարությունները մերժում են այս առաջարկությունը՝ պատճառաբանելով աշխարհագրական, ռազմավարական և այլ խնդիրներով²⁰⁹:

Փոխարենը, բրիտանական կառավարությունը բավարարվեց 1915թ. մայիսի 24-ին Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունների հետ համատեղ հրապարակված հայտարարությամբ, որտեղ նշվում էր «Մարդկության և քաղաքակրթության դեմ» Թուրքիայի կատարած հանցագործությունների, և Օսմանյան կառավարության անդամների «անձնական պատասխանատվության» մասին²¹⁰:

²⁰⁸ Somakian M. J., նշվ. աշխ., էջ 80 - 81, 105:

²⁰⁹ Nassibian A. *Britain and the Armenian Question. 1915-1923*, London, Croom Helm, 1984, p. 92.

²¹⁰ Հայտարարության տեքստը մշակվել էր Ռուսաստանի արտգործնախարարությունում՝ Ս. Ասգունովի առաջարկով և Մեծ Բրիտանիայի կա-

Թեև գերմանացի գեներալ Ֆրիդրիխ Կրեսս ֆոն Կրեսենշտեյնը շեշտում էր, որ եթե Լ. ֆոն Սանդերսը և գերմանական թեղանոթներն ու ռազմամթերքը չլինեին՝ բրիտանացիները երկու շաբաթում կվերցնեին Դարդանեղ²¹¹, սակայն, ինչպես հետագայում Վեիբր փաշան էր նշում, պարզապես «Անգլիացիք չուզեցին զրահանավերով մտնել Տարտանեղ և Պոլիս: Անոնց հաշիվն էր, թե որու համար տիրենք Տարտանեղին, քանի որ Պոլիսը և Նեղուցները խոստացված են Ռուսիո»²¹²: Նույն միտքը նաև դեսպան Հ. ֆոն Վանզենհայմն էր նշում. «Անգլիոյ շահը կը պահանջէ չգրաւել Պոլիսը, որովհետեւ եթէ զայն գրաւէ, ստիպուած պիտի ըլլայ Ռուսիոյ յանձնել՝ համաձայն դաշնակիցներու միջև կնքուած

ռազմարությունը մեծ դժկամությամբ էր միացել հայտարարությանը: Ֆրանսիայի կառավարությունն էլ իր հերթին հոգ էր տարել այն մասին, որ հայտարարության մեջ սկզբնապես տեղ գտած «Հանցագործությունն ընդդեմ բրիտանոնեության և քաղաքակրթության» արտահայտությունը փոխադրելով «Հանցագործությունն ընդդեմ մարդկության և քաղաքակրթության» արտահայտությամբ՝ ֆրանսիական զաղութների մուտավան ազգաբնակչության զգացմունքները չզրգոնելու համար (տես ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 3016, թ. 5.): Հայտարարության տեքստը տես ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 54, թ. 1: *Геноцид армян в Османской империи: Сб. Документов и материалов. Под ред. М. Г. Нерсисяна. 2-е доп. изд., Ереван, «Айастан», 1982, с. 601-602. Геноцид армян. Ответственность Турции и обязанности мирового сообщества, с. 238-239: Մարդկության Տ. Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915–1918թթ.): Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005, էջ 71-72:*

²¹¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 21, թ. 2

²¹² Շիրինյան Լ., Օրդոխանյան Է., Սուրիսյան Հ. Հայոց ցեղասպանության երկրաքաղաքական համատեքստը և Հայկական հարցի էվոլյուցիան, Երևան, «Գիտություն», 2016, էջ 44: Մանրամասն տես Ռուբեն (Տեր-Մինասյան). Հայ լեռնափոխականի մը յիշատակները, հատոր 2. Կարսէն՝ Պոլիս (1909), Թեհրան, Հ. Յ. Դ. հրատ., 1982, էջ 253-260:

գաղտնի դաշինքին»²¹³: Իր հերթին ռազմագործողության մասնակից, Օսմանյան բանակի սպա Սարգիս Թորոսյանն իր հուշերում անդրադառնալով այս հարցին՝ գրում է, որ բրիտանական և ֆրանսիական «վարչապետներն ու դիվանագետները դողում էին սոսկ այն մտքից, որ ռուսները ստանում են Կոստանդնուպոլիսը՝ որպես իրենց անհատական մրցանակ, իսկ հետո փակում Սուեզի դարպասներն ու կործանում Անգլիայի հնդկաստանյան քաղաքականությունը, ինչպես նաև վերջ դնում անգլիական ու ֆրանսիական գերիշխանությանը Միջերկրականում... Արդյունքում դյուրին հաղթանակն ինչ-որ ձևով վերածվեց հեղհեղուկ ու կասկածելի մի պարտության»²¹⁴:

Ինչպես պատմաբան Վ. Նավասարդյանն է նկատում, երբ Եվրոպական տերությունները «Ուզում էին Ռուսիան իրենց հետ ունենալ՝ դառնում էին գիջող Նեղուցների հարցում, իսկ երբ այս բարեկամության կարիքը սուր կերպով չէին զգում՝ համալսմբում և խեղդում էին Ռուսաստանը նեղուցների ջրերում»²¹⁵: Ոչ պակաս Կայսրության «ժառանգորդներու այդ շատությանն է պատճառը եւ մանաւանդ Ռուսաստանի շատ խիզախ դէպի Հարաւ շարժուիլը, որ կը ստիպէ եւրոպացիները, եւ մանաւանդ անգլիացիները, արուեստական (արհեստական-Հ.Ն.) միջոցներով երկարելու Թուրքիայի գոյութիւնը»²¹⁶:

Նեղուցների հարցում բրիտանական ռազմավարության

հայտնվելը փակուղում՝ առաջ բերեց ռազմավարական մի շարք խնդիրներ հենց իրենց՝ Դաշնակիցների, համար: Մասնավորապես, Նեղուցների նկատմամբ գերմանա-թուրքական կողմի վերահսկողության պահպանումը և Առաջավոր Ասիայի հետ ազատ կապը (1916թ. հունվարին շահագործման հանձնվեց Բեռլին-Կոստանդնուպոլիս երկաթուղին) թույլ տվեց գերմանացիներին ստեղծելու լրացուցիչ վտանգ բրիտանացիների համար Եգիպտոսում ու Միջագետքում և ստիպելու նրանց հսկայական ուժեր տեղափոխել այնտեղ: Ավելին, չեզոքություն պահպանող Բուլղարիան 1915թ. սեպտեմբերի 6-ին ստորագրում է ռազմական կոնվենցիա Կենտրոնական տերությունների հետ²¹⁷: Այդպիսով ձևավորվում է Քառյակ դաշինքը:

Ավելի է ամրապնդվում Ռուսաստանի դիրքերը՝ Մերձավոր Արևելքում ազդեցության գոտիների և, մասնավորապես, Օսմանյան Կայսրության «ժառանգության» բաժանման համար Տերությունների միջև ընթացող պայքարում:

Վերջապես, Դարդանեյլյան ռազմագործողության տապալման արդյունքում խախտվեց «Հայկական հարցում» եվրոպական տերությունների («European Concert»-Եվրոպական համանվագ») միջև 1878թ.-ից մինչ այդ պահպանված ուժերի ռազմավարական հարաբերակցությունն, ինչի արդյունքում, ինչպես նշում է պրոֆեսոր Լ. Շիրինյանը, Օսմանյան Կայսրությունը ստացավ «Քարտ Բլանշ» (Carte Blanche)²¹⁸ և իրականացրեց հայոց ցեղասպանությունը: Սա հաս-

²¹³ Տարտանելի պատերազմը, էջ 368:

²¹⁴ Թորոսյան Ս, նշվ. աշխ., էջ 49:

²¹⁵ Նավասարդյան Վ. Նեղուցները (Վոսփոր և Դարդանեյլ). Թրքական ջրուղիները և Հայ դատը, Գահիրե, «Յուսսաբեթ», 1947, էջ 125:

²¹⁶ Շանթ Լ. Մեր անկախութիւնը, Պոսթըն, «Հայրենիք», 1925, էջ 79:

²¹⁷ Կոնվենցիայի կետերը տես Корсун Н. Балканский фронт Мировой войны 1914 - 1918, Москва, Воениздат, 1939, с. 30 - 31:

²¹⁸ Շիրինյան Լ. Հայոց ցեղասպանության Դարդանեյլի «Քարտ Բլանշը», Հայոց ցեղասպանություն - 100. Ճանաչումից՝ հաստոցում. Միջազգային գիտաժողովի գեղուցումների դրույթները, Երևան, «Գիտություն», 2015, էջ 177 - 179:

տատելու է գալիս Ն. Սփայքմենի այն դիպուկ դիտարկումը, ըստ որի փոքր բուֆերային պետությունների գոյությունը պայմանավորված է խոշոր տերությունների միջև առկա ուժերի հավասարակշռությամբ, իսկ «երբ անհետանում է ուժերի հավասարակշռությունը, փոքր պետությունները, սովորաբար, անհետանում են դրա հետ միասին»²¹⁹:

Այսպիսով, Դարդանեյան ռազմագործողության մշակման փուլում Դաշնակիցների և, հատկապես, բրիտանացիների կողմից առաջ քաշված ռազմավարական խնդիրները ձախողվեցին, իսկ ևս երեք տարով երկարածված պատերազմի պայմաններում տարածաշրջանում հաստատվեց ուժերի նոր հարաբերակցություն:

2.2. Ուժերի ռազմավարական հարաբերակցությունը Մերձավոր Արևելքում 1916թ. և «Սայքս-Պիկո-Սազունով» համաձայնագրի ձևավորումը

Նայելով Օսմանյան Կայսրության քաղաքական քարտեզին՝ կտեսնենք, որ այն հիշեցնում էր «փոկած հսկայի», որի գլուխը գտնվում էր Եվրոպայում, մարմինը՝ Փոքր Ասիայում, աջ ոտըը՝ Միջագետքում, ձախ ոտըը՝ Սինայի թերակղզում, իսկ սիրտը՝ Անատոլիան էր²²⁰: Եվ ահա այդ «Հիվանդ հսկայի» անդամահատման խնդիրն Առաջին համաշխարհային պատերազմի առանցքային հարցերից մեկն էր, որի լուծումը մինչ այդ հնարավոր չէր դարձել՝ շնորհիվ «Եվրոպական համանվագի» շրջանակում գոյություն ունեցած ուժերի ռազմավարական հավասարակշռության: Ինչպես լորդ Բ. Սոլսբերին էր ժամանակին բնորոշել,

Օսմանյան Կայսրությունը շարունակում էր պահպանել իր գոյությունն՝ ի հաշիվ «Մեծ տերությունների միջև գոյություն ունեցող համաձայնության ուժի, որն Օսմանյան Կայսրության գոյության պահպանումը դիտում էր որպես միջոց՝ խուսափելու թուրքական «ժառանգության» համար Մեծ տերությունների միջև բախումից»²²¹: Սակայն պատերազմի մեջ մտնելով՝ «Հիվանդ մարդը» (Օսմանյան Կայսրությունը – Հ. Ն.) կայացրեց իր մահավճիռը: 1916թ. Մերձավոր Արևելքում ուժերի ռազմավարական նոր հարաբերակցության հաստատումը հնարավորություն էր ստեղծում լուծելու մինչ այդ անլուծելի խնդիրը:

Կովկասյան (Պարսկաստանի հետ միասին), Միջագետքյան և Սինայի-Պաղեստինյան ռազմաճակատներում Անտանտի մաս կազմող երեք տերություններից յուրաքանչյուրի բանակի հաջող ռազմագործողությունը մյուս երկուսի համար վերածվում էր «քաղաքական անհարմարության»: Հետևաբար, յուրաքանչյուր տերության բանակի գլխավոր շտաբի համար առաջնային խնդիր էր դառնում մինչպատերազմական շրջանում ունեցած իրենց «ազդեցությունների գոտիների» պաշտպանությունը՝ մյուս երկուսից²²²:

Օսմանյան «ժառանգության» բաժանման վերաբերյալ եռակողմ (Անգլո-ֆրանս-ռուսական) առաջին համաձայնագրի (1915թ. մարտի 18) կնքումից ամիսներ անց՝ 1915թ. նոյեմբերի 23-ին, Լոնդոնում մեկնարկում են անգլո-ֆրանսիական նոր բանակցությունները²²³, որը վարում էին Բեյրու-

²¹⁹ Kapchey G. I. Турецкое Наследство и мировая война, Петроград, тип. Прогресс в Стокгольме, 1917, с. 21.

²²⁰ Раздел Азиатской Турции, с. 75.

²²¹ Բանակցությունները նոր էին սկսվել, երբ 1915թ. դեկտեմբերին հայ հասարակական-քաղաքական գործիչ Հավոր Զավրիկի և Հուսաստանում ռուսական գործակալի հայտնած հավաստի տեղեկությունների վրա

²¹⁹ Spykman N. J. America's Strategy in World Politics, p. 20.

²²⁰ Crutwell F. C. A History of the Great War. 1914-1918, Oxford, Clarendon Press, 1940, p. 204.

թում Ֆրանսիայի նախկին հյուպատոս Ֆրանսուա ժորժ Պիկոն և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի քարտուղարի տեղակալ Ա. Նիքոլսոնը, ում շոտով փոխարինում է մերձավորարևելյան գործերի փորձագետ Մարկ Սայքսը:

Բանակցություններն ընթանում էին Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի ռազմավարական լուրջ հաջողությունների ֆոնին: Բրիտանացիների համար, հատկապես, լուրջ անհանգստություն է առաջ բերում ռուսական բանակի կողմից 1916թ. փետրվարի 3-ին (16-ին) Էրզրում բերդաքաղաքի գրավումը²²³: Եվրասիայի ճանապարհների համար «Էրզրումը նույն դերն ունի, - ընդգծում է Ռուբեն Տեր-Մինասյանը, ինչ որ Սուեզի ջրանցքը, Դարդանեյլը և Ջիբրալ-

հիմնվելով՝ Ս. Սազոնովը Դաշնակիցներին հայտնում է Ջենայ փաշային իրենց կողմը գրավելու և երա կողմից Օսմանյան Կայսրությունում հեղաշրջում իրականացնելու հնարավորության մասին: Որպես գլխավոր նախապայման Դաշնակիցները պետք է երաշխավորեին Ասիական Թուրքիայի անկախությունն ու տարածքային ամբողջականությունը, որը կազմված էր լիբեյու Սիրիայի, Պաղեստինի, Իրաքի, Արաբիայի, Հայաստանի և Քուրդիստանի ինքնավարություններից՝ սուլթանի (Ջենայ փաշայի) ենթակայությամբ: 1916թ. հունվար փետրվար ամիսներին Պետրոգրադի, Փարիզի և Լոնդոնի միջև ընթացան ակտիվ բանարկումներ՝ Ջենայ փաշայի հետ բանակցություններ սկսելու հարցի շուրջ: Մարտի կեսերին Հ. Ջավրիկին ընդունում է անգամ Ֆրանսիայի վարչապետ Արիստիդ Բրիանը: Սակայն հաշվի առնելով, որ Ռուսաստանը կարող է ստանալ Նեղոցները և Կոստանդնուպոլիսը, իսկ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան կգրկվեն իրենց ապագա ազդեցության գոտիներից՝ բրիտանացիները և ֆրանսիացիները հրաժարվում են շարունակել այդ հարցով բանակցությունները: Տես Ղազարեա Մ. Ս. Крушение турецкого господства на Arabском Востоке (1914-1918 гг.), Москва, Изд-во восточ. Лит., 1960, с. 129. ²²³ Էրզրումի ռազմագործողության մասին մանրամասն տես Корсун Н. Эрзерумская операция, Москва, Воениздат, 1983.

թարը ծովային ճամբաների համար»²²³: Հետաքրքրական է Ռ. դե Նոգալեսի գրած այն տեղեկությունը, ըստ որի պարսկական անհաջող արշավանքից հետո Էրզրում մեկնած խալիվ փաշան, այնտեղից լավագույն դիվիզիաները տեղափոխել էր Միջագետք (ընդդեմ բրիտանացիների)՝ թույլ տալով ռուսների կողմից թուրքական 3-րդ բանակի ջախջախումն ու Էրզրումի գրավումը²²⁴:

Միաժամանակ, ռուսական զորքերը Պարսկաստանի տարածքով առաջ էին շարժվում Մոսուլի ու Բաղդադի ուղղությամբ: Դեռևս 1915թ. հոկտեմբերի 30-ին Էնզելիում ափիանված գետերալ Նիկոլայ Բարաթովի շքսպեդիցիոն կորպուսը 1916թ. դեկտեմբերին գրավում է Համադանը, իսկ փետրվարին՝ Քերմանշահը: Ռազմագործողության ամենագլխավորը ռազմավարական խնդիրն ու վերջնական նպատակակետը, սակայն, Բաղդադն էր²²⁵: Սա, բնակաւնաքար, բրիտանացիները թույլ տալ չէին կարող:

Ռուսական բանակի կողմից Քերմանշահի և Ռևանդուզի ուղղությամբ անսպասելի հարձակումը դեպի Բաղդադ, Միջագետքի բրիտանական հրամանատարությանը դուրս բերեց «ընդարմացումից», և ստիպեց նրանց գլխավոր հրամանատարին՝ հրաման տալ գետերալ Չարլզ Թաունսենդի ուժերին շարժվելու դեպի Բաղդադ²²⁶: 1915թ. նոյեմբերի 22-ին, սակայն, Կոտսիֆոնի մոտ տեղի ունեցած ճակա-

²²³ Շիրինյան Լ. Ռուբեն. Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը. Երևան, «Ձանգակ - 97», 2004, էջ 15:

²²⁴ Де Ногалес Р., նշվ. աշխ., էջ 82:

²²⁵ Корсун Н. Первая мировая война на Кавказском фронте. Оперативно-стратегический очерк, Москва, Воениздат, 1946, с. 46. Корсун Н. Алашкертская и Хамаданская операции мировой войны в 1915 году, Москва, Воениздат, 1940, с. 181.

²²⁶ Де Ногалес Р., նշվ. աշխ., էջ 176:

տամարտում թուրքական 6-րդ բանակի (հրամանատար ֆելդմարշալ Կ. ֆոն դեր Գոլց) առաջապահ ուժերի (հրամանատար Նուրէդդին բեյ) կողմից Չ. Թաունսենդի 6-րդ դիվիզիան ծանր պարտություն է կրում և նահանջում Կուտ – էլ – Ամարա, որտեղ հայտնվում է պաշարման մեջ:

Ստեղծված իրավիճակում, Ռուսական կողմի առաջարկը, այն է՝ համատեղ ուժերով շարժվել դեպի Բաղդադ՝ ազատելով պաշարման մեջ գտնվող բրիտանական դիվիզիան, իսկ այնուհետև Մոսուլ և Դիարբեքիր²²⁷, բրիտանական կողմը մերժում է: Պատճառն այն էր, որ «Անգլիան մահու չափ վախենում էր, որ Ռուսաստանը՝ նրա դարավոր ախոյանը, կարող է հաստատվել Միջագետքում»²²⁸:

Փոխարենը, 1916թ. մարտի 4-ին կնքվում է Անգլո-ֆրանսոսական համաձայնագիր՝ «Փոքր Ասիայում Ռուսաստանի պատերազմական նպատակների մասին» («О целях войны России в Малой Азии»), որի համաձայն Ռուսաստանը ստանալու էր Նեղուցներն ու Կոստանդնուպոլիսը, Արևմտյան Հայաստանը, բացառությամբ Սվազի (Սեբաստիայի): Իր հերթին Ռուսաստանը Մեծ Բրիտանիային էր գիջում Պարսկաստանի «Չեզոք գոտին»²²⁹: Այս համաձայնագիրը, փաստորեն, վերահաստատեց 1915թ. մարտի 18-ի համաձայնագրի առանցքային կետերը:

1916թ. մարտին Մ. Սայքսը և Ժ. Պիկոն ժամանում են Պետրոգրադ, որտեղ մարտի 9-ին Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դեսպաններ Զ. Բյուքենենը և Մ. Պալեոլոգը պաշտոնապես ռուսական կողմին են ներկայացնում Օսման-

յան Կայսրության մասնատման վերաբերյալ անգլո-ֆրանսիական դիրքորոշումը: Ըստ այդմ, Միջերկրականի արևելյան ափին գտնվող Հայֆա և Աքրա նավահանգիստաղաքները, Անդրիորդանանը և Իրաքը (բացառությամբ Մոսուլի) անցնելու էին Մեծ Բրիտանիային, իսկ Սիրիան, Լիբանանը, Ալեքսանդրետը, Կիլիկիան, Դիարբեքիրը, Մարդինը, Հաքյարին (Հյուսիսային Քուրդիստանը), Մոսուլը՝ Ֆրանսիային: Ալեքսանդրետ և Հայֆա նավահանգիստները բրիտանական և ֆրանսիական առևտրի համար դառնալու էին ազատ նավահանգիստներ: Պաղեստինում սահմանվելու էր միջազգային կառավարում²³⁰: Մարտի 17-ին դեսպաններին ուղղված պատասխան գրությամբ Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովը տեղեկացնում է, որ Ռուսաստանը կհամաձայնվի անգլո-ֆրանսիական նախագծին, եթե վերջիններս համաձայնվեն Ռուսաստանին հանձնել Արևմտյան Հայաստանը, Հաքյարին, Սև ծովի հարավային ափերը և Սևծովյան նեղուցներն ու Կոստանդնուպոլիսը²³¹: Ռուսական ռազմաքաղաքական շրջանակների համար առաջնային խնդիրն էր Սևաստոպոլ-Սինոպ-Բոսֆոր ռազմավարական եռանկյունու նկատմամբ վերահսկողության սահմանումը և նշված կետերում Սևծովյան նավատորմի բազավորումը²³²:

Ռուսական կողմը երաշխիք էր պահանջում, քանի որ Ռուսաստանի ղեկավարող շրջանակները չէին հավատում, որ Սևծովյան նեղուցների հարցը կարելի կլիներ լուծել տերությունների հետ դիվանագիտական բանակցություն-

²²⁷ Корсун Н. Первая мировая война на Кавказском фронте, с. 55.

²²⁸ Հովհաննիսյան Ն. Արարական երկրների պատմություն. Հատոր 2-րդ, Երևան, «Հանելալ - 97», 2004, էջ 587:

²²⁹ Зайончковский А. М. Первая мировая война, СПб, «Политгон», 2002, с. 523.

²³⁰ Лазарев М. С. Крушение турецкого господства, с. 131 – 132.

²³¹ Նույն տեղում, էջ 132 – 133:

²³² Раздел Азиатской Турции, с. 177.

ների ճանապարհով²³³: Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան Մ. Պակելոգը իր հուշերում նշում էր, որ Ռուսաստանի համար Կոստանդնուպոլսի մասին երազանքը «միշտ էլ եղել է անորոշ»²³⁴: Ավելի հեռատես էր Փարիզում Ռուսաստանի դեսպան Ա. Իզվոլսկին. «Ռուսաստանը եթէ մինչեւ իսկ տիրանար Պոլսոյ, միևնոյն է, մարտել պիտի չկարողանար»²³⁵: Ստեղծված իրավիճակում Ռուսաստանում ավելի էր ուժեղանում պատերազմից դուրս գալու գաղափարը: Մասնավորապես, Գլխավոր շտաբի պետ, գեներալ Միխայիլ Ալեքսեևը արտահայտվում է Օսմանյան Թուրքիայի հետ սեպարատ հաշտություն կնքելու օգտին՝ նշելով, որ Գերմանիայի կողմից Բուլղարիայի մասնակցությունը պատերազմին՝ ավելի հրամայական է դարձնում հաշտությունը²³⁶:

Ռուսաստանին պատերազմից դուրս բերելուն ուղղված ակտիվ դիվանագիտական ջանքեր էր գործադրում Գերմանիան: Վերջինս հավատացած էր, որ անգամ պատերազմի ընթացքում «Բրիտանիան միշտ կպայքարեր Ցարին Բոսֆորից և Դարդանելից հեռու պահելու համար»²³⁷: Դեռևս 1915թ. մայիսին Գերմանիայի արտաքին գործերի քարտուղար Գոթլիբ ֆոն Յագովը Նիկոլայ 2-րդին ուղղված գաղտնի նամակում գրում էր, որ անջատ հաշտությամբ պատերազմը վերջացնելով՝ «Ռուսիա անլին կը ստանայ մինչեւ իսկ Դարդանելի հարցում... Անգլիա ձգտում է

²³³ Нотович Ф. И., Дипломатическая борьба в годы Первой мировой войны, Том I, Москва-Ленинград, Изд - во Акад. наук СССР, 1947, с. 379.

²³⁴ Палеолог М., Царская Россия накануне революции, Пер. с фр., Москва, «Пашиниздат», 1991, с. 121:

²³⁵ Նավասարդեան Վ. Նշվ. աշխ., էջ 137:

²³⁶ Կիրակոսյան Զ. Առաջին համաշխարհային պատերազմը և Արևմտահայությունը 1914-1916թթ., Երևան, «Հայաստան», 1965, էջ 380:

²³⁷ Smith C. J., Նշվ. աշխ., էջ 83:

գերակշիռ դիրք գրաւել Պոլսոյ մէջ, ուստի, հակառակ իր քոյր խոստումներին, նա երբեք թոյլ չի տայ Ռուսիոյ՝ այդ քաղաքը գրաւելու և կամ, գրաւած դէպքում, այն իրեն պահելու»²³⁸:

Արդեն 1916թ. մայիսին Գերմանիայի արտաքին գործերի քարտուղարությունը ռուսական կողմին ներկայացրեց անջատ հաշտության նոր առաջարկ. Ռուսաստանը ստանալու էր Արևմտյան Հայաստանը, Պարսկաստանի մնացած մասը (ներառյալ բրիտանական «ազդեցության գոտին») և Սևծովյան նեղուցներով ռուսական ռազմանավերի ազատ անցման իրավունք²³⁹: Թեև անջատ հաշտության վերաբերյալ գերմանական կողմի առաջարկները մերժվեցին, սակայն Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային միշտ ուղեկցում էր Ռուսաստանի պատերազմից դուրս գալու վայելը: Հետևաբար, առնվազն թղթի վրա, պետք է Ռուսաստանին զիջվեին Նեղուցներն ու Կոստանդնուպոլիսը: Դա, փաստորեն, վճարվելիք «գինն էր Գերմանիայի դեմ պատերազմում Ռուսաստանի մասնակցության»²⁴⁰:

Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա այս հարցում բրիտանացիները նույնպես չէին պատրաստվում հեշտությամբ զիջել: Արևմտյան Հայաստանը (Կիլիկիայի հետ միասին) բրիտանական ռազմավարագետների կողմից միշտ էլ ընկալվում էր որպես «բուֆերային գոտի» Ռուսաստանի և Սուեզի նեղուցի միջև: Ավելին, բրիտանական աշխարհառազմավարագիտական մտքի խոշոր ներկայացուցիչ Մ. Սայքսը գտնում էր, որ հրեական, արաբական և

²³⁸ Նավասարդեան Վ., Նշվ. աշխ., էջ 159:

²³⁹ Fischer F. Germany's Aims in the First World War. Tr. from German, New York, W. W. Norton and Co., 1967, p. 232.

²⁴⁰ Sturmer H., Նշվ. աշխ., էջ 212:

հայկական անկախ պետությունների ստեղծումով կծափորվի «բրիտանամետ գոտի»²⁴¹ Թուրքիայի ու Ռուսաստանի միջև²⁴²: 1916թ. մարտ ամսին, Մ. Սայքսը անձամբ ժամանում է Կովկաս՝ տեղում ծանոթանալու քաղաքական իրավիճակին²⁴³: Սակայն այս շրջանում, երբ Արևմտյան Հայաստանն արդեն գրավված էր ռուսների կողմից, անկախ Հայաստանն ստեղծելու Մ. Սայքսի ծրագիրը գործնականում դառնում է անիրագործելի: Հետևաբար, մարտի 12-ին դեսպան Ջ. Բյուքենենին գրած նամակում Մ. Սայքսը նշում էր, որ ստեղծված իրավիճակում որպես լուծում կարող էր լինել հետևյալը. Ռուսաստանը ստանալու էր Էրզրումը, Վանը և Բիթլիսը, իսկ «Փոքր Հայաստանը» (նկատի ունի Սեբաստիան և Կիլիկիան) անցնելու էր Ֆրանսիային²⁴³:

Ավելին, ռուսական զորքերի դեպի Միջագետք առաջխաղացման շարունակման պայմաններում, բրիտանացիները կարող էին զրկվել նաև Մոսուլից ու Բաղդադից: Ռուսական բանակը ապրիլին գրավում է Բիթլիսը՝ մոտենալով Դիարբեքրին: Վերջինս «վերահսկում էր Պարսից ծոցը»²⁴⁴, իսկ Պարսից ծոցը, ինչպես բնորոշել էր լորդ Ջ. Քերզոնը, հանդիսանում էր «Հնդկաստանի ծովային սահմանագիծը»²⁴⁵: Այսպիսով, ռուսական բանակը «կ'երթար ամրանալու Սեյ ծովու եզերքը, Պոնտոսն իր թեարկութեան տակ աննելով, եւ ուղիղ գծով վար կ'իջնէր Երզնկա, մինչեւ Դերսիմի հովիտը, ու անոր հունով կ'առաջանար մինչեւ Սասնոյ

լեռնաշղթան, Բիթլիզի հարաւով՝ մինչեւ Վանի Շատախները, ու կը կախուէր Մոսուլի գլխին»²⁴⁶:

Գեներալ Ֆ. Չերնոզուբովի հրամանատարությամբ գործող «Ադրբեջանական զորաջոկատը», որի առաջապահն էր Քոռու (Արշակ Գավաֆյան) հրամանատարությամբ գործող Հայկական կամավորական 4-րդ դրուժինան, ապրիլի վերջին գրավում է Ռևանդուզը, որը գտնվում էր Մոսուլից ընդհամենը 100կմ հեռավորության վրա: Միաժամանակ, գեներալ Ն. Բարաթովի կորպուսը՝ առաջ շարժվելով՝ ապրիլի 1-ին գրավում է Ապահանը, իսկ ապրիլի վերջին՝ Բաղդադից 150 կմ հեռավորության վրա գտնվող Հանակինը: Այդպիսով, ստեղծվում է Բաղդադի և Մոսուլի գրավման ռուսական իրական վտանգ:

Ստեղծված պայմաններում տեղի ունեցավ անսպասելին: Բրիտանական մեկ կորպուսի ուժերով հարավից՝ Բասրայից,

²⁴¹ Սասունի 4. Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914 - 1918). Թրքահայոց գաղթաշարժերը եւ անոնց դերը՝ ՀՀ կազմի մէջ. Պէրոյութ, Սևան, 1966, էջ 107 - 108:

²⁴² Պարսկաստանում գեներալ Ն. Բարաթովի կորպուսի արձանագրած հաջողությունների ֆոնին բրիտանացիները ուժեղացրին իրենց ռազմական ներկայությունը Պարսկաստանի հարավում: 1916թ. մարտին Բանդեր-Աբբաս նավահանգիստ ժամանեց գեներալ Պերոյի Սայքսի գլխավորած բրիտանական ռազմական առաքելությունը՝ թաղկացած 3 բրիտանացի ու 3 հնդկ սպաներից, 20 հնդկ ենթապալաներից ու սերժանտներից և 25 հնդկ հեծյալներից (Տես Sykes P. նշվ. աշխ., էջ 453): Պարսկաստանի նավթային շրջանների պաշտպանության նպատակով առաքելությունը տեղացիներից (հիմնականում հայերից) հավաքագրում է զորաջոկատ (SPR - South Persian Rifles - «հարավարևելյան հրաձգային ջոկատներ»): Վերջինս իր առջև դրված ռազմավարական խնդիրը կատարում է փայլուն կերպով: Տես Փաստորմանեան Հ. Հայոց պատմություն. Թուրանական արշավանքներէն Լոզանի դաշնագիրը, թարգմ. ֆր., Պէրոյութ, «Վահէ Սեթեան», 2007, էջ 136: Миротанков Л. И., նշվ. աշխ., էջ 37:

²⁴¹ Bloxham D. The Great Game of Genocide. Imperialism, Nationalism and Destruction of Ottoman Empire, Oxford, Oxford Press, 2005, p. 144.

²⁴² Аюкян С. М. Западная Армения в планах империалистических держав в период Первой мировой войны, Ереван, Изд-во АН АрмССР, 1967, с. 101.

²⁴³ Раздел Азиатской Турции, с. 158 - 159.

²⁴⁴ Buxton N., Buxton H. R. Travel and Politics in Armenia, London, Smith, Elder and Co., 1914, p. 146.

²⁴⁵ The Great Powers and the End of the Ottoman Empire, p. 173.

Կոտ-Էլ-Ամարայի պաշարումը ճեղքելու մի քանի անհաջող փորձերից, ապա Լոուրենս Արաբացու միջոցով բրիտանական կառավարության կողմից թուրքական 6-րդ բանակի հրամանատարությունը (ֆելդմարշալ Կ. ֆոն դեր Գուցի մահից հետո) ստանձնած հալիլ փաշային շուրջ 1 մլն ֆունտ սթեռլինգ գումար²⁴⁷ առաջարկելուց և նրա կողմից մերժում ստանալուց հետո, 1916թ. ապրիլի 29-ին գեներալ Չ. Թաունսենդի 6-րդ դիվիզիան (շուրջ 9 000 զինվոր²⁴⁸) անձնատուր եղավ:

Կոտ-Էլ-Ամարայի պաշարմանը մասնակցած Ռ. դե Նոգալեսը իր հուշերում նշում է, որ եթե գեներալ Չ. Թաունսենդը փորձեր ճեղքել պաշարումը թեկուզ երեք կամ չորս հազար զինվորով, ապա դա պաշարող թուրքական զորքերի մոտ մեծ խուճապ առաջ կբերեր, քանզի թուրքերը այդ պահին Կոտ-Էլ-Ամարայում նրանք ունեին ընդհամենը երեք զճային գումարտակներ՝ հիվանդ տիֆով, և 45-րդ և 51-րդ դիվիզիաների մնացորդները, բոլորը միասին շուրջ 4 000 զինվոր²⁴⁹: Գեներալ Չ. Թաունսենդի կողմից ցուցաբերված այդ «անբացատրելի անվճռականությունը» ստիպեց հալիլ փաշային զարմացած բացականչելու. «Ես չեմ հասկանում, ինչպես ութ կամ ինը հազար անգլիացիները կարողացան անձնատուր լինել հինգ հազարից ավելի քիչ թուրքերին, այդպես էլ չհամարձակվելով ձեռնարկել և ոչ մի ճեղքում պաշարման ողջ ընթացքում»²⁵⁰:

Գեներալ Չ. Թաունսենդի «անբացատրելի անվճռակա-

²⁴⁷ Palmer A., նշվ. աշխ. էջ 232:

²⁴⁸ Townshend C. V. F., My Campaign. Vol. 2, New York, The James A. McCann Co., 1920, p. 240.

²⁴⁹ Де Ногазес Р., նշվ. աշխ., էջ 182:

²⁵⁰ Լույն տեղում:

նության» պատասխանը, թերևս, տալիս է Ռևանդուզի ճակատամարտի մասնակց, կամավորական Վարդան Իսկենդերյանը. «Անգլիան պարզ կը տեսնէր, որ իրմէն առաջ ռուս բանակը պիտի մտներ Պաղտատ: Անգլիական բանակը կրնար սպասել մինչեւ որ գոր. Պարաթովը Պաղտատը գրաւէր ու օգնութեան հասնէր իրեն: Սակայն, խորամանկ Ալայիոնի քաղաքագէտները անհրաժեշտ էին գտած Քուֆի բանակը գերի տալով խլել Պաղտատը Ռուսիոյ ձեռքէն, իսկ Մոսկոյի նախարդիները հողերը՝ գոր. Չէոնոզուբովի բանակէն: Քուֆի անգլիական բանակը գերի տալով՝ ազատած կըլլային թրքական բանակը եւ մղած Պարաթովի և Չէոնոզուբովի դէմ»²⁵¹:

Եվ իսկապես, ապրիլի վերջին, գերմանացի գեներալ Օտտո ֆոն Լոսովի ուղեկցությամբ, Բաղդադ ժամանած էնվեր փաշան թուրքական 6-րդ բանակի առջև խնդիր է դնում Միջագետքում գտնվող բրիտանական զորքերի դեմ անցնել պաշտպանության և, միաժամանակ, ջախջախել Ռևանդուզի ուղղությամբ գործող ռուսական զորքերին²⁵²: Թուրքական 6-րդ բանակը, որը համալրվել էր նաև Գալիպոլիից Միջագետք տեղափոխված թարմ ուժերով, մայիսին անցնում է խոշոր հակահարձակման: Արդյունքում, թուրքական բանակը նախ ծանր հարված է հասցնում հայկական կամավորական 4-րդ դրուժինային (զոհվում է դրուժինայի հրամանատար Քեռին) և կարճ ժամանակ անց՝ ետ գրավում Ռևանդուզը: Արդեն հունիս-օգոստոս ամիսներին թուրքական բանակի ճնշման տակ գեներալ Ն. Բարաթովի կորպուսը թողնում է Քերմանշահը, Կումը, Համադանը և միայն

²⁵¹ Իսկենդերյան Վ. Կամարի մը յուշերը 1914- 917, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, յուլիս 1941, թիւ 9, էջ 132:

²⁵² Масловский Е. В., նշվ. աշխ. էջ 226:

մեծ ղեկավարությամբ կասեցնում թուրքական բանակի հետագա առաջխաղացումը: Ռուսական զորքերի նահանջով, փաստորեն, վերացավ Մոսուլին և Բաղդադին սպառնացող ռուսական վտանգը: Սպա Սարգիս Թորոսյանի դիպուկ բնորոշմամբ բրիտանական դիվանագիտությունը «շահեց ևս մեկ միավոր», ինչի մասին անձնատուր եղած զինվորների մեծ մասն այդպես էլ չիմացավ²⁵³:

Այսպիսով, անգլո-ռուսական ռազմավարական շահերի բախման արդյունքում եթե 1915թ. փրկվեց Կոստանդնուպոլիսը, ապա 1916թ.¹ փրկվեցին Մոսուլն ու Բաղդադը: Ինչպես Լևոն Շանթն է գրում. «Եթէ չըլլար Անգլիայի դէպի հիսիս ձգտումը, ռուսները վաղուց հասած կըլլային Պոլիս, Իզմիր, Կիլիկիա, Բասրա ու Բուշիր: Եթէ չըլլար ռուսական ձգտումը դէպի հարափ ծովերը, Անգլիան հիմա շատոնց հասած կըլլար իր բնական սահմանին և բոլոր մեր դրացի երկիրները, մեզի հետ միասին, ենթարկած՝ իր տնտեսությանն ու հրամանեին»²⁵⁴:

1916թ. ապրիլի (13)26-ին Դաշնակիցների կողմից ընդունվեցին Ս. Սազոնովի առաջարկները, ներառյալ Կոստանդնուպոլիսն ու Նեղուցները՝ Ռուսաստանին անցնելու մասին: Նույն օրը Ս. Սազոնովի և Մ. Պալեոլոգի, մայիսի 9-ին և 16-ին Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պ. Կամբոնի և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի քարտուղար Է. Գրեյի և, վերջապես, մայիսի (10)23-ին օգոստոսի 19-ի (սեպտեմբերի

1-ին) Ս. Սազոնովի և Է. Գրեյի միջև տեղի են ունենում հուշագրերի փոխանակում²⁵⁵: Դրանց միջոցով վերջնականապես հստակեցվում է Օսմանյան Կայսրության մասնատման նախագիծը: Ըստ այդմ, Ռուսաստանը ստանում էր այսպես կոչված «դեղին գոտին»^{*}, որն ընդգրկում էր Նեղուցները, Կոստանդնուպոլիսը, Տրապիզոնի^{*}, Էրզրումի, Վանի, Բիթլիսի նահանգները և Քուրդիստանի (Հաքյարիի)

²⁵³ Հովհաննիսյան Լ. Հայկական հարցը և Մեծ տերությունները 1914-1917 թվականներին, Երևան, «Հանգակ - 97», 2002, էջ 96-97:

^{*} Պատերազմի սկզբին Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովը Հայոց ազգային բյուրոյին խոստացել էր, որ ռուսական բանակին հայության կողմից ցուցաբերվելիք աջակցության դեպքում Ռուսաստանը կերաշխավորի հայկական վեց վիլայեթների հիմքի վրա հայկական նյքնավարության ստեղծումը (տես Pasdermadjian G. (Armen Garo), նշվ. աշխ., էջ 16): Հայության աջակցությամբ, Արևմտյան Հայաստանը գրավելուց հետո, սակայն, ցարական Ռուսաստանը մոռացավ իր խոստման մասին: Ավելին, 1915թ. գեներալ Ն. Յուդենիցի առաջարկությամբ և նույն Ի. Վորոնցով Դաշկովի հավանությամբ քննարկման առարկա է դառնում 'Կուրանից ու Դոնից կղզակներ գաղթեցնելով Արևմտյան Հայաստան' «Ենփրատի կղզակություն» ստեղծելու հարցը (տես ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 191,թ. 2: Լեո. Անցյայից. Հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, «Ստրիկո-դային Կովկաս», 1925, էջ 323): Ի վերջո, սակայն, Ռուսական բանակի Կլիսավոր շտաբի պետ, գեներալ-ադյուտանտ Մ. Վ. Ալեքսեևի¹ 1916թ. հունիսի 5-ի գաղտնի հրամանով ստեղծվում է «Պատերազմի իրավունքով զբաղեցված Թուրքահայաստանի և Թուրքիայի այլ մարզերի ժամանակավոր ռազմական գեներալ-նահանգապետությունը» (իրամանք տես ՀԱԱ, ֆ. 502, ց. 1, գ. 108,թ. 1-19): Ինչպես բնորոշել է պատմաբան Բ. Բորյանը, եթե թուրքական դիվանագիտության խնդիրն էր «հայերի ֆիզիկական ոչնչացումը», ապա ռուսական ցարական դիվանագետների խնդիրն էր հայերի «բարոյական և քաղաքական ոչնչացումը» (տես Борян Б. А. Армения международная дипломатия и СССР. Часть 1, Москва-Ленинград, Госиздат, 1928., с. 326-327):

¹ Ռուսական Սևծովյան ռազմածովային նավատորմը Տրապիզոնը գրավում է 1916թ. ապրիլին:

²⁵³ Թորոսյան Ս., նշվ. աշխ., էջ 84:

²⁵⁴ Շանթ Լ., նշվ. աշխ., էջ 69-70:

^{*} 1916թ. նոյեմբերի 19-ին միայն Ս. Սազոնովը Պետական Դումայի ամբիոնից առաջին անգամ հրապարակավ և պաշտոնապես հայտարարեց Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կողմից Կոստանդնուպոլիսի ու Նեղուցների նկատմամբ ռուսական կայսերական իրավունքների ճանաչման մասին: Տես Камчатъ Г. И., նշվ. աշխ., էջ 99:

մի մասը: Ֆրանսիան ստանում էր այսպես կոչված «Կապույտ գոտին»⁵, որը ներառում էր Արևմտյան Սիրիան (Ալեքսանդրետ նավահանգստով), Լիբանանը, Կիլիկիան, Ուրֆան, Սեբաստիան, Քուրդիստանը (Դիարբեքիրը, Մարդինը, Հաքյարին): Մեծ Բրիտանիան ստանում էր այսպես կոչված «Կարմիր գոտին», որը ներառում էր Իրաքի հարավային շրջանները, ներառյալ Բաղդադը, Պաղեստինի Աքրա և Հայֆա նավահանգիստները: Պաղեստինի մնացած հատվածում («Դարչնագույն գոտի») հաստատվում էր այսպես կոչված «միջազգային կառավարում»: Արևելյան Սիրիան և Մոսուլը՝ մտնում էին Ֆրանսիայի ազդեցության գոտու («Ա գոտի») մեջ: Անդրիորդանանը ու Կենտրոնական Իրաքը մտնում էին բրիտանական գոտու մեջ («Բ գոտի») մեջ:²⁵⁶:

⁵ Կիլիկիան և Սիրիան Ֆրանսիական ազդեցության գոտում հայտնվելու հնագամանքով էր պայմանավորված, որ 1916թ. գարնանը Ռուսական Գերագույն հրամանատարության կողմից Դաշնակիցներին ներկայացված առաջարկությունը, համատեղ ուժերով Ալեքսանդրետում ռազմազործորություն սկսելու մասին, մերժվում է՝ իրենց կողմից իբր բավարար ազատ ուժեր չունենալու ու հիմնական ուժերը Արևմտյան ռազմաճակատում կենտրոնացնելու հիմնավորմամբ: *Stu Сюзьвета с Союзниками по воетным вопросам во время войны 1914—1918 гг. Часть 1. Сост. Н. Валентинов. Под ред. А. А.*

Свечина, Москва, Труды воен.-ист. комис., 1920, с. 102. Պողոսյան Ա. Մարկ Սայքսի դիրքորոշումը հայերի և Հայկական հարցի վերաբերելու. «Հայկազեան հայագիտական հանդես», Պէլրոթ, հատոր ԼԲ, 2012, էջ 66 - 67:

⁶ Նալթի պաշարներով հարուստ Մոսուլի շրջանի անցումը Ֆրանսիային, մեծ դժգոհություն առաջ բերեց Մեծ Բրիտանիայի ղեկավարող շրջանակներում, և խնդիր դրվեց վերանայելու համաձայնագիրը: Ինչը տեղի ունեցավ 1918թ.:

²⁵⁶ Կիրակոսյան Ա. Սայքս-Պիկոյի համաձայնագիրը. «Հայկական հարց» հանրագիտարան. Պատ. խմբ. Խողափերդյան Կ., Երևան, 1996, էջ 398:

Այսպիսով, ձևավորվեց Օսմանյան Կայսրության մասնատման մասին եռակողմ՝ Անգլո-ֆրանս-ռուսական («Սայքս-Պիկո-Սազունով») համաձայնությունը, որն ինչպես պատմաբան Լեոն է գրում, ձևավորվեց «վոչ թե քմահաճույքով, վոչ թե վորևե մեկին ոգնելու, բարեբարություն անելու համար, այլ ուժերի իրական փոխհարաբերությունների լերկաթե որենքով»²⁵⁷: Մասնավորապես, Մեծ Բրիտանիան Արևմտյան Հայաստանը զիջելով Ռուսաստանին, իրեն էր պահում Միջագետքը: Միևնույն ժամանակ, Դաշնակիցները, առաջին հերթին Մեծ Բրիտանիան, Նեղուցները և Կոստանդնուպոլիսը զիջելով (միայն թղթի վրա) Ռուսաստանին՝ նրան պահում էր պատերազմում: Ավելին, գերմանացի հետազոտող Կ. Հոֆմանն իր «Նավթային քաղաքականությունը և անգլո-սաքսոնական իմպերիալիզմը» գրքում նշում է, որ այդ համաձայնությունների գնով «գնվեց» Բրուսիլովի բանակի հարձակումը²⁵⁸: Գեներալ-արյուստանտ Ա. Ա. Բրուսիլովի հրամանատարությամբ 1916թ. մայիսի 22-ին (հունիսի 4-ին) սկսված հարձակման («Բրուսիլովյան ճեղքում»²⁵⁹) ռազմավարական գլխավոր արդյունքը Դաշնակիցների համար եղավ ոչ թե ռուսների կողմից Բուկովինայի և Արևելյան Գալիցիայի գրավումը, այլ

²⁵⁷ Լեո. Անցյայից, էջ 342:

²⁵⁸ Շիրիկյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը, էջ 128:

²⁵⁹ 1916թ. փետրվարի 21-ին (ն. տ.) Վերդեի ուղղությամբ գերմանական անսպասելի հարձակում ստիպել էր, որպեսզի մարտի 12-ին գեներալ ժ. ժոֆրը դիմի ռուսական կողմին՝ Արևելաեվրոպական ռազմաճակատում հարձակման անցնելու մասին: Ռուսական կողմը, սակայն անընդհատ հետաձգում էր այն: Սկզբում հարձակման ամսաթիվ էր նշվել մայիսի 15-ը, իսկ ավելի ուշ՝ հունիսը 15-ը (տե՛ս Эмман. Доктрина коалиционной войны. Ноябрь 1914 - март 1917 гг. Пер. с фр., Москва-Ленинград., Голосистат. отдел воен. лит., 1928, с. 33-40): «Բրուսիլովյան ճեղքման» մասին մանրամասն տես Брусиллов А. А. Воспоминания, Москва, Воениздат, 1963:

Արևմտյան ռազմաճակատում՝ Վերդենի տակ, գերմանական բանակի հարձակման կասեցումը: Ռազմավարական մյուս կարևոր արդյունքներն էին իտալական* բանակի ջախջախման կասեցումը և Ռումինիայի մուտք (1916թ. օգոստոսի 28-ին) պատերազմի մեջ՝ ընդդեմ Քառյակ միության:

Միաժամանակ, Միջագետքում բրիտանացիներն իրակա- նացրին իրենց ռազմավարական ճեղքումը. 1916թ. հունիսին, Մեքքայի շերիֆ Հուսեյնի որդու՝ Ֆեյսայի և Լույսենս Արաբացու գլխավորությամբ սկսված արաբական ապստամ- բություն²⁶⁰, որն իր բնույթով հիմնված էր բրիտանական «ուրիշի ձեռքերով պատերազմելու» կամ «անտղակի գործ- ղությունների ռազմավարության» վրա²⁶¹, ազդարարեց ոչ միայն «Ջիհադի» ծրագրի վերջնական տապալումը, այլև գերմանա-թուրքական «Բեռլին-Կոստանդնուպոլիս-Բաղ- դադ» աշխարհառազմավարական առանցքի մոտալուտ

* 1915թ. մայիսի 23-ին Անտանտի կողմից պատերազմի մեջ մտած Իտալիան դեռևս ապրիլի 13-ին (26-ին) Լոնդոնում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ կնքած համաձայնագրով պարտա- վորվել էր պահպանել ուժերի հավասարակշռությունը Միջերկրական ծովում, ինչի դիմաց Անտանտի տերությունները խոստացել էին նրան Տրենտինոն, Տիրոլը, Տրիեստը, Իստրիան, Դալմաթիան, Ալբանիան, Դոդեկանեսյան կղզիները (Տես Сторник догосоров России с держава союзарствам, с. 436-441): Իտալիայի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև 1917թ. ապրիլի 17-ին կնքված ժան դե Մորիենի համաձայնագրով՝ Օսմանյան կայսրության տարածքում Իտալիան ստանալու էր Չմյուռ- նիան, Կոնիան և Անթալիան («Կանաչ գոտի») և ունենալու էր իր ազդեցության գոտին («Գ գոտի»)՝ Փոքր Ասիայի արևմտյան ափին: (Տես Lenczowski G., կշվ. աշխ., էջ 72):

²⁶⁰ Արաբական ապստամբության մասին մանրամասն տես՝ Lawrence T. E., *Seven Pillars of Wisdom. A Triumph, Garden City - New York, Doubleday, Doran & Co., 1935*, Liddell Hart B. H. T. E. Lawrence in Arabia and After, London, Jonathan Cape, 1934.

²⁶¹ Liddell Hart B. H. *The Strategy of Indirect Approach*, p. 257.

վախճանը: Ինչպես Պ. Ռոիրբախն էր կանխագգում, եթե Դաշնակիցները իրենց մեջ բաժանեին այն տարածքը, որն ընկած է մի կողմից՝ Բոսֆորի ու Պարսից ծոցի և մյուս կողմից Սուեզի ջրանցքի և Արարատ լեռան միջև, ապա «դա կլինի Գերմանիայի՝ որպես համաշխարհային տերության վերջը»²⁶²:

Այսպիսով, «Սայքս-Պիկո-Սազոնով» համաձայնության ձևավորումը արդյունք էր տվյալ պահին Ասիական ռազմաճ- ակատներում առկա ուժերի ռազմավարական հարաբե- րակցության (*The Strategic Correlation of Forces*) և, միաժա- մանակ, Ռուսաստանին (Կոստանդնուպոլիսը և Նեղուցները ռուսական կողմին խոստանալով)՝ ընդդեմ Գերմանիայի, պատերազմի մեջ պահելուն ուղղված բրիտանական ռազմավարության:

²⁶² Արզումանյան Մ. Հայաստան. 1914-1917, Երևան, «Հայաստան», 1969, էջ 136-137:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՊԱՏԵՐԱՋՄԻ ՎԵՐՋՆԱՓՈՒԼՈՒՄ

3.1. Երզնկայի զինադադարը և բրիտանական նոր ռազմավարությունը Հայաստանում ու Այսրկովկասում

1917թ. սկիզբը նշանավորվեց Ռուսաստանում տեղի ունեցած «Փետրվարյան» հեղափոխությամբ: Ինչպես Արևելաեվրոպական ռազմաճակատում գերմանական զորքերի Շտաբի պետ, գեներալ Մաքս Հոֆմանն է իր հուշերում գրում, տեսնելով, որ Ռուսաստանն այլևս չի կարող տանել պատերազմի բեռը՝ ցար Նիկոլայ 2-րդը հանգեց «անջատ հաշտության գաղափարին», սակայն Պետրոգրադում Մեծ Բրիտանիայի դեսպան Զ. Բյուկենենը, ունենալով հրահանգ՝ «խանգարել անջատ հաշտության կնքմանը», օգնեց Ալեքսանդր Կերենսկուն և Ալեքսանդր Գուչկովին՝ տապալելու ցարին²⁶³: Արդյունքում Պետրոգրադում ձևավորված «Ժամանակավոր կառավարությունը» 1917թ. մարտի 7-ին (20-ին) երկրի բնակչությանն ուղղված կոչում հավաստիացրեց, որ Ռուսաստանը պատերազմը կհասցնի «հաղթական ավարտին»²⁶⁴:

1917թ. սկզբին բրիտանական հրամանատարության խնդրանքով Կովկասյան բանակը սկսում է ճնշում գործադրել Միջագետքում գործող թուրքական 6-րդ բանակի թիկունքում՝ ապահովելով բրիտանական էքսպեդիցիոն ուժերի առաջխաղացումը դեպի Բաղդադ ու Մոսուլ: Ռուսական

բանակը, Բաղդադի և Փենջվինի ուղղությամբ անցնելով հարձակման, մարտի 2-ին գրավում է Համադանը, իսկ մարտի 10-ին՝ Քերմանշահը: Իրենց հերթին բրիտանական ուժերը փետրվարի 24-ին գրավում են Կոտ-էլ-Ամարան, իսկ մարտի 11-ին՝ Բաղդադը: Արդեն մարտի 20-ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Լոյդ-Ջորջը խնդիր է դնում ջախջախել Օսմանյան Կայսրությունն՝ «որպես կայսրություն»²⁶⁵:

Բաղդադի անկումից օրեր անց Բեռլին է շտապում Էսվեր փաշան, ով հանդիպումներ ունենալով կայսեր Վիլիելմ 2-րդի, գերմանական բանակի Գլխավոր շտաբի պետ, ֆելդ-մարշալ Պ. Ֆոն Հինդենբուրգի և Գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ Է. Լյուդենդորֆի հետ, ահագանգում է Միջագետքում բրիտանական և ռուսական զորքերի հնարավոր միավորման մասին և Գերմանիայից պահանջում է «անհապաղ լուրջ օգնություն, որը կփրկեր Թուրքիային կործանումից»²⁶⁶:

Ապրիլի 4-ին ռուսական զորքերը գրավում են Հանակինը, ինչին հաջորդում է ռուսական և բրիտանական առաջապահ ուժերի միավորումը Ղըզըլ-Ռաբաթում: Ապրիլի 16-ին արտագործնախարար Պ. Միլյուկովը գաղտնի հեռագիր է ուղարկում Թեհրան՝ հայտնելով, որ Ռուսաստանը նախկինի պես հակված է շարունակել համագործակցությունը Մեծ Բրիտանիայի հետ պարսկական գործերում, և այդ քաղաքականությունը չի կրելու ոչ մի փոփոխություն²⁶⁷:

Իր հերթին Բրիտանական բանակի Գլխավոր շտաբի պետ, գեներալ Ու. Ռոբերտսոնը մարտի 28-ին ռուսական կողմին է ներկայացնում Մոսուլի ուղղությամբ համատեղ

²⁶³ Гофман. Война утраченных возможностей. Пер. с нем., Москва - Ленинград, Госиздат, 1925, с. 140.

²⁶⁴ Васюков В. С. Внешняя политика Временного правительства, Москва, «Мисль», 1966, с. 29.

²⁶⁵ Лазарев М. С. Крушение Турецкого Государства, с. 195.

²⁶⁶ «Армянский вестник», Москва, 26 марта 1917, N 13, с. 16.

²⁶⁷ Мирошников Л. И., նշվ. աշխ., էջ 48-49:

խոշոր ռազմագործողություն սկսելու վերաբերյալ առաջարկություն²⁶⁸։ Հարցը բրիտանական և ռուսական բանակների Գլխավոր շտաբներում ավելի լուրջ քննարկվեց 1917թ. աշնանը։ Սակայն Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի ռազմավարական և քաղաքական շահերի բախման ֆոնին, ռազմագործողության իրականացումը, ինչպես նախկինում, դառնում է անհնարին։ Ի վերջո, հոկտեմբերի 5-ին Ռուսական բանակի գլխավոր զորակայանը որոշում է կայացնում ռազմագործողության իրականացումը հետաձգել մինչև 1918թ. գարուն²⁶⁹։

Այս նույն ժամանակ Գերմանիան շարունակում էր իր ջանքերը՝ հասնելու Ռուսաստանի հետ անջատ հաշտության։ Դեռևս 1914թ. վերջին, երբ վերջնականապես ձախողվել էր «բլիցկրիգի» ռազմավարությունը, գերմանական Գլխավոր շտաբի պետ, գեներալ է. ֆոն Ֆալկենհայնը ուսյախակնցելը Թ. ֆոն Բեթման-Հոլվեգին հայտարարել էր, որ Գերմանիան ի զորու չէ գեներլ ուժով հաղթանակի հասնել, միաժամանակ, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի նկատմամբ, հետևաբար պնդել էր առաջին հերթին «Ռուսաստանի հետ անջատ հաշտություն» կնքելու անհրաժեշտության մասին²⁷⁰։ Արդեն 1917թ. ապրիլին Գերմանական բանակի Գերագույն իրամանատարությունը (OHL) հայտարարում է, որ «ռազմականապես և տնտեսապես հնարավոր է պատերազմը հաջողությամբ շարունակել մինչև աշուն»²⁷¹։

Այս պայմաններում գերմանական ռազմաքաղաքական ղեկավարությունն, ազգությամբ հրեա, նշանավոր հեղափո-

²⁶⁸ Арутюнян А. О., նշվ. աշխ., էջ 274:

²⁶⁹ Корсуи Н. Г. Первая мировая война на Кавказском фронте, с. 84.

²⁷⁰ Ферстер Г. Гельмерт Г., Отто Г., Шиммер Г., նշվ. աշխ., էջ 159:

²⁷¹ Fischer F., նշվ. աշխ., էջ 365:

խական և սոցիալ-դեմոկրատ Իսրայել Գելֆանդի (Ալեքսանդր Պարվուս) միջոցով, «խաղաղույց կատարեց» Շվեյցարիայում ապաստան գտած Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության ղեկավարության վրա։ Դեռևս 1915թ. հունվարի 7-ին Կոստանդնուպոլսում հանդիպելով Գերմանիայի դեսպան Հ. ֆոն Վանգենհայմին՝ Ա. Պարվուսը հայտնում է. «Գերմանիայի կառավարության և ռուս հեղափոխականների շահերը ամեն ինչում համընկնում են... Եթե Ռուսաստանում չորբորքվի մեծ հեղափոխություն, Գերմանիային չի հաջողվի հաղթել նրան»²⁷²։ Արդեն նույն թվականի մարտի 9-ին Ի. Գելֆանդը Գերմանիայի արտաքին գործերի քարտուղարությանն է ներկայացնում իր հուշագիրը, որտեղ մանրամասն ներկայացված էր ապագայում Ռուսաստանում իրականացվելիք հեղափոխության ճանապարհներն ու միջոցները։ Հուշագրի «Կուվկաս» բաժնում հեղինակը Այսրկովկասում որպես հեղափոխության մասնակից ուժերի տեսնում էր վրաց սոցիալ-դեմոկրատներին (մենշևիկներին), Հայ հեղափոխական դաշնակցություն և Հնչակյան կուսակցություններին և, հատկապես՝ թաթարներին՝ հիմնավորելով Օսմանյան Կայսրության քաղաքական-կրոնական ղեկավարության կողմից Անտանտի պետություններին «Ջիհադ» հայտարարելու հանգամանքը²⁷³։

Գեներալ Մ. Հոֆմանն իր հուշերում հաստատում է, որ գերմանացիներն ունեին իրենց մարդը (հավանաբար խոսքը նույն Ա. Պարվուսի մասին է-Հ.Ն.), ով գրագրություն ուներ Շվեյցարիայում գտնվող բոլշևիկ ղեկավարների հետ, և ով

²⁷² Галберт М., նշվ. աշխ., էջ 181:

²⁷³ Հուշագրի ամբողջական տեքստը տես *Germany and The Revolution in Russia 1915-1918. Documents from the Archives of the German Foreign Ministry*, Ed. By Z. A. B. Zeman, London, Oxford University Press, 1958, p. 140-152.

գերմանացի պատգամավոր Մաթիաս Էրցբերգերի միջոցով դիմելով Գերմանիայի արտաքին գործերի քարտուղարությանը՝ գործը հասցրեց «Գերմանիայի տարածքով Լենինի հայտնի տեղափոխությանը (1917թ. ապրիլին գերմանական գրահապատ գնացքով-Շ.Ն.) Պետերբուրգ»²⁷⁴: Իր հերթին Վրաստանում գերմանական ռազմական առաքելության (1918թ.) ինֆորմացիոն բյուրոյի ղեկավար, դոկտոր Էրիխ Յուզմայերը նշում էր, որ Լենինը դիմելով Գերմանիայի կառավարությանը՝ թույլ տվություն էր ստացել գալու Ռուսաստան, քանզի «Գերման կառավարությանը յայտնի էր, որ Լենինը հաշտության կողմակից էր, և գալով Ռուսաստան շուտով հաշտության կը կնքե»²⁷⁵:

Բոլշևիկների կողմից Պետրոգրադում իշխանությունը վերցնելու հաջորդ օրը՝ հոկտեմբերի 26-ին (նոյեմբերի 8-ին), Բանվորական, զինվորական և գյուղացիական խորհուրդների երկրորդ համառուսաստանյան համագումարում ընդունված «Հաշտության մասին» նշանավոր դեկրետում, որը կոչ էր անում պատերազմող պետություններին հասնել հաշտության՝ առանց բռնակցումների (անեքսիայի) և ռազմատուգանքների (կոնտրիբյուցիաների), նշվում էր նաև, որ Ռուսաստանի նոր իշխանությունները հրաժարվում են «գաղտնի դիվանագիտությունից» և անհապաղ անցնում մինչև 1917թ. հոկտեմբեր ամիսը՝ «հաստատված կամ կնքված գաղտնի համաձայնագրերի ամբողջական հրապարակմանը»²⁷⁶:

Միաժամանակ, խորհրդային Ռուսաստանի արտաքին

գործերի ժողովրդական կոմիսար Լև Տրոցկին գերմանական բանակի Գերագույն հրամանատարությանն է ներկայացնում «դեմոկրատական հաշտության» շուրջ բանակցություններ սկսելու մասին առաջարկություն, ինչին ի պատասխան, նոյեմբերի 14-ին (27-ին) գնեթալ է. Լյուդենդորֆը համաձայնություն է տալիս սկսել դրանք նոյեմբերի 19-ից (դեկտեմբերի 2-ից)²⁷⁷: Արդեն նոյեմբերի 17-ին (30-ին) Լ. Տրոցկին Պետրոգրադում Դաշնակից պետությունների ռազմական և դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին հայտնում է Արևելաեվրոպական ռազմաճակատում ռազմական գործողությունների դադարեցման մասին և, միաժամանակ, ցանկանում է իմանալ, թե արդյոք Դաշնակից պետությունները մասնակցելու են Բրեստ-Լիտովսկում սկսվելից հաշտության բանակցություններին²⁷⁸: Բնականաբար, Դաշնակից պետությունները մերժում են այս առաջարկը: Ավելին, դեռևս նոյեմբերի 24-ին (ս.տ.) Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի քարտուղարի տեղակալ լորդ Ռոբերտ Սեսիլը հայտարարել էր, որ Մեծ Բրիտանիայի «կառավարությունը չի ճանաչում ռուսական ներկա (բոլշևիկյան-Շ.Ն.) կառավարությունը»²⁷⁹:

Ստեղծված պայմաններում, ցարական Ռուսաստանի իրավահաջորդ խորհրդային Ռուսաստանը, Քաոյակ միության հետ միայնակ հաշտության շուրջ բանակցություններ սկսելով, խախտեց պատերազմի ընթացքում առանց դաշնակից մյուս տերությունների նախնական համաձայնությամբ Գերմանիային ու նրա դաշնակիցներին հաշտության

²⁷⁴ Гофман., նշվ. աշխ., էջ 147:

²⁷⁵ «Մշակ», Թիֆլիս, 21 օգոստոսի 1918, N 165, էջ 2:

²⁷⁶ Декреты Советской власти. Том I, Москва, Госиздат. полит. лит., 1957, с. 11, 15.

²⁷⁷ Fischer F., նշվ. աշխ., էջ 476:

²⁷⁸ Fischer L. The Soviets in World Affairs. A History of the Relations Between the Soviet Union and the Rest of the World. 1917-1929, New York, Vintage books, Princeton University Press, 1960, p. 10.

²⁷⁹ Чубарьян А. О. Брестский мир, Москва, «Наука», 1964, с. 81.

պայմաններ չներկայացնելու մասին 1914թ. օգոստոսի 23-ին (սեպտեմբերի 5-ին) Լոնդոնում Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև ստորագրված համաձայնագիրը²⁶⁰ և պատերազմի ընթացքում Գերմանիայի ու նրա դաշնակիցների հետ անջատ հաշտություն չստորագրելու մասին 1915թ. նոյեմբերի 17-ին (նոյեմբերի 30-ին) Լոնդոնում Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի միջև ստորագրված դեկլարացիան²⁶¹:

Նոյեմբերի 19-ին (դեկտեմբերի 2-ին) Ադոլֆ Իոֆֆեի գլխավորած Խորհրդային պատվիրակությունը ժամանում է Բրեստ-Լիտովսկում տեղակայված Արևելաեվրոպական ռազմաճակատի գերմանական հրամանատարության զորակայան: Այստեղ՝ դեկտեմբերի 2-ին (15-ին), մի կողմից Ռուսաստանի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետության, մյուս կողմից Գերմանական Կայսրության, Ավստրո-Հունգարական Կայսրության, Բուլղարիայի Թագավորության և Օսմանյան Կայսրության միջև ստորագրված համաձայնագրի 10-րդ հոդվածի համաձայն, թուրքական և ռուսական գլխավոր հրամանատարությունները հայտնում էին պատրաստակամությունն՝ ետ կանչելու իրենց զորքերը չեզոք Պարսկաստանից²⁶² Սակայն ակնհայտ էր, որ թուրքական բանակն ամենևին էլ նպատակ չունեւր դուրս բերել իր զորքերը Պարսկաստանից, որտեղ, միաժամանակ, գտնվում էին նաև բրիտանական զորքերը:

Այս համաձայնագրին նախորդել էր Խորհրդային Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Վ. Լենինի և Ազգությունների գործերի ժողովրդակ-

ան կոմիսար Ի. Ստալինի կողմից նոյեմբերի 20-ին (դեկտեմբերի 3-ին) ստորագրված և նոյեմբերի 24-ին (դեկտեմբերի 7-ին) հրապարակված կոչն՝ ուղղված «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մուսուլմաններին»: Կոչով, փաստացի, «Լենինը ապստամբության կոչ էր ուղղել արևելքի բոլոր մուսուլմանների հասցեին: Այն, ինչ Բերլինի և Պոսի կաթինետների բոտն տենչանքն է կազմել դեռ պատերազմի սկզբից՝ սրբազան պատերազմի անունով ոտքի կանգնեցնել որջ մահմեդական աշխարհը, որպեսզի կարելի լինի հարուածել երկու այսոյանների՝ Անգլիային և Ռուսիային արևելքում»²⁶³: Հրապարակված կոչում, Հնդկաստանում հակաբրիտանական ապստամբության բարձրացնելու անհրաժեշտությունից զատ, նշվում էր, որ Ռուսաստանի կառավարությունը չեղարկում է ցարական իշխանությունների կողմից ստորագրված, և ապա Ա. Կերենսկու գլխավորած ժամանակավոր կառավարության կողմից վավերացված պայմանագրերը՝ Կոստանդնուպոլսի բռնակցման վերաբերյալ, և որ այն «պետք է մնայ մահմեդականների ձեռքին»: Նույն կոչում Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը հայտնում էր նաև Պարսկաստանի բաժանման վերաբերյալ Անգլո-ռուսական համաձայնագիրը չեղարկելու ու ռուսական զորքերը Պարսկաստանից դուրս բերելու և, վերջապես, Օսմանյան Թուրքիայից «Հայաստանը խլելու» վերաբերյալ Անգլո-ֆրանս-ռուսական համաձայնագրերը չեղարկելու և արևմտահայությանն՝ իր «քաղցրական ճակատագիրն ազատ որոշելու իրավունք» տալու մասին²⁶⁴:

²⁶⁰ Сторник договоров России с державами государствами, с. 425.

²⁶¹ Նույն տեղում, էջ 442:

²⁶² Լագան Գ. Հայաստան եւ հայ դատը ըստ դաշնագրերու, էջ 93:

²⁶³ Իշխանեան Բ. Դիմակները պատռոած (ո՛վքեր են օւղչևիկները), Բաքու, «Տրուփնիկ», 1918, էջ 62:

²⁶⁴ Կոչի տեքստը տես «Հորիզոն», Թիֆլիս, 12 դեկտեմբերի 1917, N 260, էջ 3:

Ակնհայտ էր, որ այս կոչն առաջին հերթին ուներ հակա-
բրիտանական ընդգծվածություն, և Լոնդոնում ու Փարիզում
այն ընդունվեց որպես «Փառաբանում» բոլշևիկների ու
թուրանական Ասիայի մուսուլմանների դաշինքի, որն
իրականացվել էր «Բեռլինի կառավարության գերագույն
ղեկավարության ներքո», և որ այդ համագործակցությունն
որևէ այլ վայրում չէր ունենա «ավելի նշանակալից հե-
տևանքներ, քան Կովկասում (հատկապես Այրսկովկասում-
Հ.Ն.)»²⁸⁵: Այսպիսով, գերմանա-բոլշևիկյան դաշինքին
զուգահեռ ձևավորվում էր նաև թուրք - բոլշևիկյան դաշինքը,
ինչը նշանակում էր. «Ռուսիա՝ Անգլիոյ դաշնակիցը երկ և
Թուրքիոյ թշնամին»՝ այժմ «դարձեր էր Բրիտանիայի եր-
դում հակառակորդ և համակիր Թուրքիայի»²⁸⁶: Բոլշևիկ-
ների համար, հատկապես, «առանձին գրաչուփոխ և արժեք
էին ներկայացնում թուրքերը և Թուրքիան, որ խալիֆայու-
թեան կենտրոնն էր և մեծ հմայք ուներ իսլամ ժողովուրդների
աչքին: Գրաել թուրքերի համակրանքը և աջակցութիւնը՝
պիտի նշանակէր ամբողջ իսլամ աշխարհի համակրանքն ու
աջակցութիւնը շահել: Յատկապէս Անգլիայի դէմ մղուող
պայքարում իսլամութիւնը Վոսփորի ափերից սկսած մինչև
Ալթայ ու Հնդկաստան, Ասիա ու Ափրիկէ - հսկայական ոյժ
էր»²⁸⁷: Ընդհանուր շահեր ունեցող Գերմանա-թուրք-
բոլշևիկյան եռանկյունու ձևավորման ֆունին, 1917թ.

²⁸⁵ Մեծ տերությունները, Օսմանյան Կայսրությունը և հայերը ֆրանսիակա-
ն արխիվներում 1914-1918. Հատոր 1, աշխատասիրությամբ Ա.
Պեյլերյանի. Թարգմ. ֆր., Երևան, «Հայաստան» («Գրական հայրենիք»),
2005, էջ 248:

²⁸⁶ Ձարեանը. Ինչ կը ծրագրեն թուրքերը. Միացեալ անկախ Թուրա-
նիա, Ա. Հ., 1926, էջ 159:

²⁸⁷ Վրացեան Ա. Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի
միջեւ, Պէլրոթ, «Համազգային», 1953, էջ 22:

ղեկտնմբերին գերմանացի գեներալ Ֆ. Բրունզարթ ֆոն
Շելենդորֆի փոխարեն օսմանյան բանակի Գլխավոր շտաբի
պետի պաշտոնը ստանձնում է գեներալ Հանս ֆոն Սեկտը,
ով «բարեկամը եղած էր այդ երկրին Թուրքիայի ու անոր
վարիչներուն՝ Էնվերին եւ միաներուն, ինչպէս եւ ջերմ
կողմնակիցն ու նախապատրաստողներէն մէկը ռուս-գեր-
մանական բարեկամութեան»²⁸⁸:

Բոլշևիկների կողմից Պետրոգրադում իրականացված
հեղաշրջումը «ծառայեց որպես փրկություն» Օսմանյան
Թուրքիայի համար՝ խուսափելու «վերահաս մեծ աղետից»²⁸⁹:
Հյուժմած Օսմանյան բանակն այլևս չէր կարողանում
կանգնեցնել բրիտանական ուժերի առաջխաղացումը.
ղեկտնմբերի սկզբին բրիտանացիները գրավում են Երու-
սաղեմը՝ Հետևաբար, գերմանական Գլխավոր շտաբի
նազնավարության համաձայն, Ռուսաստանին պատերազմ-

²⁸⁸ Վեմեան Վ. Գերման եւ թուրք հակամարտութիւնը Հայաստանի եւ
Անորկովկասի մէջ (Գերման դիւանաբարութեւրու հիման վրայ), «Հայրե-
նիք» անագիր, Պոսթըն, ապրիլ 1949, թիւ 4 (279), էջ 49:

²⁸⁹ Dadrian V. The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the
Balkans to Anatolia to the Caucasus, New York - Oxford, Berghahn Books, 2008, p.
347.

²⁹⁰ Միջագետքյան և Պաղեստինյան ռազմաճակատներում բրիտանական
առաջխաղացումը կանցնելու նպատակով, թուրքական Գլխավոր շտա-
բը 1917թ. կեսերին, երկու ռազմաճակատներում գործող 6-րդ, 4-րդ, 7-րդ
և 8-րդ բանակներից կազմում է նոր՝ «Կայծակնային» («Yıldirim»)՝
բանակախումբը՝ գեներալ Է. ֆոն Ֆայլենհայնի հրամանատարությամբ:
Թեև նա 65 գերմանացի շտաբային սպաներից կազմված առաջելու-
թյամբ Գերմանիայից ժամանում է Պաղեստին, սակայն ոչինչ փոխել
հնարավոր չէր: Պաղեստինյան ռազմաճակատում գեներալ Էդմունդ
Լյենթրիի հրամանատարությամբ գործող բրիտանական զորքերը 1917թ.
ղեկտնմբերի 9-ին գրավում են Երուսաղեմը: Stu Shaw S. J., Shaw E. K.,
History of the Ottoman Empire and Modern Turkey. Vol. 2, Cambridge, Cambridge
University Press, 2002, p. 323-324. Lenczowski G., նշվ. աշխ., էջ 56 - 57:

ից դուրս հանելը ոչ միայն հնարավորություն էր տալու գերմանական զորքերը Արևելաեվրոպական ռազմաճակատից Արևմտաեվրոպական ռազմաճակատ տեղափոխելու, այլև պայմաններ էր ստեղծելու՝ որպեսզի Օսմանյան բանակը Կովկասյան ռազմաճակատում գտնվող իր հիմնական ուժերն ուղղի Պաղեստինում, Միջագետքում և Պարսկաստանում գործող բրիտանական զորքերի դեմ:

1917թ. հոկտեմբերի վերջից բոլշևիկյան իշխանությունների կողմից առաջ քաշված «ղեպի տուն» կարգախոսը Կովկասյան ռազմաճակատում գտնվող ռուսական զորքերի շրջանում լայն տարածում ստացավ՝ սկիզբ դնելով ռազմաճակատի քայքայմանը: Եվ ահա «Թուրքերը ռուսերու այդ փախուստը արագացնելու նպատակով 17(30-ին) նոյեմբ. 1917-ին ռուսերու զինադադար կնքելու առաջարկ ներկայացրին»²⁹⁰:

Այդ օրը Կովկասյան ռազմաճակատի հրամանատար, հետևազորի գեներալ Միխայիլ Պրժևալսկին թուրքական Յորդ բանակի հրամանատար Վեհիբ փաշայից ստանում է նամակ, որով առաջարկվում էր զինադադարի կնքում՝ «Ելնելով Ռուսաստանում ընդհանուր քաղաքական իրավիճակից»: Սրան ի պատասխան, նոր ձևավորված Անդրկովկասյան կոմիսարիատը²⁹¹, ռուսական բանակի գլխավոր

հրամանատարության հետ համաձայնեցված, համարում է «տեղին և հնարավոր գնալ ընդհանուր թուրքական բանակի հրամանատարի առաջարկին»²⁹¹:

Միաժամանակ, ռուսական գլխավոր հրամանատարության կողմից Միջագետքում գործող բրիտանական զորքերի հրամանատարին հավաստիացվում է, որ անհրաժեշտ ամեն ինչ կանենք, որպեսզի թուրքական կողմն ընդունի իրենց պայմանն, ըստ որի թուրքական կողմը Կովկասյան ռազմաճակատի ուժերի հաշվին չպետք է ուժեղացնեք Միջագետքյան ռազմաճակատը²⁹²: Նույնն իր հերթին Անդրկովկասյան կոմիսարիատի ղեկավարությունը հավաստիացնում է Թիֆլիսում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի ռազմական առաքելություններին²⁹³: Ռուսական Կովկասյան բանակի ակտիվ գործողությունները Կովկասյան ռազմաճակատում, ինչպես իր հուշերում շեշտում է գեներալ-լեյտենանտթ. Նազարբեկյանը, հնարավորություն էր տալիս բրիտանացիներին Միջագետքյան ռազմաճակատում պա-

²⁹⁰ Սիլվմենեան Գ. Երզնկա, Գահիրե, «Սահակ-Մեսրոպ», 1947, էջ 414:

²⁹¹ Պետրոգրադում բոլշևիկների կողմից իրականացված զինված հեղաշրջումից հետո 1917թ. նոյեմբերի 11-ին (24-ին) Անդրկովկասյան Հատուկ կոմիտեի (Օզակոմ), վրաց սոցիալ-դեմոկրատների, հայ դաշնակցականների և թաթար մուսավաթականների, Կովկասյան ռուսական ռազմաճակատի հրամանատարության, բրիտանական ու ֆրանսիական ռազմական առաքելությունների ներկայացուցիչների, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի Թիֆլիսի հյուպատոսների մասնակցությամբ Թիֆլիսում տեղի ունեցած նիստում որոշվում է ստեղծել

Այսրկովկասի անկախ կառավարություն: Արդեն նոյեմբերի 15-ին (28-ին) կազմվում է կոալիցիոն կառավարություն՝ «Անդրկովկասյան կոմիսարիատ»՝ մենշևիկ Եվգենի Գեգեչկորու գլխավորությամբ (մանրամասն տես *Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. Тифлисс. Типография Правительства Грузинской Республики, 1919, с. 3-8*): Նորաստեղծ կառավարության իշխանությունը չէր տարածվում միայն Բաքվի վրա, որտեղ նոյեմբերին հաստատվել էր խորհրդային իշխանություն՝ Բաքվի բանվորների, գյուղացիների և զինվորների խորհրդի գլխավորությամբ:

²⁹² ՀԱԱ, ֆ. 200 ց. 1, գ. 9, թ. 15:

²⁹³ Նույն տեղում, թ. 18:

²⁹⁴ *Адамья В. И. Из истории английской интервенции в Грузии (1918-1921 гг.)*, Сухуми, Абдоусдат, 1961, с. 25.

հելու ավելի փոքր ուժեր²⁹⁴: Հետևաբար, 1917թ. նոյեմբերի 21-ին (դեկտեմբերի 4-ին) Անդրկովկասյան կոմիսարիատը թուրքական կողմին է ներկայացնում պայմանը, որը պետք է բացատրեք զինադադարից հետո թուրքական զորքերի տեղափոխությունը Միջագետքյան ռազմաճակատ²⁹⁵:

1917թ. նոյեմբերի 28-ի (դեկտեմբերի 11-ի) երեկոյան «զինադադարի առթիվ թուրքերու կողմէն Վեհիպ փաշայի հրամանով Երզնկա հասան հազարապետ Ալի Ռէուֆ բեյ և գերման սպայ մը: Նույն գիշերը ժամը 9-ին Առաջին Կովկասեան բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Վ. Պ. Լյախովի նախագահությամբ տեղի ունեցած նիստում բանագնացները որոշեցին, որ զինադադարի պայմանաժամի տևողութիւնը ըլլայ երեք ամիս»²⁹⁶: Ռուսական պատվիրակությունը (ղեկավար՝ Կովկասյան բանակի Գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Եվգենի Վիշինսկի, անդամներ՝ դաշնակցական Արշակ Զամայան, սոցիալ - դեմոկրատներ Մ. Սմիրնով և Թեմվայա) դեկտեմբերի 2-ին (15-ին) Երզնկայում հանդիպում է ունենում թուրքական պատվիրակության (ղեկավար՝ 3-րդ բանակի շտաբի պետ, գնդապետ Օմեր Լյուֆի բեյ) հետ²⁹⁷: Արդեն դեկտեմբերի 5-ին (18-ին)

կողմերը ստորագրում են Կովկասյան ռազմաճակատում (Սև ծովից մինչև Դերսիմ) ռազմական գործողությունները դադարեցնելու մասին համաձայնագիրը, որը պետք է ուժի մեջ մնար մինչև վերջնական հաշտության պայմանագրի կնքումը, և դրան կից «Դեմարկացիոն գծերի մասին ակտը»: Համաձայնագրի 4-րդ կետով ստորագրող կողմերը պարտավորվում էին չկատարել ոչ մի «օպերատիվ-ստրատեգիական (ռազմավարական-Հ.Ն.) տեղաշարժեր, վերախմբավորումներ և փոխադրումներ» Կովկասյան ռազմաճակատից դեպի Միջագետքյան և Պաղեստինյան ռազմաճակատներ: Այդ կետի խախտումը պետք է իրենով նշանավորեր «պատերազմական գործողությունների վերսկսում»²⁹⁸: Համաձայնագրի 12-րդ կետով ասվում էր, որ եթե հորհրդային Ռուսաստանի և Կենտրոնական տերությունների միջև կնքվեր ընդհանուր զինադադար, ապա նրա «բոլոր կետերը կդառնան պարտադիր նաև Կովկասյան ռազմաճակատի համար»²⁹⁹:

Երզնկայի համաձայնագրում, ի տարբերություն Բրեստ-Լիտովկի համաձայնագրի, ոչ մի խոսք չկար Պարսկաստանից թուրքական և ռուսական զորքերի դուրսբերման մասին: Այնուամենայնիվ, դեկտեմբերի 23-ին (հունվարի 5-ին) հորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը հրապարակեց՝ Պարսկաստանից ռուսական զորքերի դուրս բերման ծրագիր, որում նշվում էր,

ստորագրել է թուրքական 3-րդ բանակի շտաբի պետ, գնդապետ Օմեր Լյուֆի բեյը: Տես Սիրմենեան Գ., նշվ. աշխ., էջ 413:

²⁹⁷ Սիրմենեան Գ., նշվ. աշխ., էջ 414: Аркомео С. Т. Материалы по истории отпадения Закавказья от России, Тифлис, «Красная книга», 1923, с. 13.

²⁹⁸ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում. 1828-1923. Խմբ.՝ պրոֆ. Ջ. Ա. Կիրակոսյանի, Երևան, «Հայաստան», 1972, էջ 413:

²⁹⁹ Նույն տեղում, էջ 415

²⁹⁴ Армия в Первой мировой войне(1914–1918 гг.). Документы и материалы. Под ред. А. С. Вирабы, В. Б. Арифуни, А. С. Василенко, Москва, Российский институт, 2014, с. 59.

²⁹⁵ Hovhannissian R. G. Armenia on the Road to Independence 1918, Berkeley - Los Angeles, University of California Press, 1967, p. 109.

²⁹⁶ Ամիրխանեան Ա. Ռուս եւ թուրք զինադադարը. Պատմական անցքեր. 1917 - 1918, Ֆրեզնո, «Նոր կենսը-Սիսուան», 1921, էջ 15:

* հորհրդային շրջանում հրատարակված փաստաթղթերի ժողովածուների մեջ Երզնկայի զինադադարի համաձայնագրի և «Դեմարկացիոն գծերի մասին» ակտի տեքստերում՝ թուրքական կողմից ստորագրողի թուրքական 3-րդ բանակի շտաբի պետի անվան տեղում գրված է «անընթեռնելի»: Իրականում թուրքական կողմից համաձայնագիրը

որ այնտեղ տեղակայված ռուսական զորամասերը «ծառայում են որպես զենք՝ պարսկական տարածքների ռազմակայման համար»³⁰⁰:

1917թ. դեկտեմբերին Համայնքների պալատում Ռուսաստանի դեմ մեղադրական ճառով հանդես եկավ վարչապետ Դ. Լյոդ Զորջը՝ նշելով, որ 1917թ. Դաշնակիցների հույսերի չիրագործման պատճառը բացառապես «ռուսական քայքայումն» էր, քանզի ենթադրվում էր, որ ռուսական բանակի կողմից արևելքում, իսկ անզու-Ֆրանսիական ուժերի կողմից արևմուտքում միաժամանակյա հարձակման դիմելու արդյունքում կհաջողվեր, վերջապես, «վճռական հարած տալ թշնամուն»³⁰¹: Սակայն բոլշևիկների կողմից իրականացված հեղաշրջման արդյունքում նախկին դաշնակիցները հայտնվեցին հակառակորդ ճամբարներում:

1917թ. դեկտեմբերի 12-ին բրիտանացի ռազմական գործիչ Ջ. Ուեջվուդի կողմից լորդ Ռ. Սեսիլին ներկայացված հուշագրում նշվում էր, որ անհրաժեշտ է «խրախուսել» Այսրկովկասի, Ուկրաինայի, Դոնի, Ֆինլանդիայի, Թուրքեստանի, Սիբիրի և Ռուսաստանի մյուս երկրամասերի անջատման գործընթացը³⁰²: Ելնելով սրանից, 1917թ. դեկտեմբերի 21-ին լորդ Ռ. Սեսիլը հայտարարեց, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունն ունի ընտրություն. «պաշտպանել ուկրաինացիներին, կոզակներին, վրացիներին և հայերին, կամ՝ բոլշևիկներին»³⁰³: Բնականաբար, ընտրվեց առաջին տարբերակը: Այդ ընտրությունը բխում էր երկու հանգա-

³⁰⁰ Митрополитов Л. И., *նշվ. աշխ.*, էջ 51:

³⁰¹ «Հորիզոն», Թիֆլիս, 23 դեկտեմբերի 1917, N 270, էջ 2:

³⁰² Fischer L. *Russia's Road from Peace to War. Soviet Foreign Relations 1917-1941*, New York, Harper and Row, 1969, p. 12.

³⁰³ Махмурия Г. Г., *Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг. Время белого человека*, Ереван, «Лусакс», 2002, с. 15.

մանքից. առաջին, Մեծ Բրիտանիան հնարավորություն էր ստանում ձեռք բերելու ազդեցության նոր գոտիներ նախկին Ռուսական Կայսրության անջատված երկրամասերում, և երկրորդ, Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերի դուրս բերումը փոխում էր ուժերի ռազմավարական հարաբերակցությունն Մերձավոր Արևելքում՝ հոգուտ Քառյակ տերությունների: 1917թ. վերջին բրիտանական զորքերի թիվը Մերձավոր Արևելքում հասնում էր ընդամենը շուրջ 300 000-ի³⁰⁴, որոնք տեղաբաշխված էին երկու առանձին՝ Պաղեստինյան և Միջագետքյան ռազմաճակատներում: Ուժերի նման հարաբերակցության պայմաններում Կովկասյան ռազմաճակատի պաշտպանության բացակայությունը լուրջ սպառնալիք էր ստեղծում Այսրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Միջագետքի, Պարսկաստանի, Թուրքեստանի, Աֆղանստանի և Հնդկաստանի համար: Հետևաբար բրիտանացի ռազմավարագետները խնդիր ունեին ստեղծելու բուֆերային գոտի՝ ընդդեմ Հնդկաստանին սպառնացող գերմանա-թուրքական (արևմուտքից) և բոլշևիկյան (հյուսիսից) վտանգի:

Որպես վերոնշյալ խնդրի լուծում, Մարկ Սայքսը դեռևս 1917թ. օգոստոսի 14-ին Ռազմական կաբինետ (*War Cabinet*) էր ներկայացրել «Հուշագիր Փոքր Ասիայի հարցով համաձայնության մասին», որտեղ ընդգծվում էր հրեա-արաբա-հայկական համագործակցության անհրաժեշտությունը: Մասնավորապես, Մ. Սայքսը նշում էր, որ եթե Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան «անկեղծորեն ընդառաջ գնան արաբական ազգայնականությանը, եթե Ֆրանսիան չափավորի իր ֆինանսական հավակնությունները, իսկ Մեծ Բրիտանիան՝ իր կայսերապաշտական փառամոլությունը,

³⁰⁴ СЛУ, ф. 57 г. 1, қ. 618, р. 10:

ապա հնարավորություն կծագի պաշտպանիչ վահան՝ արաբա-հրեա-հայկական բուֆեր, դնել Պարսկաստան-Եգիպտոս-Հնդկաստան գծի միջև մի կողմից, և դաշնակիցները Թուրքիայի ու Գերմանիայի միջև՝ մյուս կողմից»³⁰⁵։

Ստեղծված բարդ իրավիճակում՝ 1917թ. դեկտեմբերի 22-ին, Փարիզում բացվում է անգլո - ֆրանսիական գաղտնի խորհրդակցություն՝ Անտանտի կողմից Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ նոր քաղաքականության հիմնական դրույթները հաստատելու հարցի շուրջ։ Թեև խորհրդակցությանն ԱՄՆ չէր մասնակցում, այնուամենայնիվ, ենթադրվում էր, որ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան կստանան ԱՄՆ-ի աջակցությունը³⁰⁶։ Խորհրդակցության արդյունքում, դեկտեմբերի 23-ին, ընդունվեց Անգլո-ֆրանսիական համաձայնագիր*, որի 1-ին կետով ենթադրվում էր, որ Քառյակ դաշինքի զորքերի դեմ Սև ծովի հյուսիսում ընթացող ռազմական գործողությունները ղեկավարվելու էր Ֆրանսիայի, իսկ Սև ծովի հարավ-արևելքում թուրքական զորքերի դեմ ռազմագործողությունները՝ Մեծ Բրիտանիայի կողմից։ Համաձայնագրի 3-րդ կետով անրագրվում էին նախկին Ռուսական Կայսրության հարավային երկրամասերում երկու տերությունների «ազդեցության գոտիները»։ Ֆրանսիական «ազդեցության գոտին» իր մեջ ներառում էր Բեսարաբիան, Ուկրաինան և Ղրիմը, իսկ Բրիտանական «ազդեցության

³⁰⁵ Յաիր Աուրոն, Անընդունելի անտարբերություն, Սիոնիզմը և Հայրցեղասպանությունը, Երկրորդ հրատարակություն, Երևան, «Ամարաս», 2013, էջ 330-331, 390։

³⁰⁶ Митропанков Л. И., նշվ. աշխ., էջ 61։

* Համաձայնագրի կրկնօրինակը 1917թ. դեկտեմբերի 29-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի քարտուղար Արթուր Բալֆորի կողմից հանձնվում է Լոնդոնում ԱՄՆ դեսպան Ու. Փեյջին։ See՝ Митропанков Л. И., նշվ. աշխ., էջ 61։

գոտին»՝ Դոնի կղզակական տարածքները, Հյուսիսային Կովկասը, Հայաստանը, Վրաստանը (ամբողջ Այսրկովկասը, ներառյալ Բաքուն), Քուրդիստանը³⁰⁷։ Այս համաձայնագրով «ազդեցության գոտիների» նման բաժանումը արտահայտում էր, միաժամանակ, երկու տերությունների տնտեսական շահերը։ Մասնավորապես, բրիտանացիները ստանում էին Կովկասյան նավթադաշտերը՝ Բաքվի և Գրոզնու շրջաններում, իսկ ֆրանսիացիները՝ ուկրաինական ածուխի ու երկաթի հանքավայրերը³⁰⁸։

Համաձայնագրի քննարկման ժամանակ Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյին և արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին է ներկայացվում լորդ Ռ. Սեսիլի և Ռազմական կարինետի անդամ լորդ Ալֆրեդ Միլների կողմից պատրաստված մի հուշագիր։ Վերջինս շեշտում էր Կովկասյան ռազմաճակատում նոր կազմավորվող հայկական և վրացական ազգային զորամասերին աջակցություն ցույց տալու անհրաժեշտությունը՝ հիմնավորելով, որ դրանք, պաշտպանելով Կովկասյան ռազմաճակատը, ապահովում են Պարսկաստանում և Միջագետքում գործող բրիտանական ուժերի թևային պաշտպանությունը։ Միաժամանակ, նշվում էր, որ ինքնավար կամ անկախ հայկական և վրացական պետությունների ստեղծումը կարող է լինել միակ պատենշը՝ ընդդեմ թուրանական շարժման, որը կարող է ձգվել «Կոստանդնուպոլսից մինչև Չինաստան»³⁰⁹։ Հուշա-

³⁰⁷ Մեծ տերությունները, Օսմանյան Կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում 1914-1918. Հատոր 2. Աշխատասիրությանը Ա. Պեյլերյայնի. Թարգմ. ֆր., Երևան, «Հայաստան» («Գրական հայրենիք»), 2005, էջ 289։

³⁰⁸ Marriot J. A. R. Anglo-Russia Relations. 1689-1943, London, Methuen and Co., 1944, p. 177.

³⁰⁹ Nassibian A., նշվ. աշխ., էջ 99 - 100։

գիրը հավանության է արժանանում Ֆրանսիական կառավարության կողմից: Նույն դեկտեմբեր ամսին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի քարտուղարությունը Թիֆլիսում իր հյուպատոսի միջոցով Հայկական զինվորական խորհրդի Գործադիր կոմիտեին հավաստիացնում է, որ բրիտանական կառավարությունն իր աջակցությունն է հայտնում թուրքական լծից հայերի ազատագրման ջանքերին³¹⁰:

Հայկական ազգային զորամասերի կազմավորման գործընթացը, որը մեծ թափ ստացավ նույն թվականի երկրորդ կեսին, ի սկզբանե գտնվում էր Բրիտանական ռազմաքաղաքական շրջանակների ուշադրության կենտրոնում: Դեռևս 1917թ. օգոստոսին Թիֆլիսում բրիտանական ռազմական առաքելության ներկայացուցիչ գեներալ Օֆֆլի Շորը, բրիտանական հետախուզության սպա Մ. Գրեսին և Թիֆլիսում ԱՄՆ հյուպատոս Ֆ. Սմիթը այդ հարցով քննարկում են ունենում Անդրանիկի հետ: Վերջինս հավաստիացնում է, որ ինքը կարող է առնվազն 10 000 արևմտահայ զինվորներից ազգային զորամաս կազմակերպել: Քննարկման մասնակիցները, սակայն, ընդունում են, որ այդ ծրագիրը կարող է իրականանալ բրիտանական ռազմական առաքելության կողմից ֆինանսական օգություն հատկացնելու և հրահանգիչ-սպաներ տրամադրելու դեպքում³¹¹: Միջազետքում գործող բրիտանական բանակի հրամանատարությունը ենթադրում էր, որ միայն արևմտահայերից հնարավոր կլինի զինվորագրել մինչև 30 000 զինվոր³¹²:

1917թ. երկրորդ կեսին ցարական բանակի կազմում ծառայություն էին իրականացնում շուրջ 150 000 հայ

զինվորներ ու սպաներ, որոնցից միայն 35 000 էր գտնվում Կովկասյան ռազմաճակատում: Ելնելով այս հանգամանքից՝ Ռուսական բանակի գերագույն-գլխավոր հրամանատարի զորակայանում գտնվող բրիտանական ռազմական առաքելության ղեկավար, գեներալ Չարլզ Բարտերը 1917թ. հոկտեմբերի 10-ին ռուսական բանակի գերագույն-գլխավոր հրամանատարի շտաբի պետ, գեներալ Նիկոլայ Դուխոնինին փոխանցում է բրիտանական կայսերական Գլխավոր շտաբի պետ, գեներալ Ու. Ռոբերտսոնի առաջարկությունը՝ ռուսական բանակում ծառայող շուրջ 150 000 հայ ռազմիկներին Կովկասյան ռազմաճակատում կենտրոնացնելու մասին³¹³: 1917թ. հոկտեմբերի 15-ին Գեներալ Չ. Բարտերը գեներալ Ու. Ռոբերտսոնին հայտնում է, որ Այսրկովկասից ժամանած սպա Մեյթլենդ Էդվարդսի բերած տեղեկություններով այնտեղ միակ իրական համակիր ուժը հայկական զորքերն են, որոնք կարող են աջակցել Միջազետքում գործող գեներալ Ֆրեդերիկ Մոդին³¹⁴: Ելնելով այս հանգամանքից, 1917թ. հոկտեմբերի 23-ին Ռազմական կարիների նիստում որոշվում է, որ արտաքին գործերի քարտուղարությունը ԱՄՆ կառավարության հետ համատեղ պետք է ճնշում գործադրի Ռուսաստանի ժամանակավոր կառավարության վրա, որպեսզի թույլատրվի Արևելաեվրոպական ռազմաճակատում ծառայող հայ զինվորականության տեղափոխումը Կովկասյան ռազմաճակատ և այնտեղ հայկական ազգային զորամասերի կազմավորումը³¹⁵:

1917թ. նոյեմբերի 10-ին և 11-ին Պետրոգրադի Հայկական զինվորական կոմիսարի ժամանակավոր պաշտոնակատար,

³¹⁰ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 1, թ. 57:

³¹¹ Hovhannisian R. G., նշվ. աշխ., էջ 82:

³¹² ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 61, թ. 9:

³¹³ Армяне в Первой мировой войне, с. 127-128.

³¹⁴ Nassibian A., նշվ. աշխ., էջ 95:

³¹⁵ Նույն տեղում, էջ 96:

վներալ-մայր Լևոն Տիգրանովը, փոխգնդապետ Նիկոլայ Մելիք-Փարսադանովը և դոկտոր Հակոբ Զավրիևը հանդիպումներ են ունենում Պետրոգրադում ֆրանսիական, բրիտանական և ամերիկյան ռազմական առաքելությունների ղեկավարներ՝ գեներալներ Նիսսեյի, Կնոքսի և Ջյուդսոնի հետ, որոնք իրենց պետությունների անունից խոստանում են օգնություն՝ ֆինանսական միջոցներով, սպառազինության մատակարարումներով և հրահանգիչներով³¹⁶։ Արդեն 1917թ. դեկտեմբերի վերջին բրիտանական կառավարությունը պաշտոնապես ընդունում է որոշում՝ Այրկովկասում հայկական և վրացական ազգային զորամասեր կազմավորելու նպատակով ֆինանսական միջոցներ հատկացնելու և բրիտանացի սպաներ տրամադրելու մասին³¹⁷։ Թեև խոստացված սպառազինությունն ու հրահանգիչները հետագայում այդպես էլ չուղարկվեցին, սակայն հայկական զորամասեր կազմավորելու համար 1917թ. դեկտեմբերի կեսերին նախ Ֆրանսիայի կառավարությունը համաձայնեց բաց թողնել 20 մլն ռուբլու փոխառություն³¹⁸, իսկ ավելի ուշ Մեծ Բրիտանիան տրամադրեց 4 մլն ռուբլի գումար³¹⁹։ Կովկասյան ռազմաճակատում հայերի և վրացիների զինվորագրման գործում ակտիվորեն ներգրավված էին բրիտանական և ֆրանսիական ռազմական առաքելությունների ներկայացուցիչները, մասնավորապես բրիտանացի գնդապետ Փայքը և ֆրանսիացի գնդապետ Շարդիյիեն, իսկ Պարսկաստանում տեղացիների (հայեր, ասորիներ) և

³¹⁶ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 105, թ. 2:

³¹⁷ Arslanian A. H. *The British Decision to Intervine in Transcaucasia during World War I*, «The Armenian Review», Watertown, 1974, vol. 27, N 2, p. 153.

³¹⁸ Մեծ տերությունները, Օսմանյան Կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում. Հատոր 2, էջ 287:

³¹⁹ ՀԱԱ, ֆ. 412 գ. 1, գ. 2551, թ. 15:

ուս զինվորականների, հատկապես, կոզակների շրջանում կամավորական ստորաբաժանումների կազմավորման գործում՝ բրիտանացի գնդապետ Ռոուլանդսոնը³²⁰։

1917թ. դեկտեմբերին Պողոս Նուբար փաշան Փարիզում հանդիպելով Մեծ Բրիտանիայի դեսպան լորդ Ֆ. Բերտիի հետ՝ քննարկում է հայկական ազգային զորամասերի՝ դեպի Պարսկաստան և Միջագետք տեղափոխելու հարցը։ Դեսպանը շեշտում է, որ Կովկասյան, Պարսկական և Միջագետքյան ռազմաճակատները դիտարկվում են որպես մեկ ընդհանուր ռազմարշավ, որից կախված է նաև Հայաստանի ապագան³²¹։ Պողոս Նուբարը 1917թ. դեկտեմբերի 8-ին (21-ին) Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդին ուղարկած հեռագրում նշում էր, որ կազմավորվող հայկական ազգային զորամասերը խնդիր ունեն ոչ միայն դիմագրավելու Կովկասյան ռազմաճակատում թուրքական արշավանքին, այլև փորձելու են միանալ Միջագետքում գործող բրիտանական բանակին³²²։

Հայկական ազգային զորամասերի կազմավորման գործընթացում շրջադարձային եղավ Մոզիյովի զորակայանի 1917թ. նոյեմբերի 16-ի (29-ին) «Բանակի և նավատորմի վերաբերյալ» հրամանը, որով նախատեսվում էր կազմավորել Հայկական բանակային կորպուս³²³։ Արդեն Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար, հետևազորի գեներալ Մ. Պրժևալսկու 1917թ. նոյեմբերի 30-ի (դեկտեմբերի 13-ի) N 136 հրամանի և կորպուսին ուղղված դեկ-

³²⁰ Մեծ տերությունները, Օսմանյան Կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում. Հատոր 2, էջ 166, 250:

³²¹ Nassibian A., նշվ. աշխ., էջ 97:

³²² ՀԱԱ, ֆ. 200 գ. 1, գ. 5թ. 7

³²³ ՀԱԱ, ֆ. 1267, գ. 1, գ. 33, թ. 8

տեմբեր 1-ի (դեկտեմբերի 14-ի) N 2 հրամանի հիման վրա սկսվեց Հայկական առանձին բանակային կորպուսի կազմավորման անմիջական գործընթացը³²⁴: Կորպուսի հրամանատար է նշանակվում գեներալ-լեյտենանտթ. Նազարբեկյանը՝ համաձայն հետևազորի գեներալ Մ. Պրժևալսկու N 796 կարգադրության³²⁵: Մ. Պրժևալսկու 1917թ. դեկտեմբերի 22-ի N 167 գաղտնի հրամանով ձևավորվում է արևմտահայերից կազմված Հատուկ հայկական դիվիզիան³²⁶: Վերջինիս հրամանատար է նշանակվում Անդրանիկ Օզանյանը: Կարճ ժամանակ անց Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար, գեներալ-մայոր Եվգենի Լեբեդինսկու 1918թ. հունվարի 16-ի N 77 հրամանով Հատուկ հայկական դիվիզիայի հիման վրա կազմավորվում է Հավաքական հայկական զորաջոկատը³²⁷, որը ենթակա էր լինելու Թուրքահայաստանի գեներալ-կոմիսարին*:

Այսպիսով, 1917թ. վերջին, պայմանավորված Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունք երզնկայի գինադադարով ու ռուսական զորքերի կողմից Կովկասյան ռազմաճակատը և Պարսկաստանը լքելու հանգամանքով, Այսրկովկասում

³²⁴ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 97, թ. 1:

³²⁵ Նազարյան Ա. Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914-1918թթ.), Երևան, Զանգակ - 97, 1999, էջ 150:

³²⁶ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 41, թ. 169:

³²⁷ Նույն տեղում:

* Ռուսաստանի ժամանակավոր կառավարության 1917թ. ապրիլի 26-ի որոշմամբ (տես ՀԱԱ, ֆ. 374, ց. 1, գ. 4, թ. 40-ի շրջ.)՝ Թուրքահայաստանի և Թուրքիայի այլ մարզերի ժամանակավոր ռազմական գեներալ - նահանգապետությունը վերակազմավորվեց Թուրքահայաստանի գեներալ-կոմիսարիատի: Վերջինիս կանոնադրությունը տես ՀԱԱ, ֆ. 374, ց. 1, գ. 1, թ. 3 - 43:

առաջ եկավ բրիտանական նոր ռազմավարություն: Վերջինիս առանցքային խնդիրներն էին գերմանա-թուրքական ուժերի առջև դեպի Բաքու, Հյուսիսային Կովկաս, Պարսկաստան, Կենտրոնական Ասիա և Հեղկաստան տանող ուղիների փակումը և, միաժամանակ, Հայաստանը, Այսրկովկասը և Պարսկաստանը իր «ազդեցության գոտու» մեջ ներառելը: Այս երկու ռազմավարական խնդիրների լուծումը բրիտանացի ռազմավարագետները տեսնում էին Հայաստանում և Այսրկովկասում ազգային զորամասեր կազմավորելու և ազգային անկախ պետություններ (որպես «բուֆերային գոտի») ստեղծելու մեջ:

3.2. Բրիտանական ռազմական առաքելության «առեղծվածը»: 1918թ. Մայիսյան հերոսամարտերի և Բաքվի պաշտպանության ռազմավարական նշանակությունը

1918թ. հունվարի 5-ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Լլոյդ-Ջորջը հայտարարում է, որ պատերազմից հետո Միջերկրական և Սև ծովերն իրար միացնող Նեղուցները ունենալու են «միջազգային» և «չեզոք» կարգավիճակ, իսկ Արաբիան, Հայաստանը, Սիրիան և Պաղեստինը իրավունք են ստանալու լուծելու իրենց ազգային հարցերը³²⁸: Սա, փաս-

³²⁸ Howard H. N. The Partition of Turkey. A Diplomatic History 1913-1923, Norman, University of Oklahoma Press, 1931, p. 201. Հատկանշական է, որ միջազգային երաշխավորությամբ Նեղուցներով ազատ երթևեկության ուժեղ սահմանելու և Օսմանյան կայսրության կազմում գտնվող ժողովուրդներին ինքնավարություն տալու մասին դրույթները տեղ գտան նաև 3 օր անց՝ 1918թ. հունվարի 8-ին, ԱՄՆ Նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից Սենատին ուղղված հաշտության նախագծի («14 կետեր») 12-րդ կետում (տես The Intimate Papers of Colonel House, Vol. 3, London, Ernest Benn Limited, 1928, p. 341):

տորեն, վկայությունն էր այն բանի, որ բրիտանական կառավարությունը գործնական հարթության վրա էր դնում Մարկ Սայքսի աշխարհառազմավարագիտական տեսությունը՝ հրեական, արաբական և հայկական անկախ պետությունների ստեղծումով «բրիտանամետ գոտի» ձևավորելու և այդպիսով Թուրքիան ու Ռուսաստանը իրարից անջատելու մասին: Միաժամանակ, բրիտանացիները լուծում էին Գերմանիային Բեռլին-Բաղդադ երկաթգծից հեռացնելու խնդիրը: Հետևաբար, Մեծ Բրիտանիան ցանկանում էր «ազատել Արաբիան եւ Արեւելեան Թուրքիոյ նահանգները՝ ստեղծելով Հայաստան և Քիւրտիստան», բայց պայմանով, որ անոնք ըլլան միջազգային հակակշռի տակ եւ չդառնան յենարան ո՛չ գերմանիոյ, եւ ո՛չ ալ Ռուսիոյ»³²⁹:

1918թ. հունվարի 21-ին Անտանտի Բարձրագույն ռազմական խորհուրդն ընդունում է որոշում՝ Թուրքիայի դեմ «վճռական հարձակում» ձեռնարկելու և այդպիսով թուրքական բանակները ջախջախելու մասին³³⁰:

Ռուսաստանի պատերազմից դուրս գալուց հետո Միջագետքում գործող բրիտանական զորքերի շտաբի (տեղակայված Բաղդադում) համար ռազմավարական գլխավոր խնդիրն է դառնում գերմա - թուրքական ուժերի կողմից դեպի Այսրկովկաս շարժի կանխումը և, միաժամանակ,

³²⁹ 1918թ. հունիսին՝ ժննում՝ բրիտանական գեներալ Պերսի Բոքսի և քուրդ ազդեցիկ դիվանագետ Շերիֆ փաշայի միջև ընթացած բանակցություններում, առաջին անգամ լրջորեն քննարկվում է բրիտանական պրոտեկտորատի ներքո՝ Մոսուլ կենտրոնով, քրդական ինքնավարության ստեղծման հարցը: Տես Лазарев М. С. Империализм в Кирдскім вопрое (1917-1923), Москва, «Наука», 1989, с. 21.

³³⁰ Ռուրէն. Հայաստան միջ - ցամաքային ուղիներու վրայ, Մ. Արեւելքի ժողովուրդներ եւ երկիրներ, Պէրոյթ, Ա. Հ. 1984, էջ 102:

³³¹ Фоиш Ф. Воспоминания: (Война 1914-1918гг). Пер. с фр., Москва, Воениздат, 1939, с. 224.

Կասպից ծովի ափին ուժեղ հենակետի ստեղծումը: Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական ղեկավարության շրջանում քննարկվում է Այսրկովկաս զորք ուղարկելու հարցը, որի օգտին, հատկապես, հանդես է գալիս լորդ Զ. Քերզոնը³³¹: Սակայն բրիտանացիները որոշում են բավարարվել Այսրկովկաս ռազմական առաքելություն ուղարկելով: Այդ նպատակով 1918թ. հունվարին Միջագետքում ստեղծվում է բրիտանացի սպաներից բաղկացած ռազմական առաքելություն՝ գեներալ Լիոնիլ Դանստերվիլի ղեկավարությամբ: Առաքելությունը խնդիր ուներ Պարսկաստանի տարածքով անցնելու Այսրկովկաս՝ և հասնելու Թիֆլիս: Այստեղ տեղի ուժերից պետք է կազմակերպվեր հակազերմանա-թուրքական և հակաքրդկական ճակատ: Առաքելությունը, հունվարի 27-ին Բաղդադից դուրս գալով, փետրվարի կեսերին հասնում է Էնգելի: Սակայն Բաքվի բանվորների, գյուղացիների և զինվորների խորհրդին կից գործող ռազմահեղափոխական կոմիտեի և Էնգելիում գործող

³³¹ Lloyd George D. The Truth about the Peace Treaties. Vol. 1, London, Victor Gollancz LTD, 1938, p. 329.

³³² Դեռևս 1916թ. ամռանը Այսրկովկասում և Հայաստանում բրիտանական մի ռազմական առաքելություն արդեն եղել էր: Գեղապետ Լոկեր-Լամպսոնի գլխավորած առաքելությունը (33 սպա, 500 զինվոր), որը կոչվում էր «Բրիտանական ծովակալության գրահապատ ավտոմոբիլային գորաջուկատ» (18 զրահապատ մեքենա, 70 ավտոմեքենա), Հայաստան էր ժամանել Արխանգելսկ-Մոսկվա-Վլադիկավկազ-Թիֆլիս-Կարս երթուղով: 1916թ. հուլիսի 21-ին գորաջուկատը մտցվում է Կովկասյան բանակի կազմի մեջ: Զորաջուկատը, որն ըստ էության զբաղվում էր հետախուզական բնույթ կրող աշխատանքով, մասնավորապես, ռազմավարական նշանակության ճանապարհների ուսումնասիրությամբ, պատճառաբանելով մոտալուտ ծնուն պայմաններում մեքենաների օգտագործման անհնարիտությունը, հոկտեմբեր ամսին հեռանում է Օդեսա: Տես Аконян С. М., նշվ. աշխ., էջ 98-100:

ռազմահեղափոխական կոմիտեի համագործակցության արդյունքում կանխվեց Լ. Դանստերվիլի ռազմական տաքելության անցումը Բաքու³³²:

1917թ. վերջից Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի (շուրջ 500 000³³³) մասսայական լքումը՝ Թուրանի դարպասը հանդիսացող Այսրկովկասի վրայով ճանապարհի հարթեց թուրքական զորքերի համար դեպի Արևելք: Թուրքական «Կովկաս» բանակախումբը՝ (ստեղծվել էր 2-րդ և 3-րդ բանակների միավորումով, հրամանատար Մ. Վեհիբ փաշա) օգտագործելով Երզնկայի զինադադարը և վերախմբավորվելով ու համալրվելով թարմ ուժերով, 1918թ. -ի հունվարի 30-ին (փետրվարի 12-ին) Կովկասյան ճակատում անցնում է հարձակման:

Թուրքական հարձակման նպատակը, ինչպես բացահայտ հայտարարեց ռազմական նախարար Էնվեր փաշան այդ նույն օրը՝ փետրվարի 12-ին, Կոստանդնուպոլսում՝ Մեջլիսում, Բաթումի ու Բաքվի արագ գրավումն ու այդտեղից Թուրքեստանի հետ միանալն էր:³³⁴ Փաստացի, սա հաստատումն էր այն բանի, որ Օսմանյան Կայսրությունը «Եվրոպայի ճիպտի հզոր հարվածների տակ շրջադարձ էր

³³² «Մշակ», Թիֆլիս, 6 մարտի, 1918, N 47, էջ 3:

³³³ Մարդարապատի հերոսամարտը. Գրեց Գլխատր Սպայակոյտի գեղապետ՝ Ալեքսանդր Կ. Շնեյր. Մասնակցողի Յուշեր, Ֆրեզնե, «Ասպարեզ», 1967, էջ 9:

³³⁴ 1918թ. փետրվարի 10-ին Խորհրդային Ռուսաստանի ռազմական ժողկոմ Լև Տրոցկին հեռագրում է նորանշանակ գերագույն-գլխավոր հրամանատար Ն. Կրիլենկոյին. «Այս գիշեր անհապաղ հրաման արձակեք Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի ու Բուլղարիայի դեմ պատերազմական վիճակը դադարեցնելու և բոլոր ռազմաճակատներում զորացրում կատարելու մասին»: Տես Արաքսյան Հ. Ն. Բրեստից մինչև Մոսկոս, Երևան, «Հայաստան», 1989, էջ 106:

³³⁴ Игудавысим Е. Ф., նշվ. աշխ., էջ 167:

կատարում դեպի Արևելք, դեպի նվիրական Թուրան»³³⁵: Լայնածավալ հարձակումը սկսելու պահին թուրքերը Կովկասյան ճակատում ունեին երեք բանակային կորպուսներ, որոնք գործելու էին Տրապիզոն-Բաթում (3-րդ բանակի 2-րդ կորպուսը), Էրզրում-Կարս (3-րդ բանակի 1-ին կորպուսը), Վան-Բայազետ (2-րդ բանակի 4-րդ կորպուսը) ուղղություններով³³⁶: Այս երեք բանակային կորպուսները միասին սկզբում ունեին 10 000 սուր, իսկ արդեն մարտի վերջին՝ 25 000 զինվոր ու սպա³³⁷:

Թուրքական հարձակման կասեցման խնդիրը Կովկասյան ռազմաճակատում, որը ձգվում էր Սև ծովի Տրապիզոն նավահանգստից մինչև Ուրմիա լիճը (շուրջ 720 կմ), դրվեց Այսրկովկասում ստեղծված ազգային զորամիավորումների վրա: Մասնավորապես, Հայկական բանակային կորպուսը (շուրջ 17 000 զինվոր ու սպա) խնդիր ուներ պաշտպանելու պարսկական սահմանից մինչև Բաքերդ ընկած հատվածը, ներառյալ Էրզրումի և Կարսի բերդերը, իսկ Վրացական բանակային կորպուսը (շուրջ 12 000 զինվոր ու սպա)՝ Բաքերդից մինչև Սև ծով ընկած հատվածը³³⁸:

ԱՄՆ կոնգրեսական Էդուարդ Լիթլը 1918թ. փետրվարի 7-ին Կոնգրեսում ունեցած իր ելույթում, վերլուծելով ռազմաքաղաքական իրավիճակը Մերձավոր Արևելքում ու Կովկասյան ռազմաճակատում, առաջ քաշեց ընդհանուր պատերազմում Դաշնակիցների հաղթանակի հասնելու ռազմավարա-

³³⁵ Շիրինյան Լ. Ղ. Հայկական գիտական ուժը Առաջին աշխարհամարտի վերջնափուլում, Երևան, «Ամարաս», 2010, էջ 14:

³³⁶ Թուրքական ուժերի հարձակման քարտեզը տես ՀԱԱ, ֆ. 247, ց. 3, գ. 70, թ. 1:

³³⁷ Игудавысим Е. Ф., նշվ. աշխ., էջ 167:

³³⁸ Նույն տեղում, էջ 160-161:

գիտական մի լուծում: Ըստ նրա, «Դեպի Վիեննա և Բեռլին ձգվող հաղթանակի ճանապարհը սկսվելու էր Հայաստանից և անցնելու էր Փոքր Ասիայով ու Կոստանդնուպոլսով», իսկ դա էլ ենթադրում էր Կովկասյան ռազմաճակատից «հայկական ու վրացական զորամասերի և, միաժամանակ, Բաղդադից և Երուսաղեմից՝ բրիտանական զորքերի զորաշարժ դեպի միևնույն նպատակակետ»³³⁹: Արդյունքում, ըստ կոնգրեսականի, Թուրքիան կջախջախվեր, ինչը կարագացներ Գերմանիայի պարտությունը:

Սակայն վրացական բանակային կորպուսը, փաստացի, այդպես էլ չպատերազմեց և ինչպես գնդապետ Ալեքսանդր Շենտուրն է իր հուշերում քնորոշել, այն դարձավ մեր «Աքքիլ-լեսայան կրունկը (գարշապարը-Հ.Ն.)»³⁴⁰: Ավելին, գերմանաթուրքական կողմի հետ Կովկասյան ռազմաճակատի հրամանատար, գեներալ Ի. Օդիշելիձեի և Անդրկովկասյան կոմիսարիատի գլուխ կանգնած վրաց սոցիալ-դեմոկրատական (մենչևիկյան) կուսակցության պարագլուխների դավադիր գործարքների՝ արդյունքում Տրապիզոնն ու Բաթումի Միխայիլովյան ամրոցն առանց կռիվի հանձնվեցին թուրքերին: Իր հերթին Միջագետքում գործող բրիտանական բանակը չջարժվեց հյուսիս՝ «դէպի Մոսուլ, շփում հաստատելու համար հայ բանակին հետ Վանայ լճի շրջանին մէջ եւ այսպէսով

հայ բանակին վրայ ձգեց կոտիւն ամբողջ ծանրութիւնը»³⁴¹: Այդ փաստն արձանագրել էր անգամ ԱՄՆ պետքարտուղար Ռ. Լանսինգը, ով Լոնդոնում ԱՄՆ դեսպան Ռ. Փեյչին գրած հեռագրում շեշտում էր, որ Կովկասյան ռազմաճակատի «պաշտպանությունն ամբողջովին կախված է հայերից»³⁴²:

Գեներալ-լեյտենանտթ. Նազարբեկյանն իր շտաբով 1918թ. մարտի 3-ին (16-ին) ժամանելով Սարիղամիշ՝ գեներալ Ի. Օդիշելիձեից ընդունում է Կովկասյան ռազմաճակատի անմիջական հրամանատարությունը³⁴³: 1918թ. փետրվարի 25-ին, Լոնդոնում գործող այսպես կոչված Հայկական բյուրոն (քարտուղար Արամ Բաֆֆի), որը սերտ կապեր ուներ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի քարտուղարության քաղաքական հետախուզության ղեկարտամենտի հետ, իր զեկույցում շեշտում էր, որ Կովկասյան ռազմաճակատում հայկական զորամասերը մեծապես օգնում են Դաշնակիցներին՝ «հետաձգելով թուրքական առաջխաղացումը դեպի արևելք»³⁴⁴:

1918թ. փետրվար-ապրիլ ամիսներին թուրքական զորքերը մեկը մյուսի ետևից գրավելով Արևմտյան Հայաստանի քաղաքները (էրզրում բերդաքաղաքն ու Կարսի բերդը՝

³⁴¹ Փատրմանեան Հ., նշվ. աշխ., էջ 139:

³⁴² Армения в документах Государственного департамента США 1917-1920гг. Сост. и пер. с англ. Г. Г. Махмурия. Ред. В. Казаченко, Ереван, «Илуцак», 2011, с. 23.

³⁴³ Նազարյան Ա., նշվ. աշխ., էջ 198:

³⁴⁴ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 616, թ. 2:

* Անդրկովկասյան կառավարության նախագահ Ա. Չխենկելին «նախապես գիշած էր Կարսը թուրքերուն, առանց տեղյակ պահելու դաիվին (կառավարության-Հ.Ն.) մյուս անդամները» (Տես Լազեան Գ. Հայաստանն եւ Հայ դատը. Ըստ դաշնագրերու, էջ 92): Թուրքական կողմը վրաց ղեկավարներին «խոստացել» էր Կարսը իրենց հանձնելու դեպքում

³³⁹ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 584, թ. 4:

³⁴⁰ Սարդարապատի հերոսամարտը. գրեց Գլխավոր Սպայակոյտի գեղապետ Ալեքսանդր Կ. Շենուր, էջ 15:

* Գեներալ Ի. Օդիշելիձեի քոյրը ամուսնացած էր թուրք բժիշկ Մահմուդ բեյի հետ: Գերմանա-թուրքական հետախուզության հետ գեներալ Ի. Օդիշելիձեի և վրաց սոցիալ-դեմոկրատական (մենչևիկյան) կուսակցության պարագլուխների դավադիր գործարքների մասին մանրամասն տես՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 155, թ. 42 - 44:

հանձնակցին գրեթե առանց կռվի՝ հասնում են Արփաչայի և Արաքսի ափերին: Ռազմավարական տեսանկյունից, Կարսն ունի «չորս կարեւոր դռներ, որոնք թուրքին առջև կը բանան քաղձայի հորիզոններ. Հիւսիսը՝ Արդահանի միջով, Կուրը Ճամբայ կը հարթէ դէպի Վրաստան: Արեւուտըը՝ Օլթի գետակի հոսանքն ի վար, կարելի է իջնել Ճորոխի հովիտը որ կը տանի Պաթում: Հիւսիս - արեւելքը՝ Շիրակի վրայով բաց է ճամբան դէպի Ալեքսանդրապոլ ուրկէ Արագածի երկու կողերով կարելի է իջնել Վաղարշապատ և հոսկ ուրեմն անցնել Երևան: Հարաւը՝ Կաղզուանն է որ կը բացուի Արաքսով Արարատեան դաշտին»³⁴⁵:

Թուրքական բանակի առաջխաղացմանը մեծապես նպաստեց նաև 1918թ. մարտի 3-ին (ն. տ.) Բրեստ-Լիտովսկում մի կողմից Ռուսաստանի, մյուս կողմից Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի և Օսմանյան Կայսրության միջև ստորագրված հաշտության պայմանագիրը: Վերջինիս 4-րդ հոդվածով ռուսական կողմը պարտավորվում էր անել այն ամենը, ինչ որ «իրենից կախված է, որպեսզի ապահովի իր զորքերի դուրս բերումը Արևելյան Անատոլիայի նահանգներից (Արևմտյան Հայաստանից-Հ.Ն.) և վերջիններիս կանոնավոր վերադարձը Թուրքիային: Ռուսական զորքերը պետք է անհապաղ դուրս բերվեն նաև

վերադարձնել Բաթումը (Pasternadian G. (Armen Garo), նշվ. աշխ., էջ 36): Ապրիլի 12-ին Ա. Չխենկելին և գեներալ Ի. Օրիշելիձեն հեռագրում են գեներալթ. Նազարբեկյանին. «Կարսի մարզը պետք է մարքվի մեր զորքերից մինչև Արփաչայ գետը, ընդ որում Ալեքսանդրապոլի ամրությունները պետք է ոչնչացվեն» (Տես *Из истории иностранной интервенции в Армению в 1918 году (Документы и материалы)*). Сост. X. А. Бадалян, Ред. А. О. Арутюнян, Ереван, Изд. Ер. Унив., 1970, с. 59-60):

³⁴⁵ Չաքարեան Յ. Կարս Պատմա-աշխարհագրական տեսութիւն. Երուսաղէմ, տպ. «Արրոց Յակոբեանց», 1946, էջ 20:

Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերից»: Պայմանագրի 7-րդ հոդվածով, որն ուղղված էր Մեծ Բրիտանիայի դեմ, կողմերը պարտավորվում էին հարգել Պարսկաստանի և Աֆղանստանի «քաղաքական ու տնտեսական անկախությունը և տերիտորիալ (տարածքային-Հ.Ն.) անձեռնմխելիությունը»³⁴⁶: Ինչպես Ու. Չերչիլն է արձանագրում. «Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը դարձավ ազդանշան՝ դեպի Արևելք թուրքական առաջխաղացման համար»³⁴⁷:

Արդեն 1918թ. մայիսի 13-ին, Բաթումի բանակցությունների ժամանակ, թուրքական կողմը հայկական պատվիրակությանն է ներկայացնում վերջնագիր՝ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին խաղաղ ճանապարհով իրենց հանձնելու մասին³⁴⁸: Այս քայլը թուրքերը պատճառաբանում են «անգլիական զորքերի՝ Պարսկաստանի վրայով դէպի Ջուլֆա առաջանալով և այդ թշնամի բանակի դէմ տաճկական զորամասեր ուղարկելու անհրաժեշտությամբ»³⁴⁹: Այն հանգամանքը, որ Ալեքսանդրապոլն ուներ ռազմավարական նշանակություն, իր հուշերում հաստատում է բրիտանական բանակի գնդապետ Ա. Ռոուլինսոնը՝ շեշտելով, որ Ալեքսանդրապոլը հանդիսանում էր Սարիղամիշ-Կարս և Երևան-Ջուլֆա ռազմավարական երկաթգծերի հանգույցը³⁵⁰: Ավելին, Ալեքսանդրապոլը հանդիսանում էր նաև Կարս-Թիֆլիս

³⁴⁶ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի և այդ պայմանագրի Լրացուցիչ պայմանագրի տեքստերը տես Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 422-433:

³⁴⁷ Churchill W. *The World Crisis. The Aftermath*, p. 406.

³⁴⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 10շրջ.-11:

³⁴⁹ «Հորիզոն», Թիֆլիս, 17 մայիսի 1918, N 91, էջ 1:

³⁵⁰ Rawlinson A. *Adventures in the Near East. 1918-1922*, New York, Dodd, Mead and Co., 1924, p. 150.

երկայթուղային հանգույցը, իսկ երկայթուղիները որպես մեծամասշտաբ խուսանավման հնարավորություն տվող և զորքերի մատակարարումն ապահովող համակարգ, հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, հանդիսանում էին որպես զործողությունների «առաջնակարգ նշանակության ռազմավարական օբյեկտ»³⁵¹:

Դեպի Պարսկաստան թուրքական ուժեր ուղարկելու հարցի հրատապությունը մեծապես պայմանավորված էր Միջագետքում և Պարսկաստանում մայիսի սկզբին բրիտանական ուժերի լուրջ հաջողություններով: Մասնավորապես, Բաղդադից հյուսիս-արևմուտք ընկած Կեֆրի բնակավայրում ամրացված և Իրաքում ու Պարսկաստանում գտնվող բրիտանական զորքերի միջև կապը խոչընդոտող թուրքական կայազորը 1918թ. մայիսի սկզբին ջախջախվում է՝ տալով շուրջ 5000 զերի³⁵²: Արդյունքում, բրիտանացիներն ապահովում են Բաղդադ-Ղազվին գիծը, ամրանում Կասրե - Շիրինում, Քերմանշահում ու Համադանում:

Գերմանական Գլխավոր շտաբի կողմից մշակված ռազմավարության համաձայն, Պարսկաստանում բրիտանական ուժերի առաջխաղացման կասեցման խնդիրը դրված էր թուրքական զորքերի վրա: Գներալ Է. Լյուդենդորֆն իր հուշերում գրում էր. «Էնվերի խնդիրը Անգլիայի դեմ պայքարն էր, և առաջին հերթին՝ Պաղեստինյան ռազմաճակատում... Հիմա հնարավորություն էր ստեղծվել նաև Հյուսիսային Պարսկաստանում հարված հասցնելու համար»³⁵³: Միաժամանակ, նախատեսվում էր բրիտանացիների դեմ ոտքի հանել Ատրպատականի թուրք բնակչությանը: Այս

ծրագրերն իրագործելու համար, թուրքական բանակի համար առանցքային էր Ալեքսանդրապոլ-Երևան-Նախիջևան-Ջուլֆա երկաթգծի նկատմամբ վերահսկողության սահմանումը և Թավրիզի գրավումն ու անգլիացիների առաջխաղացման կասեցումը:

Թուրքական բանակի համար ռազմավարական մյուս կարևորագույն խնդիրներն էին Ելիզավետպոլ-Բաքու երկաթգծի նկատմամբ վերահսկողության սահմանումը, Թիֆլիսի, Երևանի և, հատկապես, Բաքվի գրավումը: Մայիսին՝ Կարսում՝ թուրքական ուժերի վերախմբավորման արդյունքում, 2-րդ և 1-ին բանակային կորպուսներից կազմվում է «Կարս» բանակախումբը (հրամանատար, գեներալ Յ. Շեվքի), որի մեջ մտնող դիվիզիաները գործելու էին հետևյալ ուղղություններով.

5-րդ Կովկասյան հետևակային դիվիզիան Ղարախաջի լեռնանցքով-Վրոննոցովկա-Բոլնիս-Խաչեն երթուղով հարվածելու էր Թիֆլիսին՝ հարավից:

11-րդ Կովկասյան հետևակային դիվիզիան նպատակ ուներ Ալեքսանդրապոլ-Մեծ Ղարաքիլիսա գծով շարժվելով՝ գրավել Մեծ Ղարաքիլիսան, այնուհետև Դիլիջան-Քարվանսարա-Ղազախ գծով դուրս գալ Ելիզավետպոլ, իսկ այնտեղից՝ Ելիզավետպոլ-Բաքու երկաթգծով շարժվել դեպի Բաքու:

36-րդ Կովկասյան հետևակային դիվիզիան («Գեյրոլու») Ալեքսանդրապոլ-Երևան երկայնուղու երկայնքով շարժվելով՝ պետք է գրավեր Երևանը, ապա երկայնուղով շարժվեր Ջուլֆա և Թավրիզ:

9-րդ Կովկասյան հետևակային դիվիզիան Համամլու-Բաշ-Ապարան-Աշտարակ-Երևան գծով պետք է Երևանյան գորախմբին հարվածեր հյուսիս-արևելքից:

³⁵¹ Кюльман Ф. Стратегия. Пер. с фр., Москва, Воениздат, 1939, с. 66.

³⁵² «Հորիզոն», Թիֆլիս, 23 մայիսի 1918, N 96, էջ 1:

³⁵³ Людендорф. Мои воспоминания о войне 1914-1918 гг., Пер. с нем., том 2, Москва, Высший военный редакционный совет, 1924, с. 187.

Արաքսից հարավ՝ Սուրմալուի գծում, գործում էր թուրքական 4-րդ բանակային կորպուսը (5-րդ և 12-րդ հետևակային դիվիզիաները), որը նպատակ ուներ աջակցել Արարատյան դաշտում գործող թուրքական ուժերին:

Թուրքական զորքերը, խախտելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրով հաստատված սահմանագիծը և անցնելով Ախուրյան գետը, մայիսի 15-ին գրավում են Ալեքսանդրապոլը: Սակայն, Երևանն ու Էջմիածինը պաշտպանող Երևանյան զորաջոկատի շտաբի (ստեղծվել էր Հայկական բանակային կորպուսի 2-րդ հրաձգային դիվիզիայի հենքի վրա, հրամանատար, գեներալ-մայոր Մովսես Սիլիկյան, շտաբի պետ, փոխգնդապետ Ալեքսանդր Վեքիլով) կողմից մշակված փայլուն պլանի՝ համաձայն, հայկական ուժերը Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատներում անցնելով հակահարձակման, մայիսի 22-ից մայիսի 29-ը ընկած ժամանակահատվածում պարտության են մատնում այդ ուղղություններում գործող թուրքական դիվիզիաներին: Թուրքերի կորուստները կազմեցին մինչև 7000 զինվոր, որից 3500-ը միայն Սարդարապատում³⁵⁴: Հայկական ուժերը, որ ունեին շուրջ 6000 զինվոր, տվեցին մոտ 1500 զոհ³⁵⁵: Թվում էր թե հաղթանակը լիարժեք է: Գեներալ Մ. Սիլիկյանն անգամ ծրագրել էր շարժվել Ալեքսանդրապոլ: Դժբախտաբար, սակայն, Ղարաբլիխայի ճակատում գործող

³⁵⁴ Երևանյան զորաջոկատի շտաբի մայիսի 21-ի և մայիսի 25-ի պլան - հրամանները տես ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 43,թ. 8 - 10:

³⁵⁵ Աֆանասյան Ս. Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, մայիս 1918), Երևան, Իրավաբան. գրակ. հրատ., 1991, էջ 76: Թուրքյան Հ. Գ. Սարդարապատի հերոսամարտը, Երևան, «Հայաստան», 1965, էջ 138:

³⁵⁶ Kayaloff J. The Battle of Sardarabad, The Hague - Paris, Mouton and Co., 1973, p. 19. Ayyazyan A. A. Armenian Victories at Khzenavous and Sardarabad on May 23, 1918, New York, St. Vartan Press, 1985, p. 30.

հայկական 7 000-անոց զորախումբը (կորիզը կազմում էր 1-ին հրաձգային դիվիզիան՝ գնդապետ Ալեքսանդր Բեյ - Մամիկոնյանցի հրամանատարությամբ: Ռազմաճակատի ընդհանուր հրամանատարը Գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանն էր) պարտություն կրեց և մայիսի 28-ին քաղաքն ընկավ: Ճակատամարտի ելքի վրա մեծապես ազդեց այն հանգամանքը, որ Անդրանիկն իր Առանձին հարվածային զորամասով՝ ճակատամարտի ողջ ընթացքում մնաց Դսեղում և անհասկանալի պատճառներով այդպես էլ «հիախից, Դուայի լեռների կողմից»³⁵⁶ չհարվածեց թուրքական զորքերի թիկունքին:

Այնուամենայնիվ, Մայիսյան հերոսամարտերը, որոնք ինչպես Վ. Շամբարովն է ռազմական դիտանկյունից դիպուկ քննադատում. «ոչ թե իրարից անջատ տեղական կոիվներ էին, այլ միասնական ռազմագործողություն՝ բանակային մասշտաբով»³⁵⁷, ունեցան ինչպես պատմաքաղաքական նշանակություն հայ ժողովրդի համար, այնպես

³⁵⁶ Անդրանիկի զորամասն ուներ մինչև 3500 զինվոր (տես Թադևոսյան Ռ. Դրվագներ հայոց ռազմական պատմությունից (19 - 20-րդ դարեր), Երևան, Ջանգալ - 97, 2002, էջ 369): Ղարաբլիխայի ճակատամարտից հետո Անդրանիկն իր զորամասով Դիլիջանից շարժվում է Նոր Բայազետ-Ղարալագյազ-Ջուլֆա ուղղությամբ՝ նպատակ ունենալով Պարսկաստանով անցնել Միջագետք՝ այնտեղ գործող բրիտանական ուժերին միանալու համար: Սակայն հունիսի վերջին Սալմաստի ճանապարհին ճակատամարտ տալով թուրքական զորքերին՝ պարտություն է կրում և Ջուլֆայով վերադառնում է Նախիջևան (տես Քաջունի Ե. Հայկական առանձին հարրածող զորամասը. Ժեներալ Անդրանիկ, Պոսթոն, «Ազգ», 1921, էջ 32 - 58):

³⁵⁷ Ղազարյան Մ. Ղարաբլիխայի հերոսամարտը (ականատեսի լիշողութիւններից), Թիֆլիս, տպարան Վրաստ. Հանրապետութեան Քաղաք. Միութեան, 1920, էջ 21:

³⁵⁸ Шамбаров В. Е. За веру Царя и Отечество. Москва, «Алгоритм», 2003.

էլ ռազմավարական կարևորագույն նշանակություն Այսրկովկասյան ողջ տարածաշրջանի համար: Բանն այն է, որ ի սկզբանէ գերմանա-թուրքական կողմը նախատեսել էր Այսրկովկասի գրավման դեպքում ստեղծել երկու վարչա-քաղաքական միավոր. Թիֆլիսի նահանգի տարածքն ընդգրկող վրացական անկախ պետություն և Կարսի, Երևանի, Ելիզավետպոլի ու Բաքվի նահանգներն ընդգրկող թուրք-թաթարական անկախ պետություն՝ վերջինիս կազմում հայկական կանտոնով³⁵⁸: Սակայն, Մայիսյան հերոսամարտերի շնորհիվ, վրացական ու թաթարական (ադրբեջանական) անկախ պետությունների հետ մեկտեղ Այսրկովկասում ստեղծվեց նաև հայկական անկախ պետություն: Անդրկովկասյան Սեյմի լուծարման արդյունքում 1918թ. մայիսի 26-ին Թիֆլիսում հռչակվեց Վրաստանի անկախությունը³⁵⁹: Մայիսի 27-ին Թիֆլիսում Անդրկովկասի Մուսուլմանների Ազգային խորհրդի կողմից ընդունված և հաջորդ օրը պաշտոնապես հրապարակված որոշմամբ՝ հռչակվում էր Ադրբեջանի Հանրապետությունը, որն իր սահմանների մեջ ընդգրկելու էր Այսրկովկասի արևելյան և հարավային մասերը: Մինչև Բաքվի նկատմամբ վերահսկողության սահմանումը՝ նորաստեղծ հանրապետության մայրաքաղաք է հռչակվում Գյանջան (ցարական Ելիզավետպոլը, հայկական պատմական Գանձակը)³⁶⁰: Արդեն մայիսի 28-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի կողմից ընդունվում և մայիսի 30-ին

հրապարակվում է որոշում՝ Հայաստանի Հանրապետության հռչակման մասին³⁶¹:

Հայկական անկախ պետության ստեղծումը, ինչի անհրաժեշտության մասին նշում էր Մարկ Սայքսը, առանցքային նշանակություն ուներ Մեծ Բրիտանիայի այսրկովկասյան ռազմավարության մեջ: Եթե Այսրկովկասյան տարածաշրջանում Գերմանիայի քաղաքական հենարանը հանդիսանում էր Վրաստանը, իսկ Օսմանյան Կայսրության համար՝ Ադրբեջանը, ապա Մեծ Բրիտանիայի պարագայում այդպիսի հենարան կարող էր հանդիսանալ միայն Հայաստանը: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ 1918թ. հուլիսի 11-ին բրիտանական պառլամենտում արտաքին գործերի քարտուղար Արթուր Բալֆուրը հայտարարում է. «Նորին Մեծութեան կառավարութիւնը կը հետևի ամենախոր համակրանքով ու հիացմունքով այն քաջարի դիմադրութեան, որ հայերը կը ցուցնեն պաշտպանելով իրենց ազատութիւնն ու պատիւը: Եվ նա (անզլ. կառավարութիւնը) կընէ իր կարելին անոնց օգնելու համար»³⁶²:

Մայիսյան հերոսամարտերի ռազմավարական կարևորագույն նշանակությունը կայանում էր նրանում, որ ոչ միայն փրկվեց Վրաստանի մայրաքաղաքը, քանի որ դեպի Թիֆլիս շարժվող թուրքական 5-րդ Կովկասյան դիվիզիան կես ճանապարհից ստիպված էր փոխել իր ուղղությունը և հասնել օգնության Ղարաքիլիսայի ճակատում հյուծված 11-րդ Կովկասյան հետևակային դիվիզիային, այլև Հայկական

³⁵⁸ Georgia and the War, Zurich, The Orient Publishing Co., 1916, p. 47.

³⁵⁹ Վրաստանի անկախության հռչակագիրը տես *Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии*, с. 336-338.

³⁶⁰ Hovhannesian R. G. *The Republic of Armenia. Vol.1*, Berkeley-Los Angeles-London, University of California Press, 1971, p. 31.

³⁶¹ Հայաստանի անկախության մասին հայտարարության տեքստը տես ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 145, թ. 1 կամ «Շորիզոն», Թիֆլիս, 31 մայիսի 1918, N 103, էջ 1:

³⁶² Վարանդեան Մ. Ռամզել Մակրոնալդե եւ կովկասեան խնդիրները, «Հայրենիք», Պոսթըն, հոկտեմբեր 1929, թիւ 12, էջ 113:

առանձին բանակային կորպուսն իր վրա գամելով թուրքական երեք բանակային կորպուսների ուժերը, կոտրեց թուրքական ուժերի հարձակման թափը դեպի Արևելք՝ Թավրիզ (թուրքերն այն գրավեցին միայն հունիսի 14-ին), Բաքու և Հյուսիսային Կովկաս³⁶⁵:

Այդպիսով, դեպի Բաքու շարժվող թուրքական բանակը, երզնկայից մինչև Սարղարապատ հասնելով, հյուժվեց և, փաստացի, դադարեց մարտունակ ուժ լինելուց: Ինչպես իր հուշերում ֆելդմարշալ Պ. Ֆոն Հինդենբուրգն է գրում, Հայաստանի դեմ ավերիչ պատերազմի հետևանքներից մեկը «թուրքական զորքերի զանգվածային ոչնչացումն էր հյուժումից՝ Կովկասյան լեռներում»:³⁶³ Լորդ Ռ. Սեսիլը արտաքին գործերի քարտուղար Ա. Բալֆուրին և լորդ Զ. Բրայսին ուղղված նամակներում շեշտում էր, որ ռուսական զորքերի հեռանալուց հետո հայկական ազգային զորամասերը ստանձնելով Կովկասյան ռազմաճակատի պաշտպանությունը՝ «Հինգ ամսով (փետրվար-հունիս-Հ.Ն.) ուշացրին թուրքերի առաջխաղացումը՝ այդպիսով ուշագրավ ծառայություն մատուցելով բրիտանական բանակին Միջագետքում»³⁶⁴:

Բաթումի բանակցությունների ժամանակ Վեհիբ փաշան նշում է. «Դուք հայերը պահանջելով Նախիջևանը և Զանգեզուրը, փակում եք մեր ճանապարհը դեպի Պարսկաս-

տան: Դուք խանգարում եք մեզ իջնել դեպի Բաքու տանող Քուրի հովիտը, Կարսը և Ախալքալաքը փակում են մեր ճանապարհը դեպի Ղազախ ու Գյանջա: Հայերը պետք է մի կողմ քաշվեն և թուրքերի առաջ բաց անեն Արևելքի դարպասները, այն է Անդրկովկասը, Դաղստանը և Միջին Ասիան»³⁶⁵: Հետևաբար, թուրքական կողմի ճնշման տակ, 1918թ. հունիսի 4-ի Բաթումի Հաշտության և բարեկամության մասին հայ-թուրքական պայմանագրի 11-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի «անմիջապես» դուրս բերեր բոլոր հայկական զինված ուժերը Բաքու քաղաքից³⁶⁶: Արդեն այդ պայմանագրին կից լրացուցիչ պայմանագրի 3-րդ հոդվածով Հայաստանի կառավարությունն իր համաձայնությունն է տալիս, որպեսզի թուրքական կողմը Հայաստանի ճանապարհներով և Ալեքսանդրապոլ-Երևան-Ջուլֆա երկաթուղով իրականացնի ռազմական փոխադրումներ (զորք, զինամթերք) դեպի հյուսիսային Պարսկաստան և Բաքու³⁶⁷:

Օսմանյան Թուրքիայի և Վրաստանի միջև ստորագրված նմանատիպ լրացուցիչ պայմանագրի 3-րդ հոդվածով վրացական կողմը «համաձայնություն է տալիս, որ իր գլխատր ռազմագիտական երկաթուղագծերով Տաճկաս-

³⁶³ Դեռևս 1918թ. մայիսի 11-ին հռչակվել էր այսպես կոչված «Հյուսիսային Կովկասի լեռնականների միություն» անվամբ անկախ պետություն, որը ճանաչվել էր դե յուրե Օսմանյան Կայսրության և դե ֆակտո՝ Գերմանիայի կողմից: Տես ՀԱԱ, ֆ. 412, գ. 1, գ. 2356, թ. 2:

³⁶⁴ Воспоминания Гинденбурга. Пер. с нем., Петроград, «Мысль», 1922, стр. 32.

³⁶⁵ ՀԱԱ, ֆ. 430, գ. 1, գ. 1043, թ. 2: Leese L. C. Armenia and the Allies, London, The British Armenian Committee, 1920, p. 9.

³⁶⁵ Бадальян Х. А. Турецко-германская экспансия в Закавказье (1914–1918 гг.). Ереван, «Айастан», 1980, с. 63.

³⁶⁶ Բաթումի պայմանագրի տեքստը տես Հայաստանի Հանրապետությունը 1918–1920թթ. (Քաղաքական պատմություն). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազարյան (ղեկավար), Վ. Մելիքյան, Ս. Միրզոյան, Ա. Վիրաբյան, Երևան, «Գիտություն», 2000, էջ 36–40:

³⁶⁷ Բաթումի պայմանագրին կից Լրացուցիչ պայմանագրի տեքստը տես ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 23, թ. 129–130 և շրջ.:

տանը (Օսմանյան Կայսրությունը-Հ.Ն.) ամէն կարգի ուզման կողմէն փոխադրութիւններ կատարէ», իսկ 4-րդ հոդովաձով թուրքական կողմը իրավունք է ստանում «յօդ. 3-ում վերապահուած իրավունքները իր դաշնակիցների (Գերմանիայի-Հ.Ն.) քանակներին վերապահելու»³⁶⁸: Բաթումի պայմանագրի կնքման հետ միաժամանակ, Օսմանյան Կայսրության, Վրաստանի և Ադրբեջանի կառավարությունների միջև ստորագրվում է համաձայնագիր՝ «Բաքու-Բաթում նավթատարի անխափան գործունեության ապահովման վերաբերյալ»³⁶⁹:

1918թ. Բաքվի նավթի կարիքն ամենից շատ ուներ Օսմանյան Կայսրության դաշնակից Գերմանիան, որը գրեթէ սպառել էր դիզելային շարժիչով աշխատող սուզանավերի և Արևմտյան ռազմաճակատում՝ իր ցամաքային բանակի վա-

³⁶⁸ Լազբան Գ. Հայաստան և Հայ դատը. ըստ դաշնագրերու, էջ 107-108:

³⁶⁹ *Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии*, с. 364.

* 1918թ. մարտին Գերմանիան, ի հաշիվ Արևելյան ռազմաճակատից տեղափոխված դիվիզիաների, Արևմտյան ռազմաճակատում կենտրոնացնելով շուրջ 194 դիվիզիա՝ անցնում է հարձակման ողջ ճակատում: Պայմանավորված Ռուսաստանի պատերազմից դուրս գալով, Խոսապան քանակի ջախջախմամբ ու Ավստրո-Հունգարիայի դիրքերի ամրապնդմամբ, Սալոնիկի ռազմաճակատում Բուլղարիայի դիրքերի ամրապնդմամբ, ըստ գեներալ Է. Լյուդենդորֆի. «Ուժերի հարաբերակցությունն քարեխաչատ էր, քան երբևէ» (Меликов В. А. Стратегическое развертывание. Том 1, Москва-Ленинград, Воениздат, 1939, с. 357): Հասկապես, Ռուսաստանի պատերազմից դուրս գալը, ըստ Է. Լյուդենդորֆի, ստեղծել էր հնարավորություն «պատերազմը հաղթականորեն ավարտելու համար» (Генерал Луазо. Германская стратегия в 1918 году. Пер с фр., Москва, Воениздат, 1936, с. 13): Գերմանական Գլխավոր շտաբի ռազմավարությունը նախատեսել էր մինչև ամերիկյան քանակի հիմնական ուժերի Ֆրանսիա ժամանելը (1918թ. ամռանը) հակառակորդին հասցնել վճռական հարված՝ «ավելի վաղ, քան կսպառվեն իր բոլոր ուժերը» (Вольге А. Фронтальный удар, Москва, Воениздат, 1931, с. 11):

ռեյիքի պաշարները: Այսպիսի պայմաններում Գերմանիային այլևս չէր կարող բավարարել միակ հասանելի ռումինական* նավթը, որի պաշարները նույնպես սպառվում էին: Գերմանիան անգամ փորձեց Մեքսիկային իր կողմից ներքաշել պատերազմի մեջ՝ դրանով իսկ ստանալ մեքսիկական նավթի հարուստ պաշարները, սակայն այդ ծրագիրը՝ նույնպես չստացվեց: Հետևաբար, ինչպես գեներալ Է. Լյուդենդորֆն էր իր հուշերում շեշտում. «Գերմանական Արևմտյան բանակին անհրաժեշտ վառելիքի պաշարները կարող էր ծածկվել միայն Անդրկովկասի, մասնավորապես Բաքվի նավթի հաշվին, ինչն անհրաժեշտ էր պատերազմը շարունակելու համար»:³⁷⁰ Ուստի նավթային պաշարներից զուրկ Գերմանիայի համար ռազմավարական խնդիր է դառնում Բաքվի նավթին տիրելը: Ելնելով ստեղծված իրավիճակից, փաստորոն, գեներալ Է. Լյուդենդորֆը խաղաղույթ էր կատարում «Մեծ հանույթի» վրա, որը կապահովեր

* Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ռումինիան հանդիսանում էր Ռուսաստանից հետո եվրոպայում երկրորդ խոշոր նավթարդյունահանող երկիրը: Սակայն 1916թ. նոյեմբերին, երբ գերմանական զորքերը գրավեցին Ռումինիան, վերջինիս կառավարության համաձայնությամբ բրիտանական դիվերսիոն ջոկատները ոչնչացրին ռումինական նավթարդյունաբերական ենթակառուցվածքներն ու արդյունահանված նավթի պաշարները: Տես *Ерзов Л.*, նշվ. աշխ., էջ 198:

* Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին համաշխարհային նավթարդյունաբերության շուրջ 7 տոկոսն ապահովող Մեքսիկային ԱՄՆ-ի դեմ պատերազմի մեջ ներքաշելու Գերմանիայի փորձերը մեծապես պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդպիսով Անտանտը կզրկվեր նավթի մատակարարման կարևորագույն աղբյուրներից մեկից, միաժամանակ, Գերմանիան կկարողանար մեքսիկական նավթն օգտագործել սեփական կարիքների համար: Տես *Фурсенко А. А. Нефтяные тресты и мировая политика*, с. 435:

³⁷⁰ *Людендорф Э.*, նշվ. աշխ., էջ 220:

Պերմանիայի հսկայական ու անընդհատ աճող նավթի պահանջարկը և կփոխեր պատերազմի ելքը:³⁷¹

Բաքվին տիրելով՝ գերմանացիները, միաժամանակ, լուծելու էին ռազմավարական մեկ այլ կարևորագույն խնդիր. բրիտանացիները գրավելով Բաղդադը՝ փակել էին գերմանացիների ճանապարհը ներթափանցելու Ասիայի խորքերը Բեռլին-Բաղդադ երկաթուղու միջոցով, ուստի «Drang Nach Osten»-ի համար բացառիկ նշանակություն էր ստացել Բեռլին-Բաքու-Բուխարա աշխարհառազմավարական առանցքը:³⁷² Ցարական բանակի հայազգի նշանավոր գեներալ Գավրիլ Ղորղանյանն, իր հուշերում ընդգծում էր, որ գերմանացիների համար «Բացի նավթի պաշարները լրացնելուց, Բաքվի նկատմամբ վերահսկողության սահմանումը, ճանապարհ էր բացում Կասպից ծովով դեպի Պարսկաստան, Անդրկասպյան մարզ և Թուրքեստան, որտեղից հնարավոր կլիներ խոռվություն բարձրացնել Աֆղանստանում և այդ կերպ սպառնալ բրիտանական տիրապետությանը Հնդկաստանում»:³⁷³ Սա կարող էր իրականություն դառնալ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տասնյակ հազարաորդերմանացի ու ավստրո-հունգարացի ռազմագերիներ գտնվում էին հենց Թուրքեստանում, ովքեր անմիջապես կմիանային արևելք շարժվող գերմանական բանակին:

Հետևաբար, վերը նշված բոլոր ծրագրերը իրականացնելու համար, 1918թ. ամռանը գերմանա-թուրքական հրամանատարության գլխավոր խնդիրներից մեկը դառնում է Բաքվի գրավումը: Վերջինս, ինչպես Ադրբեջանի վարչա-

³⁷¹ Ерсин Д. Добыча., նշվ. աշխ., էջ 199:

³⁷² Dunsterville L. C. The Adventures of Dunsterforce, London, Edward Arnold, 1920, p. 1.

³⁷³ Корсаков Г. Г. Участие армии в Мировой войне на Кавказском фронте (1914-1918). Пер. с фр., Москва, МАКС Пресс, 2011, с. 153.

պետ Ֆաթայի Խան-խոյսկին էր նշում, համարվում էր «թյուրքական աշխարհի երկրորդ Ստամբուլը»:³⁷⁴

Թուրքերի կողմից Բաքվի գրավման առաջին փորձը եղավ դեռևս 1918թ. մարտի 18-ից - 20-ը ընկած ժամանակահատվածում, երբ Արևմտյան ռազմաճակատից Բաքու վերադարձած և խոռվություն բարձրացրած թաթարական «Վայրի դիվիզիայի» և տեղի մահմեդականներից կազմված զինված խմբերի ուժերը փորձեցին վերահսկողության տակ վերցնել քաղաքը: Սակայն Բաքվի բանվորների, գյուղացիների և զինվորների խորհրդի և Բաքվի հայոց ազգային խորհրդի ենթակայության տակ գտնվող հայկական ուժերի՝ կողմից կասեցվում է նրանց ծրագիրը: Մարտի 21-ին թուրք-թաթարական կողմը դիմում է Բաքվի կոմունայի իշխանությանը՝ խաղաղություն կայացնելու համար: Առաջարկն ընդունած Կոմունայի ղեկավար Ստեփան Շահումյանը, սակայն, չի բռնազրավում թաթարների մոտ առկա գեներ-

³⁷⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 159:

* 1918թ. գարնանը Բաքվում էին հավաքվել և քաղաքի պաշտպանության գործին էին լծվել Արևելաեվրոպական ռազմաճակատից տուն վերադարձած ցարական բանակի ավելի քան 10 000 հայ զինվորներ և սպաներ (Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 70): 1918թ. մայիսին Բաքվի Հայոց Ազգային խորհրդի առաջարկով հայկական ազգային զորամասերն ու Բաքվի կոմունայի (ժողովրդական կոմիսարների խորհուրդ) զինված ուժերը (ռազմածովային կոմիսար Գ. Ն. Կորգանովի հրամանատարությամբ գործող Կովկասյան Կարմիր բանակը) միավորվում են միասնական բանակի մեջ: Վերջինիս անմիջական ընդհանուր հրամանատար է նշանակվում զնդապետ Իվան Ղազարյանը, շտաբի պետ՝ գեղայկոտ Ալեքսանդր Ավետիսյանը (Տես Մելիք-Շուջեան. Ա. Բազուի հերոսամարտը, «Հայրենիք» ամսագիր, Բոսթըն, լույսի 1925, թիւ 8, էջ 112):

զինամթերքը³⁷⁵: Այս հանգամանքը հետագայում ծանր հետևանքներ է ունենում:

1918թ. հունիսին Ելիզավետպոլ մտնելով՝ թուրքական զորքերը պատրաստվում են արշավել դեպի Բաքու: Թուրքական ուժերը վերախմբավորելու համար հունիսին գեներալ Նուրի փաշան (Էնվերի խորթ եղբայրը) ժամանում է Ելիզավետպոլ՝ 300 թուրք հրահանգիչ սպաներով³⁷⁶: Շուտով Մուսուլմանական կորպուսի (հունիսի 26-ից՝ Առանձին Ադրբեջանական կորպուս: Ստեղծվել էր «Վայրի դիվիզիայի» հենքի վրա: Հրամանատար, գեներալ Ալի-Աղա Շիխլինսկի) և թուրքական 5-րդ ու 15-րդ դիվիզիաների միավորմամբ ձևավորվում է այսպես կոչված «Կովկասյան իսլամական բանակը» (հրամանատար գեներալ Նուրի փաշա), որի թիվը հասնում էր մինչև 16 - 18 000-ի³⁷⁷: Միաժամանակ, հունիսին Բաթում է ժամանում Էնվեր փաշան և իրականացնում Կովկասյան ռազմաճակատում գտնվող թուրքական ամբողջական ուժերի վերախմբավորում: Այլ ռազմաճակատներից Կովկասյան ռազմաճակատ են տեղափոխվում 7 նոր դիվիզիաներ (միասին մինչև 10 000 զինվոր ու սպա):³⁷⁸ Այս դիվիզիաների և հյուժված 2-րդ ու 3-րդ բանակների մնացորդների վերախմբավորմամբ ստեղծվում է թուրքական նոր՝ 9-րդ բանակը (հրամանատար Յաղուբ Շևրի փաշա) և առանձին

³⁷⁵ Մելիք-Եոյջեան. Ա. Բազուի հերոսամարտը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթրև, մայիս 1925, թիւ 7, էջ 119-124:

³⁷⁶ Կնյազյան Դ. Վ. 1918-1920թթ. Ադրբեջանական Հանրապետության զինված ուժերը և նրանց

խնդիրները ըստ ադրբեջանական աղբյուրների. «Հայկական բանակ», ՀՀ ՊՆ Դ. Կանայանի ակվ. ԱՄՀԻ, Երևան, 2006. N 4, էջ 76:

³⁷⁷ Allen W. E. D., Muratoff P. Caucasian Battlefields. A History of the Wars on the Turco-Caucasian border. 1828-1921. Nashville, The Battery Press; 1999, p. 479.

³⁷⁸ Լյուսյեւիտ Է. Փ., նշվ. աշխ., էջ 214:

6-րդ բանակային կորպուսը: Նորաստեղծ 9-րդ բանակը, 6-րդ բանակային կորպուսը և «Կովկասյան իսլամական բանակը» միասին կազմում են «Արևելք» բանակախումբը (հրամանատար Վեհիբ փաշա, ավելի ուշ՝ Խայիլ փաշա), որն իր կազմում ուներ 28 000 զինվոր ու սպա³⁷⁹ և որի ռազմավարական գլխավոր խնդիրը Բաքվի գրավումն էր:

Միաժամանակ, հունիսին Կրաստանում էին գտնվում տարբեր տվյալներով 4000-ից մինչև 5000 զերմանացի զինվոր ու սպա³⁸⁰: Մասնավորապես, Գերմանական 217-րդ հետևակային դիվիզիան և 58-րդ Բեռլինյան գունդը չէր կարելի չդիտել որպես թուրքական կողմի պոտենցիալ թիկունք և օգնություն:³⁸¹

Ակզբնապես, սակայն, Գերմանիան հույս ուներ Բաքվի նավթը՝ ստանալ հորհրդային Ռուսաստանի կառավարության հետ համաձայնության գալու ճանապարհով: Ելնելով արանից՝ հունիսի 9-ին ֆեյդմարշալ Պ. ֆոն Հինդենբուրգը Էնվեր փաշային ուղղված հեռագրում նշում է. «Պատերազմի ընդհանուր կացությանը թող չի տար, որ դաշնակից պետությունները այսինքն՝ Գերմանիա, Աստորիա, Թուրքիա, Պուկարիա նոր թշնամիներ ստեղծեն կովկասեան պետություններում մէջ... Ես կը խնդրեմ ձերդ վստմութենէն՝ կարգադրել որ՝ 1. Թուրքական բոլոր զորամասերը ետ կանչուին Կովկասէն, բացառութեամբ Կարսի, Արտահանի եւ Պաթումի

³⁷⁹ Նոյն տեղում, էջ 216:

³⁸⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7. թ. 14: Լյուսյեւիտ Է. Փ., նշվ. աշխ., էջ 252:

³⁸¹ Հարությունյան Ա. Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կոիվները, Երևան, ԳԱ հրատ., 1984, էջ 212:

* 1918թ. հունիսի 1-ին Բաքվի ժողովմտորդը ընդունում է դեկրետ նավթային ձեռնարկությունների ազգայնացման մասին (Տես ՀԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 238, թ. 1-6): Այս քայլով, փաստորեն, Բաքվի նավթային պաշարները հայտնվում էին Բաքվի կոմունայի վերահսկողության տակ:

չրջաններուն: 2. Թուրքական մնացեալ զօրամասերը ամէն ալ ուղղուին անգլիացիներուն դէմ Միջագետքի և Հիւսիսային Պարսկաստանի մէջ»³⁸²:

Սակայն Բաքուն պաշտպանող ուժերի կորիզը կազմող հայ զինվորականությունը ամենևին էլ մտադիր չէին գերմանա-թուրքական կողմին հանձնել քաղաքը: Արդյունքում, հունիսի կեսերին Բաքվի ուժերը (Կովկասյան Կարմիր բանակը), Ելիզավետպոլի ուղղությամբ անցնելով հարձակման, սկիզբ են դնում ռազմական ակտիվ գործողություններին: Անցնելով Բաքու-Ելիզավետպոլ գծի երկու երրորդը և ծանր հարված հասցնելով Կովկասյան Իսլամական բանակին, Բաքվի ուժերը հունիսի 27-ին մտնում են Գյոքչայի հայկական թաղամաս: Թվում էր ճանապարհը դեպի Ելիզավետպոլ բացված էր: Սակայն շուտով ստացվեց Ի. Ստալինի նամակը (Վ. Լենինի անունից) Ստ. Շահումյանին. «Ձեր յաջողություններն ուրախացնում են մեզ, բայց մենք կը կամենայինք, որ գերմանացիների հետ բարդություններ ունենալուց խուսափելու համար, դուք Գանձակից անելի հեռու չգնայիք: Չմտնէք Վրաստան, որի անկախութիւնը ճանաչել են գերմանացիք»³⁸³: Եվ ահա, զարմանալի զուգահեռությամբ, սրան հետևեց Բաքվի ուժերի նահանջը ու թուրքական հակահարձակումը:

Բաքվի վրա թուրքական ուժերի հարձակումը նախա-

³⁸² Վեմեան Վ., նշվ. աշխ., էջ 51 - 52: Պ. Ֆոն Հինդենբուրգի հեռագիրը տես նաև՝ Լեւիսիուս Յ. Գերմանիան և Հայաստանը 1914 - 1918. Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. Թարգմ. գերմ., Երևան, «Լաբի Փրինտ», 2006, էջ 42:

³⁸³ Ասատրյան Հ. Հայաստան - Արիական նախադիրը Առաջավոր Ասիայում. Երևան, Ա. հ., 2000, էջ 106-107: Նամակի մասին տես նաև Հալաչյուրի Գ. Պ. Социальные потрясения в судьбах народов (на примере Армении), Москва, ИНТЕЛЕКТ, 1997, с. 135.

տեսվում էր իրականացնել, միաժամանակ, Ելիզավետպոլ-Բաքու և Թավրիզ-Բաքու ուղղություններով: Սակայն Պարսկաստանի հյուսիսում բրիտանական ուժերի ներկայությունը, անհնարին դարձրեց Բաքվին հարավից՝ Թավրիզից, թուրքական ուժերի կողմից հարված հասցնելու հնարավորությունը: Հետևաբար, ռազմական գործողությունները հիմնականում ընթացան Ելիզավետպոլ-Բաքու երկաթգծի ուղղությամբ: Էնվեր փաշան, սակայն, Բաքվի գրավման ռազմագործողությունն առանց գերմանական Գլխավոր շտաբի էր պլանավորել³⁸⁴:

1918թ. հուլիսի սկզբին Պարսկաստանի Էնզելի նավահանգստից Բաքու է ժամանում և քաղաքի ուժերը համալրում նախկին ցարական բանակի գնդապետ Լազար Բիչերախովի կոզակական զորաջոկատը (1500 զինվոր): Լ. Բիչերախովը դեռևս Պարսկաստանում համաձայնության էր եկել բրիտանացի գեներալ Լ. Դանստերվիլի հետ և իր զորախումբով ենթարկվում էր բրիտանական հրամանատարությանը: Այս հանգամանքով պայմանավորված, Լ. Բիչերախովի զորաջոկատը Բաքվում ընկալվում էր որպես «բրիտանական առաջապահ»³⁸⁵: Չորաջոկատը, Բաքվի ժողովմխորհի հետ կնքած համաձայնագրով, թեև գտնվում էր ռազմածովային գործերի կոմիսարի ենթակայության տակ, սակայն «օպերատիվ տեսակետից զորաջոկատը վայելում էր ինքնուրույնություն»³⁸⁶: Ավելին, շուտով Լ. Բիչերախովը ստանձնում է

³⁸⁴ Հարությունյան Ա. Առաջին համաշխարհային պատերազմի ռազմա-դիվանագիտական պատմությունից, էջ 335:

³⁸⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 7:

³⁸⁶ Միկոյան Ա. Ի. Պայքարի ուղիով. Գիրք առաջին, Երևան, «Հայաստան», 1972, էջ 186

Բաքվի ուժերի ընդհանուր հրամանատարությունը³⁸⁷: Հուլիսի 30-ին, սակայն, անսպասելիորեն Լ. Բիչերախտվը իր զորաջոկատով հեռանում է Բաքվից՝ շարժվելով դեպի Դերբենդ, որը նա գրավում է օգոստոսի 12-ին³⁸⁸:

Հուլիսի վերջին Բաքուն պաշտպանող ուժերի միջև լուրջ տարածայնություններ են սկսվում՝ պայմանավորված էլզեվիում՝ գտնվող բրիտանական ուժերի՝ Բաքու հրավիրելու և քաղաքի պաշտպանությանը նրանց մասնակից դարձնելու հարցով: Հատկանշական է, որ բրիտանացիներին Բաքու հրավիրելու նախաձեռնությունը, փաստացի, գալիս էր Բաքվի Հայոց ազգային խորհրդից³⁸⁹: Բրիտանացիների հետ բանակցությունները սկսվում են անմիջապես Մարտյան դեպքերից հետո: Մայիսին Հայոց ազգային խորհրդի կողմից Պարսկաստան է գործուղվում Ս. Տեր-Ղազարյանը, ով

³⁸⁷ Մելիք-Եօցեան, Ս. Բազուի հերոսամարտը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, լունիս 1925, թիւ 8 (32), էջ 115:

³⁸⁸ Кабушев А. Б. Интервенция и Гражданская война в Закавказье, Москва, Воениздат, 1960, с. 127, 142.

³⁸⁹ Այդ ժամանակ արդեն բրիտանացիների ձեռքում էր գտնվում Պարսկաստանի հարավից դեպի հյուսիսային էլզեվի նավահանգիստը ձգվող Բաղդադ-Քեռնանշահ-Համարան-Կաղզվին-էլզեվի և Սպահան-Կաղզվին-էլզեվի ուղիով հաղթողական ճանապարհները (Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 127շրջ.): Միաժամանակ, բրիտանական մի ուղիով հաղթողական գեներալ Ուիլֆրիդ Մալլետնի հրամանատարությամբ ուղարկվում է Կասպից ծովի արևելյան ափ՝ խնդիր ունենալով կապեր հաստատելու Անդրկասպյան մարզում իշխանությունն իրենց ձեռքը վերցրած սոցիալ-հեղափոխականների (եսեռների) հետ և, այդպիսով, հսկողության տակ վերցնել Կրասնովոդսկ նավահանգստային քաղաքից սկիզբ առնող ու ուղիով հաղթողական կարևորագույն նշանակություն ունեցող Անդրկասպյան երկաթուղին: Գեներալ Ու. Մալլետնի առաքելության մասին մանրամասն տես Bailey F. M. Mission to Tashkent, London, Jonathan Cape, Thirty Bedford Square, 1946.

³⁸⁹ ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 602, թ. 1:

Ղազվինում հանդիպում է ունենում գեներալ Լ. Դանստերվիլի հետ: Բրիտանական կողմը խոստանում է մինչև հուլիսի վերջերը Բաքու ուղարկել մեկ դիվիզիա: Արդեն հունիսի սկզբին Բաքվի Հայոց ազգային խորհրդի կողմից բանակցելու են մեկնում Մ. Տեր-Պողոսյանը և Ա. Արարատյանը³⁹⁰:

Բնականաբար, այդ հարցում ընդդիմացող ուժը՝ Բաքվի կոմունան էր: Ստ. Շահումյանը, դեռևս մայիսին նշում էր, որ չի կարող խոսք գնալ Խորհրդային իշխանությունների և Բրիտանական Կայսրության միջև «կամավոր դաշինքի» մասին³⁹¹: 1918թ. հուլիսի 25-ին Բաքվի խորհրդի նիստում, չնայած բուլշևիկների դիմադրությանը, ընդունվում է բանաձև՝ բրիտանական զորքերին Բաքու հրավիրելու մասին³⁹²:

Արդեն հուլիսի 29-ի գիշերը գումարված Բաքվի բանվորական խորհրդի նիստում բուլշևիկներն «առաջարկեցին քաղաքը յանձնել տաճիկներին եւ յուլիսի 30-ին հեռացան»³⁹³: Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհրդի հրաժարականի արդյունքում հուլիսի 31-ին քաղաքում ձևավորվում է նոր կառավարություն՝ կազմված սոցիալ-դեմոկրատների (մենշևիկների), սոցիալ-հեղափոխականների (եսեռների) ու դաշնակցականների կողմից ստեղծված «ժամանակավոր գործադիր կոմիտեի նախագահությունից» և Կասպյան ուղիով հաղթողական նավատորմի վերընտրված կենտրոնական կոմիտեի կազմից նշանակված հինգ դիկտատոր-

³⁹⁰ Ավետիսյան Հ. Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, Բարձրագույն դպրոց, 1997, էջ 305:

³⁹¹ ՀԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 234, թ. 4:

³⁹² Барсегян Х. А. Степан Шаумян. Документальная летопись жизни и деятельности, Ереван, «Айастан», 1973, с. 261.

³⁹³ Ասատրյան Հ., նշվ. աշխ., էջ 107:

ներից («Յենտրոկասսյան դիկտատորայից»)՝³⁹⁴: Նոր կառավարության կազմում ռազմածովային կոմիսարի պաշտոնում նշանակվում է ցարական բանակի նշանավոր գեներալ Հակոբ Բագրատունին:

Գեներալ Լ. Դանստերվիլի հրամանատարությամբ գործող Բրիտանական ռազմական առաքելության (*Dunsterforce*) մի մասը (40 սպաներ), Պարսկաստանում բրիտանական նախկին ռազմական կցորդ և Լ. Դանստերվիլի առաքելության հետախուզության ղեկավար, գնդապետ Ստոքսի գլխավորությամբ, Էնգելիից Բաքու է ժամանում օգոստոսի 4-ին: Օգոստոսի 7-ին Բաքու է ժամանում առաքելության ևս 600, իսկ օգոստոսի 13-ին՝ 1000 անդամ: Այդպիսով, առաքելությունն, ընդհանուր առմամբ կազմված էր 1640 հոգուց, «որից 900 զենք բռնող էր, մնացածը ոչ պատերազմող»³⁹⁵: Գեներալ Լ. Դանստերվիլը Բաքու է ժամանում օգոստոսի 17-ին: Բրիտանական առաքելությունը իր հետ բերել էր ընդամենը 16 թնդանոթ³⁹⁶ և մի քանի սավառնակ:

Դեռևս օգոստոսի 6-ին Էնգելիում գեներալ Լ. Դանստերվիլը հրապարակել էր հայտարարություն, որտեղ մասնավորապես սպվում էր.

1. Բրիտանական կառավարությունը Բաքվում չի հետապնդում ոչ մի անձնական նպատակներ, բացի Դաշնակիցների ընդհանուր շահերից՝ կապված գերմանա-թուրքական զորքերի դեմ ընդհանուր պայքարից:

2. Բրիտանական զորքերի կազմից ոչ-որ մասնակ-

³⁹⁴ Ղարաջյան Գ. (Ս. Տ. Արկունեղ). Անդրկովկասի քաղաքական կեանքը 1918 թվին, Թիֆլիս, «Մատինեան», 1919, էջ 64 - 65:

³⁹⁵ ՀԱԱ, ֆ. 424, ց. 2, գ. 201, թ. 6

³⁹⁶ Մարգարյան Ե. Դավաղիր գործարք. Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա, Երևան, «Հայաստան», 1994, էջ 92:

ցության չունի Ռուսաստանի ներքին քաղաքականությանը և բոլոր ազգությունները հավասար են Բրիտանական կառավարության և նրա Դաշնակիցների աչքում:

3. Բրիտանական զորքերը առաքելությունը գործում է Դաշնակիցների գիտությամբ և Յենտրոկասսյան ժամանակավոր դիկտատորայի համաձայնությամբ ու Բիչերախովի զորքերի հետ համատեղ:

4. Բրիտանական զորքերը ողջունում են Բաքվի պաշտպաններին նրանց կողմից քաղաքի հերոսական պաշտպանության համար և վստահ են, որ նրանց սպասվում է հաղթանակ, եթե յուրաքանչյուր քաղաքացի մի կողմ դնի քաղաքականությունն ու անհամաձայնությունները և իր բոլոր ուժերը ներդնի թշնամու դեմ պայքարում»³⁹⁷:

Այս հայտարարությունից արտաքուստ երևում էր, որ բրիտանացիները, պաշտպանելով Բաքուն, ցանկանում էին լուծել իրենց համար կարևորագույն ռազմավարական խնդիրը, այն է՝ կանխել գերմանա-թուրքական դաշինքի առաջխաղացումը դեպի արևելք: Է. Տուզմայերը, անգամ, այն միտքն էր արտահայտում, որ բրիտանական զորախումբը Բաքուն վերածում է «անգլիական ամրոցի»³⁹⁸:

Իրականում, սակայն, բրիտանական առաքելությունը մաս չէր կազմում Միջագետքում գործող բրիտանական էքսպեդիցիոն զորքերին և, բնականաբար, չէր ենթարկվում այդ զորքերի գլխավոր հրամանատարությանը: Առաքելությունը ենթարկվում էր անմիջապես բրիտանական «Ռազմական կաբինետի» կազմում մարտ ամսին ստեղծված «Արևելյան կոմիտեին» (ղեկավար լորդ Ջ. Քերզոն) և բրի-

³⁹⁷ ՀԱԱ, ֆ. 1437, ց. 3, գ. 11, թ. 13

³⁹⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 45:

տանական կայսերական Գլխավոր շտաբին³⁹⁹: Ավելին առաքելության թիվը և կազմը ցույց էր տալիս, որ այն Բաքու էր ժամանել ոչ թե մեծամասշտաբ ռազմական խնդիր լուծելու, այլ միայն հատուկ նշանակության հանձնարարություն կատարելու: Մասնավորապես, համաձայն Մեծ Բրիտանիայի ռազմական քարտուղարության արխիվային տվյալների, Լ. Դանստերվիլի առաքելությանը հանձնարարված էր թույլ չտալու որպեսզի Ապշերոնյան նավթն ընկնի գերմանա-թուրքական կողմի ձեռքը և, ելնելով դրանից, անհրաժեշտության դեպքում կրկնել «ռուսիական սցենարը», այն է ոչնչացնել նավթարդյունաբերական ամբողջ ենթակառուցվածքը՝ նավթամշակման գործարանները, նավթային պահուստները և Բաքու-Բաթում նավթատարը⁴⁰⁰:

Բրիտանական առաքելությունը, սակայն, այս խնդիրը լուծեց խաղաղ, հնարամտորեն և բոլորովին այլ ձևով: Մասնավորապես, դեռևս օգոստոսի 4-ին Բաքու ժամանած գնդապետ Ստոքսը դիմում է «Յենտրոկասայան դիկտատուրային»՝ խնդրելով «յանձնել իրեն 100 000 փուֆ (շուրջ 170 միլիոն լիդր) պե՛տրոլ: Ասկից գառ որոշ քանակությամբ մեքենակից, Պարսկաստանից և Միջագետքից անգլիական ոյժերը ինքնաշարժներով շտապ բերելու համար»⁴⁰¹: Բնականաբար նրանց խնդրանքը արագ բավարարվում է, և, արդյունքում, բենզինի և նավթամթերքի այդ հսկայական պաշարը տեղափոխվում է Պարսկաստան: Իրականում, սակայն, բրիտանացիները ամենևին էլ մտադիր չէին Միջագետքից, այն էլ ավտոմեքենաներով, Բաքու տեղափոխել մեծաթիվ ուժեր, քանի որ ինչպես նշում էր գեներալ Պ.

³⁹⁹ Мирошников Л. И., նշվ. աշխ., էջ 69:

⁴⁰⁰ Ерши Д., նշվ. աշխ., էջ 200:

⁴⁰¹ ՀԱՄ, ֆ. 424, ց. 2, գ. 201, թ. 6:

Այսքը, հնարավոր չէր անապատի միջով շուրջ 800 մղոն տարածություն կտրել և Բաղդադից Բաքու հասցնել խոշոր ուժեր⁴⁰²:

Միևնույն ժամանակ, գերմանացիները շարունակում էին քանքեր գործադրել Բաքվի հարցում հորհրդային Ռուսաստանի հետ համաձայնության հասնելու ուղղությամբ: Գերմանիան համաձայն էր, որ «Պաքուն ռուսական սեփականության մնայ եւ, սակայն, գերմաններուն հետ գործակցութեամբ մը՝ վարչական խընդիրներու մէջ: Ու այդ կերպով յոյս ունէր, թէ անէի արագօրէն քարիւղ պիտի ստանար հոնկէ: Ռուսեր համաձայն եղած են ստոր»⁴⁰³: Յարիցհինում գտնվող Ի. Ստալինին ուղղված հեռագրում Վ. Լենինը նշում էր. «Գերմանացիները կը համաձայնուէին դադրեցնել թուրքերի յարձակումը Բագուի վրայ, եթե մենք գերմանացիների համար երաշխաւորենք նաւթի մի մասը: Իհարկէ, մենք կը համաձայնուենք»⁴⁰⁴: Թերևս հենց այս հանգամանքով է բացատրվում այն փաստը, որ հուլիսի վերջին Յարիցհինց, որտեղ Կարմիր բանակն ուներ ավելի քան 42 000 զինվոր⁴⁰⁵, որպես «օգնություն» քաղաքի պաշտպաններին՝ Բաքու են ուղարկում գնդապետ Գեորգի Պետրովի հրամանատարությամբ գործող շուրջ 9000-անոց զորաջոկատի միայն մի փոքր մասը (1760 հոգին)⁴⁰⁶:

⁴⁰² Fishcer L. The Soviets in World Affairs, p. 10.

⁴⁰³ Վեմեան Վ., նշվ. աշխ., էջ 54:

⁴⁰⁴ Լագեան Գ. Հայաստան եւ Հայ դատը. Հայ եւ ռուս յարաբերութիւններու յոյսի տակ. Գահիրէ, «Արմէն», 1957, էջ 196:

⁴⁰⁵ Гражданская война и военная интервенция в СССР. Энциклопедия. Издание второе. Главный редактор Хромов С. С., Москва, «Советская Энциклопедия», 1987, с. 411.

⁴⁰⁶ Сваранц А. Паиториализм в геостратегии Турции на Кавказе. Москва, «Гуманитарий», 2002, с. 83.

1918թ. օգոստոսի 27-ին ստորագրվում է Բրեստ-Լիտովսկի պայմանագրին կից Ռուս-գերմանական լրացուցիչ համաձայնագիրը, որի 6-րդ գլուխը (վերնագրված «Կովկաս») իր մեջ ներառում էր Այսրկովկասյան խնդիրները: Մասնավորապես, համաձայնագրի 13-րդ հոդվածով Ռուսաստանը համաձայնվում էր Գերմանիայի կողմից Վրաստանի անկախության ճանաչմանը: 14-րդ հոդվածով Գերմանիան խոստանում էր չաջակցել Վրաստանի սահմաններից (Քուր գետից այն կողմ ընկած տարածքները, ներառյալ Բաքուն, թողնվում էր հորհրդային Ռուսաստանին) դուրս որևէ ռազմական գործողության, որն իրականացվում է երրորդ կողմի (Օսմանյան Թուրքիայի-Հ.Ն.) կողմից: Նույն հոդվածով հորհրդային Ռուսաստանը պարտավորվում է Գերմանիային մատակարարել՝ Բաքվում արդյունահանված նավթի քառորդ մասը⁴⁰⁷: Միաժամանակ, հորհրդային Ռուսաստանը և Գերմանիան փոխանակվում են նոտաներով, որոնցում ասվում էր, որ գերմանական (փաստացի ստացվում էր գերմանա-թուրքական-Հ.Ն.) զորքերի կողմից բրիտանական զինված ուժերի դուրս մղումը Բաքվից, հորհրդային Ռուսաստանը «չի դիտի որպես ոչ բարեկամական ակտ»⁴⁰⁸:

Դեռևս օգոստոսի 15-ին Նուրի փաշան դիմում է Արթրեջանի հայությանը կոչով, որտեղ ասվում էր. «Ինչպես

⁴⁰⁷ 1918թ. օգոստոսի 21-ին, Գերմանական բանակի գլխավոր շտաբում իրավիրված հատուկ խորհրդակցության ժամանակ որոշվել էր, որ Բաքվի նավթի փոխադրումը պետք է իրականացվի Բաքու-Թիֆլիս-Բաթում երկաթուղով (նավթատար լցավազոնների միջոցով) կամ Բաքու-Բաթում նավթատարով: Տես Пяття Г. В. Германский империализм в Закавказье в 1910-1918 гг., Москва, «Наука», 1978, с. 127:

⁴⁰⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, ք. 17 - 18:

⁴⁰⁹ Лядуневич Е. Ф., Եզվ. աշխ., էջ 253:

1905-1906թթ. ցարական Ռուսաստանը, այնպես էլ հիմա Անգլիան վերածում է Կովկասը սպանդի՝ այն տաքացնելով հայ - մուսուլմանական արյունով»⁴⁰⁹: Արդեն օգոստոսի 22-ին Մյուրսել փաշայի և «Արևելք» բանակախմբի շտաբի պետ, գերմանական բանակի օբեր-լեյտենանտ Պարակվինի ստորագրությամբ վերջնագիր է ներկայացվում Բաքվի Հայոց ազգային խորհրդին: Վերջնագրում ասվում էր, որ եթե նավթային քաղաքը չհանձնվի, ապա հայկական ամբողջ բնակչությունը կոչնչացվի և, միաժամանակ, հայերը մեղադրվում էին բրիտանական քաղաքականություն «խաղալու» մեջ⁴¹⁰: Բնականաբար, ինչպես Բաքվի Հայոց ազգային խորհրդի, այնպես էլ Յենտրոկասայան դիկտատուրայի կողմից վերջնագիրը մերժվում է: Ստեղծված իրավիճակում՝ սեպտեմբերի 10-ին, գեներալ Է. Լյուդենդորֆն արձակում է հրաման՝ Վրաստանում գտնվող գերմանական զորքերի դեպի Բաքու շարժվելու մասին⁴¹¹:

Միաժամանակ, թուրքերը սեպտեմբերի 10-ին գրավելով Դերբենդը՝ կտրում են կապը Բաքվի և Հյուսիսային Կովկասի միջև⁴¹²: Գնդապետ Լ. Բիչերախովը, ով հեռացել էր Հյուսիսային Կովկաս, խոստացել էր այնտեղից թարմ ուժեր բերել Բաքու: Բաքվում ստեղծված անելանելի իրավիճակում իրենց դերը խաղացած բրիտանական ռազմական

⁴⁰⁹ ՀԱԱ, ֆ. 370, ց. 3, գ. 64, ք. 1:

⁴¹⁰ Գերմանա-թուրքական վերջնագրի տեքստը տես Ֆ. 223 ց. 1, գ. 112, ք. 1-ի շրջ.: Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ., Փաստաթղթերի և նյութերի ժողովածու. կազմողներ՝ Սիրյոզյան Ս., Ղազիյան Ա., Խմբ.՝ Վիրաբյան Ա., Երևան, ՀՀ Պատմության արխիվ, 2003, էջ 82 - 83:

⁴¹¹ Trumener U. Germany and the Ottoman Empire 1914 - 1918, Princeton - New Jersey, Princeton University Press, 1968, p. 195.

⁴¹² Shaw S. J., Shaw E. K., Եզվ. աշխ., էջ 326:

առաքելությունը պատրաստվում է հեռանալ քաղաքից: Բրիտանացիների համար «Բագուի պաշտպանությունն անհրաժեշտ էր մինչև սեպտեմբերի 1-ը, այսինքն այնքան ժամանակ, որքան Գերմանիայի պարտությունը (Արևմտյան ռազմաճակատում-Հ.Ն.)» դեռևս ապահովված չէր և կարող էր ենթադրվել, թե նա օգտվելու է նավթից»⁴¹³: Դեռևս սեպտեմբերի սկզբին գեներալ Լ. Դանստերվիլը, պատճառաբանելով, որ քաղաքն այլևս հնարավոր չէ փրկել, փորձ է անում բրիտանական զորքերը ճակատից ետ քաշել, սակայն այդ քայլին արգելք է լինում գեներալ Հ. Բագրատունին⁴¹⁴:

Սեպտեմբերի 10-ին Բաքվի զորքերի շտաբի պետի պաշտոնում գեղապետ Ա. Ավետիսովին փոխարինում է գեղապետ Ստոքսը, ում «նպատակն էր պատրաստել անգլիացուց «նահանջը»»⁴¹⁵: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 11-ին գեներալ Լ. Դանստերվիլը, Էնգելի մեկնելու և այնտեղից թարմ ուժեր բերելու պատրվակով, Բաքվի իշխանություններից 2 նավ է խնդրում և, բնականաբար, ստանում:⁴¹⁶: Սեպտեմբերի 14-ին բրիտանացի զինվորները թողնում են իրենց դիրքերը և թնդանոթներն ու ռազմամթերքը սկսում են բարձել նավերը, իսկ ինչ վերաբերում է ավտոմեքենաներին և սավառակ-

⁴¹³ 1918թ. օգոստոսի 8-ին Դանսեակիցների կողմից շուրջ 450 տանկերի կիրառմամբ Արևմտյան ռազմաճակատում՝ Ամյեն քաղաքի մոտ, իրականացվեց տանկային ճեղքում, որը դարձավ գերմանական բանակի «ս օրը» և սկիզբ դրեց նրա վերջնական պարտությանը: Մանրամասն տես *Bois T. փոս. Катастрофа 8 августа 1918 г.: Пер. с нем., Москва, Воениздат, 1937.*

⁴¹⁴ Ասատրյան Հ., նշվ. աշխ., էջ 108:

⁴¹⁵ Ասրոզյան Ե. Ղ., նշվ. աշխ., էջ 216:

⁴¹⁶ ՀԱԱ, ֆ. 424, ց. 2, գ. 201, թ. 8:

⁴¹⁷ Մելիք-Եօջեան. Ա. Բագուի հերոսամարտը, «Հայրենիք» ամսագիր, Բոսթոն, օգոստոս 1925, թիւ 10 (34), էջ 111 - 112:

ներին, ապա «նրանց մի մասին փչացրին, միա մասին ծովափում թողին»⁴¹⁷:

Նույն օրը ժամը 17-ին բրիտանական ռազմական առաքելությունը տեղյակ է պահում Դիկտատուրային՝ քաղաքից հեռանալու մտադրության մասին: Եվ չնայած Հայոց ազգային խորհուրդը խնդրում է բրիտանացիներին 3 օր ավել մնալ, որպեսզի հնարավոր լինի ապահով գաղթեցնել ժողովուրդը, երեկոյան ժամը 20-ին առաքելությունը նավերով լքեց քաղաքը⁴¹⁸ և հեռացավ Էնգելի⁴¹⁹:

Բաքվի շուրջ 3 ամսյա հերոսական պաշտպանությունը ավարտվեց սեպտեմբերի 15-ին՝ թուրքերի կողմից քաղաքի գրավմամբ: Եվ թեև սեպտեմբերի 23-ին Բեռլինում Օսմանյան Թուրքիայի մեծ վեզիր Թալեթաֆ փաշայի և Գերմանիայի արտաքին գործերի քարտուղար Պ. ֆոն Հինցելի

⁴¹⁷ Եղիշէ Ա. Քահ. Գեղամեանց. Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը. Պրակ երկրորդ, Բագու, տպ. «Արշակ Ի. Կարապետեանց», 1919, էջ 48:

⁴¹⁸ Կրացյան Ս. Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 1993, էջ 182:

⁴¹⁹ Էնգելի քաղաք է տեղափոխվում նաև գեներալ Հ. Բագրատունին, ով սեպտեմբերի երկրորդ կեսին Պարսկաստանում գտնվող բրիտանական զորքերի գլխավոր հրամանատարության է ներկայացնում իր կողմից պատրաստված մի հուշագիր՝ Բաքուն և ամբողջ Այսրկովկասը թուրքական զորքերից ազատագրելու մասին: Ըստ ծրագրի պետք է բրիտանացիները իրենց հրամանատարության ներքո ստեղծեին մի խոշոր զորախումբ՝ կազմված Հայաստանի Հանրապետության զինված ուժերից (մինչև 16 000), Անդրանիկի զորամասից (2000 - 3000), ինչպես նաև Էնգելիում (շուրջ 1000), Կրասնովոդսկում (շուրջ 500), Պետրովսկում (շուրջ 6000), Համադանում (5000 - 6000), Հյուսիսային Կովկասում (շուրջ 3500) գտնվող հայ զինվորականությունից: Երազիրը, սակայն, բրիտանական հրամանատարությունը մերժում է: Հուլագրի տեքստը տես Kayaloff J. *The fall of Baku. Material on the Events of September 15, 1918, Bergenfield - New Jersey, Michael Barour Publications, 1976, p. 25-27.*

միջև ստորագրված արձանագրության համաձայն Բաքվի նավթը «դրվում էր Քառյակ դաշինքի տրամադրության տակ»⁴¹⁹, սակայն Բաքվի նավթն այլևս չէր կարող փրկել Գերմանիային պարտությունից՝ Արևմտյան ռազմաճակատում: Քաղաքում բենզին չէր մնացել, այն գրեթե ամբողջությամբ դուրս էր բերվել Բաքվից⁴²⁰, իսկ որպեսզի նավթը արդյունահանվեր, մշակվեր ու հասցվեր Արևմտյան ռազմաճակատ, պահանջվում էր երկար ժամանակ, ինչը գերմանացիներն այլևս չունեին: Ինչպես գեներալ Է. Լյուդենգորֆն է խոստովանում. «Գլխաւոր ազդակը, որ գերման արեւմտեան բանակի խորտակումը առաջ բերեց, վառելանիւթի պակասն էր, որովհետեւ թիւրքերը չկարողացան ժամանակին գրաւել Բազուն և հայերն էին, որ թիւրքերին արգելք եղան Բազուն գրաւելու ժամանակին»⁴²¹:

Փաստորեն, հիմնականում հայկական զորամասերի ուժերով կազմակերպված Բաքվի պաշտպանությամբ՝ բրիտանացիները, իրենց բնորոշ ռազմավարագիտական ճկունությամբ, լուծեցին պատերազմի ռազմավարական կարևորագույն խնդիրներից մեկը: Գերմանիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ջ. Ջերարդը 1919թ. իր կառավարությանը ներկայացրած տեղեկագրում նշում էր. «Ամերիկացիները պետք է մի վայրկյան կանգ առնեն և խորհեն, թե ինչ կլիներ պատերազմի ելքը և տևողությունը Արևմուտքում, եթե թուրքերը 8 ամիս առաջ հասնեին Բաքու: Եվ նրանք ավելի շուտ կհասնեին, եթե հայերը չդիմադրեին»:⁴²²

⁴¹⁹ Hovhannesian R. G. *Armenia on the Road to Independence*, p. 225.

⁴²⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 57, թ. 139:

⁴²¹ Գյրոլխանդանեան Ա. Օգոստոս հինգը (մի էջ Բազուի հերոսամարտից). «ՎէՄ» հանդես, Փարիզ, նոյեմբեր - դեկտեմբեր 1933, էջ 108:

⁴²² ՀԱԱ, ֆ. 200, Յ. 1, գ. 351, թ. 54:

Ավելին, թուրքերը պատերազմի վերջնափուլում Կովկասյան ռազմաճակատում պարտադրված հսկայական ուժեր կենտրոնացնելով՝ պարտություն կրեցին Պաղեստինյան ռազմաճակատում, որտեղ սեպտեմբերի 19-ին սկսված Մեզգիդյի ճակատամարտում բրիտանական 20-րդ և 21-րդ կորպուսները (վերջինիս կազմում նաև «Արևելյան լեգեոնը» («Հայկական լեգեոնը»)^{*} գեներալ Էդմունդ Ալենբիի հրամանատարությամբ անսպասելի և ծանր հարված հասցրին թուրքական 7-րդ (հրամանատար, գեներալ Մ. Քեմալ), 8-րդ (հրամանատար, գեներալ Իսմաիլ Ջևադ) և 4-րդ (հրամանատար, գեներալ Մեհմեդ Ջեմալ Մերսինլի, ով փոխարինել էր Ահմեդ Ջեմալ փաշային) բանակներին: Լեգեոնին «վիճակուած էր գրաւումը Արարա բլուրին, որուն բնական անառիկ դիրքերն ահեղորէն ամրացնելով՝ թրք-գերմաններն՝ իրենց դիմադրութեան առանցքն ըրած էին զայն»⁴²³, և

^{*} Լեգեոնը ձևավորվեց Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի, Լոնդոնում Ֆրանսիայի դեսպանատան 1-ին քարտուղար Ժորժ Պիլոյի և Մեծ Բրիտանիայի Ռազմական կաբինետի քարտուղարի օգնական Մարկ Սալքսի միջև 1916թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնում՝ Ֆրանսիայի դեսպանատանը, ստորագրված համաձայնագրով (տեքստը տես ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1130, թ. 1 - 3: *Армяне в Первой мировой войне*, с. 758) և Ֆրանսիայի Ռազմական նախարարի 1916թ. նոյեմբերի 15-ի գաղտնի հրամանով (տեքստը տես ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1130, թ. 1: *Армяне в Первой мировой войне*, с. 762: Մեծ տերությունները, Օսմանյան Կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում, հատոր 1, էջ 381 - 382): Լեգեոնն իր կազմում ուներ ավելի քան 1500 հայ ռազմիկներ (*Hacobian A. P. Armenia and the War*, London - New York - Toronto, Hodder and Stoughton, 1917, p. 80): Լեգեոնի մասին մանրամասն տես Պոյաճեան Տ. Յ. Հայկական լեգեոնը. Պատմական յուշագրություն, Ութթրթթան, «Պայքարի», 1965:

^{*} Արարայի բարձունքի պաշտպանությունն վերապահված էր Թուրքական 8-րդ բանակի կազմում գտնվող գերմանական «Ասիական կորպուսին» (*Asian corps*):

որը մինչ այդ երեք անգամ բրիտանացի զինվորները գրոհել էին ապարդյուն: Եվ ահա հայ զինվորներն այդ խնդիրը լուծեցին փայլուն կերպով: Լ. Հարթը այս ռազմագործողությունը համարում էր Առաջին համաշխարհային պատերազմի «ամենաարագ և վճռական ռազմագործողություններից մեկը», որի հետևանքով «մի քանի օրում Պաղեստինում թուրքական զորքերը գործնականում դադարեցին գոյություն ունենալուց»:⁴²⁴ Խոսելով հաղթական ճակատամարտում Հայկական լեգեոնի խաղացած մեծ դերի մասին, Գեներալ Է. Ալենբին նշել է. «Հպարտ եմ, որ հրամանիս տակ հայկական զորագունդ մը ունիմ. անոնք յաջողապես կրուեցան ու մեծ բաժին մը ունեցան յաղթանակի մէջ»⁴²⁵: Այն փաստը, որ գեներալ Է. Ալենբիի տարած տարած «մեծ հաղթանակի» գործում Հայկական լեգեոնը մեծ ներդրում ուներ, ընդունում էր նաև Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի քարտուղարի տեղակալ լորդ Ռ. Սեսիլը⁴²⁶:

Պաղեստինյան ռազմաճակատում օսմանյան բանակի պարտության մեջ հատկապես «ճակատագրական դեր խաղացած էր Բագուն, դէպի ուր Էնվերը զգալի ուժեր նետած էր ասիական (Պաղեստինյան-Հ.Ն.) ճակատից»⁴²⁷: Բաքվի վրա կենտրոնացվել էր թուրքական կանոնավոր բանակի շուրջ 20 000 զինվոր⁴²⁸: Ընդ որում, Էնվեր փաշան այս քայլին էր

⁴²⁴ Պարթենաս Ս. Արարա. Հայկական լեգեոնը, Բ տպագրութիւն, Իզմիր, «Քէշիշեան», 1919, էջ 87:

⁴²⁵ Liddell Hart B. H. The Real War. 1914-1918, Boston-Toronto, Little, Brown and Co., 1930, p. 439.

⁴²⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291 մաս 1, թ. 7; ֆ. 430, ց. 1, գ. 1320, թ. 11:

⁴²⁷ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1043, թ. 2:

⁴²⁸ Նավասարդեան Վ., նշվ. աշխ., էջ 194:

⁴²⁹ Ա-Դո (Հովհաննես Տեր - Մարտիրոսյան). Հայրութեան երկունքը, Երևան, Հայաստանի պատմ. թանգարան, 2014, էջ 554:

գնացել Պաղեստինյան ռազմաճակատում թուրքական բանակի պահեստային ուժերի ի սպառ բացակայության պայմաններում⁴²⁹: Պաղեստինյան ռազմաճակատի հրամանատար, գեներալ Լ. Ֆոն Սանդերսը նույնպես շեշտում էր, որ ռազմաճակատի խորտակման պատճառն այն էր, որ թուրքական հրամանատարությունը հակառակ իր խորհրդին, երկու դիվիզիաներ տեղախոխել էր Կովկաս՝ կովելու հայերի դեմ:⁴³⁰

Սեպտեմբերի վերջին երևանում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի հետ ունեցած երկրորդ (գաղտնի) հանդիպման ժամանակ հայիլի փաշան ստիպված էր խոստովանել. «Անգլիացիք հայերի հետ մեծ հարուած են տուել թրքական բանակին Արարայի մէջ: Թուրք բանակը ջախջախուեց... հաշտութիւն ենք խնդրելու... Մենք որոշել ենք այս ճակատից (Կովկասյան ռազմաճակատից-Հ.Ն.) բոլորովին հեռանալ և Էրզրում քաշուել»⁴³¹:

Թերևս հայկական զինուժի վերը նշված, մասնավորապես, Մայիսյան, Բաքվի և Արարայի հերոսամարտերով էր պայմանավորված այն հանգամանքը, որ Անտանտի պետությունները ճանաչեցին հայերին (ասել է թե Հայաստանի Հանրապետությանը-Հ.Ն.) «որպես պատերազմող կողմի և տվեցին իրավունք մասնակցելու Խաղաղության կոնֆերանսին»⁴³²:

⁴²⁹ Де Хозарес Р., նշվ. աշխ., էջ 33:

⁴³⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 351, թ. 55:

⁴³¹ Արամը. Մահուան յիսնամեակին առթիւ, Պէրյութ, «Համազգային», 1969, էջ 504:

⁴³² ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 962, թ. 108:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտում 1918թ. Մայիսյան հերոսամարտերն ու Բաքվի հերոսական պաշտպանությունը ունեցան պատմաքաղաքական և ռազմավարական կարևորագույն նշանակություն ոչ միայն Կովկասյան ռազմաճակատի և Այսրկովկասյան տարածաշրջանի համար, այլ նաև՝ նշանակալից դեր խաղացին ընդհանուր պատերազմում Դաշնակիցների տարած հաղթանակի գործում:

3.3. Մուղրոսի զինադադարը եվ բրիտանական աշխարհառազմավարական սահմանների ձևավորումը Մերձավորարևելյան տարածաշրջանում

1918թ. սեպտեմբերին Պաղեստինյան ռազմաճակատում թուրքական բանակի կրած պարտությունը և Բուլղարիայի* պատերազմից դուրս գալը, ստիպեցին Օսմանյան Կայսրությանը սկսելու բանակցություններ Դաշնակիցների հետ: 1918թ. հոկտեմբերի 3-ին գեներալ Չ. Թաունսենդը, ով Կուտ-էլ-Ամարայում անձնատուր լինելուց հետո պահվում էր Մարմարա ծովի Հալկի կղզում պատանդի կարգավիճակում և սերտ կապեր էր հաստատել Օսմանյան Կայսրության ռազմաքաղաքական ղեկավարության հետ, հանդիպում է ունենում մարշալ Ա. Իզզեթ փաշայի հետ: Վերջինս ցանկություն է հայտնում, որ բրիտանացի գեներալը դառնա միջնորդ Օսմանյան Կայսրության և Անտանտի միջև սկսվելիք բանակցություններում: Դրանք սկսելու համար, սակայն, Ա. Իզզեթ փաշան, որպես գլխավոր նախապայման է նշում

* Բուլղարիան պատերազմից դուրս եկավ 1918թ. սեպտեմբերի 29-ին Սալոնիկում ստորագրված զինադադարով, որը Դաշնակիցների անունից ստորագրեց Սալոնիկյան ռազմաճակատում գործող զորքերի գլխավոր հրամանատար, ֆրանսիական բանակի գեներալ Լ. Ֆ. դը Էսպերեն:

բրիտանական կառավարության կողմից երաշխիք, որ բռնակցման չեն ենթարկվի թուրքական տարածքները Եվրոպայում և Ասիայում, ինչի փոխարեն թուրքական կողմը պետք է բացեր Նեղուցները, իսկ Կոստանդնուպոլիսը դառնար ազատ նավահանգիստ⁴³³:

Միաժամանակ, հոկտեմբերի 5-ին, Օսմանյան կառավարությունը, Գերմանիայի կառավարության հետ համատեղ, դիմում է ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին՝ առաջարկելով ստորագրել զինադադար՝ հիմնված նրա կողմից հրապարակված հայտնի «14 կետերի» սկզբունքների հիման վրա⁴³⁴:

Մեկ օր անց, սակայն, հոկտեմբերի 6-ին, Դ. Լոյդ Ջորջի և Ժ. Կլեմանսոյի մասնակցությամբ կայացած խորհրդածոդովում համաձայնեցվում է Օսմանյան Կայսրության հետ կնքվելիք զինադադարի հուշագիրը⁴³⁵: Արդեն հաջորդ օրը, խորհրդածոդովում քննարկվում է գեներալ Լուի Ֆրանշե դը Էսպերեյի ռազմական ծրագիրը՝ Թրակիայով Կոստանդնուպոլիս շարժվելու և այն գրավելու մասին: Դ. Լոյդ Ջորջը, սակայն, դեմ է արտահայտվում ֆրանսիացի գեներալի կողմից Կոստանդնուպոլիսը վերցնելու նախաձեռնությանը, նշելով, որ քաղաքը պետք է վերցնի Սալոնիկում գործող բրիտանական ուժերի հրամանատար, գեներալ Ջորջ Ֆրենսիս Միլըն⁴³⁶: Արդյունքում, նույն օրը բրիտանական և ֆրանսիական կողմերը զայիս են փոխգիջումային լուծման: Որոշվում է Սալոնիկում գործող Դաշնակիցների հիմնական ուժերը՝ գեներալ Լ. Ֆ. Դը Էսպերեյի հրամանատարությամբ, հարված պիտի հասցնեն Սերբիայում գործող ավստրո-

⁴³³ Townshend C. V. F., նշվ. աշխ., էջ 276-277:

⁴³⁴ Shaw S. J., Shaw E. K., նշվ. աշխ., էջ 327:

⁴³⁵ Lord Hankey. The Supreme Command. 1914-1918. Vol. 2. London, George Allen and Unwin LTD, 1961, p. 842.

⁴³⁶ Նույն տեղում:

հունգարական ու գերմանական բանակներին և նրանց շարտեն Դանուբի այն ափը, իսկ գեներալ Ջ. Ֆ. Միլիի հրամանատարությամբ ստեղծված զորախումբը (կազմված 3 բրիտանական, 1 ֆրանսիական, 3 հունական հետևակային դիվիզիաներց և իտալական 1 հետևակային բրիգադից) պետք է Թրակիայով շարժվեր Կոստանդնուպոլիս⁴³⁷:

Ստեղծված իրավիճակում, հոկտեմբերի 8-ին, Օսմանյան Կայսրության կառավարությունը՝ մեծ վեզիր Թալեաթ փաշայի գլխավորությամբ, հրաժարական է տալիս և նորանշանակ մեծ վեզիր Ա. Իզզեթ փաշան, սուլթանի կողմից լիազորություն ստանալով, հոկտեմբերի 14-ին կազում է նոր կառավարություն⁴³⁸: Ա. Իզզեթ փաշան հոկտեմբերի 16-ին վերսկսում է զինադադարի պայմանների քննարկումը գեներալ Չ. Թաունսենդի հետ՝ ներկայացնելով թուրքական պայմանները.

1) Բոսֆորի և Դարդանեյի բացումը բրիտանական նավատորմի առաջ:

2) Սուլթանի ենթակայությամբ Միջագետքում և Սիրիայում ինքնավարությունների, այն է՝ համադաշնության ստեղծում:

3) Նմանատիպ կառուցվածք ենթադրվում էր ստեղծել Կովկասում (հավանաբար այն իր մեջ ներառելու էր նաև Արևմտյան Հայաստանը-Հ.Ն.):

4) Դաշնակիցների զորքերը պետք է դուրս բերվեին Միջագետքից և Սիրիայից:

5) Օսմանյան Կայսրության սահմանները Եվրոպայում պետք է մնային այնպես, ինչպես ընդունվել էր Լոնդոնի

պայմանագրով (1913թ. մայիսի 30-Հ.Ն.):

6) Բրիտանական բանակի ռազմագերիները ազատ էին արձակվելու:

Սակայն գեներալ Չ. Թաունսենդը պատասխանում է, որ բրիտանական կողմը կարող է համաձայնվել միայն առաջին կետին⁴³⁹:

Մեծ վեզիր Ա. Իզզեթ փաշան հոկտեմբերի կեսերին Թրակիա է ուղարկում Մեհմեդ բեյին, որպեսզի վերջինս բանակցություններ սկսի գեներալ Լ. Ֆ. դը Էսպերեյի հետ: Սակայն բրիտանացիների միջամտությամբ թուրքական կողմին թույլ չտրվեց մտնել բանակցությունների մեջ: Այս կապակցությամբ բրիտանական կառավարության անդամ Բյորքսը պառլամենտում հայտարարեց, որ թուրքերը 15 օր շարունակ փորձեր էին անում ստորագրելու զինադադար, սակայն բրիտանացիները «չէին շտապում, քանի որ չէին վերցրել Հալեպը»⁴⁴⁰: Գեներալ է. Ալենբիի զորքերը Հալեպը գրավեցին հոկտեմբերի 26-ին: Այդ կերպ հաշտության բանակցություններից առաջ, ինչպես նշում է ցարական Ռուսաստանի նախկին արտգործնախարար Նիկոլայ Դոկուովսկին, Մեծ Բրիտանիան «ստեղծում էր իր համար շահեկան պատերազմի աշխարհագրական քարտեզը»⁴⁴¹:

Եվ չնայած այն հանգամանքին, որ դեռևս հոկտեմբերի սկզբին Ֆրանսիական ծովակալ Գորշէն «յանձն էր առել մշակել զինադադարի մի ծրագիր եւ դա ներկայացրել էր ֆրանսիական կառավարությանը եւ իր զինակիցներին (դաշնակիցներին-Հ.Ն.), անգլիական ծովակալ Կայթրոպն

⁴³⁷ Корсун Н. Балканский фронт Мировой войны, с. 114-116.

⁴³⁸ Shaw S. J., Shaw E. K., Նշվ. աշխ., էջ 327: История Первой мировой войны. 1914-1918. Том 2. Под ред. И. И. Ростунова, Москва, «Наука», 1975, с. 518.

⁴³⁹ Townshend C. V. F., Նշվ. աշխ., էջ 282 - 283:

⁴⁴⁰ Кемаль М. Путь новой Турции. 1919-1927. Пер. с тур., Том 1, Москва, Литиздат Н. К. И. Д., 1929, с. XXX.

⁴⁴¹ Նույն տեղում:

էր, որ Մուղրոսում ընդունեց Չոր. Թաուզենտի բերած տաճկական առաջարկը: Լոնդոնի կառավարութիւնը լիազօրում է Կայթրոպին վարել բանակցութիւնները»⁴⁴²:

Սիրիայում, ռազմագործողությունների ավարտից հետո, Միջերկրական ծովում Դաշնակիցների միացյալ նավատորմի նորանշանակ հրամանատար, բրիտանացի ծովակալ Սոմերսեթ Արթուր Գաֆ-Քայթրոպից, ով այդ պաշտոնում փոխարինել էր ֆրանսիացի ծովակալ ժան Ֆրանսուա Չարլզ Ամետին, հրաման է ստանում ընդունել թուրքական պատվիրակությանը: Հոկտեմբերի 20-ին գեներալ Չ. Թաունսենդը ժամանում է Լեմնոս կղզու Մուղրոս նավահանգիստ, որտեղ կայանված «Ազամեմնոն» ռազմանավի վրա ներկայանում է ծովակալ Ս. Ա. Գաֆ-Քայթրոպին, իսկ արդեն հոկտեմբերի 26-ին Մուղրոս է ժամանում թուրքական պատվիրակությունը՝ Հուսեյն Ռեուֆ բեյի գլխավորությամբ և հաջորդ օրը սկսվում են բանակցությունները⁴⁴³:

Ֆրանսիացի ծովակալ ժան Ֆ. Չ. Ամետը նույնպես ցանկություն է հայտնում մասնակցելու բանակացություններին և զինադադարի ստորագրմանը՝ որպէս ֆրանսիական կողմի պաշտոնական ներկայացուցիչ: Սակայն բրիտանական կողմը մերժում է՝ պատճառաբանելով, որ թուրքական պատվիրակությունը լիազորված է բանակցելու միայն բրիտանական կողմի հետ⁴⁴⁴: Այս քայլը, բրիտանացիները «արդարացնում» էին նաև այն հանգամանքով, որ Բուլղարիայի հետ զինադադարը ստորագրել էր ֆրանսիական կողմը՝ առանց բրիտանական կողմի համաձայ-

⁴⁴² Ասատրյան Հ., նշվ. աշխ., էջ 110:

⁴⁴³ Townshend C. V. F., նշվ. աշխ., էջ 290:

⁴⁴⁴ Lord Hankey., նշվ. աշխ., էջ 844-845:

նությամբ⁴⁴⁵:

Դեռևս Մուղրոս ժամանելուց առաջ, Հ. Ռեուֆ բեյը, հանդիպելով Կոստանդնուպոլսում գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական պատվիրակության անդամներ Ավետիս Ահարոնյանին, Ալեքսանդր Խատիսյանին և Միքայել Պապաջանյանին, հայտնում է. «Այս գիշեր ես պիտի երթամ անգլիական ծովակալին մօտ զինադադար կնքելու, կառաջարկեմ ձեզ այ անոր մօտ երթալ ինձ հետ միասին: Թող անգլիացիները տեսնեն որ մենք հաշտուած ենք. չէ՛ որ խորհրդատուդի համար շատ կարեւոր է իմանալ, որ թուրքերն ու հայերը այլեւս վե՛ճ չունին իրարու հետ»⁴⁴⁶: Ալ. Խատիսյանի այն հարցին, թե ինպես պետք է լուծվի հայ - թուրքական սահմանների հարցը, Հ. Ռեուֆ բեյը պատասխանում է. «1914 թուի սահմանները, սրբագրութեամբ մը ի հաշի Ալաշկերտի հովիտին»⁴⁴⁷: Հայկական կողմը, սակայն, մեծ հույսեր կապելով պատերազմում հաղթած Դաշնակիցների հետ և հավատացած լինելով վերջիններիս կողմից Հայկական հարցի լուծմանը, մերժեց թուրքական կողմի առաջարկը:

1918թ. հոկտեմբերի 30-ին «Ազամեմնոն» ռազմանավի վրա ստորագրվեց Մուղրոսի հայտնի զինադադարը, որով Օսմանյան Կայսրությունը անձնատուր եղավ Դաշնակիցներին (իրականում Մեծ Բրիտանիային) և դուրս եկավ պատերազմից: Համաձայնագրի առանցքային կետերն էին.

Հոդված 1. Դարդանեյի ու Բոսֆորի նեղուցների բացումը և ազատ մուտքը դեպի Սև ծով: Դաշնակիցների կողմից

⁴⁴⁵ Knudsen E. L. *Great Britain, Constantinople, and the Turkish Peace Treaty 1919-1922*, New York-London, Garland Publishing Inc., 1987, p. 16.

⁴⁴⁶ Խատիսյան Ալ. Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը. Բուպագրութիւն, Բյուրօպ, «Համազգային», 1968, էջ 113:

⁴⁴⁷ Նույն տեղում:

Դարդանեյի և Բոսֆորի նավահանգիստների ռազմական ռազմակալումը:

Հոդված 5. Թուրքական բանակի զորացրումը, բացառությամբ այն զորքերի, որոնք անհրաժեշտ են սահմանները և ներքին կարգը պահպանելու համար: Նրանց թիվը և տեղակայման վայրը որոշվելու էր Դաշնակիցների կողմից ավելի ուշ՝ թուրքական կառավարության հետ քննարկումից հետո:

Հոդված 6. Բոլոր ռազմանավերի հանձնումը, որոնք գտնվում են թուրքական կամ թուրքերի կողմից գրավված ջրերում...

Հոդված 7. Դաշնակիցներն իրավունք էին ունենալու ռազմակալելու Օսմանյան Կայսրության տարածքում ռազմավարական բոլոր կետերն այն դեպքում, երբ Դաշնակիցների անվտանգության համար հանգամանքները կդառնան սպառնալից:

Հոդված 8. Թուրքերի կողմից զբաղեցված բոլոր նավահանգիստների և կառանատեղերի ազատ օգտագործումը դաշնակիցների կողմից, և այդ նավահանգիստներից օգտվելու արգելքը՝ թշնամիների համար...

Հոդված 10. Տավրոսի թունելային համակարգի ռազմական օկուպացիան Դաշնակիցների կողմից:

Հոդված 11. Թուրքական զորքերի անհապաղ նահանջը Պարսկաստանի հյուսիս -արևմուտքից՝ մինչպատերազմյան սահմանագծից այս կողմ... Թուրքական զորքերն արդեն ստացել են հրաման Անդրկովկասի մի մասից տարհանվելու հրաման, ընդ որում, մնացած զորքերը կհեռանան, եթե տեղերում իրադրությունը ուսումնասիրելուց հետո Դաշնակիցները ներկայացնեն այդպիսի պահանջ:

Հոդված 15. Հսկողության համար դաշնակցային սպաներ կնշանակվեն բոլոր երկաթուղիներում, ներառյալ՝ անդրկովկասյան երկաթուղիների այն մասերում, որոնք այժմ գտնվում են Թուրքիայի հսկողության տակ...: Դաշնակիցներն իրավունք ունեն գրավելու Բաթումը: Թուրքիան ոչ մի առարկություն չի անի Դաշնակիցների կողմից Բաքուն ռազմակալելու դեմ:

Հոդված 16. Հիջազի, Ասիրի, Եմենի, Սիրիայի և Միջագետքի թուրքական կայազորներն անձնատուր էին լինելու Դաշնակիցների հրամանատարներին: Թուրքական զորքերի դուրս բերումը Կիլիկիայից...

Հոդված 18. Տրիպոլիտանիայում և Կիրենաիկայում գրավված նավահանգիստների, այդ թվում՝ Միսուրատայի, հանձնումը Դաշնակիցների կայազորին:

Հոդված 19. Գերմանացի ու ավստրիացի զինվորականների և քաղաքացիական անձանց տարհանումը Թուրքիայի տարածքներից մեկ ամսվա ընթացքում:

Հոդված 23. Թուրքիան պարտավորվում էր դադարեցնել բոլոր հարաբերությունները Կենտրոնական տերությունների հետ:

Հոդված 24. Հայկական 6 վիլայեթներում անկարգություններ ծագելու դեպքում Դաշնակիցները իրենց վերապահում են դրանց մի մասն ռազմակալելու իրավունք:

Հոդված 25. Դաշնակիցների և Թուրքիայի միջև թշնամական գործողությունները կդադարեն 1918թ. հոկտեմբերի 31-ին՝ հինգշաբթի օրը⁴⁴⁸:

⁴⁴⁸ 25 հոդվածներից բաղկացած Մուդրոսի զինադադարի համաձայնագրի ամբողջական տեքստը տես՝ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 537 - 539: Անգլերեն տարբերակը տես՝ Armenia. Political and Ethnic boundaries. 1878-1948. Ed. By Anita L. P. Burdett, London, Archive

Ձինադադարի ստորագրումից անմիջապես հետո Միջագետքյան ռազմաճակատում գտնվող բրիտանական զորքերը շարժվեցին Մոսուլ*, որն առանց դիմադրության գրավեցին նոյեմբերի 4-ին⁴⁴⁹:

Կոստանդնուպոլսում գտնվող ՀՀ պատվիրակությունը, ծանոթանալով զինադադարի պայմաններին, անմիջապես հասկացավ, որ «Հայաստանի (Արևմտյան Հայաստանի-Հ.Ն.) ազատությունը ապահոված չէ: Ձինադադարը չէր պահանջեր Հայաստանի գրատումը Դաշնակից զորքերու կողմէ, զինաթափ չէր ըներ Թուրքիան եւ կպարունակէր այն բոլոր դժբախտ կարելիությունները, որոնք ապագային իրողության դարձան»⁴⁵⁰: Եվ սա այն պարագայում, երբ 1918թ. նոյեմբերի կեսերին՝ Մեծ Բրիտանիայի պառլամենտում, լորդ Ռ. Մեսիլը հայտարարեց, որ Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը պաշտոնապես «խրախուսում է Թուրքահայաստանի և Ռուսահայաստանի միավորումը»⁴⁵¹:

Այսպիսով, Մեծ Բրիտանիան՝ «Թուրքիոյ դարաւոր պաշտպանը Ռուսաստանի դէմ, այս անգամ կը կանգնէր Տաճիկիստան դիմաց իբրեւ յաղթական պահանջատէր... Մոզորոսի զինադադարի պայմանները եւ փաստը որ իր

Editions, 1998, p. 378-381, ինչպես նաև՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 161, թ. 8 և 299:

* 1918թ. դեկտեմբերին Լոնդոնում Ժ. Կլեմանտոյի և Դ. Լյոյդ-Ջորջի միջև համաձայնություն կայացվեց, ըստ որի Ֆրանսիան ճանաչեց Մոսուլը՝ որպես բրիտանական ազդեցության գոտի, ինչի դիմաց Մեծ Բրիտանիան Ֆրանսիային խոստացավ տեղի նավթադաշտերի կեսի շահագործման իրավունք (Sbu՝ Lenczowski G. *The Middle East in World Affairs*, p. 73):

⁴⁴⁹ Lord Hankey., նշվ. աշխ., էջ 845:

⁴⁵⁰ Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 113:

⁴⁵¹ Hovhannisian R. G. *The Allies and Armenia. 1915-1918, The Journal of Contemporary History, London, Vol. 3, N 1, January 1968, p. 149.*

դաշնակիցներէն զրեթէ գաղտնի Թուրքիոյ հետ հաշտութիւն կնքելու հապճեպին մէջ Անգլիա «մոռացեր էր» անկարելուր կէտ մը... Թուրքիոյ զինաթափումը, բառական պեճախօս իրողութիւններ էին ցոյց տուող որ թէ հակառուս քաղաքականութիւնը եւ թէ ընկերներուն (դաշնակիցների-Հ.Ն.) հետ մրցակցութիւնը շատ հեռուները կրնային տանիլ նենգ Ալթինը»⁴⁵²: Ինչպես Ռուսաստանի Պետական դոմայի անդամ Մովսես Աճեմովն էր դեռևս 1916թ. գրում. «Տաճկաստանը (Թուրքիան-Հ.Ն.) պատերազմից հետո լել չի կարող և չպետք է դադարե գոյություն ունենալուց... Վոչ Ռուսաստանը, վոր իր կազմի մէջ ունի բազմամիլիոն մահմեդական բնակչություն, և ոչ էլ Անգլիան չեն կարող համաձայնել Խալիֆայթի նվաստացմանը...»⁴⁵³: Իր հերթին պատմաբան Ալեքսեյ Ջիվլեբովը գրում էր. «Հաղթող պետությունները Տաճկաստանի նկատմամբ լավագույն յեջ կհամարեն վոչ թե սրա լիակատար ու վերջնական բաժանումը, այլ Ռսմանյան Կայսրությունը շատ թուլացած ձևով պահպանելը»⁴⁵⁴:

Դաշնակիցների շրջանում առանցքային հարց էր մնում, թե ում հրամանատարությամբ պետք է Դաշնակիցների նավատորմը մտնէր Կոստանդնուպոլիս: Բրիտանական կողմը, փաստարկելով այն հանգամանքը, որ Ֆրանսիայում և Բալկաններում Դաշնակիցների զորքերի գլխավոր հրամանատարի պաշտոնները զբաղեցնում են ֆրանսիացի գեներալները, պնդում է, որ Կոստանդնուպոլիս մտնող Դաշնակիցների նավատորմի (75%-ը կազմում էին բրիտանական

⁴⁵² Չարեանը, նշվ. աշխ., էջ 159 - 160:

⁴⁵³ «Հայաստանի ավտոնոմիան» ինվ Անտանտան. Վալերազրերի իմպերիալիստական պատերազմի շրջանից. Ա. Հովհաննիսյանի առաջաբանով, Յերեվան, Պետհրատ, 1926 էջ 83:

⁴⁵⁴ Նույն տեղում:

նազմանավերը) հրամանատարը պետք է լինի ծովակալ Ա. Ա. Գաֆ-Քայթրուփը⁴⁵⁵։

1918թ. նոյեմբերի 7-ին Դաշնակիցները ռազմակալում են Իզմիրը (Ջմյուտնիան), իսկ նոյեմբերի 13-ին՝ Նեղուցներն ու Կոստանդնուպոլիսը։ Արդյունքում, քաղաքում ռազմաքաղաքական և վարչական ամբողջ իշխանությունը կենտրոնանում է Դաշնակիցների կողմից նորանշանակ Գերագույն կոմիսարի՝ ծովակալ Ա. Ա. Գաֆ-Քայթրուփի ձեռքում, ով կառավարելու էր Գերագույն հանձնաժողովի մեջ ընդգրկված մեկական բրիտանացի, ֆրանսիացի և իտալացի անդամների օգնությամբ⁴⁵⁶։ Կոստանդնուպոլիսի ռազմակալումից անմիջապես հետո տեղի է ունենում «Միության և առաջադիմություն» կուսակցության մոտ 450 նշանավոր անդամների ձերբակալությունը⁴⁵⁷, ինչին հաջորդելու էր երիտթուրք ոճրագործների հայտնի դատավարությունը։ Դրան զուգահեռ Կոստանդնուպոլիսում իրենց իշխանությունն է սկսում ամրապնդել բրիտանամետ «Ազատություն և համաձայնություն» («Նուրիյե վե Իթիլաֆ») կուսակցությունը։

1918թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Դաշնակիցների միջև ակտիվ քննարկումներ են ընթանում Արևմտյան Հայաստանը Ֆրանսիայի կողմից ռազմակալելու շուրջ։ Սակայն Մեծ Բրիտանիան, հասկանալով, որ դա հնարավորություն կտա ֆրանսիացիներին իրենց ազդեցությունը տարածել նաև Այսրկովկասում, կանխում են այդպիսի սցենարը։ Մասնավորապես, լորդ Զ. Քերզոնի գլխավորած «Արևելյան կոմիտեն», 1918թ. դեկտեմբերի 9-ին քննելով այդ

հարցը, ֆրանսիական կողմին ընտրության առաջ է կանգնեցնում. «Հայաստանը (Արևմտյան Հայաստանը-Հ.Ն.) կամ Սիրիան, բայց ոչ երկուսը միասին»⁴⁵⁸։ Ավելին, նույն դեկտեմբեր ամսին Կոստանդնուպոլիս ժամանած բրիտանական բանակի գեներալ Է. Ալենքին և Օսմանյան Կայսրության նորանշանակ մեծ վեզիր Ահմեդ Թեֆիք փաշան ստորագրում են գաղտնի համաձայնագիր (ստացել է «Է. Ալենքիի լրացուցիչ 10 պայմանները Մուդրոսի համաձայնագրին» անվանումը), որի համաձայն միայն բրիտանական զորքերը իրավունք ստացան ռազմակալելու Հարավային Անատոլիան և Կիլիկիան, ինչը տեղի ունեցավ 1919թ. հունվարին⁴⁵⁹։ Ստեղծված բարդ իրավիճակում, քնականաբար, Ֆրանսիան ընտրում է Սիրիան, որի համար նա տարիներ շարունակ պայքարել էր, և որը բրիտանացիների կողմից հանձնվեց ֆրանսիական կողմին։ Սրանով հանդերձ, բրիտանացիները անում էին ամեն ինչ թույլ չտալու ֆրանսիացիներին ունենալ «որևէ դերակատարություն Փոքր Ասիայում»⁴⁶⁰։

Այսպիսով, Դաշնակիցները չգրավեցին Արևմտյան Հայաստանը և քայլեր չձեռնարկեցին վերջինիս անկախությունն ապահովելու ուղղությամբ։ Ելնելով այդ հանգամանքից՝ Ա. Մանդեյլտամն արձանագրում է, որ Մուդրոսի գինադադարը «սարսափելի հարված հասցրեց Հայկական հարցին»⁴⁶¹։

⁴⁵⁸ Hughes M. Allenby and British Strategy in the Middle East 1917-1919. London - Portland, Frank Cass, 1999, p. 119.

⁴⁵⁹ Шамсутдинов А. М., Национально - освободительная борьба в Турции 1918-1923 гг., Москва, «Наука», 1966, с. 24.

⁴⁶⁰ Documents on British Foreign Policy. 1919-1939. 1st series. Vol. 1, Ed. by E. L. Woodward, London, His Majesty's Stationary Office, 1947, p. 508.

⁴⁶¹ Мандельштам А. Лига наций, Великие державы и Армянский вопрос, Ереван, АН Арм. ССР, 1981, с. 21.

⁴⁵⁵ Knudsen E. L., նշվ. աշխ., էջ 20 - 21։

⁴⁵⁶ Shaw S. J., E. K. Shaw., նշվ. աշխ., էջ 329։ Knudsen E. L. նշվ. աշխ., էջ 22 - 23։

⁴⁵⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 441, ր. 111։

Շուտով, 1919թ. հունվարի 30-ին, Անտանտի Տերությունները հաղթողի իրավունքով պաշտոնապես հայտարարում են այն մասին, որ Օսմանյան Կայսրությունը որպես այդպիսին դադարեցնում է իր գոյությունը⁴⁶²: Փլուզված Օսմանյան Կայսրությունն Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքում կորցրեց 1.082. 640 կմ² կամ իր տարածքի 2/3-ը⁴⁶³:

Ինչ վերաբերում է Այսրկովկասին, ապա բրիտանական կողմը հասնում է նրան, որ 1918թ. նոյեմբերի 13-ին ֆրանսիական և բրիտանական կողմերը վերահաստատում են Ռուսաստանի հարավային շրջանները միմյանց միջև «ազդեցության գոտիների» բաժանելու մասին դեռևս 1917թ. դեկտեմբերի 23-ին ստորագրված գաղտնի համաձայնագրի կետերը, որով Այսրկովկասը մտնում էր «բրիտանական ազդեցության գոտու» մեջ⁴⁶⁴:

Ավելի վաղ՝ 1918թ. հոկտեմբերի 31-ին, Մեծ Բրիտանիայի ռազմական քարտուղարությունը հրահանգում է Միջագետքում գործող բրիտանական էքսպեդիցիոն բանակի հրամանատարությանը՝ անհպաղ ռազմակալել Բաքուն և նրա շրջակա նավթահանքերը⁴⁶⁵: Մասնավորապես, Այսրկովկասի ռազմակալումը պետք է իրականացվեր Հյուսիսային Պարսկաստանում գտնվող բրիտանական ուժերի կողմից:

Այդ ուժերի հրամանատար գեներալ Լ. Դանստերվիլին, ով ետ էր կանչվել Բաղդադ, փոխարինել էր գեներալ Ուիլյամ

⁴⁶² Сварцов А., նշվ. աշխ., էջ 86:

⁴⁶³ Մատուհի Կ. Քիրտերոու եւ հայերու ազատագրական շարժումներու փուլերը եւ անոնց փոխյարաբերութիւնները. «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, նոյեմբեր 1930, թիւ 1, էջ 109:

⁴⁶⁴ Адамов В. И., նշվ. աշխ., էջ 46:

⁴⁶⁵ Hovhannisian R. G. The Republic of Armenia. Vol. 1, p. 60.

Թոմսոնը (շտաբը տեղակայված էր Ղազվինում), իսկ նորաստեղծ զորախումբը կոչվեց «Նորպերֆորս»: Ու. Թոմսոնի ենթակայության տակ դրվեցին նաև նախկին «Դանստերֆորս» զորախումբը և Կասպից ծովում գործող ծովակալ Դեյվիդ Թոմաս Նորիսի ռազմածովային առաքելությունը⁴⁶⁶: Ինչպես ՀՀ Մինիստրների խորհրդի նախագահ Հովհաննես Քաջազունին էր նշում. «Բաքվի նավթային շրջանը և Բաքու նավահանգիստը, որպես դարպաս դեպի Հյուսիսային Պարսկաստան և Թուրքեստան, այնպիսի մրցանակ է, որը վերցնելու համար Անգլիան չի խնայում միջոցները»⁴⁶⁷:

1918թ. նոյեմբերի կեսերին էնգելիում Ադրբեջանական Հանրապետության կառավարության պատվիրակության հետ հանդիպելով՝ գեներալ Ու. Թոմսոնը անում է հետևյալ հայտարարությունը.

1. Նոյեմբերի 17-ի դրությամբ Բաքուն պետք է մաքրված լինի ինչպես թուրքական, այնպես էլ ադրբեջանական զորքերից:

2. Բաքուն իր նավթադաշտերով ռազմակալվելու է, իսկ երկրի մնացած մասը մնալու է Ադրբեջանական կառավարության և նրա զորքերի վերահսկողության տակ:

3. Ադրբեջանը պաշտոնապես չի ճանաչվում, բայց Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ներկայացուցիչները կհաստատեն հարաբերություններ նրա դե ֆակտո կառավարության հետ:

4. Պետական բոլոր հաստատությունները կշարունակեն իրենց գործառույթները հետևյալ փոփոխություններով.

Ա) Գեներալ Ու. Թոմսոնը լինելու է Բաքվի գեներալ-նահանգապետ:

⁴⁶⁶ Митрополитов Л. И., նշվ. աշխ., էջ 121 - 122:

⁴⁶⁷ ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.10, թ. 12:

Բ) Քաղաքի ոստիկանապետը լինելու է անգլիացի:

Գ) Քաղաքային դոման ազատորեն իրականացնելու է իր գործառնությունները:

Դ) Ադրբեջանը դուրս չի մնալու Փարիզի հաղաղության կոնֆերանսում ազգերի ինքնորոշման սկզբունքի քննարկումներից:

Ե) Լ. Բիչերախովը և իր ուժերը Բաքու են ժամանելու բրիտանական զորքերի հետ միասին:

Զ) Զինված հայերի (նկատի ունի Բաքվի պաշտպանությանը մասնակցած և Էնզելի հեռացած հայկական զինված ուժերը-Հ.Ն.) մուտքը Բաքու չի թույլատրվելու⁴⁶⁸:

1918թ. նոյեմբերի 14-ին թուրքական զորքերը թողնում են Բաքուն⁴⁶⁹: Նոյեմբերի 17-ին գեներալ Ու. Թոմսոնի հրամանատարությամբ գործող ուժերը նստում են քաղաք: Նույն օրը Ադրբեջանի Մինիստրների խորհուրդի* (վարչապետ Ֆ. Խան Խոյսկու և ներքին գործերի նախարար Բեհրուպ - Խան Ջվանշիրի ստորագրությամբ) կողմից հրապարակված հայտարարության մեջ ասվում էր, որ Դաշնակիցների զորախմբի մուտքը Բաքու «...Ադրբեջանի անկախությունը և տարածքային անձեռնմխելիությունը խախտող թշնամական քայլ չէ: Պետական և հասարակական բոլոր հիմնարկները բնականոն գործելու են, ինչպես նախկինում...»⁴⁷⁰: Իրականում, սակայն, «Թալան» թերթի վկայակոչմամբ, Ադրբե-

⁴⁶⁸ Kazemzadeh F. *The Struggle for Transcaucasia (1917- 921)*, New York- Oxford, Philosophical Library Inc., George Ronald, 1951, p. 163 - 164.

⁴⁶⁹ Hovhannesian R. G. *The Republic of Armenia. Vol. 1*, p. 61.

* Ադրբեջանական Հանրապետության կառավարությունը ելիզավետապոլից Բաքու էր տեղափոխվել 1918թ. սեպտեմբերի 18-ին: Տես Իշխանեան Բ. Բազուի մեծ սարսափները. Անկեսային ուսումնասիրության սեպտեմբերեան անցքերի 1918թ., Թիֆլիս, «Մամուլ», 1920, էջ 6:

⁴⁷⁰ Հայտարարության տեքստը տես Միկոյան Ա. Ի., նշվ. աշխ., էջ 403:

ջանի կառավարությունն երկրում իրական իշխանություն չուներ, իսկ Ադրբեջանի զինված ուժերը անցել էին բրիտանացիների ենթակայության տակ⁴⁷¹:

Ժամանելով Բաքու՝ գեներալ Ու. Թոմսոնն իրեն հռչակում է որպես «ռազմական նահանգապետ» և «Միջազգային դաշնակցային ոստիկանական ուժերի հրամանատար»⁴⁷²: Բաքուն ռազմակալելուց անմիջապես հետո, նոյեմբերի 19-ին, գեներալ Ու. Թոմսոնը հրապարակում է հայտարարություն, որտեղ ասվում էր. «...Դաշնակիցների անունից Բաքուն գրավում են Մեծ Բրիտանիայի զորքերը: Ինձ ուղեկցում են Ֆրանսիայի և Միացյալ Նահանգների ներկայացուցիչները, և մենք այստեղ ենք գտնվում ռուսական Նոր կառավարության (նկատի ունի Ռուսաստանի Հարավում գործող Կամավորական բանակի Գլխավոր հրամանատարությանն (գեներալ-լեյտենանտ Անտոն Դենիկինին) կից Հատուկ խորհրդակցությունը-Հ.Ն.) օգնությամբ և լիակատար համաձայնությամբ...»⁴⁷³:

Միաժամանակ, բրիտանացիները իրենց լիակատար վերահսկողության տակ էին պահում նաև Կասպից ծովը, որտեղ ծովակալ Դ. Թ. Նորիսի հրամանատարությամբ ստեղծված Կայսերական Կասպյան նավատորմիղը գործում էր Ռուսաստանի Հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ա. Դենիկինի կառավարության անունից⁴⁷⁴: Նավատորմիղը վերահսկում էր Բաքու-Կրասնովոդսկ-Էնզելի ռազմավարական եռանկյունին:

⁴⁷¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 254, թ. 202ըդ.:

⁴⁷² Муромский Л. И., նշվ. աշխ., էջ 126:

⁴⁷³ Հայտարարության տեքստը տես Brinkley G. A. *The Volunteer Army and Allied Intervention in South Russia. 1917-1921*, Notre Dame, University of Notre Dame, 1966, p. 93-94. Միկոյան Ա. Ի., նշվ. աշխ., էջ 366-368:

⁴⁷⁴ Fischer L. *The Soviets in World Affairs*, p. 56.

Աղբրեցանի ռազմակալման անմիջապես հաջորդում է նաև Հյուսիսային Կովկասի ռազմակալումը բրիտանական ուժերի կողմից:

Նոյեմբերի 15-ի լույս 16-ին բրիտանական և ֆրանսիական ռազմանավերը մտնում են Սև ծով⁴⁷⁵: Նոյեմբերի 25-ին Դաշնակիցների նավատորմը ժամանում է Սևաստոպոլ, որտեղ անձնատուր է լինում Սևծովյան Գերմանական նավատորմը (ստեղծվել էր գերմանացիների կողմից բռնագրավված ռուսական նախկին Սևծովյան նավատորմի հիման վրա)⁴⁷⁶:

1918թ. դեկտեմբերի 6-ին թուրքական բանակը թողնում՝ է Ալեքսանդրապոլը⁴⁷⁷: Նույն օրը Բաթում է ժամանում բրիտանական ռազմական առաջին առաքելությունը՝ սպա Ուեբսթերի գլխավորությամբ, իսկ արդեն դեկտեմբերի 23-ին բրիտանական զորքերը ասի են իջնում Բաթումում, իսկ

դեկտեմբերի 25-ին՝ մտնում Թիֆլիս⁴⁷⁸: Ընդհանուր առմամբ, Այսրկովկաս ժամանած բրիտանական զորքերի թիվը հասնում էր մինչև 30 000-ի⁴⁷⁹: Բրիտանացիներն իրենց լիակատար վերահսկողության տակ են վերցնում ռազմակալական կարևորագույն նշանակություն ունեցող Այսրկովկասի երկաթուղային ցանցը՝ և Բաքու-Բաթում նավթատարը⁴⁸⁰: Կոստանդնուպոլսում գտնվող Գեներալ Ջ. Ֆ. Միլնը, ով դեկավարում էր բրիտանական այսպես կոչված «Սևծովյան բանակը» (իր մեջ ներառում էր Փ. Ասիայում և Այսրկովկասում գտնվող բրիտանական ուժերը, իսկ շտաբը գտնվում էր Կոստանդնուպոլսում) գեներալ Ջորջ Ֆորեստյե-Ուոքերի հրամանատարությամբ զործող 27-րդ դիվիզիային է վստահում Վրաստանի ու Հայաստանի պահպանության իրականացումը⁴⁸¹:

1918թ. դեկտեմբերի 8-ին գեներալ Ու. Թոմսոնի կողմից Կովկասի ժողովուրդներին ուղղված հայտարարության մեջ նշվում էր, որ բրիտանական ազդեցության գոտու սահմանները տարածվում են Պետրոլսկ - Դադստանի հյուսիսարևմտյան սահման - Կովկասյան լեռնաշղթա - Սև ծով գծից հարավ, սաեւ է թե իր մեջ ներառում էր Դադստանը, Կրաստանը, Աղբրեցանը և Հայաստանը⁴⁸²: Այդ կերպ բրիտանացիները Հնդկաստանի պաշտպանական ռազմավարական սահմանը ցանկանում էին հասցնել ոչ թե Եփրատ

⁴⁷⁵ Նավասարդեան Վ. Նշվ. աշխ., էջ 195:

⁴⁷⁶ Brinkley G. A. Նշվ. աշխ., էջ 84:

* Փաստացի Թուրքիան չհեռացավ Այսրկովկասից: Օսմանյան բանակի հեռանալուց առաջ Կոստանդնուպոլսից գաղտնի հրահանգ իջեցվեց, ըստ որի օսմանյան բանակի թագմաթիվ սպաներ մնացին ծառայության մեջ Աղբրեցանի բանակում՝ հիմնականում որպես իրահանգիչներ: Ավելին, կարճ ժամանակ անց՝ 1919թ. հոկտեմբերի 29-ին, ստորագրվեց (օսմանյան բանակի Գլխավոր շտաբի պետ Մ. Ջեմալ փաշայի և Աղբրեցանական կառավարության ներկայացուցիչ Մ. Քերիմով կողմից) Թուրք-արդրեցանական հարձակողական-պաշտպանողական համաձայնագիր: Վերջինիս առաջին կետով պետություններից մեկի տարածքային սահմանները անկասկածաբար արտաքին սպառնալիքի դեպքում՝ երկու կողմերը պարտավորվում էին գործել համատեղ: Համաձայնագրով Օսմանյան Կայսրությունն իր վրա էր վերցնում Աղբրեցանական բանակի կազմակերպումը, ներառյալ սպաների և իրահանգիչների պատրաստումը: Համաձայնագրի տեքստը տես ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 184, թ. 67 և 2րդ:

⁴⁷⁷ ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 42րդ:

⁴⁷⁸ Адамия В. И., Նշվ. աշխ., էջ 48, 51:

⁴⁷⁹ Петросян Г. Отношения Республики Армения с Россией (1918–1920 гг.). Ереван, Изд - во ЕГУ, 2012, с. 126.

* Ավելի ուշ՝ 1919թ. փետրվարի 15-ին, Կրաստանի կառավարության հետ հանդիպման ժամանակ գեներալ Ջ. Ֆորեստյե-Ուոքերի կողմից ներկայացվում է առաջարկություն՝ Այսրկովկասի երկաթուղային ամբողջ ցանցի վերագինման և այն կառավարելու նպատակով «Համապետական երկաթուղային տրեստ» ստեղծելու մասին: Steu Сеп С. Ф. «Демократическое правительство» Грузии и английское командование, Тифлис, Записки, 1928, с. 39.

⁴⁸⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 28, թ. 1:

⁴⁸¹ Hovhannisian R. G. The Republic of Armenia. Vol. 1, p. 61.

⁴⁸² Мирошников Л. И., Նշվ. աշխ., էջ 126:

(ինչպես 20-րդ դարակզբին հայտարարել էր լորդ Ջ. Քերզոնը), այլ Կովկասյան լեռնաշղթա⁴⁸³: Մեծ Բրիտանիայի համար հայտնվել էր մի նոր հզոր վտանգ, ինչպիսին էր դեպի Պարսկաստան և Թուրքիա ներթափանցող բուշևիզմն և, հատկապես, «բուշևիզմի թյուրք-մուսուլմանական ֆորմացիան», որն ուղղակիորեն սպառնայիք էր Հնդկաստանի համար: Հետևաբար, բրիտանացիները նախընտրում էին Հնդկաստանը պաշտպանել ոչ թե Հինդուկուշի, այլ Կովկասյան լեռների տակ:

«Թայմս»-ը ռազմակալված Այսրկովկասի մասին գրում էր, որ այն հանդիսանում է «բնական կամուրջ՝ Սև և Կասպից ծովերի միջև, բնական օղակ՝ Անգլիան Հնդկաստանի հետ կապող շղթայի, տեղամաս՝ Մեծ ծովային ճանապարհի, որից Անգլիան չի կարող հրաժարվել, և որի նավակայաններն են հանդիսանում Ջիրբայթարն ու Կոստանդնուպոլիսը: Հետևաբար, աշխարհագրական պայմանների ուժով, Անգլիան Անդրկովկասում ունի շահեր, որոնք չկան որևէ այլ Տերության մոտ»⁴⁸⁴:

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմից Մեծ Բրիտանիան դուրս եկավ որպես ամենից շահած կողմ: Քանզի, պատերազմի արդյունքում, հիմնականում, լուծվեցին Մերձավոր Արևելքում ու Այսրկովկասում աշխարհառազմավարական այն խնդիրները, որոնք դրված էին Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական ղեկավարության առաջ: Այսրկովկասի ռազմակայմամբ, ամբողջացան հետևյալ տերազմյան բրիտանական աշխարհառազմավարական սահմանները, որոնք ձգվում էին Եգիպտոսից ու Կոստանդնուպոլիսից մինչև Հնդկաստան, իրենց մեջ ներառելով Միջին Ասիան, Հյուսիսային Կովկասն ու Այսրկովկասը, Պարսկաստանը, Միջագետքը, Սիրիան, Կիլիկիան (մինչև վերջիններիս Ֆրանսիային անցնելը), Պաղեստինը:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՀԱԿԱՐԻՏԱՆԱԿԱՆ ՄՈՍԿՎԱ - ԱՆԿԱՐԱ ԱՇԽԱՐ- ՀԱՌԱՋԱՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՅՔԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

4.1. Ուժերի ռազմավարական հարաբերակցությունը Մերձավորարևելյան տարածաշրջանում հետմուդրոսյան տարիներին

1918թ. դեկտեմբերին Մեծ Բրիտանիայի Ռազմական կարիների կողմից ընդունվում է «Որոշումներ Կովկասի և Հայաստանի վերաբերյալ» փաստաթուղթը, որում նշվում էր.

«1) Մենք (Մեծ Բրիտանիան-Հ.Ն.) ցանկանում ենք նախկին Ռուսական Կայսրությունից անջատված Անդրկովկասում տեսնել ուժեղ, անկախ պետություններ:

2) Այս պետություններից առավել զարգացած Վրաստանը շուտ ճանաչվելու ավելի մեծ հավանականություն ունի:

3) Դաղստանի, Ադրբեջանի, Ռուսական Հայաստանի (Հայաստանի Հանրապետության-Հ.Ն.) ճանաչումը կախված կլինի դեպքերի ընթացքից:

4) Ռուսական Հայաստանը գոյություն կունենա անջատ թե ոչ, կորոշվի իր իսկ ժողովրդի կողմից:

8) Մեծ Բրիտանիան մտադրություն չունի Կովկասի որևէ տարածք բռնակցման ենթարկել կամ խնամակալության տակ վերցնել:

9) Որոշ ժամանակով պահպանել բրիտանական նավատորմի կողմից վերահսկողությունը Կասպից ծովում:

10) Ազատ նավահանգիստներ հոչակել Բաթումը, Տրապիզոնը, Բաքուն և ապահովել երկաթուղիների ազատ երթևեկությունը Բաթումից Բաքու:

⁴⁸³ Кемаль М. նշվ. աշխ., էջ XXXVIII.

⁴⁸⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291 մաս 2, թ. 279:

11) Բարձրի նախահանքերում քայլեր ձեռնարկել միջազգային շահերի պաշտպանության ուղղությամբ:

13) Եթե հայկական անկախ պետություն ստեղծվի հայկական 6 վիլայեթներից ավելի կամ պակաս տարածքում և պահանջվի որևէ տերության՝ հովանավորություն, ապա Մեծ Բրիտանիան պետք է ձեռնպահ մնա ցանկացած պահանջ առաջադրելուց»⁴⁸⁵:

Խոսելով բրիտանացիների Այսրկովկասում գտնվելու իրական մտադրությունների մասին՝ Ալ. Խատիսյանը նշում է. «Անոնք (բրիտանացիները-Հ.Ն.) անկասկած կուզեն յաջողցնել երկու նպատակ. Նախ ամրացնել անդրկովկասեան Հանրապետութիւններու անկախութիւնը՝ օգտուելով միաժամանակ Բաքուի նպօժէն, եւ երկրորդ՝ ստեղծել հիմունքներ Ատրպէջանեան՝ մահմետական Հանրապետու-

* Արևմտյան Հայաստանի տարածքում ստեղծվելիք անկախ հայկական պետության նկատմամբ հովանավորության կամ մանդատի իրավունքը, ըստ բրիտանական կողմի, ցանկալի էր տալ միայն ԱՄՆ-ին (տես Hughes M., նշվ. աշխ., էջ 118): Եվ չնայած, որ ԱՄՆ-ը 1920թ. ապրիլի 23-ին դե ֆակտո ճանաչեց ՀՀ անկախությունը, սակայն 1920թ. հունիսի 1-ին ԱՄՆ Կոնգրեսը մերժեց վերցնել հայկական մանդատը: Այս մերժումը արքանզասցի սենատոր Ջոզեֆ Ռոբինսոնի կողմից բնորոշվեց որպես՝ արևելքում բրիտանությանը (Արևմտյան քաղաքակրթությանը) հասցված «ջախջախիչ հարված» (տես Շիրինյան Լ. Արևմտաքի անկումը. Կուրդր Կիլտոնը և արդարացի աշխարհակարգի հաստատման փորձի ծախսողումը, Երևան, «Ամարաս», էջ 26):

⁴⁸⁵ Գալոյան Գ. Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թվականներին, Երևան, «Գիտություն», 1999, էջ 55-56:

* 1918-1920թթ. Ադրբեյջանի Հանրապետության կայացման ու ամրապնդման գործին էին լծված բրիտանական հետախուզությունը և Հարավային Ռուսաստանում բրիտանական պատվիրակ Հ. Մաքհնդերը (Տես Смартов А., նշվ. աշխ., էջ 275): Սակայն բրիտանական զաղտնի հետախուզության սպա, գեներալ Լ. Դանստերվիլի գլխավորած ռազմական առաքելության անդամ մայրը Մակրոնները ստիպված էր

թեան՝ դարձնելով զայն ուժեղ եւ կենսունակ... Չուզընթացաբար անգլիացիք այն ժամանակ կաշխատէին անպայման ազատել Կովկասը թրքական գրաւումէ»⁴⁸⁶: 1918թ. հոկտեմբերի 16-ի համարում վրացական «Սաքարթվելո» թերթը գրում էր. «Անգլիան թույլ չի տա թուրքերին ստեղծել Եվրոպայից մինչև Չինաստանի սահմանները ծգվող միասնական հզոր մահմեդական պետություն: Այդպիսի մահմեդական պետությունը կարող է ապագայում լինել Հնդկաստանի համար ավելի մեծ վտանգ քան Ռուսաստանն էր: Անգլիան ոչ ոքի չի զիջի Կրաստանն ու Հայաստանը, եթե ցանկանում է պահպանել իր ազդեցությունը Պարսկաստանում և ապահովել Հնդկաստանի անվտանգությունը»⁴⁸⁷: Հենց այս հանգամանքով էր պայմանավորված Ջ. Քերզոնի կողմից «հայկական սեպի» մասին աշխարհառազմավարագիտական տեսության առաջ քաշումը: Մասնավորապես, լորդ Ջ. Քերզոնը նշում էր, որ կարող է համամոտուլմանական կամ համաթուրանական մեծ շարժում ծավալվի, և, հանուն աշխարհի խաղաղության, «ցանկալի է սեպ խրել Թուրքիայի մահմեդականների և Արևելքի մահմեդականների միջև բրիտանոյա համայնքի ձևով, որը լինելու է նոր հայկական պետությունը»⁴⁸⁸: Սա անմիջապես և խորությամբ ընկալվեց թուրքական շրջանակներում. «Պէտք է ոչնչացնել Հայաստանը, զոր Դաշնակիցները կուզեն իբր

խտատվանել. «Հայերն ապարդյուն են մտածում, որ մենք միայն իրենց համար ենք եկել: Մենք թաթարների վրա շատ փող ենք ծախսել, սակայն ոչինչ չենք ստացել» (Տես ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 158, թ. 6):

⁴⁸⁶ Խատիսյան Ալ., նշվ. աշխ., էջ 178:

⁴⁸⁷ ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 57, թ. 213:

⁴⁸⁸ Lloyd George D. The Truth about the Peace Treaties. Vol. 2, London, Victor Gollancz LTD, 1938, p. 1307.

թումբ կանգնեցնել երկու եղբայր հատումներուն, Անատոլոյի եւ Կովկասի թըրքսեան միջե»⁴⁸⁹:

«Ասքարթվելը» թերթի նույն համարը շեշտում էր, որ Կովկասի և Այսրկովկասի «մասնատումը առանձին պետությունների, չի հակասում այն քաղաքականությանը, որն Անգլիան վարում է Միջին Ասիայում»⁴⁹⁰: Մեծ Բրիտանիան, Այսրկովկասում ստեղծելով բուֆերային նորանկախ պետություններ և օգտագործելով նրանց միջև առկա տարածքային վեճերը, պահպանում էր քաղաքական հավասարակշռությունը Այսրկովկասում, ինչպես դա արվում էր բրիտանացիների կողմից Եվրոպական մայրցամաքում՝ ելրոպական պետությունների միջև 19-րդ դարի ողջ ընթացքում:

Այսրկովկասյան նորանկախ Հանրապետությունների միջև առկա տարածքային վեճերին բրիտանական ուղղակի միջամտությունն առաջին անգամ արտացոլվեց Ղարաբաղի* հարցում: 1918թ. նոյեմբերի վերջին, Նախիջևանում գտնվող Անդրանիկն իր զորամասով փորձեց Գորիսով մտնել Ղարաբաղ և շարժվել Շուշի: Սակայն, նրան կանգնեցրեց գեներալ Ու. Թոմսոնը՝ հղելով մի զրոյություն. «Ես ունեմ տեղեկություն, որ Դուք պատրաստվում եք իրականացնել հարձակում Շուշի քաղաքի վրա, որտեղից հիմա էվակուացվում են այնտեղ գտնվող թուրքական զորքերը*... Դաշնակիցների կողմից

⁴⁸⁹ Շահան Նաթալի. Թուրքիզմը Անգորայէն Պաքո եւ թըրքական օրիէնթափոն. Թուրքերը եւ մենք, Երևան, «Շուշան», 1992, էջ 29:

⁴⁹⁰ ՀԱՍ. ֆ. 200, ց. 1, գ. 57, թ. 213:

* 1918–1920թթ. Ղարաբաղյան հիմնախնդրում Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականության մասին մանրամասն տես՝ Gharibyan A. A. The Issue of Nagorno-Karabakh in 1918-1920 and Great Britain, Yerevan, YSU Press, 2014.

* Թուրք – աղբրեջանական զորքերը Շուշի բերդաքաղաքը գրավել էին 1918թ. սեպտեմբերի 25-ին: Sbu Назорный Карабах в 1918–1923 гг., Сборник документов и материалов. Отв. ред., Микаелян В. А., Ереван, Изд. АН Армения, 1992, с. 38.

աղբրեջանական զորքերին հրամայված է չդիմել թշնամական գործողությունների ընդդեմ հայերի, և հիմա, ես, որպես Դաշնակիցների ներկայացուցիչ առաջարկում եմ Ձեզ ձեռնպահ մնալ թուրքական կամ աղբրեջանական զորքերի դեմ որևէ թշնամական գործողությունից: Ես Ձեզ գգուչացնում եմ, եթե Դուք չիրագործեք իմ կողմից ստացված այս հրահանգները, Դուք անձամբ պատասխան կտաք Ձեր գործողություններով հրահրված արյունահեղության համար»⁴⁹¹: Այս գրությունն ստանալով՝ Անդրանիկը դադարեցնում է առաջխաղացումը: 1918թ. նոյեմբերի 24-ին գեներալ Ու. Թոմսոնը հրապարակելով հատուկ հայտարարություն՝ շեշտում է, որ Այսրկովկասյան սահմանների և վիճելի տարածքների «ապագան որոշվելու է Փարիզի Խաղաղության կոնֆերանսում»⁴⁹²: Արդեն դեկտեմբերի 22-ին Անդրանիկի մոտ՝ Գորիս, է ժամանում բրիտանական բանակի մայոր Գիբոնը, ով հաստատում է Ղարաբաղի և Ջանգեզուրի սահմանազատման գիծը՝ Ջաբուղ–Հազարի գծով⁴⁹³: Այդպիսով, բրիտանացիները Աղբրեջանին էին հանձնում Ղարաբաղը՝ դրա դիմաց Հայաստանին թողնելով Ջանգեզուրը:

Բրիտանական միջամտությունն իր արտահայտությունը գտավ նաև սահմանային վեճի արդյունքում սկսված Հայկոացական պատերազմում (1918թ. դեկտեմբերի 5-ից 31-ը): Դեկտեմբերի 25-ին բրիտանական բանակի գեներալ Ռայլքրոֆթը, Թիֆլիսում ֆրանսիական առաքելության ղեկավար,

⁴⁹¹ Անդրանիկին ուղղված գեներալ Ու. Թոմսոնի զրոյությունը տես ՀԱՍ. ֆ. 370, ց. 1, գ. 39, թ. 2:

⁴⁹² Brinkley G. A., նշվ. աշխ., էջ 97:

⁴⁹³ Ստեփանեան Յ. Անդրանիկը Սիւնեաց երկրում. «ՎԷՄ» հանդէս, Փարիզ, նոյեմբեր-դեկտեմբեր 1936, թիւ 5, էջ 64 – 65:

գնդապետ Շարդինյեի հետ միասին, Թիֆլիսից նամակով դիմում է ՀՀ Մինիստրների խորհրդի նախագահ Հովհաննես Քաջազնունի՝ պահանջելով ռազմական գործողությունների դադարեցում, վրացական և հայկական զորքերի դուրս բերում, համապատասխանաբար, Բորչալուի հյուսիսային և հարավային շրջաններից, և սահմանային խնդիրները լուծելու համար հայ, վրացի, բրիտանացի ու ֆրանսիացի ներկայացուցիչներից խառը հանձնաժողովի ստեղծում⁴⁹⁴։ Արդյունքում կնքվեց զինադադար և 1919թ. հունվարի 9-ից 17-ը Թիֆլիսում Դաշնակից տերությունների պաշտոնական ներկայացուցիչ, բրիտանական բանակի գնդապետ Ստյուարտի մասնակցությամբ տեղի ունեցավ խորհրդաժողով⁴⁹⁵։ Բրիտանական կողմի ճնշմամբ ստորագրված համաձայնագրով Լոռին հայտարարվեց «չեզոք գոտի»⁴⁹⁶։ Վերջինս գտնվելու էր բրիտանացի զենեղալ-նահանգապետի անմիջական վերահսկողության ներքո և իր սահմանների մեջ ներառում էր նաև ռազմավարական հումքի՝ Ալավերդու պղնձի հանքերը⁴⁹⁵։

ՀՀ Ռազմական նախարար, գեներալ Հ. Հախվերդյանի քննորոշմամբ բրիտանական հրամանատարությունը փաստացի «տնօրինում էր Անդրկովկասի ճակատագիրը»⁴⁹⁶։ Ոչ պակաս դիպուկ է արտահայտվում Լ. Շանթը. «երբ 1918 թվականին ռուսները քաշուեցան Կովկասէն ու եկան անգլիացիք, շատ քնական կերպով մեր նորածին Հանրապետական կառավարութիւնը յենուեցաւ, եւ պէտք է յենուէր,

⁴⁹⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 27, թ. 25:

⁴⁹⁵ Խորհրդաժողովի մասին, այդ թվում Լոռու «չեզոք գոտու» ստեղծման վերաբերյալ որոշումը, տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 12, թ. 14 - 17:

⁴⁹⁶ Լոռու «չեզոք գոտու» քարտեզը տես ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 1, թ. 65:

⁴⁹⁵ Гражданская война и военная интервенция в СССР. Энциклопедия, с. 397.

⁴⁹⁶ ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 14:

Անգլիայի վրայ, անոր պահանջն ու հաշիւները աչքի առաջ ունենար, իր ուզածը յարմարցնէր անգլիական ձգտումներուն ու հրահանգներուն, եւ անգլիացիներու ձեռքէն ալ ստացաւ Կարսն՝ ու Նախիջեանը»⁴⁹⁷:

⁴⁹⁷ Չնայած Ռաուֆ Բեյի առաջարկին՝ թուրք-բրիտանական դաշինքի ստորագրմամբ վերականգնել մինչև 1878թ. Կովկասում գոյություն ունեցող Թուրքիայի սահմանները (տես *Историческое А. М.*, նշվ. աշխ., էջ 23), բրիտանացիները նախընտրեցին վերականգնել 1914թ. սահմանները: 1919թ. հունվարի 7-ին գեներալ Ջ. Ֆորեսթեր-Ուոքերը պահանջում է թուրքական ուժերի դուրս բերումը Կարսից (տես *Nassibian A.*, նշվ. աշխ., էջ 157): Շուտով թուրքերը թողնում են Կարսը, որը զբաղեցվում է բրիտանական զորքերի կողմից, իսկ բրիտանացի գնդապետ Կ. Է. Տենպերին նշանակվում է Կարսում բրիտանական զբաղույն ներկայացուցիչ (տես ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 1, թ. 35): Արդեն մարտին հայկական ուժերը գեներալ Արտեմ Մելիք-Հովսեփյանցի (Օսիպով) հրամանատարությամբ մտնում են Կարս՝ փոխարինելով բրիտանական զորքերին, իսկ մարտի 19-ին Ստեփան Դորդանյանը նշանակվում է Կարսի նահանգապետ (տես ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 11 և շրջ.): ինչպես Ս. Դորդանյանն է նշում, թեև անգլիացիները հանձնեցին մեզ Կարսի նահանգը, բայց այդ ավելի շուտ «իպիպոմատիայի մի փորձ էր, քան թե միջազգային վճռայից մի ակտ» (տես ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 1, թ. 64): Ավելին, բրիտանացիները արգելեցին հայկական զորքերին զբաղեցնել Կարսի զինապահեստները, իսկ հուլիս - օգոստոս ամիսներին գեներալ Ա. Դենիկինի բանակի երկու սպաներ ու բրիտանական բանակի կապիտան Թվիլթիլը ժամանելով Կարս՝ բերդի թնդանոթների ու արկերի զգալի մասը տեղափոխում են Դենիկինի բանակ, մի մասն էլ, գեներալ Լ. Բիչերախտլին ուղարկելու հիմնավորմամբ, տարվում է Ադրբեջան (տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 353, թ. 14; ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 11շրջ.): Կարսից Բաբու տեղափոխված թնդանոթների թիվը հասնում էր 60-ի (տես Ահարոնեան Ա. Մեծ երազի ճամբուն վրայ. Ակնարկ Հայկական հարցի պատմության վրայ, Պէրոպ, «Առյուծ», 1964, էջ 32):

⁴⁹⁸ 1919թ. փետրվարի 3-ին ՀՀ Արտաքին գործերի մինիստր Սիրական Տիգրանյանի և Նախիջևանի գավառի զինվորական կառավարիչ փոխգնդապետ Ֆ. Է. Լուրդոնի միջև ստորագրվում է համաձայնագիր՝ Նախիջևանի գավառի կառավարումը ՀՀ կառավարությանը հանձնելու

1919թ. ապրիլին Ալ. Խատիսյանին հրավիրելով Թիֆլիս՝ բրիտանական հրամանատարությունը նրան է ներկայացնում տարածաշրջանում առկա տարածքային վեճերի լուծման բրիտանական բանաձևը. Հայաստանին էին անցնելու Կարսի նահանգի արևելյան մասը, Նախիջևան գավառի մեծ մասը, Լոռու գավառի հարավային մասը, ինչի փոխարեն Հայաստանը պետք է զիջեր Ախալքալաքի գավառը՝ Վրաստանին, Ղարաբաղը՝ Ադրբեջանին⁴⁹⁸: Այսպիսով, Այսրկովկասյան երեք հանրապետություններից յուրաքանչյուրը պետք է բավարարվեր մասնակի, եվ ոչ թե ստանար առավելագույնը: Եվ չնայած, որ 1919թ. մարտի 7 (20-ին) գեներալ Ջ. Ֆ. Միլնի կողմից Այսրկովկասի ժողովուրդներին ուղղված հայտարարության մեջ ասվում էր, որ բրիտանացիները զբաղեցրել են Այսրկովկասը, որպեսզի ապահովեն Դաշնակիցների և Թուրքիայի միջև զինադադարի պայմանների իրագործումը, մինչև տարածքային հարցերի լուծումը՝ Խաղաղության կոնֆերանսի կողմից⁴⁹⁹, սակայն տարածքային հարցերն իրականում այդպես էլ չպիտի

վերաբերյալ (համաձայնագրի անգլերեն և հայերեն տեքստերը, համապատասխանաբար, տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 209, թ. 37, ֆ. 201, ց. 1, գ. 45, մաս 1, թ. 78): Մայիսի 20-ին հայկական զորքերը մտնում են Նախիջևան՝ փոխարինելով այնտեղ գտնվող բրիտանական ուժերին: Նախիջևանի նկատմամբ բրիտանական քաղաքականության մասին մանրամասն տես Չոհրաբյան Է. Նախիջևանյան իիմախեղիքը և Հայաստանի «դաշնակիցները». (1918թ. դեկտեմբեր - 1920թ. ապրիլ), Երևան, Ա. հ. 2002:

⁴⁹⁷ Շանթ Լ., նշվ. աշխ., էջ 200:

⁴⁹⁸ Յրթ. Յ. Խաչատուրյան. Անգլիական քաղաքականությունն ի Անդրկովկաս. «Հայրենիք» ամսագիր, Պոսթերն, մայիս - յունիս 1945, թիւ 3, էջ 28:

⁴⁹⁹ Հայտարարության տեքստը տես՝ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 32 մաս 2, թ. 173:

լուծվեն, կամ ավելի շուտ լուծեն: Անգամ Դաշնակիցների Գերագույն խորհրդի կողմից Այսրկովկասյան երեք հանրապետությունների կառավարությունների դե ֆակտո ճանաչման* առթիվ, 1920թ. հունվարի 23-ին ՀՀ կառավարությանն ուղղված հեռագրում, լորդ Ջ. Քերզոնը շեշտում էր, որ կառավարությունը փաստացի ճանաչվում է, «պայմանով, որ այդպիսի ճանաչումը ոչ մի կերպ չի կանխորոշում սահմանների մասին հարցի վերջանական լուծումը»⁵⁰⁰:

Այս կերպ էին փորձում բրիտանացիները ստեղծել քաղաքական հավասարակշռությունն Այսրկովկասյան երեք Հանրապետությունների միջև՝ իրենց ազդեցությունը պահպանելով ողջ տարածաշրջանում: Մեծ Բրիտանիան, որն ակտիվ կերպով պաշտպանում էր Ռուսաստանի հարավում գործող գեներալ Ա. Դենիկինի բանակին՝ բուլղարների դեմ պայքարում, միաժամանակ, փորձում էր պաշտպանել Այսրկովկասը՝ վերջինիս անկախությունը չճանաչող և նախկին Ռուսական Կայսրության սահմանների վերականգնմանը ձգտող գեներալ Ա. Դենիկինի բանակից եկող վտանգից: Ինչպես բրիտանացի գեներալ Վ. Բիչն էր նշում. «Սա պատմության մեջ միակ դեպքն է, երբ Ռուսաստանը կարող է

* Դաշնակիցների Գերագույն խորհրդի կողմից Վրաստանի և Ադրբեջանի դե ֆակտո ճանաչումը տեղի ունեցավ միայն 1920թ. հունվարի 13-ին (տես Lenczowski G. Russia and the West in Iran. 1918-1948, Ithaca-New York, Cornell University Press, 1949, p. 23), իսկ Հայաստանի Հանրապետության դե ֆակտո ճանաչումը՝ 1920թ. հունվարի 19-ին (տես Չոբախյան Գ. Ղորղանեան. Հայաստանի Հանրապետությունը եւ պետությունները. «ՎԷՄ» հանդես, Փարիզ, մայիս - յունիս 1934, թիւ 3, էջ 35: Լազեան Գ. Հայաստան եւ Հայ դատը ըստ դաշնագրերու, էջ 132.): Դաշնակիցների Գերագույն խորհրդի կողմից Այսրկովկասյան երեք հանրապետությունների դե ֆակտո ճանաչման գործընթացի մասին մանրամասն տես ՀԱԱ, ֆ. 275, ց. 6, գ. 19:

⁵⁰⁰ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 44, թ. 6:

հեռանալ Անդրկովկասից»⁵⁰¹: 1919թ. մարտի 28-ին մասնակցելով ՀՀ կառավարության նիստին գեներալ Ռ. Թոմսոնը հայտարարում է. «Անտանտի պետությունները օգնում են Ռուսաստանի Հարավին, քանի որ օգտագործում են նրան բոլշևիկների դեմ պայքարում, սակայն նրան երբեք թույլ չի տրվի սպառնալ Անդրկովկասի հանրապետությունների անկախություններին, որոնց պաշտպանությամբ իրենք հանդես են գալիս»⁵⁰²: Իրականում, սակայն, բրիտանացիները ուզում էին տեսնել տարածաշրջանում ոչ թե ուժեղ և անկախ պետություններ, այլ Լ. Շանթի բնորոշմամբ. «կախյալ անկախություններ»⁵⁰³:

Հետմոտորայան տարիներին Այսրկովկասում բրիտանական քաղաքականությունը հիմնված էր 1918թ. նոյեմբերին արտաքին գործերի քարտուղարության կողմից պատրաստված հուշագրում տեղ գտած հետևյալ բանաձևի հիման վրա: Այն է, եթե անիշխանությունը Ռուսաստանում ձգվի երկար տարիներ, Այսրկովկասի ներկա անջատողականությունը կամրապղծվի և կդառնա հարատև, իսկ եթե Ռուսաստանը վերականգնվի, ապա Այսրկովկասը կվերամիավորվի նրան՝ ամենայն հավանականությամբ դաշնային հիմունքներով⁵⁰⁴: Արդյունքում տեղի ունեցավ երկրորդ տարբերակը. Ցարական Ռուսաստանին փոխարինած Խորհրդային Ռուսաստանը 1920թ. սկսեց նվաճել Այսրկովկասը: Արդյունքում «գնաց Անգլիան, եկա Ռուսաստանը. Եւ կորաւ, արեան մէջ խեղդուեցաւ եղած յարաբերական անկախութիւնն ար»⁵⁰⁵:

⁵⁰¹ ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 4-ի շրջ.:

⁵⁰² Петросян Г., նշվ. աշխ., էջ 218:

⁵⁰³ Շանթ Լ., նշվ. աշխ., էջ 61:

⁵⁰⁴ De Waal T. The Caucasus. An Introduction, Oxford, Oxford University Press, 2010, p. 67.

⁵⁰⁵ Հարեանդ, նշվ. աշխ., էջ 217:

Հյուսիսային Կովկասի և Այսրկովկասի վերանվաճման նպատակով՝ 1920թ. հունվարի 16-ին, Խորհրդային Ռուսաստանի Ռազմաօդային ուժերի հետ գործող Հարավարևելյան ռազմաճակատը վերանվանվում է Կովկասյան ռազմաճակատ, որն իր կազմում ուներ 5 բանակներ (1-ին հեծյալ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ)⁵⁰⁶: Սակայն, Այսրկովկասի գրավման ռազմագործողությունը շուտով հայտնվեց ռազմավարական փակուղու առաջ: Խնդիրն այն է, որ 1920թ. փետրվար - մարտ ամիսներին 8-րդ բանակը, Ա. Դենիկինի ուժերի դեմ մարտերում ծանր հարվածներ ստանալով, կորցնում է իր մարտունակությունը և ենթարկվում վերակազմավորման: Միաժամանակ, մարտի 5-ին Արևմտյան ռազմաճակատում լեհական բանակի (ավելի քան 730 000-ի դիմաց Կարմիր բանակի Արևմտյան և Հարավարևմտյան ռազմաճակատներն ունեին երկուական բանակներ՝ 15-րդ, 12-րդ, 14-րդ՝ միասին 65 000 զինվոր⁵⁰⁷) հարձակումը ստիպում է Կարմիր բանակի հրամանատարությանը մարտի 16-ին Կովկասյան ռազմաճակատի կազմից հանել և Արևմտյան ռազմաճակատ ուղարկել հարվածային գլխավոր ուժը՝ 1-ին հեծյալ բանակը:

Ուժերի նման հարաբերակցության պայմաններում, երբ Կովկասյան ռազմաճակատի ենթակայության տակ մնացին միայն 3 բանակներ, որոնցից 9-րդն ու 10-րդը շարունակում էին ներգրավված մնալ ռազմական գործողությունների մեջ՝ ընդդեմ գեներալ Ա. Դենիկինի բանակի, միայն 11-րդ բանակի ուժերով գործնականում անհնար դարձավ այսրկովկասյան երեք հանրապետությունների բանակների և տարա-

⁵⁰⁶ Гражданская война и военная интервенция в СССР. Энциклопедия., с. 250.

⁵⁰⁷ Լույս տեղում, էջ 557:

Ճաշրջանում գտնվող բրիտանական զորախմբի* համատեղ ուժերի դեմ որևէ հաջող ռազմագործողության իրականացումը: Այս փակուղուց դուրս գալուն հորհրդային Ռուսաստանին օգնեց Անատոլիայում սկսված թուրքական ազգայնական շարժումը, որն իր հերթին հայտնվել էր ռազմավարական փակուղու առաջ՝ պայմանավորված արևմտքից բրիտանացիների աջակցությամբ հունական բանակի անկասելի առաջխաղացմամբ դեպի շարժման սիրտը՝ Անկարա:

Հունաստանը, որպես փոխհատուցում Առաջին համաշխարհային պատերազմին իր մասնակցության, Դաշնակիցների, մասնավորապես, Մեծ Բրիտանիայի կողմից իրավունք ստացավ 1919թ. մայիսի 15-ին զբաղեցնելու Ջմյունիա (Իզմիր) քաղաքը՝ հիմնվելով Մուտրոսի զինադադարի 7-րդ հոդվածի (Դաշնակիցներն իրավունք էին ունենալու զբաղեցնելու Օսմանյան Կայսրության տարածքում ռազմավարական բոլոր կետերը) վրա: Արդեն, 1920թ. հունվարի 28-ին Օսմանյան պառլամենտի կողմից (120 տեղից 75-ը զբաղեցնում էին ազգայնականները⁵⁰⁸) «Ազգային ուխտի» ընդունումը, որը հռչակում էր Թուրքիայի ինքնիշխանությունը (սուվերենությունը)՝ այն տարածքով, որը Օսմանյան Կայսրության կազմում էր Մուտրոսի զինադադարի կնքման պահին (ներառյալ Նեղոցները և բացառությամբ արաբական երկրների), հանգեցրեց բրիտանացիների կողմից խորհրդարանի ցրմանն ու Կոստանդնուպոլսի ռազմավարական մասին, պաշտոնապես, 1920թ. մարտի 16-ի հայ-

* Այսրևովկասում գտնվող բրիտանական վերջին զորքերը Բաթումի նավահանգստից էվակուացվեցին 1920թ. հուլիսին: Տես ՀԱԱ, ֆ. 412, գ. 1, գ. 2356, թ. 3:

⁵⁰⁸ Корсуи Н. Г. Греко-турецкая война 1919-1922 гг. Оперативно-стратегический очерк, Москва, Воениздат, 1940, с. 9.

տարարմանը⁵⁰⁹: Միաժամանակ, հունական կառավարությունը բրիտանական կառավարության կողմից քաղաքական համաձայնություն ստացավ Ջմյունիայից դեպի Անատոլիայի խորքերը շարժվելու և թուրքական ազգայնական շարժումը ջախջախելու հարցում:

Կովկասում Հունաստանի դիվանագիտական առաքելության ղեկավար Ի. Ստավրիդակիսը դեռ 1919թ. նոյեմբերին առաջ էր քաշել ռազմավարագիտական թեզ, ըստ որի, Հունաստանին «տրված է եզակի առիթ, այն պահին, երբ Արևելքն անտեր է մնացել, Ռուսաստանը բաժան - բաժան է ու կազմալուծված, և այս տարածաշրջանում նշանակալի գինվորական ուժը հունականն է, Փոքր Ասիան, թեկուզև կարճ ժամանակով, կառնվի հզոր արքանի մեջ՝ մի կողմից Ջմյունիայից, իսկ մյուս կողմից Հայաստանից»⁵¹⁰: Սա էր պատճառը, որ Հունական բանակի Գլխավոր շտաբն իր հետախուզական-տեղեկատվական համակարգի ննարավորություններով «ամենայն ուշադրությամբ հետևում էր հայ-թուրքական ռազմաճակատի (մինչև 1920թ. սեպտեմբերը, այն արդեն, փաստացի, գոյություն ուներ-Հ.Ն.) զարգացումներին»⁵¹¹:

Ստեղծված պայմաններում, բնական ռազմավարական դաշնակիցներ հանդիսացող Հունաստանն ու Հայաստանը երկուստեք քայլեր են ձեռնարկում Պոնտոսի հանրապետության ստեղծման ուղղությամբ: 1920թ. հունվարի 10-16-ը

⁵⁰⁹ Шамстудинос А. М., Уշվ. աշխ., էջ 23:

⁵¹⁰ Հունական արևիվային փաստաթղթերը հայ-հունական հարաբերությունների մասին Առաջին Հանրապետության շրջանում (1918-1920), Թարգմ. հունարենից Հրաչ Մ. Բարթիկյանի, Երևան, Ա. Հ., 1998, էջ 15-16:

⁵¹¹ Ռամազյան Ս. Հայ-հունական ռազմական անջությունների և համագործակցության պատմություն, Աթենք, Ա. Հ., 2010, էջ 169:

Տրապիզոնի միտրոպոլիտ Խրիսանթոսի (Ֆիլիպպոսի) երևան կատարած այցի ընթացքում ստորագրվում է «Երևանյան համաձայնագիրը» (Խրիսանթոսի և ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանի միջև), որով Պոնտոսը (ընդգրկելու էր Ռիզա-Սինոպ ամրոցը տարածությունը՝ Պոնտական լեռների և Սև ծովի միջև) մտնելու էր Հայաստանի Հանրապետության կազմի մեջ՝ որպես նրա դաշնային (ֆեդերատիվ) մաս⁵¹²: Միաժամանակ, 1920թ. հունվարի 12-ին (25-ին) Թիֆլիսում ստորագրվում է Հայ-հունական ռազմական համաձայնագիր (համատեղ ռազմական գործողությունների պայմաններն ամրագրելու մասին)*, որի համատեքստում հունական կողմը դիմում է բրիտանացիներին՝ առաջարկելով Պոնտոսում ստեղծել բրիտանական կառուցվածքով (մոդելով) անգլո-հելլենական բանակ, որն ի վիճակի կլինի «Պոնտո-հայկական Հանրապետության ստրատեգիական (ռազմավարական-Հ.Ն.) պաշտպանությունը տեղավորել Կովկասի՝ Սևծովյան բանակի բրիտանական հրամանատարության կողմից նշված շրջանը»⁵¹³:

1920թ. հունվարի 16-ին Ալ. Խատիսյանն ու մետրոպոլիտ Խրիսանթոսը Հունաստանի վարչապետ Էլեֆթերիոս Վենիզելոսին և Փարիզի Խաղաղության վեհաժողովին են

⁵¹² Նույն տեղում, էջ 165 - 167:

* Հայ-հունական ռազմական համագործակցությունը ենթադրում էր նաև ռազմատեխնիկական համագործակցություն: Մասնավորապես, հունական կողմը ՀՀ բանակին տրամադրեց ֆրանսիական արտադրության «Lebel» ու «Gras» մակնիշի (10 000 հատ) հրացաններ և դրանց փամփոշուներ (4 մլն հատ), որոնք մատակարարվեցին 1920թ. Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին (տես Ռամազյան Ս. Հայ-հունական ռազմական առնչությունների և համագործակցության պատմություն, էջ 167-171):

⁵¹³ Հունական արխիվային փաստաթղթերը հայ-հունական հարաբերությունների մասին, էջ 96 - 97:

ներկայացնում համատեղ խնդրագիր, որտեղ անհրաժեշտություն էր համարվում որպեսզի Փոքր Ասիա ափհանված դաշնակից զորքերի, մասնավորապես, հունական բանակի զորքերը «առաջանան դեպի Երզնկա և Էրզրում՝ դիմագրավելու թուրքական կանոնավոր բանակի նախատեսվող վտանգին՝ հաշվի առնելով, որ, միաժամանակ, հայկական բանակը փորձելու է կասեցնել բուլղարների հավանական առաջխաղացումը Կովկասով»⁵¹⁴:

Ավելի վաղ, 1919թ. դեկտեմբերին, Աթենքում Մեծ Բրիտանիայի դեսպանի հետ հանդիպմանը հունական բանակի զնդապետ Կաթենիոտիսը շեշտում էր. «Քեմալի համագործակցությունը բուլղարիզմի հետ, իր համար օժանդակության մի աղբյուր պիտի բացի... Մ. Քեմալին հնարավորություն պիտի տա ետ քաշելու իր զինված ուժերը (ՀՀ սահմաններից-Հ.Ն.), որոնք Փ. Ասիայում մեր դեմ կանգնածներից շատ են: Մ. Քեմալի և բուլղարների կապի միակ ճանապարհը Կարս-Սեբաստիա-Անկարան է: Ռազմական գործողությունները, որոնք պիտի խանգարեն կամ կտրեն այդ ճանապարհը՝ անհիմն պատվախնդրության հնարանք չեն, այլ գտնվում են զինվորական (ռազմավարական-Հ.Ն.) ընդհանուր վիճակի հետ լիակատար ներդաշնակության մեջ»⁵¹⁵:

Երբ թուրքական բանակը գտնվում էր արևմուտքից՝ հունական և արևելքից՝ հայկական ռազմավարական աքցանի մեջ հայտնվելու եզրին, 1920թ. գարնանը Թուրքիայի ազգային մեծ ժողովը (ԹԱՄԺ), քաղաքական գործիչ Անդրե Ամուրյանի հաղորդմամբ. «որոշում անց կացրեց յարձակել նախ Հայաստանի վրայ, ապահովել Ռուսիոյ օժանդակու-

⁵¹⁴ Ռամազյան Ս. Նշվ. աշխ., էջ 167:

⁵¹⁵ Հունական արխիվային փաստաթղթերը հայ-հունական հարաբերությունների մասին, էջ 136:

թիւնը, ապա միայն կռիւ մտնել (անցնել հակահարձակման-
Հ.Ն.) յոյների դէմ: Առաջ Հայաստանի վրայ յարձակելու
ծրագրի վրայ պնդում էր յատկապէս Գարաբէքի Բեազիմ
փաշան»⁵¹⁶: Վերջինս 1920թ. մարտի 16-ին Մ. Քեմալին
հեռագրեց, որ բոլշևիկները դեռ չեն հասել Կովկասյան
լեռներ և, ելնելով բնակլիմայական պայմաններից, մինչև
ապրիլ բոլշևիկները չեն կարող նավատորմիդը Վոլգայից
Կասպից ծով շարժել և, հետևաբար, Կովկասում սկսել
խոշոր ռազմագործողություն: Միաժամանակ, ըստ Ք. Կարա-
բեքի, Էրզրումի և Սարիղամիշի միջև ձյան հաստ շերտը՝
թոյլ չէր տա նաև թուրքական բանակին իրականացնելու
խոշոր ռազմագործողություն⁵¹⁷:

Ստեղծված պայմաններում, Անկարայում Թուրքիայի
ազգային մեծ ժողովի հրավիրումից երեք օր անց և Սևրի
պայմանագրի նախերգանք հանդիսացող Սան Ռեմոյի
կոնֆերանսի փակման օրը՝ 1920թ. ապրիլի 26-ին, ԹԱՄԺ-ի
անունից նրա նորընտիր նախագահ Մուստաֆա Քեմալը
Խորհրդային Ռուսաստանի կառավարության ղեկավար Վ.
Լենինին ուղղարկեց՝ հայտնի նամակը. «Եթե խորհրդային

ուժերը ենթադրում են ռազմագործողություններ ընդդեմ
Վրաստանի, կամ դիվանագիտական ճանապարհներով
իրենց ունեցած ազդեցությամբ ստիպեն Վրաստանին մտ-
նելու Դաշինքի մեջ և ձեռնարկելու անգլիացիների վտա-
րումը Կովկասի տարածքներից, Թուրքական կառավարու-
թյունը (Անկարայում նստող-Հ.Ն.) իր վրա է վերցնում ռազ-
մագործողություններն ընդդեմ իմպերիալիստական Հայաս-
տանի և պարտավորվում է պարտադրել Ադրբեջանական
Հանրապետությանը մտնելու խորհրդային պետությունների
շրջանակի մեջ»⁵¹⁸: Սրանով, փաստորեն, Մ. Քեմալը
մատնանշեց աշխարհառազմավարական այն խնդիրները,
որոնք բխում էին երկու կողմերի շահերից և պետք է լուծվեին
համատեղ Այսրկովկասյան տարածաշրջանում: Սա ևս մեկ
հաստատումն էր այն բանի, որ ինչպես Ռուբեն Տեր -
Մինասյանն էր նշում. «Թուրքիան իր արտաքին քաղաքա-
կանության առանցքն ունի. - Կամ ըլլալ Անգլիո հետ և դեմ
ըլլալ Ռուսիո և կամ ըլլալ Ռուսիո հետ և դեմ ըլլալ Անգլիո»⁵¹⁹:
Բրիտանացիների կողմից «Պոլսոյ եւ Նեղուցներու գրաւումը

հետ դաշինքի մեջ մտնելու պայմանով (խորհրդայնացվելու - Հ. Ն.), իսկ
7-րդ և 16-րդ հողվածներով կողմերը պատրաստվում էին հանդես գալ
որպես միասնական բանակ՝ ընդդեմ Հայաստանի՝ վերջինիս կողմից
Ադրբեջանի վրա հարձակման կամ Փարիզի Խաղաղության վեհաժո-
ղովի կողմից Թուրքիայի արևելյան նահանգները Հայաստանի Հան-
րապետությանը տրամադրելու դեպքում (տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 33,
թ. 43 - 44):

⁵¹⁸ Նամակի տեքստը տես Генояцд армян. Ответственность Турции и
обязательства мирового сообщества. Документы и комментарий. Том 2. Ч.
1. Сост. и отв. ред. Ю. Г. Барсегов, Москва, «Гардарикс», 2003, с. 50 - 51

⁵¹⁹ Շիրիմյան Լ. Հավասարակշռության «անփոփոխ օրենքի» գործառույ-
թը: Գանձանակ հայ քաղաքագիտական մտքի և Հայաստանի պատմու-
թյան. Կազմ. և խմբ. Լ. Ղ. Շիրիմյանը, Երևան, «Լիմուշ» հրատ., 2018, էջ
43:

⁵¹⁶ Ռամզյան Ս. Նշվ. աշխ., էջ 179:

⁵¹⁷ Տես Հայաստանի ազգային արխիվում պահվող Ֆերիզուն Կանդեմիրի
«Քազիմ Կարաբեքիի այրված հուշերը» գրքի ռուսերեն հատվածաբար
մեքենագիր թարգմանությունը. Феризун Кандемир. Сожжениые воспо-
минания Кязим Карабекяра. Стамбул, 1964, с. 140:

* Նամակին նախորդել էր 1919թ. հոկտեմբերի 29-ին ստորագրված
Ադրբեջանա-թուրքական ռազմական պայմանագրի վերահաստատումը՝
1920թ. ապրիլի 15-ին, Մ. Քեմալի գլխավորությամբ սկիզբ առած ազգայ-
նական շարժման և Ադրբեջանի Մուսավաթական կառավարության միջև
Ռազմական կոնվենցիայի ստորագրմամբ: Կոնվենցիայի 5-րդ հոդվածով
Ադրբեջանի կառավարությունը խոստանում էր նպաստել թուրքական
ազգայնական շարժման և Խորհրդային Ռուսաստանի կառավարության
միջև ռազմական մերձեցմանը՝ անհրաժեշտության դեպքում վերջինիս

Ռուսացիոյ եւ Ռուսիոյ միջեւ ստեղծուած էր շահերի նույնութիւն մը, որուն առջեւ Հայկական հարցը կանցնէր վերջին գծի վրայ»⁵²⁰:

Բնականաբար, Մ. Քեմալի առաջարկն ընդունվում է բոլշևիկների կողմից: Դեռևս 1920թ. մարտի 17-ին Վ. Լենինը Սերգո Օրջոնոկիձեին հեռագրել էր. «Բաքուն վերցնելը մեզ չափազանց անհաժեշտ է: Բոլոր ջանքերն ուղղեցեք այդ բանին»⁵²¹: Արդյունքում, 1920թ. ապրիլի 28-ից 30-ը Կարմիր բանակի Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը ձեռնամուխ եղավ Բաքվի ռազմագործողության իրականացմանը. 11-րդ բանակը (կազմում ուներ 20-րդ, 28-րդ, 32-րդ հրաձգային դիվիզիաները և 2-րդ հեծյալ կորպուսը՝ միասին 30 000) չհանդիպելով Ադրբեջանական բանակի (շուրջ 20 000 զինվոր) կողմից որևէ լուրջ դիմադրության՝ գրավեց Բաքուն⁵²²:

Ադրբեջանի խորհրդայնացումից հետո, մայիսին, բոլշևիկա-ադրբեջանա-թուրքական հարվածն ուղղվեց Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև Պարսկաստանի հյուսիսում գործող բրիտանական ուժերի դեմ: Սակայն Հայաստանում բոլշևիկների կողմից իրականացված Մայիսյան խռովությունն անմիջապես ճնշվեց Հայկական բանակի կողմից:

Ինչ վերաբերում է Պարսկաստանի հյուսիսում ընթացող իրադարձություններին, սպա այստեղ՝ մայիսի 17-ին, Խորհրդային Ռուսաստանը Վուզա-Կասպյան նավատորմի (իր մեջ միավորում էր նաև Կարմիր Ադրբեջանի նավատորմը) իրականացրեց դեսանտի իջեցում Էնզելի նավահանգիս-

տում, որը պաշտպանող բրիտանական 36-րդ հետևակային դիվիզիան (2000 զինվոր) հաջորդ օրն անձնատուր է լինում և բոլշևիկների համաձայնությամբ հեռանում է Ռեշտ քաղաք⁵²³: Վերջինս, շուտով, նույնպես գրավվում է: Սակայն 1920թ. օգոստոսին Քյույունլիխանի գլխավորությամբ պարսկական զորքերը Մանջիլի կիրճում շրջափակում և գլխուկին ջախջախում են ադրբեջանա-ռուսական 12 000-անոց զորախումբը, որից փրկվում է միայն 400 զինվոր, ինչի արդյունքում սեպտեմբերին Էնզելին և Ռեշտը ազատագրվեցին Կարմիր բանակից, որը տվեց ևս 5000 զոհ⁵²⁴:

Այդ նույն ժամանակ Կարմիր բանակը ավելի խոշոր պարտություն կրեց Արևմտյան ռազմաճակատում: Հակահարձակման անցած և դեպի Վարշավա շարժվող Կարմիր բանակի մի քանի խոշոր զորամիավորումներ (4-րդ բանակը, Գայի հրամանատարությամբ գործող 3-րդ հեծյալ կորպուսը և 15-րդ բանակի կազմից երկու դիվիզիաներ) 1920թ. օգոստոսի 22-ից 26-ն ընկած ժամանակահատվածում շրջապատվում են լեհական ուժերի կողմից և ջախջախվում:

1920թ. ամռանը ծանր պարտություններ կրեցին նաև Մ. Քեմալի ուժերը Փոքր Ասիայում: Չմյուռնիայի շրջանում գործող հունական ուժերը, որ ի սկզբանե բաղկացած էին 5 դիվիզիաներից,⁵²⁵ համալրվեցին ևս մեկ դիվիզիայով՝ հասցնելով դրանց թիվը 6-ի⁵²⁶: Հունական բանակը, որն

⁵²³ Նույն տեղում, էջ 687 - 688:

⁵²⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 621, թ. 3 և շրջ:

⁵²⁵ Conditions in the Near East. Report of the American Military Mission to Armenia. By General James G. Harbord U. S. Army (Appendix only). Washington Government Printing Office, 1920, p. 22 (ՀԱԱ, ֆ. 450, ց.2, գ. 12, թ. 22):

⁵²⁶ Кемаль М. Путь новой Турции. 1919-1927. Пер. с тур., Том 3. Интервенция союзников: Греко-турецкая война и консолидация национального фронта 1920-1921. Москва, Литиздат НКВД, 1934, с. 93:

⁵²⁰ Փաստորձեռնան Հ. Նշվ. աշխ., էջ 148:

⁵²¹ Խորշոռյան Լ. Հայաստանի բաժանումը 1920 թվականին. երկրորդ հրատարակություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2017, էջ 44:

⁵²² Гражданская война и военная интервенция в СССР. Энциклопедия., с. 50.

արդեն ուներ երկու լիարժեք բանակային կորպուսներ, 1920թ. հունիսի 22-ից հուլիսի 11-ն ընկած ժամանակահատվածում, Հմյոտնիայի գոտուց դուրս գալով և բրիտանական նավատորմի հետ միասին դեսանտային ռազմագործողություն իրականացնելով Մարմարա ծովի ափի երկայնքով, գրավում են մերձափնյա շրջանները, ներառյալ Բուրսա քաղաքը⁵²⁷: Այնուհետև հունական բանակը գլխավոր հարվածը հասցնում է Էսքիշեհիր քաղաքի ուղղությամբ՝ ճանապարհ բացելով դեպի Անկարա: Էսքիշեհիրի ուղղությամբ քեմալականներն ունեին միայն 3 դիվիզիաներ (61-րդ, 56-րդ, 23-րդ), որոնք հունական ուժերի ճնշման տակ նահաղար նահանջում էին⁵²⁸: Ավելին, շուտով քեմալականների թիկունքում սկսվում են սուլթանական իշխանության կողմնակիցների խռովությունները, որոնք ճնշելու համար վերը նշված երեք դիվիզիաներից մեկը, չորս թիկունքային դիվիզիաների հետ միասին⁵²⁹ ստիպված են լինում ներգրավվելու այդ խռովությունների ճնշմանը: Անհանգիստ վիճակ էր նաև քրդաբնակ շրջաններում: Վիճակն ավելի օրհասական է դառնում, երբ 1920թ. հուլիսի 20-ին հույները ընդամենը 1 դիվիզիա ակտիվորակ Արևելյան Թրակիայում՝ գլխավոր ջախջախում են մարտունակ թուրքական 1-ին բանակային կորպուսը (ուներ 3 լիարժեք դիվիզիաներ՝ 60-րդ, 55-րդ, 49-րդ) և հուլիսի 25-ին գրավում Ադրիանապոլիսը⁵³⁰:

1-ին բանակային կորպուսի ջախջախումից հետո, փաստացի վերջին թարմ պահեստային ուժը, որ մնացել էր Մ.

Քեմալի հրամանատարության ներքո, դա Քյազիմ Կարաբեքիրի հրամանատարությամբ գործող 15-րդ բանակային կորպուսն էր, որը, սակայն, հունիսի վերջից փաստացի հայտնվեց ակտիվ ռազմական գործողությունների մեջ Արևելյան ռազմաճակատում՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի դեմ:

1920թ. հունիսի 6-ին ԹԱՄԺ-ի կառավարությունը ընդունեց Հայաստանի Հանրապետության դեմ հարձակման մասին որոշում⁵³¹: Սակայն առիթ էր պետք այն իրականացնելու համար: Հարձակման «պատրուակը անխոհեմաբար հայթայթեց երևանի (<<-Հ.Ն.) գոտ դաշնակցական կառավարությունը յարձակելով ամխահարուստ Օլթիի վրայ եւ զայն գրավելով»⁵³²:

Հայկական ուժերի կողմից Օլթիի գրավումից (հունիսի 18) հետո Ք. Կարաբեքիրի հրամանով թուրքական 9-րդ դիվիզիայի ուժերը, անցնելով սահմանը, զբաղեցնում են Սողանլուփ լեռնանցքը, ինչին հաջորդում է նույն դիվիզիայի ուժերի կողմից սեպտեմբերի 13-ի խոշոր հարձակումը հայկական դիրքերի վրա, իսկ արդեն սեպտեմբերի 28-ին սկսվում է թուրքական բանակի լայնամասշտաբ հարձակումը

* Այսրկովկասից Էրզրում հետ քաշված թուրքական 9-րդ բանակի վերակազմավորման (1919թ. ապրիլին) արդյունքում ստեղծվել էր 15-րդ բանակային կորպուսը: Վերջինիս, որն իր կազմում ուներ 3-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ դիվիզիաները, տեղաբաշխման գոտին ընդգրկում էր Էրզրումի, Տրապիզոնի ու Վանի նահանգները (Տես Հայաստանի ազգային արևիվում պահվող Քյազիմ Կարաբեքիրի «Անկախության համար մեր պատերազմը» հուշագրության ուսուրբեն հատվածաբար մեքենագիր թարգմանությունը, *Карабекер Кязым. Наша война за независимость, Стамбул, 1960, с.17*):

⁵³¹ Սաֆրաստյան Ռ. Մուստաֆա Քեմալ, Պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919 - 1921), Երևան, «Տիր», 2019, էջ 73:

⁵³² Ահարոնեան Ա., Լշվ. աշխ., էջ 143:

⁵²⁷ Корсун Н. Г. Греко-турецкая война 1919-1922 гг. Оперативно-стратегический очерк. с. 10.

⁵²⁸ Кемаль М., նշվ. աշխ., էջ 93 - 94:

⁵²⁹ Նույն տեղում, էջ 96:

⁵³⁰ Նույն տեղում, էջ 121, 141:

Արևելյան ռազմաճակատի ամբողջ երկայնքով⁵³³։ Հատկանշական է, որ թուրքական զորքերը, ինչպես սեպտեմբերի 28-ին Կարսի բերդի պարետ, գեներալ-լեյտենանտ Դանիել Բեկ-Փիրումյանն էր հեռագրում. «Հարձակվում են կարմիր դրոշներով»⁵³⁴։

Այսպիսով Մոսկոնի գինադադարից հետո բրիտանացիների կողմից թույլ տրված ռազմավարական խռոչը սխալները, այն է՝ Արևմտյան Հայաստանի տարածքի չգրադեցումն և անկախ ու միացյալ Հայաստանի չստեղծումը, ինչպես նաև Անատոլիայում կուտակված թուրքական բանակի չգինադադումը, որն արվել էր միտումնավոր՝ ռուսական հնարավոր առաջխաղացման դեմ, ապագայում որպես ռազմական ուժ օգտագործելու հաշվարկով, կարճ ժամանակ անց պետք է հանգեցնեին ռազմավարական աղետի՝ Մեծ Բրիտանիայի դաշնակիցներ Հայաստանի ու Հունաստանի համար։

4.2. Կարսի անկման ռազմավարական հետևանքները

Քենալական Թուրքիայի և Բոլշևիկյան Ռուսաստանի ռազմավարական գլխավոր խնդրի, այն է՝ Հայաստանի Հանրապետության որպես «ռազմավարական սեպի», համատեղ վերացման վերջնական վճիռը կայացվեց 1920թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին նախ Մոսկվայում, ապա Բաքվում։ Մասնավորապես, օգոստոսի 24-ի Մոսկվայի քենալա-բոլշևիկյան հայտնի համաձայնագրի 1-ին հոդվածով «Ստորագրող կողմերը սկզբունքով կ'ընդունին չճանչնալ

խաղաղության որեւէ դաշնագիր կամ պետական որեւէ յանձնագիր՝ որ բնօրէն պարտադրուած է միա կողմէն, Ռուսիոյ Հանրապետութիւնը կ'ընդունի բացարձակապէս չճանչնալ պետական որեւէ համաձայնագիր (առաջին հերթին Սկրի պայմանագիրը-Հ.Ն.) որ կը վերաբերի Թուրքիոյ եւ որ վաւերացուած չէ թուրք ազգային կառավարութեան ներկայացուցիչ Ազգ. Մեծ ժողովին կողմէ», իսկ 6-րդ հոդվածով «Ստորագրող կողմերը համաձայնաբար կ'ընդունին, բոլոր ազգերու առետրական նաւերուն Նեղուցներէն ազատ անցքի իրաւունք տալու նպատակով ճշդել նեղուցներու եւ Սեւ ծովու յատուկ միջազգային օրէնքները, պայմանաւ որ այդ օրէնքներու տրամադրութիւնները որեւէ կերպով չվնասեն Թուրքիոյ ամբողջական վեհապետութեան եւ մայրաքաղաք Կ. Պոլսոյ ապահովութեան»⁵³⁵։ Այս կետը նույնպես ուղղակիորեն ուղղված էր Մեծ Բրիտանիային։

Արդեն սեպտեմբերի 1-ից 7-ը Բաքվում էնվեր փաշայի մասնակցությամբ կայացած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում, որին մասնակցում էին 26 ազգերի, այդ թվում բրիտանական գաղութներից ներկայացուցիչներ, և որի 1891 պատվիրակներից⁵³⁶ 160-ը հայ բոլշևիկներն էին (նրանցից 131-ը Հայաստանից),⁵³⁷ նախագահության կողմից ընդունված Եզրակացության մեջ արվեցին ռազմավարագիտական մի քանի շեշտադրումներ։ Մասնավորապես, անհրաժեշտ համարվեց «կանխել անզլո -

⁵³³ Феридун Кандемир., նշվ. աշխ., էջ 156:

⁵³⁴ Пирумян Ю. На обрывках лет и дней: Жизнь Даниэля-бека Пирумяна, Москва, «Клос-с», 2013, с. 518.

⁵³⁵ Լազեան Գ. Հայաստան եւ Հայ դատը հայկոստա յարաբերութիւններու լոյսին տակ, Գահիրէ, «Յուսքեր», 1957, էջ 255-256:

⁵³⁶ Հարությունյան (Հարենց) Ա. Բ. Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը, Երևան, Հայպետհրատ, 1960, էջ 9:

⁵³⁷ Շիրինյան Լ. Ղ., Շիրինյան Տ. Լ. Ճանապարհ դեպի Թուրան. Պատմաիրավական և ռազմագիտական տեսանկյուններ, Երևան, «Ձևագրակ - 97», 2004, էջ 10:

շահական (պարսկական-Հ.Ն.), հայկական ու վրացական գինվորական ուժերի միավորումը», իսկ Ռուսաստանի ու Թուրքիայի միավորումը ու Հայաստանի Հանրապետության ոչնչացումը «առաջին հերթին հնարավորություն կտան Հայաստանի սահմանից հանել և դեպի արևմուտք (ընդդեմ անգլո - հունական ուժերի-Հ.Ն.) նետել Էրզրումի կորպուսը (15-րդ կորպուսը Հ. Ն.)»⁵³⁸: Հատկանշական է, որ այս վերջին շեշտադրումը արված էր նաև Թալեթի կողմից՝ Ք. Կարաբեքիրին ուղղված նամակում. «Արևելքում ձեռք բերվելիք հաղթանակը Արևմտյան ճակատի և ամբողջ աշխարհի վրա խորին մի հետք կթողնի»⁵³⁹:

Այսպիսով, սկսված հայ - թուրքական պատերազմում թուրքական բանակը լուծելու էր հետևյալ ռազմավարական խնդիրները.

«Ա. Բանալ դեպի Թուրան և դեպի դաշնակից խորհրդային Ռուսաստան տանող ճամբաները:

Բ. Ապահովել Ազրայճանի հետ իր միացումը...

Գ. Ճգմել Հայաստանը եւ այսպես լուծել Հայկական հարցը... Սելվրի դաշնագիրը պատռուած հոշակելով...

Զ. Ավարտելով Հայկական ճակատին վրայ գործողութիւնները, այնտեղի զօրքերը փոխադրել Հելլէն ճակատը, հոն կատարելու համար վճռական և միահամուռ յարձակում մը»⁵⁴⁰:

⁵³⁸ Սարգսյան Ե. Դավադիր գործարք., էջ 156 - 157:

⁵³⁹ Հոհրաբյան Է. Ա. 1920թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, «Ոսկան Երևանցի», 1997, էջ 21:

⁵⁴⁰ Տեր-Յակոբեան Յ. Հայաստանի վերջին աղէտը. Քենյալական արշասանքը, Կարսի եւ Ալեքսանդրաբոլի անկումները, Հայ բանակին քայքայումը, յարձակման եւ քայքայման պատճառները, Պաշտօնիքեան տիրապետութիւնը, Կ. Պոլիս, Տպագր. Մ. Տեր-Սահակեան, 1921, էջ 20:

Ավելին, թուրքական բանակի Գլխավոր շտաբի բարձրատիճան սպաների շրջանում ծրագրեր էին քննարկվում Կարմիր բանակի հետ միավորվելով՝ ընդդեմ բրիտանացիների՝ դեպի Մոսկոյ կամ Աֆղանստան արշավելու մասին⁵⁴¹: Այս պարագայում թերևս ճիշտ էր Կարլ Ռադելի այն ձևակերպումը, թե Եվրոպայի արևելքում ու հարավ - արևելքում և Առաջավոր Ասիայում «Վերսալյան խաղաղությունը ոչնչացվում է Կարմիր բանակի և թուրքական բանակի զենքով»⁵⁴²: Սակայն, Անտանտի աջակցությամբ, լեհական բանակի կողմից Կարմիր բանակի ջախջախումը Վարշավայի տակ, կասկածի տակ էր դրել այդ ռազմավարական ծրագրի իրագործումը, իսկ Փոքր Ասիայում հունական բանակի արագընթաց շարժը և հայ-թուրքական ճակատում հայկական ուժերի, մասնավորապես, Կարսում ամրացած հայկական ուժերի երկարատև դիմադրությունը սպառնում էր ռազմավարական այդ ծրագրի ի սպառ ոչնչացմամբ:

Այդ ճակատագրական օրերին Հայկական բանակը «լավ զգեստաւորուած և սպառազինուած էր շնորհիվ անգլիական օժանդակութեան: 1920թ. յունիս-յուլիս ամիսներում Անգլիայէն ստացուած էր 40 000 ձեռք համազգեստ և 25 000 հրացան՝ մեծաքանակ ռազմանիւթով (ռազմամթերքով-Հ.Ն.), այլևս հայ գինտորը մերկ չէր, այլ ոտքէն գլուխը հագած էր անգլիական զօրքի պէս»⁵⁴³: Այս վերջին հանգամանքը շեշտում է նաև Կարսի դեպքերի ականատես Խ. քահանա Ստամբուլցյանը, ով նշում էր, որ Կարսի զորա-

⁵⁴¹ Բարալեան Ա. Կարսի Անկումը. «Հայրենիք» ամսագիր, Պոսթրն, հոկտեմբեր 1923, թիւ 12, էջ 64:

⁵⁴² Շիրինյան Լ. Ղ., Շիրինյան Տ. Լ., Նշվ. աշխ., էջ 8-9:

⁵⁴³ Տեր - Յակոբեան Յ., Նշվ. աշխ., էջ 86:

խումբը «գինուած և հագնուած էր անգլիական զէնքով ու շորորով»⁵⁴⁴:

Ընդհանուր առմամբ, հայ-թուրքական ռազմաճակատը՝ Արդահան-Կարս-Անի-Իգդիր-Նախիջևան գծով, ուներ 300կմ երկարություն⁵⁴⁵: Այստեղ հայկական ուժերի թիվը հասնում էր մոտ 20 000-ի, որի հիմնական մասը 18 000-ը (նե-րառայալ 1-ին, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ հետևակային գնդերը, 1-ին և 2-րդ հեծյալ գնդերը, Առանձին կամավորական զորամասը, բերդի կայազորը) գտնվում էր գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ գործում էր ճակատի հյուսիսարևմտյան ուղղությամբ (շտաբը Ալեքսանդրապոլում էր, շտաբի պետը գնդապետ Ալեքսանդր Վեքիլյանն էր), շուրջ 2000-ը գտնվում էին Դրոյի հրամանատարությամբ՝ հարավարևմտյան հատվածում (Սուրմալուի ուղղությամբ), իսկ ևս 5000 զինվոր տեղակայված էին Ղազախում և Ջանգեզուրում⁵⁴⁶:

Հայկական բանակի անսուն սպայի հուշերում հայկական այս ուժերի դեմ գործող թուրքական ուժերի թիվը նշվում է մինչև 11 000⁵⁴⁷, իսկ Կարս-Սարիղամիշի ռազմաճակատում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Արտաշես Բաբայանն իր հուշերում նշում է 9-ից 10 000 թիվը, ավելացնելով, որ թուրքական բանակը «հագնուած էր վատ, հաճախ կպատահէին ցնցոտիներով ծածկուած գինուորներ:

Պարենատրումն էլ անգոհացուցիչ էր»⁵⁴⁸:

Ուժերի այս հարաբերակցությունը հաստատում էր նաև Հայկական բանակի հետախուզության գեկուցագիրը, որի համաձայն, թուրքական 15-րդ կորպուսն ուներ ընդամենը 5 հետևակային դիվիզիա, որոնցից մեկը՝ 31-րդը, գտնվում էր Տրապիզոնի մոտ, իսկ հայկական ուժերի դեմ կանգնած էին մյուս չորսը՝ 9-րդը (շտաբը՝ Էրզրումում) 12-րդը (շտաբը՝ Խորասանում), 3-րդը (շտաբը՝ Օլթիում), 11-րդը (շտաբը՝ Բայազետում), որոնցից յուրաքանչյուրն ուներ ընդամենը 1100-1500 զինվոր, որոնց Օլթիի ուղղությամբ աջակցում էին մինչև 4 000 անկանոն ուժեր⁵⁴⁹: Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանը նշում էր, որ միայն Կարսի ճակատում հայկական զորախումբը «մի 4 անգամ մեծ էր թշնամու բանակից»⁵⁵⁰: Նահանգապետը նաև ավելացնում է, որ Կարսի բերդի* «շուրջ սփռուած մի քանի տասնեակ ամրութիւնները, առաջադր դիրքերը, խրամատները՝ գիտութեան վերջին խօսքն էին: Այդ ամրութիւնները լուսատրուած էին էլեկտրականութեամբ, նոցանից ամէն մէկն ուներ իր ավտոմոբիլը, հեռախօսը, պրօժեկտորը, երկաթուղու սուղ գիծը՝ ծիաքաշով ռազմամթերք մատակարարելու համար, ջրանց և բոլոր կենսական և ռազմական յարմարութիւնները»⁵⁵¹:

⁵⁴⁴ ՀԱԱ, ֆ. 450, ց. 3, գ. 42, թ. 2ըրջ.:

⁵⁴⁵ Մասունի Կ. Հայ-թուրքական պատերազմը (1920-ին), Պէրյուօ, «Համազգային», 1969, էջ 103:

⁵⁴⁶ Նուն տեղում, էջ 59, 204:

⁵⁴⁷ Մարտական գործողությունները Կարս - Ալեքսանդրապոլ ուղղությամբ (1920թ. հունիս - 1920թ. նոյեմբեր) Հայկական բանակի սպայի հուշերում. Աշխատասիրությամբ Կ. Հարությունյանի, Երևան, Հեղ. Հրատ., 2019, էջ 49:

⁵⁴⁸ Բաբայան Ա. Կարսի Անկումը. «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, հոկտեմբեր 1923, թիւ 12, էջ 58:

⁵⁴⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 33, թ. 41ըրջ.-42:

⁵⁵⁰ Հարությունյան Վ. Առաջին Հանրապետություն. Կարսի վերջնախաղը. Երևան, Հեղինակային հրատարակություն, 2018, էջ 145:

* Կարսի բերդի և նրա ամրությունների (ֆորտերի) հատակագիծը տես ՀԱԱ, ֆ. 247, ց. 2, գ. 14:

⁵⁵¹ Կարսի մարզը Հայաստանի Հանրապետության կազմում 1919 ապրիլ - 1920 հոկտեմբեր. Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի

Ինչ վերաբերում է Ադրբեջանում գտնվող 11-րդ Կարմիր բանակին, ապա այն իր կազմում ուներ 3 հետևակային դիվիզիաներ՝ 20-րդը (շտաբը՝ Գյանջայում), 28-րդը՝ (շտաբը՝ Բաքվում), 32-րդը (շտաբը՝ Աղդամում) և մեկ հեծյալ կորպուս (շտաբը՝ Եվլախում), ընդհանուր առմամբ 18-20 000 հետևակային և 3000-3500 հեծյալ, որոնք ունեին և՛ համագետտի, և՛ զենքի խնդիր⁵⁵²:

Փաստորեն ստացվում էր, որ հայ-թուրքական ռազմաճակատում գործող թուրքական 15-րդ կորպուսը և Ադրբեջանում գտնվող 11-րդ Կարմիր բանակի ուժերը միասին վերցրած թվապես գրեթե չէին գերազանցում Հայկական բանակի ընդհանուր թվին, իսկ սպառազինությամբ նույնիսկ զիջում էին: Բացի այս, Հայկական բանակն ուներ մեկ կարևոր առավելություն՝ աշխարհագրական պայմանները: Մասնավորապես, եթե թուրքական բանակի դեմ կանգնած էր Կարսի անառիկ բերդը, ապա Կարմիր բանակի դիմաց կանգնած էր Ջանգեզուրը: Հենց այստեղ էլ հոկտեմբերի 19-20-ը Ջեյվա-Արծվանիկ-Տանծավեր հատվածում հայկական ուժերը, Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ, շրջափակման մեջ առնելով՝ գլխավոր ջախջախեցին 11-րդ Կարմիր բանակի 28-րդ հետևակային դիվիզիայի 83-րդ և 84-րդ բրիգադները (միասին 900 զինվոր)⁵⁵³: Ջանգեզուրը գրավելու և Նախիջևան դուրս գալով՝ այստեղ դեռևս հուլիսից

գտնվող թուրքական 11-րդ դիվիզիայի ուժերի հետ միավորվելու նպատակով, հոկտեմբերի 25-ին 11-րդ Կարմիր բանակի ստորաբաժանումներից ստեղծվում է նոր ավելի հզոր խմբավորում (կազմված 28-րդ, 20-րդ և 18-րդ հետևակային դիվիզիաների առանձին բրիգադներից և 1-ին թուրքական հրաձգային գեղից⁵⁵⁴), սակայն նոյեմբերի սկզբին այն նույնպես ջախջախիչ պարտություն է կրում Գարեգին Նժդեհի ուժերից⁵⁵⁵:

Միաժամանակ, շարունակվում էր նաև հունական բանակի առաջխաղացումն ու թուրքական բանակի նահանջը Փոքր Ասիայում, որտեղ թուրքական բանակում «Բրուսսայի անկումից յետոյ եղել է ընդամենը քսան հազար հոգի (զինվոր-Հ.Ն.), որոնցից 1500 սպանել է նահանջի ժամանակ եւ նոյնքան էլ գերի է ընկել. 4-5 հազար հոգի էլ դասայիք է եղել... Միս ճակատներում դրուբին անելի ողբերգական է: Դասալքություն անելի մեծ չափերի է հասել Քեզազիմ փաշայի բանակում»⁵⁵⁶: Նման պայմաններում, Ք. Կարաբեքիրի ուժերը, որոնք սեպտեմբերին հաջողություններ էին գրանցել գրավելով Օլթին (սեպտեմբերի 13-ին), Արդահանի հայկական մասը և Կաղզվանը (սեպտեմբերի 30-ին), հոկտեմբերի 24-ին և 26-ին ծանր պարտություն կրեցին Սուրմալուի ճակատում՝ Դրոյի հրամանատարությամբ գործող 5-րդ առանձին բրիգադից*:

յուշերը. Աշխատախրուբեամբ Վլադիմիր Յարուբինենանի, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2018, էջ 437:

⁵⁵² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 33, թ. 41:

⁵⁵³ ՀԱԱ, ֆ. 1159, ց. 3, գ. 110, թ. 24: *Боевой путь 11-й Красной армии в период установления и упрочения советской власти в Армении. Май 1920 – ноябрь 1921 гг. Сборник документов. Руководитель авторского коллектива и редактор Арутюнян А. О., Ереван, Главное управление при Совете министров Арм. ССР, Центральный государственный архив Советской Армии, 1978, с. 57.*

⁵⁵⁴ Նույն տեղում, էջ 56:

⁵⁵⁵ Այդ մասին մանրամասն տես Թադևոսյան Ռ. Ջանգեզուրի ազատամարտը. 1918–1921թթ., Երևան, Տիգրան Մեծ, 2018, էջ 23:

⁵⁵⁶ Արծրունի Վ. Հայ-տաճկական պատերազմը: Հայ սպայությունը Շատախ. Երևան, «Մուղնի», 2002, էջ 76:

* 5-րդ առանձին բրիգադը, որը ստեղծվել էր Էքսպեդիցիոն բրիգադի վերակազմավորման արդյունքում՝ 1920թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ ռազմական նախարարի հրամանով, իր մեջ ներառում էր հայկական 9-

Թվում էր կրկին անգամ ռազմավարական փակուղում հայտնված քեմալա-բոլշևիկյան ուժերի վերջնական և ջախջախիչ պարտությունն անխուսափելի էր: Սակայն ռազմավարական խոշոր սխալ թույլ տրվեց Դաշնակիցների կողմից, որոնք մերժեցին Փարիզում գտնվող Ա. Ահարոնյանի և գեներալ Գ. Ղորղանյանի առաջարկն ուղղված Ռ. Սեսիլին և բրիտանացի գեներալ Մորիսին՝ Տրապիզոնում դեսանտ իջեցնելու և Տրապիզոն-Էրզրում ուղղությամբ Ք. Կարաբեքերի ուժերին թիկունքից հարված հասցնելու վերաբերյալ⁵⁵⁷:

Սրան ավելացավ նաև կրկին խաղի մեջ մտած հայ բոլշևիկների քայքայիչ գործունեությունը: Վերջիններս գործում էին հավատարիմ Բաքվից 1920թ. սեպտեմբերի 20-ին Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի գաղտնի հրահանգի, որում ասվում էր, որ Հայաստանի Հանրապետության հաղթանակը Թուրքիայի նկատմամբ «կնշանակի իմպերիալիզմի (առաջին հերթին՝ Մեծ Բրիտանիայի-Հ.Ն.) ուժեղացումը Մերձավոր Արևելքում և դրանով իսկ կվտանգվի հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում», հետևաբար հայ բոլշևիկների խնդիրն էր «արագացնել Հանրապետական Հայաստանի պարտությունը» և «կազմավորվել հայկական կովող բանակը բոլոր միջոցներով»⁵⁵⁸:

Արդյունքում, 1920թ. հոկտեմբերի 30-ին, թուրքական զորքերը գրեթե առանց լուրջ դիմադրության երեք ու կես

ժամվա ընթացքում⁵⁵⁹ գրավեցին Կարսի անառիկ բերդը: Բերդի անկումն արդյունք էր այդ օրերին հայ հասարակության մեջ, հատկապես, հայկական բանակում տիրող գաղափարախոսական - բարոյական ահավոր անկման և թերևս, ինչպես Գ. Յազըճեանն է նշում, «Հ բանակի ղեկավարութեան մի մասի, մասնավորապես, ռազմաճակատում գործող որոշ հրամանատարների «դավաճանութեան հետեանը»⁵⁶⁰:

Կարսի անկումը կտորեց Հայաստանի Հանրապետության պաշտպանական ողնաշարը, ինչը կտրուկ փոխեց ուժերի ռազմավարական հարաբերակցությունը տարածաշրջանում և հանգեցրեց ռազմավարական մի շարք հետևանքների: Մասնավորապես, 1920թ. նոյեմբերի 7-ին թուրքական բանակը գրեթե առանց կռիվի գրավում է Ալեքսանդրապոլը, որտեղ նոյեմբերի 17-ին հռչակվում է խորհրդային իշխանություն և ստեղծվում է ռազմահեղափոխական կոմիտե՝ քեմալականների ներկայացուցիչով (Ռյուշտի փաշա) հանդերձ⁵⁶¹:

Նոյեմբերի 11-ին Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը 11-րդ բանակի հրամանատարությանը ուղարկում դիրեկտիվ՝ Երևանի ուղղությամբ ռազմագործողության նախապատրաստության և այդ նպատակով 11-րդ բանակի

⁵⁵⁹ Феридун Канделар, *Նշվ. աշխ.*, 166.

⁵⁶⁰ Եազըճեան Գ. Կարսի 1920թ. անկման խորքային պատճառները, Երևան, Հեղ. Հրատարակություն, 2007, էջ 98: Հրամանատարության մի մասի կողմից դավադրության մասնակից լինելու վարկածի մասին մանրամասն տես Հարությունյան Վ. Ա. Կարսի հանձնումը. Հիկուրական դավադրության վարկածը, «ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան, Ժ (Ժ2) տարի, 2018, թիվ 4 (64), հոկտեմբեր- եկտեմբեր, էջ 278-330:

⁵⁶¹ Հակոբյանթ. Հայերը և թուրքերը. Պատերազմ, Սառը պատերազմ, դիվանագիտություն, Երևան, «Անտարես», 2012, էջ 102:

րդ. 10-րդ, 11-րդ և 12-րդ հետևակային գեղերը (տես ՀԱԱ, Ֆ. 204, ց. 1, գ. 166,թ. 60-ի շրջ.)

⁵⁵⁷ Ահարոնյան Ա. Սարդարապատից մինչև Սեբե և Լոզան, Պոսթըն, «Հայրենիք», 1943, էջ 104 - 105:

⁵⁵⁸ Գևորգյան Հ. Դրո: Դրաստամատ Կանայանի կյանքն ու գործունեությունը, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2007, էջ 452 - 453:

ուժերից հարվածային խմբավորում ստեղծելու մասին⁵⁶²։ Լորաստեղծ հարվածային խմբավորումը, հայկական 2-րդ սահմանապահ բրիգադի կողմից Ղազախի ուղղությամբ չհանդիպելով դիմադրության, նոյեմբերի 29-30-ը գրավում է Բարվանսարայն (Իջևան) ու Դիլիջանը և ռազմերթով շարժվում դեպի Երևան։ Դեռևս ամռանը Ռուսաստանի Հարավի Զինված ուժերում ՀՀ ներկայացուցիչ Հ. Սաղաթեյանը Ռուսաստանի Հարավի Զինված ուժերում բրիտանական առաքելության ղեկավար, գեներալ Պերսին ուղղված զեկուցագրում զգուշացրել էր. «Միայն ֆորս մաժորը կստիպի Հայաստանին մտածել հորհրդային պետության հետ կոմբինացիայի (փոխստեղծման-Հ.Ն.) հարցի մասին, այն դեպքում, երբ նա (Հայաստանի Հանրապետությունը-Հ.Ն.) կմնա առանց աջակցության Դաշնակիցների և Ռուսաստանի Հարավի Զինված ուժերի կողմից»⁵⁶³։

Այդ ֆորս մաժորը հենց Կարսի անկումն* էր, ինչը բացեց 11-րդ Կարմիր բանակի ճանապարհը դեպի Երևան (1920թ. դեկտեմբերի 2), ապա դեպի Թիֆլիս (1921թ. փետրվարի 25)։ 1921թ. մարտի 7-ին թուրքական բանակի կողմից Արդահանի, իսկ մարտի 17-ին Կարմիր բանակի կողմից Բաթումի գրավումը՝ հանգեցրեց Վրաստանի վերջնական կապիտու-

յացիային (մարտի 18-ին)⁵⁶⁴։ Թեև 11-րդ Կարմիր բանակի ուժերի մեծ մասի Վրաստան փոխադրումը նպաստեց Հայաստանում Փետրվարյան ապստամբության (փետրվարի 13-ից ապրիլի 2-ը) բռնկմանը և կարճ ժամանակով Հայաստանի Հանրապետության վերականգնմանը, սակայն դա երկար կյանք չունեցավ, իսկ 1921թ. հուլիսի սկզբներին Առանձին կովկասյան բանակի (ստեղծվել էր 1921թ. մայիսի 29-ին՝ 11-րդ Կարմիր բանակի վերակազմավորման արդյունքում) կողմից Զանգեզուրի գրավումով ավարտվեց Այսրկովկասի խորհրդայնացման գործընթացը։

Կարսի անկման ռազմավարական կարևորագույն հետևանքներից մեկը դարձավ հունական բանակի պարտությունը Անկարայի ճանապարհին։ Արևելյան ռազմաճակատում տարած հաղթանակը թուրքերին հարավորություն տվեց այստեղից իրենց ուժերը փոխադրել դեպի Արևմտյան ռազմաճակատ՝ կասեցնելու համար հունական առաջխաղացումը։ Մասնավորապես, արդեն 1920թ. դեկտեմբերի վերջին Հայաստանից փոխադրվում է թուրքական մեկ հետևակային բրիգադ (Երևանի մատույցներում մարտնչած «Երևանյան» բրիգադը)։⁵⁶⁵ Ավելի ուշ Արևմտյան ռազմաճակատ են տեղափոխվում Կովկասյան ռազմաճակատում, այդ թվում՝ Տրապիզոն-Բաթում ուղղությամբ տեղակայված, ամբողջական դիվիզիաներ,⁵⁶⁶ ինչպես նաև Տրապիզոնում և Ռիզեում դեռևս Առաջին համաշխարհային պատերազմից մնացած բերդային հրանոթները։⁵⁶⁷ Սակայն, հատկապես, հսկայական էր Կարսի բերդից Արևմտյան ռազմաճակատ

⁵⁶² Դիրեկտիվը տես *Боевой путь 11-й Красной армии в период установления и упрочения советской власти в Армении*, с.61.

⁵⁶³ ՀԱԱ, ֆ. 275, ց. 3, գ. 5, թ. 158 - 159:

* Թերևս դիպուկ է Հայկական բանակի սպա Գալուստ Այուրմենյանի հետևյալ գնահատականը. «Կարող եղավ Հայաստանի անկախության գերեզմանը։ Թուրքն ու րոշեփկ Ռուսաստանը եղան անոր գերեզմանավորը» (Տես Մկրտչեան Գ. Տաճկահայ գիւտոր եւ գիւտորականութիւնը նախ տաճկական ապա հայկական բանակներուն մէջ, Պէրոյոս, «Համազգային», 1967, էջ 117):

⁵⁶⁴ Allen W. E. D., *Muratoff P.*, նշվ. աշխ., էջ 500, 526:

⁵⁶⁵ Ռամազյան Ա, նշվ. աշխ., էջ 183:

⁵⁶⁶ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 86, թ. 64շրջ.:

⁵⁶⁷ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 86, թ. 78:

ուղարկված սպառազինությունը: Ք. Կարաբեքիրն իր հուշերում նշում է, որ Կարսում (նկատի ունի բերդը և բոլոր ամրությունները) միասին վերցրած, որ կազմում էին Կարսի ամրացված շրջանը՝ որպես ռազմավար թուրքերը վերցրել են 377 գործող և 339 վերանորոգման ենթակա հրանոթներ, միլիոնավոր փամփուշտներ և արկեր⁵⁶⁸: Այս ռազմավարի զգալի մասը, այդ թվում միայն Կարսի բերդում տեղակայված մոտ 470 բերդային հրանոթներից՝ 400-ը,⁵⁶⁹ նույնպես տեղափոխվում է Արևմտյան ռազմաճակատ: Խոսելով այս մասին, թուրքական բանակի Գլխավոր շտաբի պետ Ֆեզի փաշան ԹԱՄԺ-ում հայտարարեց. «Հայերէն առնուած զէնքերով անկախութեան պատերազմը տասը տարի ալ կրնանք շարունակել»:⁵⁷⁰

Կարսի անկման և Այսրկովկասում ռուսերի ռազմավարական հարաբերակցության փոփոխման ֆոնին, Ֆրանսիան, որը ձգտում էր թույլ չտալ բրիտանական ազդեցության հաստատումը Փոքր Ասիայում, 1921թ. մարտի 9-ին նախնական համաձայնագիր (հայտնի 1921թ. հոկտեմբերի 20-ի Անկարայի համաձայնագրի նախերգանքը-Հ.Ն.) է ստորագրում Քենալական Թուրքիայի հետ, որի առաջին հոդվածով դադարեցվում էին ռազմական գործողությունները կողմերի միջև, իսկ երկրորդ հոդվածը նախատեսում էր Կիլիկիայում գտնվող հայկական զինված ուժերի (յուժարված Հայակական լեգիոնի վերջին բեկորների-Հ.Ն.) զինաթափում⁵⁷¹: Սա էլ, իր հերթին, հնարավորություն տվեց թուրքա-

կան բանակի հրամանատարությանը՝ Հարավային ռազմաճակատից (Կիլիկիայից) Արևմտյան ռազմաճակատ տեղափոխելու 20-րդ կորպուսի ուժերը⁵⁷²:

Արևելյան (Այսրկովկասից) և Հարավային (Կիլիկիայից) վերոնշյալ համալրումների արդյունքում, Արևմտյան ռազմաճակատում 1921թ. հուլիսին Աֆիոնգարահիսար և Էսքիշեհիր քաղաքաքենների շրջանում պարտություն կրած և, վերջնական շրջափակումից խուսափելու համար, Սաքարիա գետի այն ափը նահանջած թուրքական բանակը (հրամանատար Իսմեթ փաշա) անցնում է հակահարձակման և, Սաքարիայի նշանավոր ճակատամարտում (օգոստոսի 23-ից 31-ը) հունական բանակին ծանր պարտության մատնելով, փրկում Անկարան⁵⁷³:

Ավելին, սրան մեկը մյուսի ետևից պետք է հաջորդեին Մոսկվայի ու Կարսի Ռուս-թուրքական (քենալա-բոլշևիկյան) պայմանագրերն ու Հայաստանի բաժանումը*, Անդրաշնչության ու ԽՍՀՄ կազմավորումը, որով պետք է հոգս ցնդեր Հայաստանի խորհրդային պետության «անկախության մասին» բոլշևիկյան խոստումը (տրված 1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով), Ֆրանսիայի կողմից Կիլիկիայի պարպումը, թուրքական բանակի կողմից Ձմյուտ-

⁵⁷² ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 86, թ. 64շրջ.:

⁵⁷³ Корсун Н. Г. Греко-турецкая война 1919–1922 гг. Оперативно-стратегический очерк., с. 12.

* ՀԱԽՀ Կենտրոնականի նախագահ Արտաշես Կարինյանի քննողական «Կարսի դաշնագրություն մեր (Բոլշևիկյան Ռուսաստանի-Հ.Ն.) արևելյան քաղաքականության հիմնաքարն է: Նրան իր տեղից խախտել՝ նշանակում է մեր (Բոլշևիկյան Ռուսաստանի-Հ.Ն.) արևելյան քաղաքականությունը փլուզման ենթարկել» (տես Կրացեան Ս. Նշվ. աշխ., էջ 183):

⁵⁶⁸ Феридун Кандемир. Сожженные воспоминания Кязым Карабекира, с. 169:

⁵⁶⁹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 83:

⁵⁷⁰ Եազրճեան Գ., Նշվ. աշխ., էջ 5:

⁵⁷¹ 1921թ. մարտի 9-ի համաձայնագրի հոդվածները տես՝ Саакян Р. Франко - турецкие отношения и Киликия в 1918 - 1923 гг., Ереван, Издат - во АН Армянской ССР, 1986, с. 67 - 69.

նիայի* գրավումն ու Լոզանի կոնֆերանսում Մեծ Բրիտանիայի կողմից Նեղուցների ու Կոստանդնուպոլիսի հանձնումը Հանրապետական Թուրքիային:

Այսպիսով, 1920-ական թվականների սկզբներին, Մերձավոր Արևելքում Մեծ Բրիտանիայի աշխարհառազմավարական շահերին ծանր հարված հասցվեց: Անատոլիայում գեներալ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ սկիզբ առած ազգայնական շարժումը Այսրկովկասում միավորվելով Բոլշևիկյան Ռուսաստանի հետ՝ արյան մեջ խեղեցին նորակախ Հայաստանի Հանրապետությունը: Կարսի անկումն ու Հայաստանի Հանրապետության վերացումը իր հերթին հանգեցրեց ռազմավարական մի նոր աղետի, այն է՝ քեմալական բանակի կողմից Անատոլիայում հունական զորքերի ջախջախմանը, ինչից հետո բրիտանացիները լուս հեռացան Կոստանդնուպոլիսից ու Այսրկովկասից: Թուրքերին վերադարձնելով Կոստանդնուպոլիսն ու Նեղուցները՝ բրիտանացիները վերականգնեցին Նեղուցների հարցում հարյուրամյակներ գոյություն ունեցող այն ստատուս - քվոն, որտեղ արդեն Թուրքիայի Հանրապետությունը պետք է խաղար ճոճանակի դեր՝ շարունակելով պահպանել ուժերի հավասարակշռությունը ԽՍՀՄ-ի ու Մեծ Բրիտանիայի (մեր օրերում արդեն Ռուսաստանի Դաշնության ու ԱՄՆ-ի) միջև:

* Ճյուղոնիայի անկման օրը՝ 1922թ. սեպտեմբերի 9-ին, քաղաք մտած տեղի գեներալական կառավարիչ Նուրդդին փաշան հայտարարեց. «Անատոլը Հեյլեններու գերեզմանը պիտիդլայ, թուրք բանակը իր յարթական արշալը շարունակելով պիտի վերագրաւ: Պոլիսը, էտիրենէ, Թրակիան» (Տես ֆ. 430, ց. 1, գ. 1419, թ. 3):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային նյութեր
Հայաստանի ազգային արխիվ

- Ֆ. 45 (Գեներալ Թովմաս Նազարբեկյանի անձնական ֆոնդ), ց. 1, գ. 32:
Ֆ. 56 (Էջմիածնի Սուրբ Լուսավորչական Սինոդ), ց. 13, գ. 257, գ. 831, գ. 844:
Ֆ. 57 (Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան), ֆ. 57 ց. 1, գ. 618, ց. 5, գ. 80, գ. 115, գ. 149:
Ֆ. 113 (ՀՀ կառավարություն), ց. 3, գ. 1, գ. 10:
Ֆ. 114 (ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատ), ց. 2, գ. 86:
Ֆ. 199 (Հայաստանի առաջին հանրապետության նախարարների խորհուրդ), ց. 1, գ. 10, գ. 32 մաս 2-րդ:
Ֆ. 200 (Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի մինիստրություն), ց. 1, գ. 5, գ. 7, գ. 9, գ. 12, գ. 21, գ. 27, գ. 23, գ. 33, գ. 57, գ. 155, գ. 158, գ. 161, գ. 209, գ. 254, գ. 291 մաս 1-ին, գ. 291 մաս 2-րդ, գ. 351, գ. 353, գ. 441, գ. 621, ց. 2, գ. 11, գ. 28:
Ֆ. 201 (Հայաստանի առաջին հանրապետության ներքին գործերի մինիստրություն), ց. 1, գ. 44, գ. 45, մաս 1: Ց. 2, գ. 602:
